Ա. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

К. М. МУРАДЯН

ГРИГОРИЙ НИССКИЙ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

ИЗДАТЕЛЬСТВО НАН АРМЕНИИ
ЕРЕВАН 1993

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա II 83456

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1998

ԳՄԴ 83.3(22)
Ն 825մ

Տպագրվում է Հայաստանի ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր էմ. Ա. Պիվազյան

Գիրքը հրատարակության են նրաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հ. Հակոբյանը և պատմական գիտությունների թեկնածու Ա. Ա. Բոզոյանը

Մաւրադյան Կ. Մ.

Ն 825մ Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ /Պատ. խմբ.՝ էմ. Ա. Պիվազյան, Եր.: Հայաստանի ԳԱԱ Հրատ., 1993. 256 էջ:

Գրիգոր Նյուսացու (335—394) գրական վաստակի դգալի մասը (ներբողներ, ճառեր, թղթեր, մեկնություններ և այլն) հայերենի է թարգմանվել V—VIII դարերում: Աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են այդ թարգմանությունների հայկրեն ընդօրինակությունները, անհրաժեշտության պարագայում դրանք համեմատվում են հունարեն նախօրինակների հետ և արվում համապատասխան հետևություններ: Գնահատվում են Նյուսացու մասին եղած հայ մատենագիրների հիմնական վկայությունները, առաջադրվում է բյուզանդական մատենագրի գործերի հայերեն թարգմանությունների լիակատար մատենագիտություն: Էական տեղ է հատկացվում այդ թարգմանությունների բառագանձի քննությանը և V-XIII դդ. հայոց գրականության հետ ունեցած առնչակցությունների խնդիրներին:

Մենագրությունը հասցեագրվում է բանասիրներին, աղբյուրագետներին, ինչպես նաև հայոց ինքնուրույն և թարգմանական մատենագրությամբ զբաղվողներին առհասարակ:

Մ $\frac{4603020100}{703(02)—93}$ Զհայտ.

ԳՄԴ 83.3(22)

ISBN 5—8080—0314—8

© Հայաստանի ԳԱԱ հրատարակչություն, 1993





ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ թարգմանական գրականության անխոնջ հետազոտող, անվանի տեքստաբան-բնագրագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Կիմ Մամբրեի Մուրադյանը ծնվել է 1938 թվականի դեկտեմբերի 3-ին, Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի շրջանի Ղադոլար գյուղում։ 1965 թ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, 1966—1968 թվականներին սովորել է ՀԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում։ Պրոֆ. Խորեն Մարգսյանի ղեկավարությամբ ասպիրանտական ուսումնառության տարիներին նա մասնագիտացել է հայ միջնադարյան թարգմանական գրականության բնագավառում։ Այդ տարիներից էլ անմնացորդ նվիրվել է վաղ բյուզանդական մատենագրության կարկառուն դեմքերից «երեք մեծ կապադովկացիների»՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների համակողմանի հետազոտությանը։

1970 թ. Կ. Մուրադյանը թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել՝ «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցաւրեան» հայ մատենագրության մեջ» թեմայով։ Բարսեղ Կեսարացու կյանքին, գործունեությանը և մատենագրական ժառանգությանը գիտնականը անդրադարձել է նաև հետագայում։ 1976 թ. լույս տեսավ Կ. Մուրադյանի «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցաւրեան» հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը, իսկ 1984 թ. նրա աշխատասիրությամբ հրատարակվեց «Վեցաւրեայի» հայերեն թարգմանության գիտական բնագիրը։

1970—1978 թվականներին Կ. Մուրադյանը աշխատել է ՀԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում։ 1973—1978 թվականներին նա այդ ամսագրի պատասխանատու քարտուղարն էր։

1978 թ. որպես ավագ գիտաշխատող աշխատանքի է անցել ՀԳԱ արևելագիտության ինստիտուտում։ 1985 թ. «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ» դիսերտացիոն աշխատության համար (որ-

պես մենագրություն լույս է տեսել 1983 թ.) նրան շնորհվում է բանասիրական գիտությունների doկտորի գիտական աստիճան: 1986 թ. դեկտեմբերից մինչև կյանքի վերջին օրը՝ 1991 թ. հոկտեմբերի 8-ը, Կ. Մուրադյանը առաջատար գիտաշխատող էր ՀԳԱ արևելագիտության ինստիտուտի կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնում:

Բացառիկ ամբողջական և նպատակային է եղել Կիմ Մուրադյան հետազոտողի գիտական գործունեությունը: Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու գրական վաստակը արժեքավորելիս հետազոտողը նախ հանգամանորեն լուսաբանել է վաղ քրիստոնեական եկեղեցու այդ նշանավոր գործիչների կենսագրությունը, հայոց հետ ունեցած առնչությունները, ներկայացրել է հայոց միջավայրում բյուզանդական մատենագիրների եռաստեղությանը տրված գնահատումները: Այդ ամենն իրականացվել է ահռելի թվով ձեռագիր աղբյուրների առկոչումով, արծարծվող խնդիրներին վերաբերող ամենափոքր իսկ հիշատակագրություններն արձանագրումով: Ձեռագիր մատյանների հետազոտությունը Կ. Մուրադյանի տարերքն էր, նրա առանձնահատուկ սիրո առարկան: Հիրավի ինքնամոռաց նվիրում էր պահանջում «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական վաստակի հայացման պատմության վերհանումը, հայոց մեջ դրա գործառության ընթացքի և ընդգրկման պարզաբանումը, թարգմանական հուշարձանների ազգայնացման հետազոտումը:

Կ. Մուրադյանը անհատականություն էր, որը հրաշալիորեն ղեկավարում էր հետազոտական պրպտումները և տասնյակ ձեռագրերի համեմատությամբ բնագրեր հրապարակելու տքնանքը: Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեայի» հայերեն թարգմանության բնագրի լույս ընծայումից առաջ նա ծանոթացել էր Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մեկուկես տասնյակ գրչագրերին, նկարագրել դրանք, կազմել ձեռագրերի ճյուղագրությունը, նկատի առել հատվածական ընդօրինակությունների և բառարան-մեկնությունների ու պատճառ-լուծմունքների ընձեռած տվյալները: Տարիների ընթացքում կատարած քննախույզ աշխատանքի արգասիք է նաև Գրիգոր Նազիանզացու «Դամբանականի» հրապարակումը: Բարսեղ Կեսարացու մահվան և հուղարկավորության առիթով գրված այդ երկասիրությունը Կ. Մուրադյանը ըստ ամենայնի օգտագործել է (բնագրով և ռուսերեն թարգմանությամբ) Բարսեղ Կեսարացուն նվիրված իր աշխատություններում և տարիներ անց ի հայտ բերել ու լույս ընծայել նաև հայերեն թարգմանությունը: Ընդհանրապես «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական հարուստ վաս-

տակի հայերեն թարգմանությունները գիտական շրջանառության մեջ մտցնելու առումով Կ. Մուրադյանը եղակի դեմք է հայագիտության մեջ:

Հանդուցյալ հայագետը հոգածությամբ էր վերաբերում իր հրապարակած ամեն մի տողին ու տառին: «Վեցաւրեայի» բնագիրը կազմելիս նա նկատի է առել ոչ միայն հայերեն ձեռագրերի տարընթերցվածքները, այլև մանրակրկիտ աշխատանքով պարզել բազմազան սխալների ու խաթարումների պատճառները, պրպտել ու վերականգնել սկզբնագիր տարբերակները: Հարկ եղած դեպքերում նա դիմել է նաև «Վեցաւրեայի» թարգմանությունից օգտված մատենագիրների այն երկերին, որոնք «Վեցաւրեայի» անաղավաղ հատվածներ են պարունակում: Բնագիրը որքան հնարավոր է կատարյալ տեսնելու մտահոգությամբ նա «Վեցաւրեայի» հայերեն թարգմանությունը համեմատել է հունարեն բնագրի, ինչպես նաև ռուսերեն ու վրացերեն զույգ թարգմանությունների հետ: Բնագրագիտական այդ քննախույզ աշխատանքը հնարավորություն է ընձեռել նաև լեզվական ուշագրավ դիտարկումներ կատարել, նկատառելի իրողություններ արձանագրել, գրաբարի բառապաններում բացակայող բառերի գոյությունը հավաստել, ճշգրտել ու ընդարձակել հանրահայտ բառերի իմաստները:

Վաղ բյուզանդական հեղինակների գործերի հայերեն թարգմանությունները հաճախ ձեռնարկի դեր են կատարել մեզանում: Այս առումով անգնահատելի է հատկապես Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեայ» և Գրիգոր Նյուսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկերի նշանակությունը: Ուստի «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական վաստակի մանրակրկիտ ուսումնասիրությունը նաև հայ մատենագրության կարևոր ուղղություններից մեկի՝ գիտական մտքի զարգացմանը հետևելու կարելիություն է ընձեռել: Կ. Մուրադյանի ջանքերին ենք պարտական հիշյալ բյուզանդական մատենագիրների երկերի մեծ մասի՝ հայոց միջավայրում կենցաղավարման ողջ ընթացքը պատկերացնելու բացառիկ բարեբախտության համար: Կ. Մուրադյանը բազմաթիվ սրբագրումներ է կատարել այն հայ հեղինակների երկերի բնագրերում, որոնք տարբեր ժամանակներում ու զանազան եղանակներով դիմել են «երեք մեծ կապադովկացիների» գրական ու գիտական ժառանգությանը:

Հիրավի պատկառելի է Կ. Մուրադյանի անտիպ ժառանգությունը: Հայագիտության մեջ առաջին անգամ նա կազմել էր Բարսեղ Կեսարացու «Պահոց դրքի» քննական բնագիրը, այսօր հայտնի ձեռագրերի հիման վրա պատրաստել էր Նազիանզացու և Նյուսացու ժառանգության հրատարակությունը, ավարտել էր Ղևոնդի Պատմության գրչագրերի համեմա-

տությունը, որը հիմք կարող էր դառնալ բնագրի ճշգրտված հրատարակության համար։

Կ. Մուրադյանի բացառիկ ինքնատիպ խառնվածքի համար բնութագրական էին անձնուրաց նվիրումը, բնատուր համեստությունը և անսահման աշխատասիրությունը։ Այդ բարեմասնությունները բխում էին նրա էությունից և նրա առինքնող կերպարի բնութագրական գծերից էին։ Այս կապակցությամբ ինչպե՞ս չհիշել գիտնականի կենսագրության եզրափակիչ և հիրավի իրեն արժանի դրվագը։ Արհամարհելով օրհասական ցավը, նա մահվանից ընդամենը մի քանի օր առաջ ներկայացավ գիտությունների ակադեմիա՝ ընթերցելու իր վերջին գիտական զեկուցումը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում։

Այսպիսին էր անվանի հայագետը, արժանավոր քաղաքացին և պայծառ մտավորականը։

*

* *

«Երեք մեծ կապադովկացիների» գրական ժառանգությանը նվիրված Կիմ Մուրադյանի եռագրության սույն վերջին հատորը լույս է տեսնում հայոց երից վարդապետաց՝ Հ. Հ. Գրիգոր Մագուտյանի, Հայկազուն Նաջարյանի և Հ. Նուրհանի արդյունավոր հովանավորությամբ։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրերի գյուտից հետո (405 թ.) Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց աշակերտների եռանդուն գործունեության շնորհիվ կարճ ժամանակահատվածում հարուստ թարգմանական գրականություն ստեղծվեց մեզանում։ Այդ թարգմանությունները, ընթերցող շրջանների հոգևոր պահանջմունքները բավարարելուց բացի, հիմնավոր հող էին նախապատրաստում ազգային ինքնուրույն մատենագրության սկզբնավորման համար։ Վերջինիս ձևավորման ընթացքը, նրա տեղական առանձնահատկությունները, գաղափարական ու գեղարվեստական հագեցվածության աստիճանն ու զարգացման միտումները ըստ ամենայնի ուսումնասիրելու և ճանաչելու համար անհրաժեշտ է պարզել թարգմանական երկերի հեղինակային պատկանելությունը, թարգմանությունը թելադրող պարագաները, թարգմանության տեղը, ժամանակը, հետապնդած նպատակը, ընկալող մատենագրության մեջ թարգմանական երկի գործնական կիրառությունն ու այդ կիրառության տևականությունը։ Այս կարգի հետազոտության կարևորությունը հայագիտությանը վաղուց է հայտնի[1]։

Ինչպես նկատել է հայագետ Ն. Ակինյանը, Մաշտոցի թարգմանիչ աշակերտները թարգմանում էին գրականք (biblica), *մեկնողականք* (hermeneutica), *հայրաբանականք* (patristica), *կանոնականք* (canonica), *նուիրագործականք և ծիսականք* (liturgica), *վկայաբանականք*

---

1 *Այդ մասին տե՛ս Н. Я. Марр,* К вопросу о задачах арменоведения, СПб., *1899, էջ 9։ Սրագրավորված թարգմանությունների մասին ուշագրավ դիտողություն ունի ակադ. Կ. Կեկելիձեն. «...թարգմանական ստեղծագործությունները այս կամ այն գրականության մեջ պատահարար ու աննպատակ չեն հայտնվում. նրանք կոչված են այն սոցիալական ու մշակութային-պատմական պահանջմունքներով, որ առաջադրում է մարի տևական հոսանքը. թարգմանվում է այն, ինչ պահանջում է էական, ամենօրյա անհրաժեշտություն, թարգմանվում է օտար նյութը, իսկ ընտրությունը կատարում է, թարգմանում ու յուրացնում է ազգային առանձնահատկությունն ու դիտակցությունը, մի խոսքով՝ թարգմանվում է այն, ինչի հանդեպ անհրաժեշտ պահանջ կա...» (տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 211)։*

(martyrologica), պատմականը (historica)[2] կոչվող ամենատարբեր ժանրի ստեղծագործություններ։ Հայտնի է, որ ավագ և կրտսեր թարգմանիչներ անվանումների տակ հայագիտությանը ծանոթ են երեք տասնյակ անուններ, որոնցից շատերը միաժամանակ ինքնուրույն գրականության երևելի դեմքեր են։ Թարգմանական մատենագրության հենքի վրա ամենից առաջ ձևավորվում էին ազգային թարգմանիչ-մատենագիրների աշխարհայացքը, գրական-գեղարվեստական ըմբռնումները, որոնք և կանխորոշելու էին նոր-նոր ձևավորվող ինքնուրույն գրականության ընթացքը և էապես ազդելու էին բուն գրական պրոցեսի վրա։ Թարգմանական երկերը ամենից առաջ օգնում էին ճանաչելու շրջապատող բնությունը, որոշակի պատկերացում էին տալիս բնական երևույթների, բուսականգանական աշխարհի ու մարդկային փոխհարաբերությունների մասին, մի խոսքով՝ աշխարհայացք էին ձևավորում լայն իմաստով։

Սակայն ինքնուրույն գրականության առաջացումն ու հետագա բուռն զարգացումը հայ իրականության մեջ ամենևին էլ թարգմանական մատենագրության ավարտ կամ ստանձնած դերի խափան վերացում չի նշանակում։ Հայոց միջնադարյան գրականության տարբեր բնագավառներին վերաբերող երկերում (փիլիսոփայություն, բնագիտություն, բժշկություն, պատմություն, ճարտասանական արվեստ և բանաստեղծություն) պահպանված թարգմանական մատենագրության հաճախ բառացի, երբեմն էլ վերաշարադրված հետքերի առկայությունն ինքնին լավագույն ապացույցն է այդ գրականության ազդեցության տևականության, կենսագործունեության։ Թարգմանական նյութն ընտրվում էր ոչ պատահականորեն՝ ելնելով մշակութային, կրթական ու դավանական անհրաժեշտությունից, հաճախ տեղայնացնելով օտար նյութը, ուստի պատահական չէ, որ գերմանացի հայագետ Ֆ. Ֆինկը առանձնակի կարևորություն է տալիս հայոց հնագույն թարգմանություններին՝ դրանք իրավացիորեն համարելով «գիտակցված ծրագրի» արդյունք[3]։

Միջնադարյան հարյուրավոր հայերեն ձեռագիր ժողովածուների օրինակը ցույց է տալիս, որ թարգմանական գրականությունը ինքնու-

---

[2] Ն. Ակինեան, Դասական հայերենը և Վիեննայի Մխիթարյան դպրոցը, Երևան, 1932, էջ 26—27։

[3] *Franz Nikolaus Finck.* Die armenische Litteratur. Die orientalischen Literaturen. Berlin und Leipzig, 1906. S. 285—286.

րույն գրական հուշարձաններից հատուկ առանձնացնելու, սահմանազատելու խնդիր առհասարակ չի եղել միջնադարում: Ազգայինն ու թարգմանականը ընդօրինակվել են միաժամանակ, միևնույն գրչագրում, դասագրվել մատենագիտական նույն սկզբունքով[4] ու գնահատվել միջնադարյան միևնույն չափանիշներով: Հայտնի է, որ հայերեն հնագույն թարգմանությունները[5] կատարվում էին ասորերենից[6] և հունարենից[7], մի փոքր ավելի ուշ նաև լատիներենից, վրացերենից և այլ լեզուներից:

Թարգմանված մատենագիրների ու թարգմանությունների պահպանված ցանկերը հնարավորություն են տալիս ասելու, որ միջնադարյան Հայաստանում կայուն ուշադրություն էր հատկացվում ժամանակի գիտության ամենատարբեր բնագավառներին: Ասորական և վաղ բյուզանդական մատենագրական հուշարձանների պարբերաբար կատարվող թարգմանությունները միաժամանակ ակնհայտ վկայություններ են թարգմանող ժողովրդի նախասիրությունների:

Հայերեն հնագույն թարգմանությունները արդի հայագիտության համար կարևոր են մի շարք առումներով: Ամենից առաջ այդ թարգմանությունները եղել են հայ մատենագրության ձևավորման անմիջական սկզբնաղբյուր, իսկ դա նշանակում է, որ ինքնուրույն մատենագրական հուշարձանների գաղափարական նպատակամղվածության բացահայտման, թարգմանիչ-մատենագիրների աշխարհայացքի գնահատման, ինչպես նաև գրական-գեղարվեստական արժանիքների ըստ ամենայնի

---

[4] Միջնադարյան գրադասակարգման սկզբունքների մասին տե՛ս *Պ. Մ. Մուրադյան.* Принципы классификации книги в средневековой Армении (տե՛ս «Русская и армянская средневековые литературы», Ленинград, 1982, стр. 164—172):

[5] Այդ թարգմանությունների մասին տե՛ս Գ. Ջարբհանալեան, *Մատենագարան հայկական թարգմանութեանց (IV—XIII դդ.)*, Վենետիկ, *1889*, էջ *1—783*, Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ *13—54*, *J. Muyldermans*, Répertoire de pièces patristigues d'après le catalogue arménien de Venise. „Le Muséon", t. XLVIII, Louvain, 1934, p. 265—292, *Mesrop Djanachian*, Les arménistes et les Mékhitaristes, „Armeniaca. Mélanges d'études arméniennes", Vinise, 1969, p. 383—445, Ս. Ս. Արեշյան, Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը («Պատմաբանասիրական հանդես», *1973*, № *1*, էջ *23—37*), Լ. Տեր-Պետրոսյան, *Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, էջ 1—58*:

[6] Ասորերենից կատարված թարգմանությունների մասին տե՛ս F. N. Finck, նշվ. աշխ., էջ *286*:

[7] Հունարենից կատարված հին հայերեն թարգմանությունների մասին տե՛ս *Christ*, Geschichte der griechischen Literatur, Band II, München, 1920, S. 428, համմ. *F. N. Finck*, նշվ. աշխ., էջ *286—287*:

արժեքավորման գործում մեծ է այդ թարգմանությունների նշանակությունը։ Թարգմանական մատենագրության կարևորությունն ակներև է նաև զուտ աղբյուրագիտական, բնագրագիտական առումով։ Դժվար է պատկերացնել սկզբնավորման և հետագա շրջանի հայ մատենագրության մի շարք գործերի քննական-համեմատական հրատարակություններ՝ առանց հայերեն հնագույն թարգմանություններով թելադրված մեծ ու փոքր ճշգրտումների ու սրբագրությունների։ Պակաս կարևոր չէ նաև հայ մատենագիրների երկերով պայմանավորված փոխադարձ սրբագրությունների հնարավորությունը։ Նույնքան նշանակալի է այդ թարգմանությունների դերը հին հայերենի պատմության, դասական և հետդասական հայերենի բառագանձի, քերականական ինքնատիպությունների, նոր և նորօրակ տերմինների, հայերենի վերածված հունարեն բառերի ու արտահայտությունների ուսումնասիրության իմաստով։

Ի վերջո՝ մոռանալու չէ այն հանգամանքը, որ հայերեն հնագույն թարգմանությունները երբեմն դուրս են գալիս ազգային մշակույթի սահմաններից այն իմաստով, որ ընդհանուր արևելագիտական նշանակություն ունեցող շատ գրական հուշարձաններ կան, որոնց բնագրերը չեն պահպանվել, ուստի և հայերեն միջնադարյան թարգմանությունները ստանում են կրկնակի արժեք[8]։

Սակայն հայոց հնագույն թարգմանությունների ճանաչողական արժեքը շատ ավելի շոշափելի կարող էր լինել, եթե ունենայինք այդ հուշարձանների արդի բնագրագիտական պահանջներին համապատասխան, բանասիրական քննությամբ օժտված քննական-համեմատական հրատարակություններ։ Մինչդեռ այս առումով փաստական վիճակը հեռու է գոհացուցիչ լինելուց։ Մեր հարուստ ու բազմաբովանդակ թարգմանական գրականությունից առ այսօր հրատարակվել է քիչ բան, եղածներն էլ, բացառությամբ առանձին մատենագրերների, հիմնականում կատարվել են XIX դարում, այն էլ մեկ-երկու ձեռագրի համեմատությամբ և, բնականաբար, չեն կարող բավարարել այսօրվա պահանջ-

---

[8] Նկատի ունենք Փիլոն Աղեքսանդրացու, Իրենիոսի, Արիստիդես Աթենացու, Տիմոթեոս Կուղի, Աթանաս Աղեքսանդրացու, Ապողինար Լավոդիկեացու, Դիոնիսիոս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Հովհան Ոսկեբերանի, Եվսեբիոս Կեսարացու և այլոց առանձին գործեր։ Ի դեպ, այդ նույն թարգմանական մատենագրության մեջ պետք է փնտրել սկզբնավորման շրջանի հայոց հին դյականության զարմանալի հղկվածության ու լեզվական մշակվածության պատճառները և ոչ թե նախամեսրոպյան ենթադրվող գիր ու գրականության շրջանակներում։

ները, եթե չասենք, որ այդ հրատարակությունները վաղուց դարձել են մատենագիտական հազվագյուտ օրինակներ։ Մինչդեռ պահպանված հայերեն ձեռագրերի պատկառելի քանակությունն ամփոփող հավաքածոները (Երևան, Երուսաղեմ, Վենետիկ, Անթիլիաս-Լիբանան) հնարավորություն են տալիս ձեռնարկելու նոր, տակա ձեռագրերի հնարավորություններն ամփոփող հրատարակություններ[9]։

Հայոց թարգմանական մատենագրության պատկառելի մասն են կազմում հայրաբանականը (patristica) կոչված գրական ստեղծագործությունները։ Այս ժանրի թարգմանությունների շարքում հնությամբ, ձեռագրական հավաքածոների առատությամբ ու հայոց հին գրականության վրա թողած ազդեցությամբ առանձնանում են «երեք մեծ կապադովկացիների»[10] հայերեն թարգմանությունները։ Պահպանված մատենագրական վկայությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ հայոց ինքնուրույն մատենագրության սկզբնավորման արշալույսին որոշակի հիմքեր կային, Ս. Գրքից հետո, առաջին հերթին հոդալու «երեք մեծ կապադովկացիների» գործերի թարգմանության մասին։ Այդ իրողությունը պայմանավորված էր ոչ միայն նրանց գրական վաստակի արարողական նշանակությամբ (Կեսարացու և Նազիանզացու գործերում դրանք քիչ չեն), այլև թարգմանող ժողովրդի համար այդ մատենագիրների, այսպես կոչված, հոգեհարազատությամբ։ Հայտնի է,

---

[9] Այդ ուղղությամբ որոշակի քայլ է կատարվում Մաշտոցի անվան Մատենադարանում, ուր ստեղծվել է հատուկ մատենաշար՝ «Հնագույն թարգմանական հուշարձաններ» վերտառությամբ։ Այս շարքով լույս է տեսել երկու գիրք. ա) Գիրք ծննդոց, աշխատասիրությամբ Ա. Ս. Ձեյրունյանի, Երևան, 1985, բ) Բարսեղ Կեսարացի, Յաղագս վհցաւրեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Երևան, 1984։

[10] Մատենագիտական գրականության մեջ այսպես է կոչվում բյուզանդական մատենագրության նշանավոր եռյակը՝ Բասեղ Կեսարացի (329—379), Գրիգոր Նազիանզացի (328—389), Գրիգոր Նյուսացի (335—394)։ «Երեք մեծ կապադովկացիների» կյանքին ու գործունեությանը, նրանց գրական վաստակին վերաբերող ընդարձակ հին ու նոր հրատարակություններ կան։ Առավել ամբողջական ու բնդգրկուն են հետևյալ հետազոտությունները. *Karl Krumbacher*, Geschichte der Byzantinischen Literatur, München, 1897, *Otto Bardenhewer*, Geschichte der altkirchlichen Literatur, B. 2, Freiburg im Breisgau, 1914, B. 3, 1912, B. 4, 1924, *Hans-Georg Beck*, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959, La prédication des pères Cappadociens, la prédicateur et son auditoire... par *Sean Bernardi*, agrége des Lettres Chargé d'Enseignement à la faculté des Lettres et Sciences humaines de Montpellier 1968, *Т. А. Миллер*, Образы моря в письмах каппадокийцев и Иоанна Златоуста (տե՛ս „Античность и современность", М., 1972, էջ 360—369).

որ Կապադովկյան Կեսարիայի թեմի (արքեպիսկոպոս՝ Բարսեղ Կեսարացի) ենթակայության տակ էր գտնվում նաև Փոքր Հայքը։ Սեբաստիան, Սատաղը, Նիկոպոլիսը և Դաղթականություն կամ Դաղութք հայոցը հնում հայտնի էին Զորեքքաղաքյան Հայք (Τετραπολις Αρμενια անվամբ[11]։ Այս քաղաքների եպիսկոպոսները հունական դպրոցներում կրթված հայեր էին՝ զանազան հունական անունների[12]։ Բարսեղ Կեսարացին ոչ միայն չէր ընդդիմանում, այլև ամեն կերպ սատարում էր ազգային լեզվով հաղորդակցվելու միտքը։ Ինչպես նկատել են Հ. Մարկվարտը[13], Հ. Տաշյանը[14] և այլք, Բարսեղ Կեսարացին ջանում էր հայախոս շրջանների համար գտնել հայերեն իմացող եպիսկոպոս։ 372 թ. գրած նրա թղթերից մեկում այդ մասին խոսվում է շատ որոշակի ու ամենայն հստակությամբ[15]։

Հայաստանին և հայերին վերաբերող Բարսեղ Կեսարացու թղթերն ու թղթակցությունները ցույց են տալիս, որ Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսին մշտապես զբաղեցրել են հայկական թեմի հետ կապված հոգսերն ու դավանական վեճերը, ուստի նա հաճախ հարկադրված է եղել չվստահել իր իսկ արտահայտությամբ՝ «աստվածային մեծագույն պարգևին»՝ թղթին[16], անձամբ կտրել-անցել է հայկական լեռնաշխարհը և հոգացել հայոց եկեղեցու հետ կապված այլազան խնդիրներ[17]։

Բարսեղ Կեսարացու գործունեությունը դժվար է պատկերացնել առանց նրա մերձավոր գործընկերների՝ Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու անմիջական փոխօգնության ու աջակցության։ Գրիգոր Նազիանզացու աջակցությունը հատկապես զգացվեց Վաղես կայսեր (364—378) հակաքրիստոնեական դաժան քաղաքականության շրջանում։ Արևելյան եկեղեցու պատմության մեջ IV դարի 60—70-ական թվա-

---

[11] Յ. Թորոսեան, Արսէն Սուրբ («Բազմավէպ», 1932, էջ 352), Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեայն» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 108—110։

[12] Տե՛ս նույն տեղում։

[13] Հ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը («Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 125)։

[14] Յ. Տաշեան, Հին Հայաստանի արեմտյան սահմանը. Փոքր Հայք և Կողոփինէ (Սեբաստիա), Վիեննա, 1948, էջ 470։

[15] Տե՛ս Saint Basile, Lettres, I, Paris, 1957, էջ 217 „Παροῦσι γὼ προσεδόκων τοὺς ἐπιτηδείους ἄνδρας εὑρήσειν...“ հատվածը։

[16] Տե՛ս Saint Basile, Lettres, II, 1961, էջ 149՝ „μία δὲ τῶν ῥήσεων δωρεῶν..„“։

[17] Տե՛ս Saint Basile, Lettres, I, էջ 217—218։

կանները առավել բարդ շրջաններից են, երբ դավանական խնդիրների շուրջ ծագած հակասություններին ավելանում են նոր գաղափարախոսության դեմ պաշտոնական անձանց անսպրդ հայածանքները։

Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու միջամտությունը այս կամ այն խնդրի առիթով հաճախ վճռորոշ նշանակություն է ունեցել դրական ելքի իմաստով։ Այս առումով հիշատակելի իրողություն է Եվսեբիոսի և Բարսեղի պաշտոնական հարաբերության կարգավորումը, որը վճռորոշ նշանակություն ունեցավ եկեղեցուն սպառնացող վտանգի պահին միացյալ պայքարը կազմակերպելու գործում[18]։ Ճիշտ այդ նույն պայքարից հաջող ելք գտնելու թելադրանքով է, որ Բարսեղ Կեսարացին Գրիգոր Նազիանզացուն սահմանամերձ Սասիմայի եպիսկոպոս է կարգում՝ ամենևին հաշվի չնստելով նրա անհամաձայնության հետ[19]։ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու փոխհարաբերության իմաստով ուշագրավ է հետևյալ բնորոշումը. «Գրիգորը (=Նազիանզացին-Կ. Մ.) ողջ կյանքում Բարսեղ Կեսարացու մտերիմ ընկերն էր ու նրա խմբակի անդամը։ Սակայն դժվար է պատկերացնել մեկին, որը առավել նվազ նման լիներ տիրական քաղաքական գործիչ Բարսեղին, քան նրբացյալ, դյուրազգաց, ինքնամփոփ Գրիգորը։ Գավառական ու գործարար Բարսեղի մեջ նա տեսնում էր նեցուկին ու ղեկավարին, որին և ենթարկվում էր հիմնականում լռելյայն։ Սակայն երբեմն, երբ ընկերոջ բռնությունը դառնում էր առավել անողորմ, նա անօգնական վշտանում էր, ընդդիմանում, բողոքում»[20]։

Բարսեղ Կեսարացու գործունեությանը մշտապես հետևում էր նաև Գրիգոր Նյուսացին և, ինչպես ցույց են տալիս «երեք մեծ կապադովկացիների» համապատասխան թղթակցությունները, նա ջանացել է ամեն կերպ օգտակար լինել Բարսեղի գործունեությանը։ Այդ իմաստով ուշագրավ է 371 թ. գրած Բարսեղ Կեսարացու մի թուղթը, ուր մասնավորապես խնդրվում է բազմազբաղ հոգսերի պայմաններում եկեղեցուն

---

18 Տե՛ս Saint Basile. Lettres, I, էջ 49։

19 Հին հայերեն թարգմանությամբ պահպանված Բարսեղի մի թղթում (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 822, էջ 182բ—188ա) հետաքրքիր տեղեկություններ կան հիշյալ պայքարի բնույթի և առհասարակ ժամանակի եկեղեցական-դավանական խնդիրների շուրջ։

20 „Памятники византийской литературы IV—IX веков", М, 1968, стр. 70. Փոխադարձ ուշադրության լավագույն դրսևորումն է այն իրողությունը, որ Բարսեղի մահվանից հետո Գրիգոր Նազիանզացին առաջինը ձեռնարկեց նրա թղթերը հավաքելու, ժողովածուի վերածելու գործը։

սպառնացող վտանգի պահին լինել իր կողքին, կիսել իր հոգսերը, հիմնավորապես ծառայել ընդհանուր պայքարի շահերին[21]: Այդ բնույթի խնդրանք-խորհուրդները հաճախադեպ են Բարսեղ Կեսարացու թղթերում, որոնք հասցեագրված են զանազան պաշտոնատար անձանց, հոգևոր բարձրաստիճան գործիչների, ընկերների, մտերիմների ու հարազատների: Սակայն այդ կարգի գրությունների նպատակը շատ որոշակի է ու հստակ՝ հնարավոր բոլոր միջոցներով ընդգիմանալ Կապադովկյան Կեսարիայի թեմին սպառնացող այլազան վտանգներին:

«Երեք մեծ կապադովկացիների» այդօրինակ գործունեությունը համապատասխան արձագանք պիտի գտներ հայկական միջավայրում, է՛լ ավելի պիտի մեծացներ նրանց կյանքի ու գրական վաստակի նկատմամբ եղած հետաքրքրությունը, խթան պիտի հանդիսանար նրանց գործերը ծրագրված եղանակով գիրք առ գիրք հայերեն թարգմանելու, մանավանդ որ, ասվեց, դրանց թվում կային ոչ միայն արարողական ժանրի առաջին անհրաժեշտության գործեր, այլև դասագրքի համարում ունեցող ստեղծագործություններ: Այսպես օրինակ, Դավիթ Քորայրեցու վկայությամբ «Վեցաւրեան», «Հարցողաց» և «Պահոց» գրքերը ասվել էին «ի հմտութիւն վարժողաց»[22]: Ավելին, Գլաձորի և Տաթևի միջնադարյան համալսարանների ծրագրային հեղինակների ցուցակներում արտացոլված են «երեք մեծ կապադովկացիները», անուն առ անուն հիշատակվում են նրանց հայերեն թարգմանությունները: Համալսարանական ծրագրի «մեջ են մտնում նաև նուրբ գրքերից քաղված առասպելական, պատմական հատվածներ, որոնք կարելի էր «բերան առեալ» պատմել: Մասնավորապես այդ վերաբերում է Գրիգոր Աստվածաբանի ճառերի մեջ օգտագործված առասպելներին»[23]:

Հայոց թարգմանական մատենագրության մեջ «երեք մեծ կապադովկացիները» առանձնանում են նաև թարգմանությունների առատությամբ: Պահպանված թարգմանական ձեռագիր գիրք-ժողովածուները հնարավորություն են տալիս ասելու, որ թարգմանվել են նրանց բոլոր կարևոր (հիմնական) ստեղծագործությունները (ճառ, թուղթ, բանաս-

---

21 Հմմտ. *Saint Basile*, Lettres, I, էջ 145—147:

22 Ձեռ. № 1879, էջ 241 բ:

23 Ս. Ս. Ավետյան, Ա. Ս. Մարևոսյան, *Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն*, Երևան, 1984, էջ 38: Գր. Նազիանզացու ճառերում օգտագործված առասպելների մասին տե՛ս *Nonnos*. Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, Herausgegeben von *Agob Manandian*, Marburg, 1903, էջ 1—81:

տեղծություն, քարոզ, կանոն, պատարագ և այլն)։ Միջնադարյան Հայաստանում ընդունված գրադասակարգման սկզբունքներով «նուրբ գրեր» անվան տակ գիրք առ գիրք հիշատակվում են այդ թարգմանությունները։ Ընդ որում՝ մատենագիտական ցանկի հեղինակ Հովհաննես Սարկավագը և ցանկից օգտվող Մխիթար Այրիվանեցին[24] լավածանոթ են թարգմանական աշխատանքների բովանդակությանը։ Նշված մատենագիտական ցանկում Գրիգոր Նյուսացուց հիշատակվում է յոթ գիրք՝ Ինարիւնն Լ (Յաղագս բնութեան մարդոյ), Կազմութիւնն Լ (Տեսութիւն ի մարդոյ կազմութիւնն), Կուսութեանն Ի (Յաղագս կուսութեան), Խղովողն Ը (Ժողովողին մեկնութիւն), Երգ երգոցն ԺԴ (Թուղթ յաղագս երգոյ երգոցս), Թ երանութիւնքն Ը (Խաւսք յինն երանութիւնսն), Հայր մեր, որ յերկինս Զ (Բան ի հայր մեր, որ յերկինս)[25]։ Սույն տեղեկանքը հիմնականում ճիշտ է արտացոլում Գր. Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների վիճակը, բացառությամբ «Յաղագս բնութեան մարդոյ» գործի, որի հեղինակը ոչ թե Նյուսացին է, այլ Նեմեսիոսը[26]։

Վերոբերյալ ցուցակում ներկայացված են Գր. Նազիանզացու հայերեն թարգմանությամբ հայտնի չորս գրքերը. «Քրիստոս ծնեալ» (ԺԲ ճառ), «Յաղթեցայ» (Ը ճառ), «Առ որս» (Ժե ճառ), «Ոմն յեգիպտոսէն ել» (ԺԱ. ճառ)։ Բարեկեղ Կեսարացուց հիշատակվել են «Հարցողաց», «Վեցաւրեայ», «Պահոց» գրքերը և «Կուսութեան Ա» ճառը[27]։

«Երեք մեծ կապադովկացիների» մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների բնույթի, ժամանակի, թարգմանիչների անձնավորությունների հետ կապված ձեռագրական ուղղակի վկայությունները, հիշատակարան-հիշատակությունները հասկանալի պատճառով շատ չեն։ Սակայն այդ թարգմանական բնագրերի և հայոց ինք-

---

[24] «Կարգագրութիւն գրոց սրբոց, որք առուգարանեցան ի Սարկաւագ վարդապետէն և գրեցան յինէն՝ ի Տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ, ի մին տուփ, յաւուրս ՃՀ» (Ձեռ. № 582, էջ 39ա)։

[25] Տե՛ս Ձեռ. № 582, էջ 40ա, Ձեռ. № 8509, էջ 79ա, հմմտ. Մխիթարայ Այրիւանեցւոյ պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պ., ս. Պետերբուրգ, 1867, էջ 35, Հ. Ս. Անասյան, Հայկական մատենադարութիւն, ե-ԺԸ դդ. Ա, Երևան, 1959, էջ XLII։

[26] Նշանակում էր, թե XII—XIII դարերում այդ հեղինակային շփոթը այնքան արմատավորված էր, որ նույնիսկ Հովհաննես Սարկավագը և Մխիթար Այրիվանեցին այն սրբագրելու փորձ չեն անում։

[27] Ձեռ. № 582, էջ 40ա, հմմտ. Ձեռ. № 8509, էջ 79ա-բ։ «Պահոց գիրքը» № 582 ցուցակում բացակայում է, իսկ № 8509-ում չկան «Վեցաւրեան» և «Կուսութեան Ա» ճառը։

նուրույն մատենագրության ընձեռած նյութի լեզվական, բանասիրական, աղբյուրագիտական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ասելու, որ պահպանված թարգմանությունների հիմնական մասը կատարվել է վաղ միջնադարում՝ հայոց ինքնուրույն գրականության ըստ ըզբղնավորման շրջանում՝ գերազանցապես V—VIII դարերում: Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու հայերեն թարգմանությունների առձեռն օգտագործման անհրաժեշտության թելադրանքով է, որ տակավին միջնադարում նպատակահարմար է դիտվել որոշակի թեմատիկ խմբավորմամբ դրանք վերածել գիրք-ժողովածուների: Այսօր դժվար է ստույգ սահմանել այդ ժողովածուների կազմության ժամանակը, սակայն մի բան պարզ է, որ գոյություն ունեցող մեզ ծանոթ հնագույն վկայություններից մեկի հեղինակը Ստ. Ասողիկն է (X դ.): Դատելով այդ գրքերի բովանդակությունից, կարելի է ասել, որ ժողովածուների կազմողները հիմնավորապես իմացել են եղած նյութը, առաջնորդվել են որոշակի մատենագիտական սկզբունքով, գրքերն օժտել են անհրաժեշտ նախագիտելիքներով, պատկերացում մշակել առաջարկվող ժողովածուների, դրանց հեղինակների մասին, քան պատեհության անդրադառնալով նաև առաջարկվող թարգմանությունների գրական-գեղարվեստական արժեքին ու տեղական անհրաժեշտությանը, ընկալող միջավայրի առանձնահատկություններին ու մատույցվող նյութի դժվարություններին: Բնականաբար, այդ թարգմանությունները ըստ ամենայնի իմանալու պարագայում միայն հնարավոր կլիներ գիրք-ժողովածուները այնպիսի թեմատիկ ընտրությամբ կազմել, որ ողջ միջնադարի ընթացքում որևէ ժողովածուի կառուցվածքը վերանայելու խնդիր չառաջանար:

V դարի հայ մատենագրության մեջ (և հետագայում), ուր ամփոփված են նաև մեր առաջին գրական-քննադատական դիտողությունները, իրավացիորեն բարձր են գնահատվել «երեք մեծ կապադովկացիներին» ու նրանց գործերի հայերեն թարգմանությունները[28]: Հայոց գնահատմամբ՝ Բարսեղ Կեսարացին անվանի եկեղեցական գործիչ լինելուց բացի, նաև նշանավոր մատենագիր է՝ «յոյժ գիտնական էր, հանճարեղ և

---

[28] Այսպես, օրինակ, V դարի մատենագիր Ղազար Փարպեցու «երեք մեծ կապադովկացիներին» աված գնահատությունը միանգամայն այժմեական հնչեղություն ունի (տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904, էջ 192, հմմտ. „Их творчество—вершина усвоения античной словесно-мыстителʼной культуры христианской церковью" (տե՛ս „Культура Византии". Москва, 1984, стр. 298—299).

համեղաբան»[29], հայկական միջավայրի բնորոշմամբ նա միաժամանակ հրաշալի ճարտասան էր ու դրական-մշակութային գործիչ՝ «հրեղէն լեզու խաւսէր ի բերանն Բարսղի»[30]։

Գրիգոր Նյուսացին, որ խառնվածքով և դրական նախասիրությամբ փիլիսոփա էր, նույն միջավայրի ձևակերպմամբ համարվում էր «աղբիւր եկեղեցւոյ»[31], «տիեզերալոյս եպիսկոպոս»[32], «աստուածիմաստ անձ»[33]։ Նկատելու է, որ Նյուսացին նույնպես հոգևոր-պաշտոնական դրազվածության պատճառով հնարավորություն չի ունեցել հիմնավորապես ծավալելու դրական գործունեություն։ Ինչ վերաբերում է Գրիգոր Նազիանզացուն, որը վաղ բյուզանդական դրականության մեջ «как поэт может быть назван отцом византийского «классицизма»[34], հայկական դրական միջավայրի պահանջությամբ՝ ամենից առաջ փառաբանված ճարտասան է, «անպարտելի ախոյեան»[35], «ջատագով ճշմարտութեանն»[36], նոր միայն փիլիսոփա-բանաստեղծ։ Սակայն նրա Նազիանզացու բանաստեղծական վաստակի մասին դատելու լինենք առկա հայերեն թարգմանություններով, ապա մեր տպավորությունը չի կարող ամբողջական լինել, որովհետև հսկայական բանաստեղծական վաստակից միայն մեկ-երկու գործ է պահպանվել, էլ չենք խոսում այն մասին, որ նրա ինքնաերգական բնույթի խոհափիլիսոփայական ստեղծագործությունները հայերեն են թարգմանվել արձակի ժանրով։ Այդ թարգմանությունները ընթերցիչ որոշակի նկատվում է, որ հեղինակի փիլիսոփայական խորհրդածությունն արտահայտվել է ոչ համապատասխան ձևի մեջ, և այդ իսկ պատճառով առաջացել է ծանր ոճ, ասելիքը դարձել է դժվարընկալելի։ Գրիգոր Նազիանզացու ոճի ծանրությունը նկատվում է հայերեն թարգմանությամբ հայանի նրա գրեթե բոլոր գործերի մեջ, ուստի պիտի մտածել, որ այդ երևույթը պայմանավորված է ոչ միայն նյութի, ասելիքի բարդությամբ, այլ նաև թարգմանության բնույթով։ Պատահական չէ, որ մեզանում ո՛չ Բարսեղ Կեսարացու, ո՛չ էլ Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների բարդությունները հատուկ ընդ-

---

29 *Ձեռ. № 84, էջ 261 բ։*

30 *Ձեռ. № 948, էջ 156 ա։*

31 *Ձեռ. № 4834, էջ 332։*

32 *Ձեռ. № 466, էջ 182 ա։*

33 Գաբեզին Ս. կարողիկոս. *Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 953։*

34 "Культура Византии", стр. 304:

35 *Ձեռ. № 571, էջ 65 բ։*

36 *«Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Գ, էջ 250։*

գծելու, դրանք անհասկանալի որակելու անհրաժեշտություն չի եղել երբեք, մինչդեռ Գրիգոր Նազիանզացու գործերի հայերեն ընդօրինակությունների առիթով բավական հաճախադեպ են այդ կարգի գրառումները: Այսպես, օրինակ, միջնադարյան մի գրիչ նրա գործը ի ուսումնասիրություն հանձնարարելիս ընթերցողին հատուկ զգուշացնում է. «Եթէ խիստ գիտնաւոր չես, եպերանս մի դնէր, զի Աստուածաբան է»[37]: Այլ առիթով շատ ավելի որոշակի է ասված. XVIII դարի առաջին կեսի մատենագիր Մեսրոպ Դանձակեցին Նազիանզացու «Առ որս» ճառաշարքի մասին ուղղակի գրում է. «յընթեռնուլս ոչ կարէի իմանալ զօրութիւն սորա»[38]:

Գրիգոր Նազիանզացու հայերեն թարգմանությունների բարգության մասին են վկայում ոչ միայն ձեռագրական ուղղակի հիշատակությունները, այլ նաև այդ գործերի մասին գրված բազմաթիվ հայերեն մեկնությունները, մեկնիչների զանազան գրառումները, գնահատություններըն ու քննադատական դիտողությունները: Այդ ամենի կարևորությունը ինքնին մեծանում է այն իմաստով, որ նշված մեկնությունների հեղինակները ոչ թե պատահական գրասերներ են, այլ հայոց միջնադարյան գրականության անվանի դեմքեր:

«Երեք մեծ կապադովկացիների» մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունները ինքնատիպ վիճակ են ներկայացնում նաև բնագիր-թարգմանություն հարաբերության առումով: Համեմատությունը ցույց է տալիս, որ միօրինակ չեն նույնիսկ միևնույն տասնամյակում թարգմանված նրանց գործերը: Ինչպես նկատել ենք այլ առիթով, «Վեցաւրեան» հայերենի է թարգմանվել V դարի առաջին կեսին, մինչև 443—450 թվականը[39]: Գրեթե նույն ժամանակահատվածում են թարգմանվել նաև Գրիգոր Նազիանզացու «Ի Բասիլիոս Կեսարացի»[40] և Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...»[41] դամբանական ճառե-

---

[37] Յուցակ հայերեն ձեռագրաց Ջմմառի վանքի Մատենադարանին, Բ, կազմեցին Ն. Ակինեան, Հ. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 121 բ:

[38] Ձեռ. № 1466, էջ 1 ա:

[39] Հմմտ. Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցաւրեայ արարչագործութեան, Երևան, 1984, էջ 1—322, բնագիրը տե՛ս „Basile de Césarée, Homélies sur l'Hexaéméron", texte grec, introduction et traduction de Stanislas Giet, professeur à l'Université de Strasbourg, Paris, 1968, էջ 5—561, հմմտ. Patrologiae cursus completus. Series graeca, t. 29 (այսուհետև՝ PG), էջ 4—204:

[40] Հայերեն թարգմանության հրատարակությունը տե՛ս „Кавказ и Византия", выпуск 2, Ереван, 1980, էջ 161—217, բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 493—605:

[41] Ձեռ. № 823, էջ 9 բ—18ա, հմմտ. ձեռ. № 1500, էջ 845 բ—847 ա, բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 852—864:

բը: Մինչդեռ պիտի նկատել, որ այդ հուշարձանների հայերեն թարգմանութիւնները ընդգծված եղանակով տարբերվում են միմյանցից: Սակայն այդ թարգմանութիւնների տարաբնույթ լինելու իրազութիւնը հիմք չի տալիս պնդելու, թե դրանք- արդյունք են գրական-կրթական տարբեր միջավայրերի կամ Մաշտոցի գործունեութեան շրջանում գոյութիւն ունեցող մեկից ավելի թարգմանական դպրոցների: Թվում է, երկու դեպքում էլ թարգմանիչները հետապնդել են որոշակի նպատակ՝ պատասխանել, գոհացում տալ այդ թարգմանութիւններն ընկալող տեղական հետաքրքրութիւններին, բավարարել թարգմանող միջավայրի պահանջմունքները: Եթե Բասեղ Կեսարացու «Վեցաւրեայի» հայերեն թարգմանութիւնը և մանավանդ ճառերը ունեն գրական-գեղարվեստական ստեղծագործութիւնը հատուկ տարրեր, կարելի է ասել՝ բանաստեղծական շնչով գրված բազմաթիվ մեծ ու փոքր հատվածներ[42], ապա նույնը չի կարելի պահանջել վարքագրական-փիլիսոփայական ժանրի «Ի Բասիլիոս Կեսարացի»[43], «Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանական ճառերից, որոնցում կենսագրական տարրի փաստացի հավաստիութիւնը ունկնդիրների համար տպավորության հիմնական պայման է ընկալվում: Եթե «Վեցաւրեայի» բուն նպատակը հրաշք-աշխար-

---

[42] Այդ մասին տե՛ս Բասեղ Կեսարացի, Յաղագս Վեցաւրեայ արարչագործութեան, առաջաբան, էջ ժ:

[43] «Ի Բասիլիոս Կեսարացի» դամբանական ճառի հին հայերեն թարգմանութիւնը ուշագրավ երեույթ է ոչ միայն վաղագույն թարգմանության իմաստով կամ, ասենք, հայոց ինքնուրույն մատենագրության վրա ծողած հետքերով, այլև այդ հուշարձանի շուրջ ստեղծված մեկնողական գրականության առումով ևս: Ձեռագրերում պահպանված այդ բնույթի աշխատանքները դասդասել ենք երեք հիմնական խմբագրութիւնների տակ. ա) «Պատճառ ճառին, զոր արարեալ է Գրիգորի Աստուածաբանի՝ վասն մանուանն Բասղի Կեսարացւոյ՝ ոստումնակցի իւրոյ» (ձեռ. № 1879, ԺԹ դ., էջ 199ա—202ա, ձեռ. № 4150, ԺԹ դ., էջ 20բ—22բ, ձեռ. № 621, ԺԷ դ., էջ 238բ—240ա, ձեռ. № 4765, 1695 թ., էջ 56բ—58ա): բ) «Պատճառ ճառին, զոր արարեալ է» (ձեռ. № 1897, ԺԲ դ., էջ 89բ—92բ, ձեռ. № 5254, 1280 թ., էջ 102բ—107բ): գ) «Ի Բասիլիոս Կեսարացի» (անանուն լուծմունք է. ձեռ. № 437, ԺԹ դ., էջ 107ա—109բ, ձեռ. № 59, ԺԹ—ԺԹ դդ., էջ 145բ—153ա, ձեռ. № 621, ԺԷ դ., էջ 320—328բ, ձեռ. № 1480, 1617 թ., էջ 217բ—222ա): Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ այդ երկի նկատմամբ մեզանում եղել է հատուկ հետաքրքրութիւն: Առանձնապես հոգ է տարվել պարզելու դրա հարուստ ու ինքնատիպ բանահյուսական աղբյուր, բացահայտելու և համապատասխան մեկնութեամբ օժտելու նրա բազմաթիվ առասպելապատում դրվագները: Այդ մեկնողական աշխատանքները քան խմբագրութիւնների հավաքել ենք մեկ հատորում, օժտել համապատասխան հետազոտութեամբ ու ծանոթագրութիւններով: Այն լույս կտեսնի առանձին գրքով:

հի, բնության գաղտնիքների բացահայտումն է իրրև արարչագործության արդյունք, ապա նշված դամբանական ճառերում Նազիանզացին և Նյուսացին ձգտում են ակնդետու նշանավոր հայրերի կենսապատումը արդյունավետ եղանակով ծառայեցնել քրիստոնեության հաստատմանը: Բուն սյուժեի իմաստով ևս հիշյալ հուշարձանները նման չեն: «Վեցօրեայում» բնության ու բնական երևույթների՝ Կեսարացու դուսպ բացատրությունները հայերին թարգմանության մեջ հաճախ կենսասիրության գովքի, բանաստեղծական կտորների են վերածվում, մինչդեռ Նազիանզացու և Նյուսացու դամբանական ճառերում գերակշռողը վարքագրական-փաստագրական նյութից մակաբերվող դատողություններն են և կյանքի ու մահվան փիլիսոփայական առեղծվածի շուրջ տարվող սառը խորհրդածությունը:

«Երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունները հայոց թարգմանական մատենագրության մեջ առանձնանում են նաև համեմատաբար քիչ փոփոխություններ կրելու, միջնադարյան «խմբագրական» միջամտություններից հնարավորին չափ զերծ մնալու իմաստով: Պահպանված հարյուրավոր հայերեն հին ու նոր ձեռագրական ընդօրինակությունների համադրական հետազոտությունը հնարավորություն է տալիս ասելու, որ եղած փոփոխությունները մնում են գրչական տարբերությունների շրջանակներում: Թերևս բացառություն է կազմում «Հարցումն Բարսեղի և սուրբ Աստուածաբանին» խորագիրը կրող երկը, որը հայոց միջնադարյան գրականության մեջ հայտնի է նաև Հարցում կարճառոտ անվամբ: Ութ տասնյակից ավելի բնօրինակություններով հայտնի այդ բնագրի ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ առկա գրչագրերը գաղտասվում են երեք հիմնական խմբագրությունների շուրջ, մինչդեռ նախապես, ինչպես պարզվել է մեր ուսումնասիրությամբ, եղել է Հարցումի մեկ թարգմանություն-խմբագրություն՝ «Տեսութիւն յաղագս հաւատոյ...» խորագրի տակ: Միջնադարյան Հայաստանում, գավառական բուռն վեճերի շրջանում Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու հիշյալ բնագրի հետ նման կերպ վարվելու լիարժեք հիմքեր կային: Ասվածը հաստատվում է նաև Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նյուսացու համաբնույթ Հարցումի օրինակով: Ձեռագրերի համեմատություն-խմբագործումից պարզվում է, որ այս աշխատանքը նույնպես հայտնի է մեկից ավելի խմբագրություններով, որոնք միմյանց նկատմամբ զերծ բնագրի տպավորություն են թողնում:

«Երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունների ձեռագրերում կան նաև առանձին ճառերի, դրքերի ու ժողո-

վածունների փոխադարձ վերազրումներ։ Այդ իրողությանը կարող էր նպաստել առաջին հերթին գրչական-կրթական այն միջավայրը, ուր միաժամանակ ոչ միայն թարգմանվում, այլև ընդօրինակվում էին մեզ հետաքրքրող մատենագիրների գործերը։ Պակաս կարևոր դեր չի խաղացել նաև Նազիանզացու և Նյուսացու անվան նույնությունը, Կեսարացու և Նյուսացու հարազատության հանդամանքը, ինչպես նաև առանձին ստեղծագործությունների համաբնույթ խորագրի ու բովանդակության նմանությունը։ Սակայն նկատելու է, որ հեղինակային շփոթի դեպքում էլ բուն բնագրերը հաճախ էական փոփոխությունների չեն ենթարկվել։ Այդ իրողության հիմնական պատճառը հավանաբար այն է, որ «երեք մեծ կապադովկացիները» անվերապահ հեղինակություն են համարվել։

«Երեք մեծ կապադովկացիների» հայերեն թարգմանությունները ուրույն վիճակ են ներկայացնում հայոց ինքնուրույն մատենագրության վրա թողած հետքերի առումով ևս։ Այդ թարգմանությունների հետքերը չեն սահմանափակվում հայոց հին գրականության մեկ կամ մի քանի հուշարձանների շրջանակներում, ինչպես նաև գրականության պատմության այս կամ այն ժամանակահատվածով և, որն առավել կարևոր է, դրանք պատահական քաղումներ չեն։ Համեմատությունը պարզորոշ ցույց է տալիս, որ կապադովկացի հիշյալ մատենագիրների հայերեն թարգմանությունների հետքեր կարելի է մատնացույց անել մեր ողջ միջնադարյան գրականության (V—XVIII դդ.) զանազան մեծ ու փոքր երկերի վրա։ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեակի» հայերեն թարգմանության հետքեր կան Եղնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Ստեփանոս Ասողիկի, Հովհաննես Սարկավագի, Հովհաննես Երզնկացու, Վարդան Արևելցու և այլոց հիմնական աշխատություններում։ Նույն Կեսարացու «Պահոց գիրքը»[44] հայերենի է թարգման-

---

[44] Բարսեղ Կեսարացու ճառերի և խրիմների (ոչ բոլոր) ժողովածուն, որը բյուզանդական գրականության մեջ հայտնի է «Թեոմատիկոն» անվամբ, միջնադարյան Հայաստանում տարածված է եղել «Պահոց գիրք» խորագրով և իրականում համարվում է «երեք մեծ կապադովկացիների» ամենաշատ հղվող և հատկապես պահքային վեհերի շրջանում հաճախ վկայակոչվող գրքերից մեկը։ Այն բովանդակում է 33 բնագիր, ընդ որում կան գործեր, որոնց հունարեն բնագրերը չեն պահպանվել։ Եղած միջնադարյան թարգմանությունների մեջ հայերենը հնագույնն է։ Երևանի, Վենետիկի և Երուսադեմի հայերեն գրչագրերի համեմատությամբ (հնագույնը՝ XI—XII դդ. ընդօրինակություն), բանասիրական առաջադրանքով և բնագրագիտական ծանոթագրություններով հրատարակության ենք պատրաստել «Պահոց գրքի» հայերեն թարգմանության քննական-համեմատական բնագիրը, որը լույս կտեսնի «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարով։

վել V—VIII դարերում և որոշակի ազդեցություն թողել V և հետագա դարերի հայոց գրականության վրա (Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Հովհան Մանդակունի, Հովհան Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Նարեկացի, Ստեփանոս Ասողիկ, Վարդան Արևելցի, Վանական վարդապետ, Հովհաննես Երզնկացի և այլք):

Նույնքան նկատելի են Գրիգոր Նպատիանդացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների հետքերը Կորյունի, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Ստեփանոս Սյունեցու, Ստեփանոս Ասողիկի, Հովհաննես Սարկավագի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի, Վարդան Այգեկցու, Հովհաննես Երզնկացու, Վարդան Արևելցու և այլոց գործերի վրա, որոնք հայոց հին գրականության երևելի դեմքեր են:

Քիչ չեն նաև Գրիգոր Նյուսացու ճառերի ու թղթերի հայերեն թարգմանությունների հետքերի օրինակները. այդ առումով առաջին հերթին հիշատակելի են բյուզանդական մատենագրի «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի բառացի հետքերը Մ. Խորենացու Հայոց պատմության վրա, նրա «Երգ երգոց» մեկնության հետքերը Գրիգոր Նարեկացու և Վարդան Արևելցու համանուն գործերի վրա: Պարզվում է, որ Նյուսացու ճառերի ու թղթերի հայերեն օրինակներից էապես օգտվում են Անանիա Սանահնեցին, Ներսես Շնորհալին, ինչպես նաև Վարդան Այգեկցին և այլք:

Ձեռագրական հավաքածոների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական ժառանգության նկատմամբ մեզանում տևական ու կայուն հետաքրքրություն է եղել: Այդ են վկայում այն բազմաթիվ մեկնությունները, պատճառները և լուծմունքները, որ գրվել են նշված մատենագիրների հայերեն թարգմանությունների առիթով: Տեղական մշակութային պահանջմունքները բավարարելու նպատակով ստեղծված այդ մեկնողական աշխատանքները (հատկապես պատճառները) ձեռագրերում, որպես կանոն, ուղեկցվում են վարքագրական, մատենագիտական, կարելի է ասել նաև՝ միջնադարյան գրականագիտական համապատասխան նախագիտելիքներով, հեղինակին ու գործը ներկայացնելու որոշակի ձգտմամբ:

Այսպիսով, բյուզանդական այս երեք մատենագիրները միջնադարյան Հայաստանում մեծ հմայքով են ունեցել, փաստական գործունեությամբ ու մատենագրական ժառանգությամբ ազդել են հայոց մշակութային կյանքի վրա և հայերենի թարգմանվել գերազանցապես V—VIII

դարերում: Ուստի կապադովկիայի նշված մատենագիրների երկերի հայերեն թարգմանությունների ուսումնասիրությունը միջնադարյան հայ գրականության խնդիրների, նրա ակունքների ու ժանրերի ուսումնասիրություն է նշանակում: Այս ուղղությամբ ի՞նչ է կատարվել նախորդ սերնդի հայագիտների կողմից[45]: Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների զգալի մասը ձեռագիր վիճակում ծանոթ է եղել նոր հայկազյան բառարանագիրներին, որոնք ձեռքի տակ ունեցել են և քաղում-հղում են կատարել բյուզանդական մատենագրի տասը անուն աշխատություններից:

Բառարանագիրները, ինչպես և սպասելի էր, հիշյալ բնագրերից քաղումներ կատարելիս բառարանի բնձեռած հնարավորության սահմաններում միաժամանակ հետևել են այդ թարգմանությունների բնույթին և առանձին դեպքերում այս կամ այն հուշարձանի հայերեն թարգմանության ժամանակին ու ինքնատիպությանը վերաբերող դիտողություններ արձանագրել: Այդ բնորոշումները կարևոր դիտելով հանդերձ՝ պիտի նկատել, որ բառարանագիրների նպատակը ավելի շուտ զանազան բառերի բացատրության առիթով վկայակոչած այն բազմաթիվ հատվածների հրատարակության մեջ է, որոնք հետագայում բանասիրական-աղբյուրագիտական որոշակի հարցադրումների հիմք ծառայեցին Ն. Բյուզանդացու, Գր. Խալաթյանցի և այլոց համար:

Գրիգոր Նյուսացու կյանքի[46] ու մատենագրական ժառանգության

---

[45] Բ. Կենարացու և Գր. Նարեկացու մասին եղած հայագիտական գրականության անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում:

[46] Ենթադրվում է, որ Գրիգոր Նյուսացին ծնվել է 335 թ. Կապադովկյան Կեսարիայում, ուսման հարկը լուծյան իմացող ու գնահատող ընտանիքում: Նյուսացին ևս, նույն ավանդական հունակով, իր նախագիտելիքների անհրաժեշտ պաշարը ստանում է հոր՝ Եփրեմյան ուսուցիչ Բարսեղի ձեռքի տակ, այնուհետև ուսանում է Պաղեստինյան Կեսարիայի հայտնի դպրոցում (տե՛ս *А. П. Рудаков.* Очерки византийской культуры по данным греческой агиографии, М., 1917, стр 97—101, համմ. „Культура Византии". М., 1984, стр. 499): *Այս կրթօջախը իրականում եղավ նրա ուսումնասիրության և՛ շարունակությունը, և՛ ավարտը: Գիտելիքների մնացած ողջ պաշարը ձեռք է բերվել ինքնակրթությամբ: Այդուհանդերձ, մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ* „...он получил блестящее риторическое и философское образование (տե՛ս „Памятники византийской литературы IV—IX веков, М. 1. 68, стр. 84): Նյուսացին եղել է եղբոր՝ Բարսեղ Կեսարացու հիմնած վանական հաստատության ուսնկղբը, աշխատել է Եփրեմյան ուսուցիչ, վարել է հայրենակ Նյուսա գյուղի և Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքի եպիսկոպոսական թեմերը: Տևական պայքար է տարել արիոսականության դեմ, ուստի և հալածանքի

մասին մեղանում առաջին տեղեկանքը կազմել է վաստակաշատ հայագետ Գ. Զարբհանալյանը[47]: Հետազոտողի խոսքը, կարելի է ասել, բաղկացած է երկու մասից. ա) կենսագրական սեղմ ակնարկ, բ) Նյուսացու որոշ երկասիրությունների ընդհանուր գնահատություն: Առաջին կետում հիշատակվում են վարքագրական գրականության մեջ բազմիցս արծարծված Գրիգոր Նյուսացու կյանքի ու գործունեության մի շարք տվյալներ, մասնավորապես ուսումնառության, եպիսկոպոս ձեռնադրվելու, վաղես կայսեր պահանջով աքսորվելու (375 թ.), Կ. Պոլսի նշանավոր տիեզերական ժողովին (381 թ.) մասնակցելու և այլ հարցեր: Հետազոտողը Գրիգոր Նյուսացու գրական վաստակին անդրադառնալիս հիշատակում է յոթ անուն գործ և ամենասեղմ եղանակով գնահատում դրանք:

Գրիգոր Նյուսացի Մովսես Խորենացի առնչակցության բացահայտման իմաստով ուշագրավ կռահումներ ունի Նորայր Բյուզանդացին: Հայագիտը Նոր Հայկազյան բառարանագիրների վկայակոչած օրինակները համեմատելու եղանակով «Ի Մելիտոս եպիսկոպոս...» և «Ի կոտրումն մանկանցն Բեթղեհէմի...» ճառերի հետքեր է տեսնում Մովսես Խորենացու Պատմության մեջ[48]: Հետազոտողի բացահայտած ընդհանուր տեղիները շատ չեն (վեց օրինակ Նյուսացու նշված առաջին ճառից և երկու օրինակ երկրորդ ճառից), սակայն հիշյալ մատենագրական առնչակցության բացահայտումն ինքնին ուշագրավ իրողություն է թե՛ պատմահոր նոր սկզբնաղբյուրների հայտնաբերման և թե՛ Նյուսացու մատենագրական վաստակի՝ հայոց ինքնուրույն գրականության վրա թողած հետքերի առումով:

Հայագիտության մարզում Գրիգոր Նյուսացու, նրա մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների մասին հաջորդ տեղեկանքը նույնպես պատկանում է Գ. Զարբհանալյանին: Հայագետը

է ենթադրվել վաղես կայսեր կողմից (364—378), Գրիգոր Նյուսացին 381 թ. և հետագա տարիներին համարվել է եկեղեցու հեղինակավոր սյուներից մեկը: Մահացել է, հավանաբար, 391 թ.: Նրա կյանքի ու գործունեության մասին կան բազմաթիվ հին ու նոր հրատարակություններ. տե՛ս գրանցիկ մի քանիսը. PG, t. 44, էջ 10—11, Վարք սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ (տե՛ս Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. ժ, ի Վենետիկ, 1814, էջ 369—371), Ф. Фаррар, Жизнь и труды св. отцов и учителей церкви, СПб, 1891, էջ 500—523, La prédication des peres Cappadociens. Le prédicateur et son aucktoire par Feon Bernardi, Paris, 1968, էջ 261—330:

[47] Գ. Զարբհանալեան, Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմայեցւոց եւ հարց եկեղեցւոյ, Վենետիկ, 1856, էջ 756—762:

[48] «Քննասէր», Սաղմոսում, 1887, էջ 60—63:

իր «Մատենադարան հայկական բարգմանութեանց նախնեաց» աշխատության մեջ ներկայացնում է Նյուսացու տասնվեց անուն աշխատությունն՝ ըստ անհրաժեշտության դրանք օժտելով առանձին ծանուցումներով և օժանդակ բացատրություններով[49]: XIX դարի ձեռագրական հավաքածոների պայմաններում Գ. Զարբհանալյանի մատենագիտական ցանկը իր նախորդ աշխատանքի հետ միասին թերևս միակ համեմատաբար ամփոփ տեղեկանքն էր, որը ընդհանուր պատկերացում էր տալիս Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն բարգմանությունների մասին:

Հայագետ Գ. Խալաթյանցը Նյուսացուն անդրադառնում է Մ. Խորենացու աղբյուրների առնչակցությամբ: Նորայր Բյուզանդացու հետևությամբ նա ևս պնդում է, որ Նյուսացու «Ի կոտորումն մանկանցն Բեթղեհէմի...» և «Ի Մելիտոս եպիսկոպոս...»[50] ճառերի հայերեն բարգմանություններին ծանոթ է եղել Խորենացին և օգտվել է դրանցից: Հետազոտողը, սակայն, ընդհանրության օրինակ է վկայում միայն երկրորդ ճառից[51]: Խալաթյանցը, առանց որևէ հատված-օրինակ վկայակոչելու, Խորենացու Պատմության աղբյուրների շարքն է դասում նաև «Վարք երանելոյն Գրիգորի Սքանչելագործի...» ճառի հայերեն բարգմանությունը[52]: Նյուսացի-Խորենացի ենթադրվող առնչակցությունն ընդհանրացնելիս Գր. Խալաթյանցը եզրակացնում է. «эти заимствования относятся не столько к содержанию, сколько ко внешней отделке, так сказать, облицовке изложения»[53]. Հետազոտողը միաժամանակ նկատում է, որ Ատավածաշնչի, Կնդծ Կալիսթենեսի Աղեքսանդրի պատմության, ինչպես նաև Փիլոնի, Եփրեմի և այլոց թվում Գրիգոր Նյուսացու հիշյալ ճառերը ևս պիտի դասել Խորենացու Պատմության երկրորդական աղբյուրների շարքը:

Գրիգոր Նյուսացու կյանքի ու գործունեության հիմնական դրվագներին անդրադարձել է նաև Կարապետ եպիսկոպոսը[54]: Նա միաժամա-

---

[49] *Տե՛ս Մատենադարան հայկական բարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 362—374:*

[50] Նորայր Բյուզանդացու նման Գր. Խալաթյանցը նույնպես «Ի Մելիտոս...» ճառի հեղինակ է ընդունում Գրիգոր Նազիանզացուն:

[51] *Г. Халатьянц*, Армянские Аршакиды в „Истории Армении" Моисея Хоренского, часть 2, материалы, М., 1903, *էջ 140—141:*

[52] Նույն տեղում, часть I, *էջ 49:*

[53] Նույն տեղում, *էջ 303:*

[54] *Կնիք հաւատոյ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914, էջ XLVI—XLVII:*

նակ շրջանառության մեջ է դրել բյուզանդական մատենագրի ճառերից չորս ընդարձակ հատված[55]։ Ինքնին հասկանալի է, որ Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների հրատարակված լինելու պայմաններում, Նոր Հայկազյան բառարանագիրների հրապարակումներից հետո, այդ հատվածները կարևոր նշանակություն ունեին առաջին հերթին իբրև հին թարգմանական հուշարձաններից քաղված համեմատաբար ընդարձակ հրապարակումներ։

Գրիգոր Նյուսացու մասին եղած գրականության մեջ իր բնույթով առանձնանում է Ա. Տեր-Պողոսյանի աշխատանքը։ Հետազոտողը Նյուսացու կյանքն ու գործունեությունը ամենամեծ գծերով ներկայացնելուց հետո անդրադառնում է նրա «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն» գործի հայերեն թարգմանությանը, բայց ամենայնի գնահատում այն, ընդգծում վերջինիս նշանակությունը հայ կենսաբանական մտքի զարգացման պատմության համար[56]։

Միաժամանակ նկատելու է, որ Գրիգոր Նյուսացին հիշատակվում է նաև դանագան եկեղեցական ժողովների արխիվով, առանձին հոգևոր իրադարձությունների վերապատմման, որոշ բանասիրական ուսումնասիրությունների առնչակցությամբ։ Այդ բնույթի աշխատանքներում հաճախ նույնությամբ հիշատակվում են Նյուսացու վարքի առանձին դրվագներ[57], ուսումնասիրության շրջանի որոշ մանրամասներ, որոնց բուն սկզբնաղբյուրը բյուզանդական մատենագրի հրատարակված վարքն է[58]։

Այսպիսով, վերոշարադրյալը ամփոփելու-ընդհանրացնելու դիպքում կարող ենք ասել, որ առ այսօր մեզանում չկա Գրիգոր Նյուսացու կյան-

---

[55] Նույն տեղում, էջ 24—25, 267—276, 289—293, 348։

[56] Ա՛վ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև XVIII դարը), Երևան, 1960, էջ 199—207։

[57] Ե. Տեր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա, էջմիածին, 1908, էջ 270—271, Նույնի՝ «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 217, 218, 288, 302, Ա. Ջամիճյան, Հայ գրականութիւն պատմութիւն, հ. Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 90, «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք», Լոյս ընծայեաց Բարսեղ վ. Մարգիսեան, Վիեննաիկ, 1907, էջ ԺԴ, Տ. Գաբրճեանց, Տիեզերական պատմութիւն, հ. Բ, Վիեննա, 1852, էջ 344, 347, 348, 356, Պ. Տեր-Պողոսեան, Ս. Բարսեղ Կեսարացի եւ իր գրութիւնները հայերեն թարգմանութեամբ («Հանդէս ամսօրեայ», 1968, № 10—12, էջ 399)։ Ինչ. Ավգերեցյանը Նյուսացուն անդրադառնում է նրա «Սրբոյ նրգոյի մեկնութիւնից» քաղված հատվածով և աննախադեպ բառերի առիթով (տե՛ս նրա «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 126, 127)։

[58] Տե՛ս Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Ժ, Վիեննաիկ, 1814, էջ 369—374։

քրն ու գործունեությունը լուսաբանող, նրա գրական ժառանգության հայերեն թարգմանությունները գնահատող որևէ ամբողջական գիտական հոդված-հետազոտություն: Այս իրողությունը հիմնականում ունի երկու պատճառ. առաջին ու հիմնական արգելքը եղել է նրա գործերի հայերեն թարգմանությունների հրատարակված չինելը: Երկրորդ խոչընդոտը, հավանաբար, պիտի համարել ձեռագրական միավորների ցրվածությունը, ինչպես նաև հավաքածոների նկարագրված չինելու պարագան:

Երե Գրիգոր Նյուսացու գրական ժառանգության հրատարակության իմաստով մեր օրերում որևէ նոր առաջընթաց քայլ չի կատարվել[59], ապա նույնը չի կարելի ասել նրա գրական վաստակը բովանդակող ձեռագրերի նկարագրության մասին:

Հայոց միջավայրում Գրիգոր Նյուսացու երկերի նկատմամբ եղած սևեռական ուշադրության ապացույցներից մեկը գրանք բովանդակող ձեռագրերի պատկառելի քանակությունն է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում բյուզանդական մատենագրի գործերի նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է տակավին V դարում և շարունակվել ողջ միջնադարի ընթացքում:

Գրիգոր Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների ուսումնասիրությունը հայոց հին գրականության շատ խնդիրներ է պարզում: Այն կարևոր է նաև պատմամշակութային և տեքստաբանական առում-

---

59 Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանություններից մեզ ծանոթ են հետևյալ հրատարակությունները. ա) «Ներբողեան ի թաղումն Տեառն և Յովսէփ Արեմաթացւոյ» (տե՛ս «Գիրք և ճառ հոգևշահ...», կ. Պոլիս, 1722, էջ 204—227), բ) «Ի կոտորումն անմեղանցն Բեթղեհէմի...» (տե՛ս «Յայսմաւուրք», կ. Պոլիս, 1834, հավելված, էջ 1—5), գ) «Վարք երանելոյն Գրիգորի Սքանչելագործի...» (տե՛ս «Յայսմաւուրք», կ. Պոլիս, 1834, էջ 241—243), դ) «Ներբողեան ի սուրբ հայրն Սիբլեմ»:

Կան նաև առանձին հավաքածոական հրատարակություններ (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 24—25, 267—276, 289—293, 348), «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ ահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Կարապետ վարդապետի և Տրուանդ վարդապետի, Ս. Էջմիածին, 1908, էջ 25, 83:

Բյուզանդական մատենագրի գործերի հունարեն բնագրերից ձեռքի տակ ունենալ հնր հետևյալ հրատարակությունները. PG. t. 44—46, *Grégoire de Nysse*. La vie de Moïse...introduction, texte critique et traduction de Jean Daniélou, Paris, 1968, *Grégoire de Nysse*, Vie de Sainte-Macrine, itroduction, texte critique, traduction notes et index par Pierre Maraval, Paris, 1971, *Gregorii Nysseni* Sermones, pars II. Ediderunt Gunterus Heil, Johannes p. Cavarnos, Otto Lendle. Past mortem Henrici Dörrie, volumen edendum curavit Friedhelm Mann, Köln, 1990.

ներով։ Իբրև Բարսեղ Կեսարացու աջակից Գրիգոր Նյուսացին գործուն մասնակցություն է բերում Փոքր Հայքի եկեղեցական-գավառական հարցերի քննարկմանը՝ որոշակիորեն առնչվելով հայկական միջավայրի հետ, ուստի նրա առանձին երկերի թարգմանությունը դավանական ու մշակութային գործնական նպատակ էր հետապնդում։ Դրանք միաժամանակ գրական ինքնատիպ մոդելներ էին ծառայում ինքնուրույն գրական հուշարձանների ձևավորման ճանապարհին։ Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների ուսումնասիրությունը իր հերթին ուշ անտիկ և վաղ բյուզանդական քաղաքակրթության ապրելությունների ոլորտի որոշում է նշանակում, հունա-հայկական գրական առնչությունների կարևոր մի գրվագի բացահայտում ու լուսաբանում։ Ի վերջո, հայերեն թարգմանությունների օգնությամբ հնարավոր է դառնում վերահաստել Գրիգոր Նյուսացու հունարեն բնագրերի կրած հետագա փոփոխությունները, ինչպես որ այդ նույն թարգմանությունների համադրությունը հայկական հուշարձաններում առկա քաղումներին ճանապարհ է բացում վերջիններիս մեջ եղած գրչական աղավաղումները սրբագրելու համար։ Այս հանգամանքը առանձնակի կարևորություն ունի հայկական բանասիրության համար՝ լեզվի պատմության, բառագիտության, ոճագիտության, ճարտասանական և բանաստեղծական արվեստների խնդիրներ արծարծելիս։

Գրիգոր Նյուսացու գրական ժառանգությունը պարունակող հարյուրավոր ձեռագրերի, նրա մասին եղած միջնադարյան տպագիր ու անտիպ նյութերի աղբյուրագիտական համադիր քննությունը որոշակի պատասխան է տալիս արդի հայագիտությանը հետաքրքրող մի շարք հարցերի։

Միջնադարյան Հայաստանում մեծ տարածում և ընդունելություն գտած Գրիգոր Նյուսացու ճառերի հայերին թարգմանությունները բուն ամենայնի զնահատելուց բացի առաջարկվող ուսումնասիրության մեջ վիր ենք հանել դրանց թարգմանության բնույթի, թարգմանիչների և մանավանդ հայոց հին գրականության վրա թողած հետքերի հետ կապված մի շարք խնդիրներ։ Սկզբնավորման և հետագա շրջանի հայ մատենագիրների երկերը Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների հետ համադրելու եղանակով բացահայտել ենք տեքստաբանական ուղղակի առնչակցության բազմաթիվ օրինակներ, որոնք ունեն գրական և աղբյուրագիտական կարևոր նշանակություն։ Նպատակ ենք ունեցել պարզելու բյուզանդական մատենագրի ժառանգության տեղն ու դերը

հայոց հին գրականության ոլորտում, նրա մասնակցությունը տեղական գրական պրոցեսում՝ ինչպես թեմատիկայի, գաղափարական միավածության, այնպես էլ ժանրային բազմազանության ձևավորման առումով։ Սույն մենագրական ուսումնասիրությամբ մենք գիտական հիմքեր ենք մշակում Նյուսացու ժառանգության միջնադարյան հայերեն թարգմանությունների ապագա հրատարակության համար։

«Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը գրվել է ձեռագիր աղբյուրների հիման վրա՝ օգտագործելով թե՛ հայրենական (Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան), թե՛ Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի հայկական ձեռագրական հավաքածոներում եղած նյութերը (ավելի քան 200 ձեռագիր)։

Առաջարկվող ուսումնասիրությունը գրված է ինչպես թարգմանական մատենագրության, այնպես էլ սկզբնավորման և հետագա շրջանի հայոց հին գրականության պատմության խնդիրներ քննելու կարվածքով։ Այդ նշանակում է, թե նման հետազոտության արդյունքները կարող են արտացոլվել գրականության պատմության համապատասխան հղինակներին վերաբերող դրվագներում ու էջերում։ Ինքնին հասկանալի է, որ այն միաժամանակ կազմելու է «Հայ թարգմանական մատենագրության պատմության» մի ինքնուրույն գլուխ՝ ի շարս հույն, ասորի, լատին և այլ ազգի հայերեն թարգմանված հեղինակների։ IV դարի հույն հեղինակի գործերի V—VIII դարերի հայերեն թարգմանությունների ուսումնասիրությունը «հայ-բյուզանդական գրական առնչություններին» պրոբլեմի քննության է նշանակում, գործնականորեն նշանակալի նպաստ բերելով բյուզանդական գրականության պատմությանը՝ հեղինակային պատկանելության, բնագրի անաղարտության և այս կամ այն երկի գեղարվեստական-իմաստաբանական գնահատության հարցեր արծարծելիս։

Բացահայտելով ու արժեքավորելով Գրիգոր Նյուսացու տարբեր երկերի ազդեցությունը վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի հայ մատենագրության մի շարք հուշարձանների վրա, մենք ջանացել ենք նյութեր կուտակել Նյուսացու գործերի հայերեն թարգմանություններից օգտված հայ հեղինակների առանձին երկերի քննական հրատարակության համար։

Սույն ուսումնասիրությամբ առաջադրված խնդիրները քննարկելիս առանձնակի կարևորություն ենք տվել հայերեն թարգմանությունները հունարեն նախօրինակների հետ համեմատելուն, դրանով իսկ պարզե-

լով դրանց ինքնատիպությունները։ Բանասիրական վերլուծության ու տեքստաբանական համադրության ճանապարհով մեր բացահայտած բնագրային ընդհանրությունները մեկնաբանելիս ելել ենք այն իրողությունից, որ թարգմանական ճանապարհով հայ գրականություն մտած երկը կամ նրա առանձին հատվածները կարող են միանգամայն նոր ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություն ունենալ, որպիսին և են հիմնականում Խորենացու Պատմության էջերում հանդիպող քաղումները Նյուսացուց։ Այդ նշանակում է, թե որոշակի տարբերակում է անհրաժեշտ թարգմանական երկի ընտրության հանգամանքները և արդեն թարգմանվածը՝ իբրև ընկալող գրականության սեփականություն ուսումնասիրելիս։

ԳԼՈՒԽ Ա

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրիգոր Նյուսացին և առհասարակ «երեք մեծ կապադովկացիները» հաճախ բառացի հղվում, երբեմն էլ պարզապես հիշատակվում են սկզբնավորման և հետագա շրջանի հայ ինքնուրույն մատենագրության գրեթե բոլոր հիմնական հուշարձաններում: Սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները ժանրային առումով, որոշ պայմանականությամբ, կարելի է երկու հիմնական խմբի բաժանել՝ արձակ և չափածո: Բուն մատենագրական հուշարձաններում եղած հղում-վկայակոչությունները, կարելի է ասել, գերակշռող մասով հրապարակված են, մասամբ նաև մասնագիտական ուշադրության արժանացած[1]: Մինչդեռ արդարացի չի լինի նույն կերպ մտածել գրշագրերում պահպանված չափածո և արձակ այն բազմաթիվ հիշատակարանների ու հիշատակագրությունների մասին, որոնք կամ անտիպ են, կամ էլ, հրատարակված լինելով հանդերձ, դուրս են մնացել մասնագիտական անհրաժեշտ ուշադրության ոլորտից:

Միաժամանակ պիտի նկատել, որ «երեք մեծ կապադովկացիներին» պարզապես հիշատակող, երբեմն էլ քաղվածաբար վկայակոչող հիշատակությունների զգալի մասը, ինչպես և սպասելի էր, հավուր պատշաճի գրառումներ են՝ հիմնականում կապված գրշագրերի ընդօրի-

---

[1] Նկատի ունենք Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Սեբեոսի, Ա. Շիրակացու և այլոց այն աշխատությունները, որոնցում ամենատարբեր առիթներով կարելի է հանդիպել Գրիգոր Նյուսացու անվան հիշատակություններ: Հասկանալի պատճառով վկայակոչման օրինակները, չնչին բացառությամբ, վերաբերում են «երեք մեծ կապադովկացիներին», ուստի անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով չենք անդրադառնալու այն հեղինակներին ու գործերին, որոնց առնչվել ենք Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու մասին գրած մեր նախորդ մենագրություններում:

նակության հանգամանքների, գրչության վայրի, ընդօրինակողի միջավայրի, անձի ու գործի հետ: Տվյալ պարագայում հիշատակարան-հիշատակագրությունների բովանդակությունը, գրչի ասելիքը հաճախ պայմանավորված է և ուղղակիորեն մակաբերվում է ընդօրինակվող նյութի գործնական անհրաժեշտությունից: Որոշակի խթանիչ գործոն է դիտվում այն իրողությունը, երբ ընդօրինակվող նյութը հնարավոր է դառնում կապել, ուղղակիորեն առնչել այս կամ այն կրթական, մշակութային կենտրոնի դերի ու նշանակության հետ:

Քանի որ խոսքը հաճախ շարքային ընդօրինակողներին է վերաբերում, ապա ինքնին հասկանալի է, որ չափածո և արձակ ժանրով գրված այդ ստեղծագործությունները հեռու են գեղարվեստական մշակված խոսքին ու մտածողությանը հատուկ չափ ու ձևից, հղկվածությունից ու ասելիքի կատարելությունից և մնում են իրրև պարզունակ գրառումներ՝ յուրաքանչյուրն իր կատարողի կարողության ու հնարավորության շրջանակներում: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև դրանց հեղինակները, ասվեց, գրեթե առանց բացառության, գրիչներ են, որոնց խոսքը Գրիգոր Նյուսացու անձի ու գործի հետ կապված, արտաքին տպավորության տակ գրված պարզ ձևակերպումներ են: Այսպես, օրինակ, գրիչ Ստեփանոս Թոխատեցու նման մի չափածո գործում կարդում ենք.

Ով տէր Գրիգոր, դու գովելի,
Քաղցրաբարբառ ըստ Մամասի,
Անուանակցին քո նըմանի,
Գրիգորիոս Լուսաւորչի,
Սքանչելագործ սբ. Գրիգորի
Ի Աստուածարան վարդապետի,
Ակռայկանդոյ սբ. Գրիգորի
Ի Նիւսացոյն Գրիգորիսի[2]:

Քիչ չեն դեպքերը, երբ գրիչը նույն արտահայտչամիջոցին է դիմում հիշվելու, հիշարժան լինելու իր միօրինակ աղերսանքն արտահայտելիս, միաժամանակ ընդհանրացնելով կապադովկացի մատենագիրների մեծության, սրբացածության ու համընդհանուր հեղինակության համարվելու իր իսկ պատկերացումները.

---

[2] *Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 251:*

Անտեսին եղեք տեսաւղ և պատմեցէք զանպատմելին,
Նիւսացիտ Գրիգորիոս, որ և անուամբ հրեշտակային,
Եւ սրբազանդ Բասիլիոս՝ պատմեաս գրիչ անճառ բանին,
Սերտեալ ի սէրն աստուածային Գրիգորիոս Աստուածաբան[3]։

Հիշատակման նոյնանունութիւն շափաժո գրվազ կա Նյուսացու գործերի ընդօրինակման առիթով գրված Սմբատ Գունդստապլի ընդարձակ հիշատակարանում։ Ահա մի հատված այդ գործից.

Որք ի խնդիր լինիք բանիս՝
Ըմմակագիր բնութեան ազգիս
Գրիգոր Նիւսեայ վարդապետիս։
Զոր ժողովեալ ի մի տեղիս՝
Յարմարեցի ի պատեհիս,
Ես մեղաւորս և ողբալիս
Տէր և պարոն Պապեոնիս,
Եղբայր Հեթմոյ թագաւորիս
Եւ սպայապետ Հայոց գնդի...[4]

Պահպանված հիշատակարաններում, ինչպես նաև ամենատարբեր առիթներով արված գրառումներում և այլուր առանձնահատուկ հոգածությամբ են վերապատմվում Գրիգոր Նյուսացու պատրաստվածության, անսահման բարության ու առաքինության՝ հայոց շրջանում արմատավորված համապատասխան ձևակերպումները։ Հաճախադեպ են կապադովկացի մատենագիրների փառավոր գործունեությունը հիշատակելու, ուսանելի կողմերը ի ցույց դնելու օրինակները։ Ահա այսպիսի տեսք ունի Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու առիթով գրված հետևյալ հիշատակագրությունը. «Եւ արդ գոհացողական փառատրութիւն, զոր աղէբասական ձայնիւ մատուցանեմք Աստուծոյ և սրբոցս, զորս հանդերձել եմք յառաջիկայս յիշել, ոչ է թէ յաւելուած ինչ փառաց նոցա առնելով, զի առ ի մէնջ բարեացն չեն ինչ կարաւտ, բայց այս ևեթ, զի անձգրական բարեացն, որ յամենախնամ հաւրէն միջնորդութեամբ սոցա ի մեզ փոխատրեցաւ»[5]։

Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների գրշագրերը ընդհանուր առմամբ աչքի են ընկնում առա-

---

[3] *Ձեռ. № 5518, էջ 404։*

[4] *Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 481, համմ. Գաբեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 955։ Սույն հրապարակման մեջ կան որոշ դրչական-ուղղագրական տարբերություններ։*

[5] *Ձեռ. № 7443, էջ 286 բ։*

տութեամբ, հնութեամբ և մանավանդ միջնադարեան մշակութային հրաշակավոր կենտրոններում ընդօրինակվելու իրողութեամբ։ Այս առումով միանգամայն հիշատակութեան է արժանի 1227 թ. Պղնձահանքում ընդօրինակված, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 1013 ձեռագիր ժողովածուն, ուր ամփոփված են Գրիգոր Նյուսացու Մեկնութիւն ժողովողին Յաղագս երգոյ երգոցս, Խաւսք յիճն երեւութիւնն, Յորդորումն մանկանց ի կուսութիւն և նրան վերագրվող Յաղագս բնութեան մարդոյ ծավալուն աշխատանքները։

Գրչագրում, թարգմանական հիշատակարանից հետո, պահպանվել է ձեռագրի ընդօրինակության նյութին ու հանգամանքներին վերաբերող գրչի հետևյալ հիշատակարանը. «Յամին ՅՀԼԵ [=6735—5508==1227 թ.] երորդի յափտենից թուոյն գրեցաւ և աւարտեցաւ դիրքս Գրիգորի Նիւսացոյ եպիսկոպոսի, յ[ը]նդիր և լաւ աւրինակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարտ և անարժան կրաւնաւորի՝ Սիմէոնի, յերկիրս Հայոց[6], մերձ ի լաւել, ի վանքն, որ կոչի Սպլէնձահան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, յիշխանութիւն Իվանէ աթաբագին՝ շինողի վանիցս, զոր յերկար ժամանակ արասցէ տէր, որդովքն իւրովք հանդերձ։ Արդ աղաչեմ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի արարէք։ Եւ որք յիշէք՝ յիշեալ լիցիք Տեառնէ»[7]։ Սույն հիշատակաբանի հեղինակը նշանավոր թարգմանիչ-մատենագիր Սիմեոն Պղնձահանեցին է։ Տվյալ պարագայում բյուզանդական մատենագրի ճառերի ընդօրինակման եղանակով տարածումը «Հայ-վրացական նշանավոր կրթօջախ, մատենագրական բեղմնավոր գործունեության ուշադրավ կենտրոն»[8] Պղնձահանքում ինքնին Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների կարևորության ընդգծում, դրանց կենսագործունեության հաստատում է նշանակում։

Գրիգոր Նյուսացու գրական ժառանգության հայերեն թարգմանությունների հետ կապված զանազան հարցերի պարզաբանման, դրանց տարածման ու մասսայականացման նպատակով գրված հայերեն պատ-

---

[6] Գրչագրում՝ Հայլոց։

[7] Ձեռ. № 1013, էջ 241 բ։ Հրատարակությունը տե՛ս Գառեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 847—848, Ն. Ակինեան, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէն, Վիեննա, 1951, էջ 7—8, Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 208—209, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա.. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 154։

[8] Պ. Մ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 213։

ճառների, մեկնությունների ու լուծմունքների ավելի մեծ թիվ կազմող ընդօրինակություններ կան մեզանում: Դրանց հետազոտությունը ցույց է տալիս, որ հայկական միջնադարում բյուզանդական մատենագրի վաստակի ուսումնասիրման ուղղությամբ տարվել է որոշակի ծրագրավորված աշխատանք: Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների քննության, դրանց շուրջ միջնադարում ստեղծված մեկնողական գրականության գնահատման իմաստով կարևոր է Գ. Զարբհանալյանի հետևյալ բնորոշումը. «Մեր մատենագրության մէջ՝ ինչպես Գրիգորի Աստուածաբանին, և այլոց ոմանց ի վարդապետաց եկեղեցւոյ՝ ասանկ նաև Նիւսացւոյս գրոց լուծմունք կամ պարզաբանութիւնք կը գտնուին, շատ անգամ յանանուն կամ մեզի յանծանօթ մատենագրաց: Յաճախ ընտիր, հմտալից և հետաքննական են այս երկասիրութիւնք»[9]:

Ուսուցիչ-աշակերտ մատենագրական փոխհարաբերությունների պահպանված դրվագներում լուրջ խոսակցություն կա շարքային մատենագիրներից մինչև կաթողիկոսի գործուն միջամտությամբ պայմանավորված գրական գործընթացի մասին: Այս իմաստով ուշագրավ հաղորդում է պահպանվել Մաշտոցի անվան Մատենադարանի XII դ. մի ձեռագրում. «Ես՝ նուաստս, յորդիս եկեղեցւոյ Խաչատուր, բազում փութով հարցանէի խնդրելով զ՝ատճառս գրելոցս սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ գտանել և յոլովս լուայ ի կենդանի ձայնից պատճառս այլ և այլս առանձին ամենայն գրելոցն Նիւսացւոյ: Իսկ վարդապետն իմ Վարդան եցոյց ինձ գրեալ յիւրում Տաւնապատճառին, զոր ինքն իսկ հաստատեալ էր ի Տէր Ներսիսէ՝ հայոց կաթուղիկոսէ»[10]: Ինչպես տեսնում ենք, Խաչատուր գրչի հաղորդումը պարզ պատկերացում է տալիս Նյուսացու «առանձին ամենայն գրելոցն» պատճառների մասին, անվանապես հիշատակվում են մշակութային այդ գործը սատարող անձինք՝ Ներսես Շնորհալին (1098—1173) և Վարդան Հաղբատեցին (մահ. 1191 թ.):

Պահպանվել է նմանօրինակ մեկ այլ հաղորդում ևս, որը կապվում է 13—14 դդ. փիլիսոփա-մատենագիր Եսայի Նչեցու անվան հետ: Ահա այդ հաղորդումը. «Զենթադիր արտակերտեալս ի Վիսսօլէն, ի Գրիգորէ Նիւսեա արտաշարեալ գտին տէրունեան, ընդ երբեակն հանդէսեալով՝ դրախտ իմանալի և զգալի յոգնագան դիտողաց՝ հրամանաւ վարժապե-

---

9 Գ. Զարբհանալեան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց*, Վենետիկ, 1889, էջ 362:

10 Ձեռ. № 1897, էջ 108ա, համմ. ձեռ. № 3937, էջ 59բ—69բ, ձեռ. № 437, էջ 116 ա-բ:

*տիս Եսայեա շարագանպարացի** զգերաբուն դրախտս պէս-պէս որակ պտղովք՝ ի զմայլումն իմաստից, ճաշակել ի խոհեմական իմաստս բանասիրաց, լուսափայլ դիտողութեամբ յիսկականն լոյս, յորմէ ճաշակ և ճաշակող վերաբերիլ յիմանալի ստեղունսն ի փառս միակին, զվերս ասացեալ հրաբունի վարժապետս իմ Եսայի՝ հանդերձ ծնողօք և ազգայնօք անմոռաց մատղել զիսկն բան...»[11]: Սուրբ հաղորդումը Եսայի Նչեցու հոգածութեան, անմիջական վերաբերմունքի դրսևորում լինելուց բացի, միաժամանակ բյուզանդական մատենագրի վաստակի կարևորության ընդգծման ու արժեքավորման ոչ շարքային օրինակ է:

Դատելով տեղական մեկնողական բնագրերի բուն ընդօրինակություններից ու հարակից հաճախադեպ հղումների դրվագներից, կարելի է ասել, որ հայ իրականության մեջ բավական տարածված ու ծանոթ աշխատասիրություն են ընկալվել Վահրամ Բարունու (XIII դ.) «Լուծմունք կազմութեան գրոցն»[12] և Հակոբ վարդապետի[13] «Գրիգորի Նիւսացոյ եւթն գրոց լուծմունք»[14] խորագրերով մեկնողական գործերը:

Քիչ չեն այն վկայության օրինակները, որոնցում դրվատանքի, հաճախ ամենաջերմ գնահատության է արժանանում բյուզանդական մատենագրի «սպայծառ վարդապետությունը», վերապատմվում, տեղայնացման նոր շերտերով լրացվում ու ամբողջացվում են հայկական միջավայրում մեծ տարածում գտած և համընդհանուր հեղինակություն վայելող նրա գործերի ստեղծագործական պատմության հետ կապված շատ դրվագներ: Այդ կարգի նյութերից է «Պատճառ Կազմութեան գրոց» խորագրին հաջորդող հետևյալ զրառաջք-բացատրությունը. «...յետ նոցա կարգեցան յեկեղեցի[15] յաջորդ նոցին և փոխան, ի նոցա հիմանն վերա

---

*Դժվարանում ենք սույն բնթերցման շուրջ ստույգ բացատրություն առաջադրել: Այն, թերևս, շարադ (-միարան կամ հատասար) բառի ազավաղված տարբերակը կարող է լինել:

[11] Ձեռ. № 2509, էջ 198բ—199ա:

[12] Ձեռ. № 1919, էջ 128ա—145բ:

[13] Հավանաբար խոսքը Հակոբ կաթողիկոսի մասին է (1268—1286), որի գրչին է պատկանում «Լուծմունք գործոյն Բարզի» մեկնողական աշխատանքը (տե՛ս Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցաւրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 45, 178):

[14] Ձեռ. № 1919, էջ 146ա—155բ: «եւթն գրոց» անվան տակ նկատի ունի Բնութեանն, Կազմութեանն, Կատարեանն, Ժողովողին, Երգ երգոցն, Ինն երանութիւնքն, Հայր մեր յերկինս երկերը (տե՛ս Ձեռ. № 582, էջ 40ա, Ձեռ. № 8509, էջ 79ա):

[15] Հրատ.՝ ի յեկեղեցի:

շինել[16] բան հաւատոյ ուղիղ դաւանութեամբ՝ որպէս աստուածային և սքանչելիս այս Նիւսեա[17] եկեղեցոյն առաջնորդ, փայլեալ պայծառ վարդապետութեամբ. հրաշագէտ և կորովարան այնքան, մինչ զի որ և ի ժամանակս իւր էին արք հրաշալիք, բազում թախանձանաւք խնդրէին ի նմանէ մեկնել զգիրս սուրբ Բասիլ և Գրիգոր, Մաքսիմոս և Պետրոս... զայլս խորհիս ի սուրբ Գրոց սկսաւ մեկնել և ասել բազում բանս, որպէս ըներդոյ երգոցն, զկուսութիւն և զայս[18] գիրս արարեալ էի խնդրոյ եղբաւր իւրոյ՝ Պետրոսի...: Եւ թէպէտև նա էր իմաստութեամբ յղփացեալ, բայց և ոչ բանիւ պակասարդ իբրև զսա...»[19]:

Եղած համաբնույթ գնահատություններից շարքում առանձնանում, մի ուրույն խումբ են ներկայացնում այն օրինակները, որոնցում Գրիգոր Նյուսացու այս կամ այն գործը գնահատվում կամ ստեղծագործական պատմության նոր դրվագ է ներկայացվում կապադովկացի մատենագիրների (Բասիլ, Գրիգոր, Պետրոս) անունից կամ նրանց վկայակոչելու եղանակով: Այսպես, օրինակ, «Պատճառաց գրքում» կարդում ենք. «Ծանեան սուրբն Բասիլ և Գրիգոր Աստուածաբան, թէ Գրիգոր Նիւսացոյ բանքն առաւել գեղեցիկ են ի մեկնութիւն, որպէս այժմ տեսանի, յաղագս այսորիկ հարկեն զնա հարազատաւրէն, զի արասցէ առատ բանիւք մեկնութիւն մանրամասնաբար...»[20]:

Պահպանվել է նույնաբնույթ մեկ այլ հաղորդում, ուր մատենագրական տեղեկանքին զուգահեռ կա նաև ստեղծագործական պատմության մասնավորեցում, ինչպես նաև գրական վաստակի ընդհանուր գնահատություն. «Ուստի կարկնալ նորա յայնպիսի թախանձանաց եղբօր եւ սկսաւ առնել զգիրս Կազմութեան մարդոյն, որ ի վեցերորդի աւուրն արար յԱստուծոյ, ընդ նմին և զԲնութեան գիրն՝ գեղեցիկ ոճով և առատ իմաստութեամբ, հանճարեղ և համեղ բանիւ: Այսր և զգիրս Կուսութեան, յառաջ քան զայսոսիկ, ի խնդրոյ սրբոյն Բարսղի հայրապետի՝ եղբօրն իւրոյ...»[21]:

Բյուզանդական մատենագրին վերագրվող «Յաղագս բնութեան մարդոյ», նրա իսկ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» և «Յաղագս

---

[16] Հրատ.՝ շինեալ:

[17] Հրատ.՝ Գրիգոր Նիսեայ:

[18] Հրատ.՝ զայլս:

[19] Ձեռ. № 55, էջ 304ա-բ, համմ. հրատարակությունը՝ Յուցակ հայերէն ձեռագրաց Ժմմաի վանքի Մատենադարանին, կազմեց Մ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 456—457:

[20] Ձեռ. № 1879, էջ 230ա:

[21] Ձեռ. № 2046, էջ 56բ:

կուսութեան» աշխատանքների սեղմ, բայց և ուսանելի գնահատության օրինակ է հետևյալ հաղորդումը. «Որովք մշտապէս հարեալ ի խղճէ, ոչ առնու ի սփոփանս աղէտից իմոց, ուսի ստացայ զհամեղաբան մանուածս, հոգեկիր ներբանքնին առն Աստուծոյ Գրիգորի Նիւսացւոյն, գՅաղագս բնութեան և Կազմութեան մարդոյս և Վասն կուսութեան ևս...: Եւ արդ ցաւագին անձամբ և խոնաւուտ տեսարանօք աղաչեմ զհամայն տեսօղդ այս մատենի, չիշման առնել արժանի, զամենապատիւ խոցոտեալս ի յոգի զթումա բանի սպասաւորս...»[22]:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բավական հաճախադեպ են այն հաղորդումները, որոնք վերաբերում են Գրիգոր Նյուսացու այս կամ այն գործի ընդօրինակության հանգամանքներին, տեղին ու միջավայրին, ընդօրինակողներին ու մեկենասներին: Հիշատակարանի ժանրին հատուկ հնարավորության ու կատարողի կարողության շրջանակներում միաժամանակ գնահատվում են ընդօրինակվող գործն ու նրա հեղինակը, երբեմն նաև արծարծվում են հայոց ինքնուրույն մատենագրության հետ ունեցած առնչակցության բնույթն ու շրջանակները: Այդ հաղորդումները իրենց պարզունակ ու հաճախ կրկնվող բովանդակությամբ փաստորեն բյուզանդական մատենագրի գործունեության ու նրա գրական վաստակի հայերեն թարգմանությունների մասին առաջին գնահատություններն են: «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն» գործին վերաբերող՝ 1244 թ. Ադանայում գրված Սմբատ Դունդստաբլի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ Գիրս Կազմութեան հանճարալեղ բանի՝ Գրիգորի աստուածիմաստ անձին, ձեռամբ Ստեփանոսի նուաստի, անարուեստ գրչի և մեղապարտ անձին, ի խնդրոյ մեծ սպարապետին Հայոց Սմբատա՝ որդւոյ Կոստանդեա մեծ աթոռապահին Հայոց և եղբաւր թագաւորին Հայոց Հեթմոյ, որ և ստացաւ զսա ի յաղագս արդեանց իւրոց՝ ի վայելումն իւր և իւրոցն և ի չիշատակ հոգւոյ իւրոյ չետ աստեացս: Գրեցաւ սա ի թուականութեանս ՈՂԴ... գրեցաւ սա ի քաղաքս, որ կոչի Ատանա, ընդ հովանեաւ սուրբ և չառաչ զաւրավարին Թէոդոսի...»[23]:

---

22 Վ. Թորգոմեան, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին (տե՛ս «Բազմավէպ», 1923, էջ 140, համմ. Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, 1984, էջ 741):

23 Դաւեգին Ս. կաթողիկոս, Չիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 953: Գ. Հովսեփյանը արձակ հիշատակարանի այլուր տպագրված ՈՂԱ-ն ուղղում է ՈՂԴ (տե՛ս նույն՝ Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, Գ, Վաղարշապատ, 1913, § 80):

Հիշատակարաններում Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործը գնահատելու, ըստ ամենայնի արժեքավորելու տարածված եղանակներից մեկը այն համընդհանուր հեղինակություն վայելող Ս. Գրքի հետ համեմատելու միջոցն է: Այդ կարգի հաղորդումներից մեկում կարդում ենք. «որպէս կարօղութիւն և զօրութիւն ինձ՝ հեքիս և մեղապարտ անարժանիս տրուպիս, տարտամ և հեղձածինս յանդ ելանել աստուածային բուրաստանիս՝ Աստուածաշունչ մատենիս, որ կոչի Բնութեան և Կազմութեան գիրք, լուծմունքով, որ է արարեալ սրբոյն Գրիգորի Նիւսացոյ նուրբ և իրթին, աստուածաբան և տիեզերալոյս եպիսկոպոսին...»[24]:

Նույն գործի ընդօրինակման առիթով հռչակավոր Գլաձորում գրված հիշատակարաններից մեկում բյուզանդական մատենագրի աշխատասիրության գնահատությանը զուգահեռ, հայոց մեծերից Մաշտոցի անվան կողքին է տրվում նաև Նյուսացու անունը. «...և յետ ելից աստեացս մասնակից տրասցէ սրբոց լուսաւորչացն և աստուածաբան վարդապետացն, Բարսղի, Աստուածաբանի, Նիւսեայ և Սրբոյն Մեսրովբայ»[25]: Ավելին, Կ. Պոլսում ընդօրինակված մի գրչագիր հիշատակարանում Գրիգոր Նյուսացու նկատմամբ ևս կիրառվում է Բարսեղ Կեսարացու առիթով տարածված «հայոց վարդապետ» արտահայտությունը: Ահա հիշատակարանի այդ հատվածը. «Աւարտեցաւ առաջին հատորն՝ Կազմութեան մարդոյ եւ ամենայն պարագայիւք որ կայ ի մարդոյ...: Եւ մանաւանդ մեծին Գրիգորի Նիւսացոյն, Հայոց վարդապետի, եւ ամենիմաստ սրբոյ եւ հռետորի հարազատ եկեղեցւոյն Քրիստոսի...»[25ա]:

Եղած գնահատությունների մեջ հիրավի առանձնանում է Գրիգոր Մագիստրոսի «Առ Կիրակոս յոյն գպիրս» թղթում պահպանված մի գրառումը, ուր կա ոչ միայն արժեքավորման հաղվադեպ եղանակ, այլև ի ուսումնասիրություն հանձնարարելու ոչ սովորական ձևակերպում: Ահա այդ հատվածը. «Բայց և եթէ զբոլորիցն կամիցիս համառօտ գտանել, պի մի՛ յաշածու խոնջմամբ տարակուսանսցիս տարախոհական մատածու-

---

24 Ձեռ. № 466, էջ 182ա: Այլուր այն որակվում է «համեղաբան մանուած» (տե՛ս Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, Գ, էջ 741:

25 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 133, համմ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 147, Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի ս. Ամենափրկչեան վանաց Բանգարանի, Բ, կազմեց Լ. Փ. Միքաելեան, Վիեննա, 1972, էջ 177:

25 ա Յուցակ ձեռագրաց որ ի Հանդէս Ամսօրեայ, խմբագրութեամբ Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1976, էջ 78:

թեամբ, աղէ՛, առ ընթերցիր ուղեղապէս յոքնակուռ վերծանութեամբ զԳրիգորին Նիւսեան ծայրագոյն մատենաս, զկազմութեանն ի զբնութեանն, և յայնմ գտցես բաւականապէս շատացեալ։ Քանզի մեր ոչ է սովորութիւն գողաբար զայլոցն իմաստասիրութիւն խորթս մեզ ստեղծանել, բայց սուղ ինչ գտարախոհութեան քո անտեղութիւն յայտնեցից քեզ»[26]։

Գրչագրերում բավական հաճախադեպ են «Յաղագս երգոյ երգոցս» աշխատութեան ընդօրինակութեան առիթով գրված գնահատության օրինակները։ Դրանցում, չնչին բացառութեամբ, ամենաչերմ գնահատանքի են արժանանում թե՛ ընդօրինակվող գործը, թե՛ նրա հեղինակը, հաճախ հատուկ ընդգծվում է Գրիգոր Նյուսացու՝ հայկական միջավայրի հետ ունեցած կապվածության, հոգեհարազատության պարագան։ Դրանցից մեկում կարդում ենք. «Ով հայր պատուական Գրիգոր Նիւսեա, զրեզ այժմ մեք պարաւանդեալքս ի մարմնի, ըստ արժանոյն գովաբանեալ ոչ կարեմք և զքո զմեծարոյս, և զգիղեցկատեսիլ բանիւտ բարէձեւութիւնն ներբողել ըստ արժանիոյն ոչ եմք բաւական, որ զբարձր զայս և զերկնառոյց ճեմարան բանի»[27]։

Վկայակոչված հիշատակարանի շարունակությունը նույնպես գրված է արձակ, սակայն այն կարելի է վերածել չափածոյի։ Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա այն Գրիգոր Նյուսացու անձի ու գործի գնահատության միջակ փորձ է։ Ահա մի քանի տող այդ շարադրանքից.

> Դու երորդից եկեղեցիական դասակարգութեանց ոչ երկրորդ,
> Դու արհեստողական վարժմամբ զեր ի վերս, քան զրազումս,
> Դու ըստ մաքրագոյն վարուցն զաւրութիւն ի մարմնի,
> Դու երկրայնոցս մտածութեանցս անհաղորդ,
> Իսկ երկնայնոցն վսամախոհութեանց համախոհակից...[28]

Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների ընդօրինակություններից հնագույնը «Յաղագս երգոյ երգոցս» մեկնության Մաշտոցի անվան Մատենադարանի № 2684 երկաթագիր գրչա-

---

[26] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ագէքսանդրապոլ, 1910, էջ 112—113։ Ձեռագրերում և այլուր կան «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնս» աշխատանքին վերաբերող այլ կարգի բնութագրումներ (տե՛ս ձեռ. № 468, էջ 115բ, ձեռ. № 464, էջ 95ա)։

[27] Ձեռ. № 1152, էջ 136 ա։

[28] Նույն տեղում։

դիրն է՝ ընդօրինակված 973 թ., «ի գաւառին Տարաւնայ»։ Պահպանվել է գրչի ընդարձակ հիշատակարանը, ուր ընդօրինակության հետ կապված մանրամասներից բացի կա հեղինակի անձի և գործի հետաքրքրական նկարագրություն. «Արդ աղաչեմ զամենեսեան զընթերցուղսդ, յորժամ ընթեռնուք զլուսաւոր եւ բազմափայլ գիրս սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ՝ եղբաւր Բարսղի, եւ լուսաւորիք եւ աւգտիք ի սմանէ ընթերցմամբ, եւ կամ գրչութեամբ»[29]։

Հիշատակարան-հիշատակագրություններում հաճախ է ընդգծվում Գրիգոր Նյուսացու գործերի հարկավորության պարագան, «գժուարապիտ» լինելը, ուստի և ամեն ջանք ու միջոց չեն խնայվում ձեռք բերելու փնտրվող բնագիրը, պայմաններ ստեղծելու ընդօրինակելու այն։ Նման հոգածության կա «Ժողովոյի» մեկնության մի հիշատակարանում. «Տեսեալ իմ ևթէ գժուարագիտ է սա, չասացից եւ անդիտ յայլ մատենագարանս եւ ասա իակ (=չէջմիածին), չանխայեցի ի վաստակ առնուլ եւ զսորա գհատասարն ի վայելս մեր եւ բանասիրաց ազգիս մերոյ...»[30]։

Գրիգոր Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների փնտրտուքը, դրանց հետքերը գտնելու և ընդօրինակելու միտքը ուշադրության է արժանացել անգամ պաշտոնական հանդիպումների, եկեղեցական բանագնացությունների միջոցին։ Այդ բնույթի մի հիշատակարան է պահպանվում Մաշտոցի անվան Մատենադարանի № 2708 ձեռագրում։ Ահա մեզ հետաքրքրող հիշատակարանի մի հատվածը. «Շնորհօք և ողորմութիւնամբ բարերարին Աստուծոյ չանկ ելեալ ուսուցեալ տառս հոգեպատում տեառն, բանք սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, որք են Բնութեանն, Կազմութեանն և Կուսութեանն, և Մեկնութիւնք ժողովոյին և Երգ երգոցին ի Կոստանդնուպոլիս մայրաքաղաքի, ուր կայի ի գործ նուիրակութեան սրբոյ և լուսակերտի աթոռոյս էջմիածնի, որ և ի գառնալս աստ ի սուրբ Աթոռս աստէն կազմեալ եատու ի ՌՄԼԲ թուոջ մեռումս»[31]։

---

[29] Ձեռ. № 2684, էջ 241 ա, համմտ. Գաբեզին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 127—128, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ե—ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մարեոսյանի, Երևան, 1988, էջ 61։

[30] Հ. Տաշյան, Յուցակ..., էջ 556։ Այլուր «Երգ երգոցի» գրիչ-դնահատող է հանդես գալիս XI դ. մատենագիր Անանիա Մանանհեցին (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեանն, կազմեց՝ Առաքելեան Դաճիէլեան, Անթիլիաս—Լիբանան, 1981, էջ 391)։

[31] Ձեռ. № 2708, էջ 225 բ։

Ինչպես և սպասելի էր, Գրիգոր Նյուսացու անձն ու գործը, դավանական խնդիրներ արծարծող նրա թղթերն ու ճառերը բավական հաճախ, երբեմն անուն առ անուն հիշատակվում են հայ միջնադարյան ինքնուրույն մատենագրության բազմաթիվ հուշարձաններում: Մատենագիրներն իրենց այս կամ այն միտքը առավել հավաստի դարձնելու նպատակով բյուզանդական մատենագրի գործերի հայերեն թարգմանություններից քաղված բնորոշ օրինակներով պաշտպանում են առաջադրվող խնդրի ազգանպաստ դիրքորոշումը: Այս իմաստով հիշատակության է արժանի VIII դարի մատենագիր Ստ. Սյունեցու «հրեք մեծ հապաղովկացիներին» անդրադառնալու, որոշակի նպատակով նրանց ճկակայակուշելու և դավանական բնույթի ճառերից ու թղթերից քաղ անհրաժեշտության օգտվելու խնդիրը: Ստ. Սյունեցին ծանոթ է և բավական հաճախ է անդրադառնում Գրիգոր Նազիանզացու «Ի սուրբ պասքայ», «Ի յայտնութիւն տեառն», «Ի ծնունդն Քրիստոսի»[32] և «Առ Նեմեսիացիս»[33] գործերին: Իր այս կամ այն համարնույթ միտքը ձևակերպելիս, ասելիքը անվերապահ դարձնելու նպատակով նա հաճախ դիմում է նաև բառացի քաղումների: Ստ. Սյունեցու «Ընդդէմ ամենայն հերետիկոսաց...»[34], «Հակաճառութիւն...»[35], «Առ տէր Գերմանոս...»[36] դավանական խնդիրներ արծարծող ընդարձակ թղթերում առավել որոշակի է Գրիգոր Նյուսացուն դիմելու, նրա գործերի հայերեն թարգմանություններից կատարված քաղում-հղումների եղանակով գաղափարական հակառակորդներին ընդդիմանալու իրողությունը: Ուշագրավ է Ստ. Սյունեցու մի բացատրությունը, որը ինքնին վերաբերմունքի դրսևորում է նշանակում. «զինուիլանս զանազանութիւն սքանչելին ի բնաւս Գրիգոր Նիւսեացին ուսուցանէ մեզ փարթամ բանիւք և հարուստ վարդապետութեամբ, բայց մեզ ոչ է փոյթ վերկայնագոյն բանից ճառել, այլ միայն ղյատուկն և զօգտակարն...»[37]:

---

[32] Տե՛ս Կ. Մ. Մուրադյան. Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, էջ 148—149:

[33] Տե՛ս ձեռ. № 948, էջ 235 բ, 238 ա, 238 բ, համմ. ձեռ. № 8194, էջ 143 ա, 147 ա, 148 ա:

[34] Տե՛ս ձեռ. № 571, էջ 84ա—109ա:

[35] Տե՛ս ձեռ. № 1555, էջ 210բ—285ա:

[36] Տե՛ս ձեռ. № 948, էջ 231բ—250բ: Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Ստ. Սյունեցին ծանոթ էր Գերմանոսին. «Ծանոթանայ և պատրիարքին Գերմանոսի» (տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 135):

[37] Ձեռ. № 571, էջ 86 ա, համմ. Յուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի Մատենադարանին, էջ 246—247:

Բյուզանդական մատենագրի գործերից Ստ. Սյունեցու թղթերում առավելապես հիշատակվում, երբեմն էլ անհրաժեշտ օրինակներով հղվում են «Յաղագս երգոյ երգոցս»[38] և «Հարցմունք և պատասխանիք»[39] աշխատանքները[40]։

Պողոս Տարոնացին[41] (մահ. 1123 թ.) «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի»[42] խորագիրը կրող թղթում անդրադառնում է 381 թ. Կ. Պոլսում կայացած երկրորդ տիեզերական ժողովի՝ հայ մատենագրության մեջ պահպանված արձագանքներին, ժողովի անվանի մասնակիցների, այդ թվում նաև հերձվածությունը դատապարտող Գրիգոր Նյուսացու աշխատանքներին։ Հիմքեր կան մտածելու, որ նույն Պողոս Տարոնացու աշխատասիրություն պիտի համարել Մաշտոցի անվան Մատենադարանի № 1555 ձեռագրում (ժողովածու, 1397 թ.) «Պաւղոսի վարդապետի» խորագրի տակ ընդօրինակված քաղվածո բնագիրը[43]։ Այն, կարելի է ասել, ընդհանուր առմամբ հայրաբանական գրականությունից քաղված ընտրանի է, ուր մեկից ավելի օրինակներ կան Գրիգոր Սքանչելագործի, Պրոկղի, Կյուրեղի, Աթանասի, Բարսեղի, Գրիգոր Նյուսացու, Տիմոթեոս Աղեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի և այլոց գործերի հայերեն թարգմանություններից։ Պողոս Տարոնացին «սուրբ Գրիգոր Նիւսացի ասէ»,

---

38 Տե՛ս ձեռ. № 1013, էջ 112 բ, 114 ա, համմտ. ձեռ. № 1555, էջ 243 աւ։

39 Տե՛ս ձեռ. № 3710, էջ 364 ա, համմտ. Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 388։

40 Ի դեպ, Սահակ Պարթևի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» թղթում (տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, էջ 413—482) հիշատակվում է Գր. Նյուսացու «Հարցմունք և պատասխանիք» գործի ճիշտ նույն Ստ. Սյունեցուն ծանոթ հատվածը, սակայն բավականին փոխված ու խմբագրված տարբերակով։ Այդ իրողությունն էլ իր հերթին խոսում է այն մասին, որ Գր. Նյուսացու և Բ. Կեսարացու Հարցումը հիրավի շատ է խմբագրվել ու միջամտություններ ենթարկվել։ Այդ են վկայում նաև պահպանված բազմաթիվ ընդօրինակություն-խմբագրությունները։

41 Պողոս Տարոնացու կյանքի ու գործունեության մասին տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 355—356, Գաւեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 289, Լ. Մ. Մելիխեր-Բեկ, Պողոս Տարոնացի՝ ԺԱ—ԺԲ դարերի հայ մատենագիր և բոնդրակեցի ու ծայլ հայերը (տե՛ս «Էջմիածին», 1960, № 4, էջ 38—44), Հ. Գ. Մաճուշարյան, Պողոս Տարոնացի, Երևան, 1982, էջ 3—116։

42 Տե՛ս ձեռ. № 1524, էջ 329ա—338բ, ձեռ. № 1324, էջ 314բ—323բ, ձեռ. № 4670, էջ 304ա—312ա, ձեռ. № 3791, էջ 252ա—261ա, ձեռ. № 841, էջ 12ա—37բ, Յուցակ հայերեն ձեռագրաց Ջմմառի վանքի Մատենադարանին, էջ 277։

43 Տե՛ս ձեռ. № 1555, էջ 292բ—307ա։

«դարձեալ ասէ յերդս երգոց մեկնութեանն», «դարձեալ ասէ յերրորդ ճառին» և նման ձևակերպումների տակ դիմում է Գրիգոր Նյուսացու աշխատանքներին և անհրաժեշտ դրվագները վկայակոչելու եղանակով հիմնավորում, հաստատուն է դարձնում իր ասելիքը՝ իբրև ապացույց ընդդեմ երկաբնակների: Բոլոր անհրաժեշտ բացատրություններից հետո միանգամայն բնական է հնչում մատենագրի հարցադրումը. «Եւ արդ, երկաբնակք և չարափառք, ասացէք մեզ եթէ ո՞վ է հաւատարմութեան արժանի՝ սուրբքն և ուղղափառքն, եթէ թերահաւատքն և հայհոյիչքն»[44]: Նման պարագայում առաջադրված հարցադրման ուղղակի պատասխանի ակնկալումն ինքնին անիմաստ է այն պարզ պատճառով, որ հարցադրումը բովանդակում է ենթադրվող պատասխանը:

Հայ իրականության մեջ դավանական վեճերի ու հոգևոր-արարողական բնույթի տևական քննարկումների շուրջ եղած տարակարծությունների առնչակցությամբ կապադովկացի մատենագիրների կյանքի ու գործունեության առանձին դրվագները վերապատմելու, ինչպես նաև նրանց գրական վաստակի համապատասխան մասերը ի ցույց դնելու եղանակով ներքին անհամաձայնություններին վերջ տալու, դավանական խոտորումների դեմ համազգային ճակատով պայքարելու ուղղությամբ ծրագիր է առաջադրվում Գրիգոր Տղայի (1133—1193) «Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն» թղթում, ուր մասնավորապես ասված է. «Ածցուք ի մէջ և զայնոսիկ որ նոցա են՝ և մեզ քաջ տեղեակք և յայտնիք, զսուրբ և զաստուածազգեստ հարսն և զսուրբ բանս նոցա, զսուրբն Աթանաս և զսուրբն Գրիգոր Նիւսեայ և զմիւսն Գրիգոր Աստուածաբանն և զսուրբն Բասիլիոս...»[45]:

Դատելով պահպանված վկայակոչության օրինակներից, Գրիգոր Տղային առավել մեծ զարմանք ու վրդովմունք է պատճառում Հայոց հյուսիսային կողմանց վարդապետների շարունակվող անտարբերությունը, անհաղորդ մնալը իրենց իսկ տրամադրության տակ եղած Գրիգոր Նյուսացու գրական վաստակի նկատմամբ. «Հաւատալի լիցի մեզ և այս, եթէ բանք սուրբ հօրն Գրիգորի Նիւսեայ զանխուլ են ի նոցանէ, և ոչ են ընթերցեալ և յարկեզս գրոց ամբարեալ զսուրբ բանս նորա, և

---

[44] Նույն տեղում, էջ 305 բ:

[45] Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, Ձերուսաղէմ, 1871, էջ 315 (Թուղթն ամբողջությամբ տե՛ս էջ 312—329):

ընթեռնուն առանց միջնորդի և միաբարբառ խօսիւք զմիաւորութիւն անձին առ մարմին և զյաւելումն և զպակասութիւն էութեան չկարենէ...»[46]։

Գրիգոր Տղայի համոզմամբ՝ ոչ նպատակաւոր վերաբերմունք է եղել նաև Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու՝ հայ իրականության մեջ վաղ միջնադարից ի վեր հայտնի աստվածաբանական ճառերի նկատմամբ, մինչդեռ նա գտնում է, որ հիշյալ մատենագիրների գրական երկերը «ուղեկիցս մեզ արժան է իմանալ...», իսկ դրանց հեղինակները՝ «առաջնորդ զհարս սուրբս»[47]։

Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ անվանի հոգևոր գործիչ-մատենագրի նշված և համաբնույթ օրինակները միանշանակ չպետք է ընդունել, այլ դրանց պիտի անդրադառնալ որոշակի վերապահությամբ, որովհետև իրողությունն այն է, որ Հայոց հյուսիսային կողմերի վարդապետները ոչ միայն կարդում ու ընդօրինակում էին «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունները, այլև ապրում ու աշխատում էին ազգային ավանդների պահպանության նույն մտահոգությամբ։

«Երեք մեծ կապադովկացիները» Կիրակոս Գանձակեցու Պատմության էջերում հիշատակվում են տարբեր առիթներով։ Սակայն պատմիչը Սուրբ Երրորդության հարցին անդրադառնալիս (գլուխ ԾԲ) անհրաժեշտ վկայակոչումներ է կատարում Սուրբ Գրքից, ինչպես նաև հայրաբանական գրականությունից։ Գրիգոր Նյուսացու և Բարսեղ Կեսարացու Հարցումը պատմիչին հետաքրքրում է «Զի՞նչ է սկիզբն սկզբանն» հարցադրման առումով[48], որից և նա կատարում է համապատասխան քաղում-հղում[49]։

---

[46] Նույն տեղում, էջ 316։

[47] Նույն տեղում, էջ 320, համմտ. էջ 317։

[48] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 341—342։

[49] Բյուզանդական մատենագիրը բավական հաճախ և առանձին ջերմությամբ է հիշվում հայոց հին գրականության դավանական բնույթի երկերում, մասնավորապես Բղինտում։ Այս առումով հիշատակելի են Խաչիկ կաթողիկոսի «Բան խոստովանութեան» թուղթը (տե՛ս Գիրք Բղինց, էջ 306), «Տեառն Գէորգեայ Հայոց վերադիտողի» (1020—1086) նույնաբնույթ երկում (տե՛ս նույն տեղում, էջ 343), համմտ. Ն. Պողարեան, Հայ գրողներ, Ը—ԺԸ դար, Երևան, 1971, էջ 193։

Այսպիսով, Դրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների պահպանված ձեռագրերի հիմնական մասին ծանոթանալուց հետո կարելի է ասել, որ մեզանում բյուզանդական մատենագրի գործերի բազմացնողներ, արտագրող-գրիչներ, ինչպես նաև «թարգմանող (=մեկնող, բացատրող) կամ լուծող»[50] են հանդես գալիս մեր մատենագրության ոչ շարքային անուններ եսայի Նչեցին, Դրիգոր Տղան[51], Վահրամ Րաբունին, Հակոբ վարդապետը[52], Եսայի Նչեցու աշակերտ Կյուրոնը[53], Դրիգոր Բջնեցին[54], Վարդան Կիլիկեցին[55], Կիրակոս Երզնկացին[56], Հակոբ Թագորցին, որը Գ. Հովսեփյանի պնդմամբ «ոչ միայն գրիչ էր, այլ եւ վարդապետ հեղինակ...»[57], Սիմեոն Պղնձահանեցին[58] և այլք։

Միջնադարյան ձեռագիր բնութագրումներում Դրիգոր Նյուսացին ընկալվում է «տիեզերալույս եպիսկոպոս»[59], «հոգիապատում տէր»[60], «հոգեկիր նրբաքննին այր»[61], «աստուածիմաս անձ»[62], «փառաւորեալն յԱստուծոյ»[63], «մեծն բժշկապետ»[64], «աղբիւր եկեղեցւոյ»[65], «աստուա-

---

50 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ, յօրինեց Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 849։ Եսայի Նչեցու անվան հետ են կապվում Դրիգոր Նյուսացու «Ի հայր մեր, որ յերկինսն» ճառի լուծմունքը և գրառաջքը (տե՛ս Բ. Սարգիսյան, նշվ. աշխ.)։*

51 *Դրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 38։*

52 *Ձեռ. № 1919, էջ 128 ա, 146 ա։*

53 *Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 276։*

54 *Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 253, հմմտ. էջ 375։*

55 *Նույն տեղում, էջ 263։*

56 *Բարգեն արտակից կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 592։*

57 *Գարեգին Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պռոշյանք..., էջ 272։*

58 *Տե՛ս ձեռ. № 1013, էջ 241 բ, հմմտ. Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 847—848։*

59 *Ձեռ. № 466, էջ 182 ա։*

60 *Ձեռ. № 2708, էջ 225 բ։*

61 *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, Գ, էջ 741։*

62 *Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 953։*

63 *Հ. Տաշյան, Յուցակ..., էջ 209։*

64 *Ն. Պողարյան, Յուցակ..., Գ, էջ 202։*

65 *Հ. Տաշյան, Յուցակ..., էջ 208, Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 471։*

ծարան վարդապետ»[66], իսկ նրա խոսքը բնութագրվում է փարթամ, լուսատու և բազմափայլ[67], վարդապետությունը՝ հարուստ[68], հանճարեղ և համեղարան[69]։

---

[66] Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց Բանգարանի, Բ, էջ 377։

[67] Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 127։

[68] Ձեռ. № 571, էջ 85 բ։

[69] Ձեռ. № 2046, էջ 56 բ։ «Գրիգոր Նյուսացին հայ մատենագիրների վկայություններում» խորագրի տակ, հարկավ, կարելի է շարունակել բյուզանդական մատենագրին հիշատակելու, վկայակոչելու օրինակների ցանկը։ Այսպես, օրինակ, VIII դ. մատենագիր Հովհան Սմբենցին հատկապես իր «Ընդդէմ երեւութականաց» դավանական խնդիրներ արծարծող ճառում և այլուր «սուրբն Բասիլիոս ասէ», «մեծն Գրիգոր ասէր Նազիանզու», «սուրբն Գրիգոր ասէ» ձևակերպումների տակ հաճախ է դիմում «երեք մեծ կապադովկացիներիս» գործերին և նրանց համընդհանուր ճանաչում գտած գրույթների օգնությամբ հիմնավորում ասելիքը (տե՛ս Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք, Ի Վենետիկ, 1953, էջ 61—97)։ Նույն իրողությունն է առկա նաև VIII դարի մատենագիր Եռսրովիկ Բարգմանչի «Նախադիր բանից առ Արհանաս Անտիոքացի» և «Եռսրովու Թուղթ առ Տէր Սարգիս եպիսկոպոս Դերազկորայ» քղթերում (տե՛ս Գարեգին Յովսէփեան, Եռսրովիկ Բարգմանիչ (Ը դար), Վաղարշապատ, 1899, էջ 97—148, 149—183, 187—197)։

Պարզվում է, որ բյուզանդական մատենագիրը ճիշտ նույնարնույթ ատիթներով հղվում-հիշատակվում է միջնադարյան Հայաստանում որոշակի նպատակով կազմված ձեռագիր-ժողովածուներում (տե՛ս ձեռ. № 1981, Ժողովածու, ԺԴ դ., էջ 181 բ, 183 բ, ձեռ. № 737, Ժողովածու, 1680 թ., էջ 81 բ)։ Կան նույն միջավայրում կազմված նույնարնույթ բնագրեր ևս, որոնցում կրկին հանդիպում ենք Գր. Նյուսացու անվան հիշատակությանն ու նմանօրինակ բնագրային վկայակոչումների (տե՛ս ձեռ. № 1712, Ժողովածու, ԺԵ դ., էջ 204ա—205բ, 210 ա, ձեռ. № 600, Ժողովածու, ԺՀ դ., էջ 146 բ, 150ա, 156 ա, ձեռ. № 1960, Ժողովածու, ԺՀ դ., էջ 17ա—45ա)։

ԳԼՈՒԽ Բ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ա) ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների պահպանված ձեռագրերի, դրանց շուրջ ստեղծված միջնադարյան մեկնությունների, պատճառների, լուծմունքների և հարակից պատմաբանասիրական գրառումների և դիտողությունների համեմատությունը, խմբավորումն ու ուսումնասիրությունը հիմք են տալիս ասելու, որ Գրիգոր Նյուսացու գրական վաստակի առիթով ևս հանդիպում են միջնադարում բավական հաճախադեպ, զանազան գործոններով պայմանավորված հեղինակային պատկանելության շփոթի դեպքեր։ Հեղինակային պատկանելության շփոթը պայմանավորող գործոնները շատ են՝ կոնկրետ միջավայրով պայմանավորված գործնական անհրաժեշտություն, հեղինակի անվան, գործի խորագրի նմանություն ու նույնություն, այս կամ այն հեղինակությունից օգտվելու հնարավորություն և այլն։

Տվյալ պարագայում «Հեղինակային պատկանելության հարցեր» խորագրի տակ պիտի ենթադրել խնդրի քննության երկու կողմ. ա) կան աշխատանքներ, որոնց իրական հեղինակը Գրիգոր Նյուսացին է, սակայն ինչ-ինչ պատճառներով խոր միջնադարում դրանք վերագրվել են այլ հեղինակների ու բազմացվել, շրջանառության մեջ են մտել օտար հեղինակների անվան տակ. բ) երկրորդ դեպքում կատարվել է հակառակը. այլոց աշխատասիրություն հանդիսացող այս կամ այն գրական հուշարձանը դիտվել է իբրև Գրիգոր Նյուսացու գործ և ընդօրինակվել ու տարածվել է բյուզանդական մատենագրի անվան տակ։ Եղած փաստական նյութի ուսումնասիրությունից պարզվում է, որ երկու դեպքում էլ որոշակի հիմքեր կան համապատասխան բացատրությամբ օժտելու

հեղինակային պատկանելության շփոթի այս կամ այն օրինակը և խնդրո առարկա աշխատությունը կոչելու իր իսկական հեղինակի անվամբ[1]։

Արդ՝ նախ անդրադառնանք նշված առաջին կետին, այսինքն այն դեպքերին, երբ Գրիգոր Նյուսացու հեղինակած երկը տարածվել, շրջանառության է դաել օտար անվան տակ։ Այս առումով ուշադրության է արժանի «Ընդ այսոսիկ եւ առաջիկայ բան իմաստնոյս» խորագիրը կրող փոքր ծավալի աշխատանքը, որը հրատարակվել է V դ. անվանի փիլիսոփա-մատենագիր Դավիթ Անհաղթի հեղինակությամբ և ընկալվել իբրև նրա աշխատասիրություն[2]։ Նման հեղինակային վերագրման հիմքը, ամենայն հավանականությամբ, շատ հին է, որովհետև այն այնքան է հիմնավորված ու արմատացած, որ Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանություններն ամփոփող մի քանի ցանկ գրչագրերից և ոչ մեկում, որքան մեզ հայտնի է, հիշյալ գործը չի պահպանվել իր իսկական հեղինակի անվամբ։ Այդուհանդերձ, հայագիտության մեջ հեղինակային պատկանելության ուշյալ վրիպումը նկատվել, արձանագրվել է երեք տարբեր եղանակներով։ Առաջին միջոցը Գրիգոր Նյուսացու գրական վաստակին ամենատարբեր առիթներով անդրադարձած հայագետների կատարած գրառումներն են։ Այսպես, օրինակ, Նոր հայկազյան բառարանագիրները բյուզանդական մատենագրի իրենց ձեռքի տակ եղած գործերի առիթով արձանագրել են. «այն է ամենայն չար տանջելին՝ զրնալն չընթացս զրոց Դաւթի Անյաղթի, և մեկնելն ի Շնորհալւոյն»[3]։ Նոր բառգրքի հեղինակների վերաբերմունքը Գրիգոր Նյուսացու վերոնշյալ աշխատանքի մասին էր։

Նման դիտողություն ունի նաև Գ. Զարբհանալյանը՝ արված Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների մատենագիտության առիթով։ Վկայակոչելով Դավիթ Անհաղթին վերագրվող Գրիգոր Նյուսացու ճառի սկզբնաղբյուրը՝ «Ամենայն չար տանջելի...», Գ. Զարբհանալյանը գրում է. «Ազգային բանասիրաց ծանօթ գրուածք մը, և ընդհանրապէս

---

[1] Գր. Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» և Գր. Նազիանզացու «Առ այնոսիկ, որք ասեն...» ճառերի հեղինակային պատկանելության շփոթին անդրադարձել ենք «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ» (Երևան, 1983, էջ 52—56) մենագրության առիթով։ Նույնը պիտի ասել նաև Բ. Կևսարացու և Գր. Նյուսացու Հարցումի կապակցությամբ, որը ձեռագրերում հաճախ հանդիպում է Գր. Նազիանզացու և ուրիշ անվանի Գրիգորների անվան տակ (տե՛ս նույն տեղում, էջ 62—69)։

[2] Տե՛ս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք..., ի Վենետիկ, 1932, էջ 121—122։

[3] ՆՀԲ, Ա, 16։

Դաւթի Անյաղթի ընծայուած, վասն զի իր անունն կրող Սահմանաց գրոց մէջ գրուած է՝ իբրու վերջին գլուխ մը նոյն երկասիրութեան...»[4]:

Գրիգոր Նյուսացի-Դավիթ Անհաղթ հեղինակային շփոթի երկրորդ կետի տակ նկատի ունենք հիմնականում Դավիթ Անհաղթի գործերի ձեռագրերի ու հրատարակությունների հետ կապված համապատասխան գրառումներն ու հետագա մասնավորհցումները: Այս իմաստով ուշագրավ է Ջմմառի վանքի Մատենադարանի մի գրչագրում հիշյալ գործը Դավիթ Անհաղթի անվան տակ ընդօրինակող գրչի որոշակի կասկածը. «Այս գծած հանդիսադիր խմբից առաջնոցն տառից տրամախոհի իմաստասէր մակացու արանցն ներբողեալ ի Դաւթէ եռամեծէ ենթադրեցաւ»[5]: *Որ «Ընդ այսոսիկ եւ առաջիկայ բան իմաստնոյս» խորագրով գործը պատկանում է Գրիգոր Նյուսացու գրչին և ոչ թե Դավիթ Անհաղթի, շատ ավելի հստակ ասված է անվանի փիլիսոփայի մատենագրության հրատարակության առիթով: Հիշյալ գործի վենետիկյան հրատարակիչը ծանոթագրել է. «Զայս բան իմաստնոյ ի գիրս Յունաց և Լատինացւոց գտանեմք յանուն Գրիգորի Նիւսացւոյ կամ Նեմեսիոսի ուրումն. իսկ ի գիրս մեր միշտ Դաւթի ընծայի. թերևս թարգմանութիւն նորա իցէ...»*[6]:

Հեղինակային շփոթի արտացոլման երրորդ եղանակը կապվում է խնդրո առարկա ճառի լուծմունքի հետ: Հայտնի է, որ պահպանվել է «Ընդ այսոսիկ...» ճառի Ն. Շնորհալու լուծմունքը, որից և օգտվել է Առաքել Սյունեցին: Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 571 գրչագրում կարդում ենք. «Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի Շնորհալւոյ Լուծմունք «Դաւթի Անյաղթի» (բուն Նիւսացւոյ) պրակին՝ «Ամենայն չար տանջելի»[7]: *Ձեռագրացուցակի առկա հրատարակություններից դժվար է կռահել առաջադրված «բուն Նիւսացւոյ» ուղղման հեղինակը. հիմքեր չկան որոշակի ասելու՝ միջնադարյան գրչի կասկա՞ծ է այն, թե՞ ցուցակագրողի վերապահություն: Բայց քանի որ այն տեղ չի գտել, չի արտացոլվել լուծմունքի բուն խորագրում, ուստի նախնական չէ:*

---

[4] Գ. Զարբհանալեան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց*, Վենետիկ, 1889, էջ 373—374:

[5] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի Մատենադարանին*, կազմեց Մ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 505: Ակնհայտ է հրատարակչի վերաբերմունքը. «Ինչպես յայտնի է՝ Նիւսացւոյ վերագրուած է ասիկա» (տե՛ս նույն տեղում):

[6] *Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք...*, էջ 120, ծանոթ.:

[7] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 1037:

Հիշյալ միջամտությունը եթե ձեռագրացուցակի հրատարակչի վերապահությունը չէ, ապա մնում է ենթադրել, որ այն հետագա ընդմիջարկություն պիտի լինի։

Այժմ անդրադառնանք վերևում հիշատակված երկրորդ իրողությանը, այսինքն այն դեպքերին, երբ Գրիգոր Նյուսացուն է վերագրվել օտար հեղինակի այս կամ այն աշխատությունը։ Այս իմաստով հայ իրականության մեջ բավական տարածված է Նեմեսիոս Եմեսացու (IV դ.) «Յաղագս բնութեան մարդոյ» երկը Գրիգոր Նյուսացուն վերագրելու իրողությունը։ Պատկառելի թիվ են կազմում այն ընդօրինակությունները, որոնցում առանց որևէ կասկածի ու երկմտանքի Նեմեսիոսի հիշյալ երկը մատուցվում է իբրև Նյուսացու հեղինակած գործ։ Միաժամանակ պիտի նկատել, որ կան միջնադարյան հատուկենտ ընդօրինակներ, որոնցում առանձին անհատատ, երեքուն փորձերն են արվում կասկածի տակ առնելու «Յաղագս բնութեան մարդոյ» գործի գոյություն ունեցող հեղինակային պատկանելությունը։ Այսպես, օրինակ, Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների հիմնական մասն ամփոփող Մաշտոցի անվան Մատենադարանի № 1013 (ժողովածու, 1227 թ.) գրչագիրը, ուր «Գրիգոր եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ Յաղագս բնութեան մարդոյ»[8] հերթական խորագրի առիթով, նույն ձեռքով ու գրչությամբ ավելացվել է՝ «Գիրքս Նեմեսոյի եպիսկոպոսի եմեսիոյ է»[9]։ Սա, թերևս, բազմաթիվ ընդօրինակությունների շարքում, գործիս հեղինակային պատկանելությունը կասկածի տակ առնող ամենահին ձեռագրական վկայությունն է, որի հեղինակը Սիմեոն կրոնավորն է (Պղնձահանեցի)։

Հեղինակային պատկանելության քննվող խնդիրը, ինչպես կտեսնենք, ուշադրության ոլորտում է եղել շատ ավելի վաղ և առավել հմուտ մատենագիրների հոգածությամբ։ Եղած ձեռագրական նյութերի հետազոտությունը հնարավորություն է տալիս ասելու, որ շփոթի բուն պատճառը առաջին հերթին, հավանաբար, պիտի փնտրել Նյուսացու և Նեմե-

---

[8] Ձեռ. № 1013, էջ 201ա—241բ։

[9] Նույն տեղում, էջ 201 ու։ Հավանաբար այսօրինակ նյութերի հետքերով է երբեմն առաջադրվել-պաշտպանվել այն վարկածը, որի համաձայն «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատասիրության իրական հեղինակ է համարվել Նեմեսիոս Եմեսացին (տե՛ս Ահսեն Սուրէի, Նեմեսիոսի մարդաբանութեան գրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը. «Բազմավէպ», ԼԸ, 1880, էջ 326—340, Գ. Ջարբհանալեան, Մատենադարան հայկական Բարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 629—630, հմմտ. Հ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Ա, էջ 1—22)։

սիոսի նշված աշխատանքների խորագրերում։ Միաժամանակ կարելի է ենթադրել, որ այդ հարցում քիչ դեր չեն խաղացել նաև նշված աշխատանքները գրեթե նույն ժամանակահատվածում ստեղծվելու, ինչպես նաև միևնույն թարգմանչի ձեռքով նույն միջավայրում թարգմանվելու փաստերը։ Անշուշտ, միջնադարյան գրիչներին կարող էր շփոթեցնել, հնարավոր թյուրիմացության պատճառ դառնալ նաև Նեմեսիոս-Նիւսացի անվանումների որոշակի նմանության փաստը, ինչպես նաև տարբեր հեղինակների աշխատասիրությունն հանդիսացող գործերի խորագրերի ընդհանրության պարագան։

Անվանումների, խորագրերի նմանության առումով ավելորդ չէ հետևյալ բացատրությունը։ Պարզվում է, որ պահպանված ամբողջական գրչագրերի շարքում որոշակի խումբ են կազմում այն ձեռագրերը, որոնցում Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» գործը կոչվում է «Վասն բնութեան», «Վասն մարդոյ»[10] կամ ուղղակի՝ «Յաղագս բնութեան»[11], կամ պարզապես «Կազմութեան»[12], «Բժշկարան»[13] (նաև Հնքիմարան) և այլն։ Նման հանդամանքներում միջնադարում, կարելի է ասել, բոլոր անհրաժեշտ պայմանները կային, որպեսզի «Յաղագս կազմութեան մարդոյ» և «Յաղագս բնութեան մարդոյ» տարբեր հեղինակների գործ հանդիսացող աշխատանքները ընկալվեին իբրև մեկ երկ և վերագրվեին մեկ հեղինակի՝ տվյալ դեպքում Գրիգոր Նյուսացուն։ Հավանական է մտածել, որ ձեռագրերի նմանօրինակ հաստատումն, կասկած չհարուցող հաղորդումների տպավորությամբ է պայմանավորված նաև ձեռագրագետ-հնագրագետ Գ. Հովսեփյանի հետևյալ ընդհանրացումը. «Բժշկական գիտությունը, հատկապես մարմնակազմությունը, հայտնի էր քրիստոնյա հայերին արաբներից էլ առաջ, Գրիգոր Նյուսացու «Յաղագս բնութեան մարդոյ» գործի հայերեն թարգմանությամբ»[14]։

---

[10] Ձեռ. № 1897, էջ 108բ։

[11] Ձեռ. № 2041, էջ 350ա։

[12] Ձեռ. № 4132, էջ 353ա։

[13] Ձեռ. № 2041, էջ 350բ, հմմտ. «Գիրք որ կոչի հեքիմարան, որ ասացեալ է մեծին Գրիգորի Նիւսացւոյն, աստուածարան վարդապետի, համառօտեալ բազմատարար» (տե՛ս Յուցակ ձեռագրաց որ ի «Հանդէս Ամսօրեայ», խմբագրութեամբ Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1976, էջ 76)։

[14] Գաբրիէլ Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Բ, Երևան, 1987, էջ 323։

Վերոբերյալ խորագրային բնորոշումները առաջին հայացքից կարող են այն տպավորությունը ստեղծել, թե պարզապես գործ ունենք նշված աշխատանքների լոկ անվանումների շփոթի հետ։ Բայց դա իրականում այդպես չէ։ Դրանում համոզվելու համար պիտի անդրադառնալ «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական վաստակի հայերեն թարգմանություններին լավածանոթ, դրանք անուն առ անուն ընդօրինակած մատենագիր[15] Մխիթար Այրիվանեցու մատենագիտական տեղեկանքին, ուր նուրբ գրիչ շարքի տակ, Գրիգոր Նյուսացու յոթ անուն դրքերի թվում, կողք կողքի հիշատակվում են «Բնութեանն գիրք» (ԼԴ ճառ), «Կազմութեանն» (ԼԲ ճառ) գործերը, իբրև նույն հեղինակի տարբեր աշխատանքներ[16]։

Ձեռագրական համապատասխան նյութի առկայությունը հնարավորություն է տալիս ստուգելու, վերահսկելու Մխ. Այրիվանեցու հաղորդման նախնությունը։ Այսպես, օրինակ, այլուր Գրիգոր Նյուսացու թողած գրական վաստակի մասին խոսելիս միջնադարյան հայ հեղինակն ընդհանրացնում է. «Սա գրեաց բազում ճառս վասն ուղղափառ հաւատոյ։ Եւ այրար զգիրս Բնութեան եւ Կազմութեան մարդոյս ի խնդրոյ եղբաւրն իւրոյ Պետրոսի, Կեսարու եկեղեցպանին... եւ եղբայրն իւր տուրբն Գրիգոր Նիւսացին, աղաչանաւք եղբաւրն իւրոյ Պետրոսի, սկսաւ առնել զգիրս Կազմութեան մարդոյն, որ ի վեցերորդի աւուրն։ Ընդ նմին եւ զԲնութեան գիրքն գեղեցիկ ոճով եւ լի իմաստութեամբ, հանճարեղ եւ համեղ բանիւք...»[17]։

Ավելին, պահպանվել է անվանի մատենագիր Վարդան Արևելցու «ինքնաճեռագիր յիշատակարանը» (Գ. Հովսեփյանի արտահայտությունն է), ուր ամենայն հստակությամբ ասված է. «Գիրքս սրբոյն Գրիգորի Նիւսացոյ, որ բաժանեալ է յերիս հատածս՝ ի Բնութեան, ի Կազմութեան և ի Կուսութեան, իմաստնոյ և շնորհալից եղբաւր մերոյ և սպասաւորի բանին Գրիգորի մականուն Բժնեցոյն է...»[18]։ Վ. Արևելցու բուն նպատակը, հարկավ, Գրիգոր Բժնեցու մատենագրական-մշակութային նպաս-

---

[15] Տե՛ս ձեռ. № 1500, էջ 576բ—723բ, էջ 724բ—1011ա։

[16] Տե՛ս ձեռ. № 582, էջ 40ա, ձեռ. № 8509, էջ 79ա, ձեռ. № 1500, էջ 576 բ, Համառ. Մխիթարայ Այրիւանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 35։

[17] Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 71։

[18] Ձեռ. № 469, էջ 260 բ։ Հրատարակությունը տե՛ս Գաբեգին Հովսեփեան, Հաղրատկանք կամ Պատշանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 375։ Նույն

տավոր գործունեության ընդգծումն է։ Բայց միաժամանակ դժվար չէ նկատել, որ որոշակի կապ կա այս և նախորդ համաբնույթ հաղորդումների միջև։ Խոսքը ոչ միայն ձևակերպման նմանության մասին է, այլ, որ տվյալ դեպքում հիմնականն է, թվարկվող աշխատանքների հեղինակային պատկանելության մատուցվող հաստատուն հրանգն է։

Ստ. Օրբելյանը ևս պնդում է, որ «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» գործերը պատկանում են Գրիգոր Նյուսացու գրչին։ Անդրադառնալով Ստ. Սյունեցու թարգմանական գործունեությանը՝ նա գրում է. «Թարգմանէ և զգիրսն քաղցրարան Գրիգորի Նիւսացւոյ զԲնութեան և զկազմութեան»[19]։

Սույն խնդրին վերաբերող մատենագրական վկայություններից հնագույնը, որքան մեզ հայտնի է, Ստ. Սյունեցու թարգմանչական հիշատակարանն է, որին կանդրադառնանք թարգմանության տեղի ու ժամանակի հարցեր արծարծելիս։ Սակայն այստեղ անհրաժեշտ է նկատել, որ նշված հեղինակային պատկանելության շփոթը գոյություն է ունեցել նույնիսկ Ստ. Սյունեցու ժամանակաշրջանում և որ այն ինչ-որ չափով պայմանավորված է համապատասխան գործի հունարեն նախօրինակով։ Այլապես դժվար է մտածել, որ Ստ. Սյունեցին «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» գործերը հայերեն թարգմանելիս շփոթում է Եմեսացու և Նյուսացու անունները։ Այս իմաստով միանգամայն իրավացի է Հ. Տաշյանը, որը, անդրադառնալով նշված թարգմանչական հիշատակարանին, գրում է. «Այս յիշատակարանէն կը տեսնենք, որ արդէն յոյն նախաբնագիրն, որմէ եղած է թարգմանութիւնս, Նեմեսիոսի անուան տեղ Նիւսացւոյն անունը կրած կերեւայ, եւ գրոց վերնագիրը կամ այնպէս եւ կամ գոնէ անանուն գտեր է նաեւ թարգմանիչն»[20]։

յովանդակութեան վերաշարադրանքը տե՛ս նաև էջ 181, 253, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 402։

[19] *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 135։ Մատթեոս Ուռհայեցին (մահ. 1138 թ.) նույնպես «Յաղագս բնութեան մարդոյ» երկը ընդունում է որպես Գր. Նյուսացու աշխատության և բառացի քաղում է կատարում վերջինիս երրորդ ճառից (տե՛ս Մատթէոս ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 168, «զարձեալ և երանելին Գրիգոր Նիւսացին ասէ...» հատվածը, համմտ. Նեմեսիոսի փիլիսոփայի եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889, էջ 55—56)։*

[20] *Տաղավբոս Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Ա—Զ, Վիեննա, 1895, էջ 7։ Հայտնի է, որ «Յաղագս բնութեան մարդոյ» երկի բնագրի հրատարակություն-*

Հարցին վերաբերող սկզբնաղբյուրների պարունակած նյութը հնարավորին չափ ամբողջական տեսքով ներկայացնելու նպատակով անհրաժեշտ է դիմել նաև բյուզանդական մատենագրի գրական վաստակի հայերեն թարգմանությունների շուրջ եղած մեկնություններին, պատճառներին ու լուծմունքներին։ Հասկանալի է, որ վերջիններս միջնադարյան գրական ժանրի ինքնատիպ գրառումներ են, հաճախ առաջին տպավորությամբ պայմանավորված պարզ ու մեկին բացատրություններ, կարճառոտ վերլուծումներ, ստեղծագործական պատմության իրապատում դրվագներ՝ երբեմն խարխլված ազգային երանգավորման սյուժեի վրա։ Այդ են վկայում XII դարի անվանի մատենագիր Դավիթ Քոբայրեցու որոշ ձեռակերպումներ՝ կատարված Գրիգոր Նյուսացու գործերի պատճառների առիթով. «այսպէս լուաք ի պատմող վարդապետաց», «այսպէս լուաք և ծանեաք», «այսպէս լուաք ի հոգևոր վարժապետաց»[21]։

Դժվար չէ նկատել, որ բյուզանդական մատենագրի երկերի հետ կապված հեղինակային պատկանելության խնդիրը և առհասարակ այս կամ այն գործի ստեղծագործական պատմությանն առնչվող ձեռագրերում եղած, գրավոր կամ բանավոր հիմք ունեցող մանրամասները ընդօրինակողներին հնարավորություն էին տալիս կատարելու անհրաժեշտ լրացում-ճշգրտումներ, որոնց հավաստիության միակ երաշխիքը, որքան էլ զարմանալի թվա, մնում էր գրչի հաստատ համոզվածությունը մատուցվող նյութի ստույգության մեջ։

Ձեռագիր նյութերի այս խմբի համեմատությունը ևս ցույց է տալիս, որ, պահպանված ավանդույթին հետևելով, բյուզանդական մատենագրի գրական վաստակը գնահատող-արժեքավորող մեկնություններում, պատճառներում ու լուծմունքներում ևս «Յաղագս բնութեան մարդոյ» երկը, գրեթե առանց բացառության, ընկալվում ու մեկնվում է նույն ավանդական հեղինակային պատկանելությամբ[22]։ Դրանցում հաճախ թվարկվում, անուն առ անուն, կողք կողքի հիշատակվում են թե՛ Բնութեան և թե՛ Կազմութեան դրքերը, մի իրողություն, որը, կարելի

ները (տե՛ս Patrologiae cursus completus. Series graeca, t. 40, էջ 503—818) կրում են Նեմեսիոսի անունը։ Հավանաբար բնագրի հետևությամբ է, որ հայերեն թարգմանության հրատարակությունը ևս հայտնի է Նեմեսիոսի անվամբ (տե՛ս «Նեմեսիոսի փիլիսոփայի եպիսկոպոսի Յաղագս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1889)։

[21] Ձեռ. № 1879, էջ 230 բ, 232 ա, 236 բ։

[22] Տե՛ս ձեռ. № 4150, էջ 61ա-բ, ձեռ. № 5254, էջ 75ա, ձեռ. № 59, էջ 153ա, ձեռ. № 6362, էջ 85 բ, ձեռ. № 466, էջ 115ա, համմ. Ա. Տաշյան, Յուցակ..., էջ 62, 230։

է ասել, բացառում է դրանք միմյանց հետ շփոթելու հնարավորությունը։ Ահա այսպիսի տեսք ունի «Յաղագս բնութեան մարդոյ» երկի հայերեն մեկնություններից մեկի մուտք-դրառաջքը. «Աստուածահաճոյ և երանելի վարդապետն Դրիգորիոս այնքան ուռճացեալ իմաստութեամբն և հանճարով ուսմանն մինչ զի բնաւից էր սիրելի և հաճելի ոչ միայն մերովքս, այլ և արտաքնովքն՝ որպէս ոչ այլ ոք։ Մինչ բազումք յորդորէին զնա գրել վասն ամենայն իրաց, որպէս և սուրբն Բարսեղ, եղբայր նորին և Գրիգոր Աստուածաբան։ Այսպէս և միւս եղբայրն Պետրոս, զի ի նորա խնդրոյն արարեալ է զայս գիրքս, որպէս զկազմութեանն, զերգս երգոյն և զկուսութեանն և այլ բազում գիրս...»[23]։

«Երեք մեծ կապադովկացիների» հայերեն թարգմանություններին լավածանոթ, դրանց շուրջ ստեղծված պատճառների մեծ մասի հեղինակ Դավիթ Քոբայրեցու համար էլ Բնութեան և կազմութեան գրքերի հեղինակը նույն Գրիգոր Նյուսացին է[24]։ Պահպանվել է Դավիթ Քոբայրեցու ուղղակի բացատրությունը՝ ասված «Սկիզբն և պատճառ Բնութեան գրոցս» իր իսկ քննության առիթով. «Վարդապետն նկնղեցւոյ Գրիգոր Նիւսացի շարադրէ և զայս աստուածային կտակ գիտութեան յետ կազմութեանն ըստ կարգի այլոցն, որ ասացան ի գլուխ ամենայնի, առնու ի քննութիւն զԲնութիւնն հոգւովս, որ ի մեզ է»[25]։

Անշուշտ, վկայակոչված հղումներով չի ավարտվում նմանօրինակ բովանդակությամբ հաղորդումների ցանկը։ Սակայն եղած սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս ասելու, որ հեղինակային պատկանելության սույն շփոթը գոյություն է ունեցել ողջ միջնադարում։ Այդուհանդերձ, այն երբևէ ուսումնասիրության նյութ չի դարձել, թեև դրա համար, ինչպես տեսնում ենք, եղել են բավարար հիմքեր[26]։

Գրիգոր Նյուսացուն օտար աշխատասիրություն վերագրելու հաջորդ օրինակը կապվում է Գրիգոր Նազիանզացու հետ։ Պարզվում է, որ Մաշ-

---

[23] Ձեռ. № 55, էջ 162 ա, ձեռ. № 59, էջ 153 ա, ձեռ. № 3275, էջ 152 ա, ձեռ. № 1480, էջ 304 ա, ձեռ. № 627, էջ 116 բ։

[24] Տե՛ս ձեռ. № 1879, էջ 236 բ, 239 ա։

[25] Ձեռ. № 1879, էջ 239 ա։

[26] Եղած հաղորդումների թելադրանքով է, որ հեղինակային պատկանելության սույն շփոթը առանց առարկության ընդունվել է նաև հետազոտողների կողմից։ Այսպես, օրինակ, նույն ավանդական եղանակով «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» երկերը Գր. Նյուսացու աշխատասիրություն են ընկալել նոր հայկազյան բառարանագիրները և ուրիշներ (տե՛ս ՆՀԲ, Ա, 16), համմ. Աբաեան Տիրոյեան, Նեմեսիոս եւ

տոցի անվան Մատենադարանի № 866 ճառընտրում (ԺԴ դ.) Գրիգոր Նյուսացուն է վերագրվել Գր. Նազիանզացու «Խաւսք ի նոր կիրակէն ի Կեսարիայ կապադովկացւոց ի կատարման յիշատակ սրբոյ վկային Մամասայ, քանզի ի նորում կիրակէին կատարի միշտ կեսարացւոց քաղաքին» խորագրով ճառը[27]: Սակայն սույն ճառը ինչպես բնագրում[28], այնպես էլ հայերեն թարգմանության գրչագրերի հիմնական մասում[29] հայտնի է Գր. Նազիանզացու անվամբ, ուստի և № 866 ճառընտրում պահպանված վերագրման իրողությունը պարզ թյուրիմացության արդյունք է: Այդ շփոթը սրբագրելու, հիշյալ ճառը իր իսկական հեղինակի անվամբ մատուցելու անվստահ փորձ է արվել հետագայում՝ ավելացնելով «Աստուածաբանի» անունը[30]:

բ) ՃԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակին, բնույթին ու թարգմանիչներին վերաբերող ուղղակի տեղեկությունները, ինչպես նաև թարգմանական բովանդակությամբ հիշատակարան-հիշատակագրությունները հասկանալի պատճառով շատ չեն: Այդուհանդերձ, սկզբնաղբյուրներում պահպանված վկա-

---

նորա Յաղագս բնութեան մարդոյ գրոց հայկական հին թարգմանութիւնը (տե՛ս «Բազմավէպ», 1887, էջ 318—329): Հրապարակման սեղմ առաջաբանում հեղինակը նշում է, որ «Յաղագս բնութեան մարդոյ» երկը «Նախնիք կրնծայեն Գրիգորի Նիւսացւոյն» (տե՛ս նույն տեղում, էջ 319), Վաճառամ Թորգոմեան. Հայ բժշկական ձեռագիրը Ս. Ղազարու վանքին (տե՛ս «Բազմավէպ», 1923, էջ 141):

27 Ձեռ. № 866, էջ 182 ա:

28 PG, t. 36, էջ 608—621:

29 Տե՛ս „Le Muséon" t. 90, fasc. 3—4, 331—332:

30 Կան նաև մեր օրերում կատարված վերագրումներ. այսպես, օրինակ, «Յուցակ ձեռագրացում» (Հ. Բ, Երևան, 1970) Գր. Նյուսացուն է վերագրվել № 10168 գրչագրի «Լերան ի քարոզութեան» խորագիրը կրող բնագիրը (էջ 88ա—112բ), որը բնավ չի առնչվում բյուզանդական մատենագրի գրական վաստակին, այլ պարզապես գրչագրում հաջորդում է Նյուսացու Հարցումին: Նույն ձեռնարկով № 6146 գրչագրում պահպանված Բ. Կեսարացու և Գր. Նազիանզացու Հարցումը, ինչպես նաև № 6617 գրչագրում ընդօրինակված (էջ 247բ—251ա) Գր. Նազիանզացու Հարցումը նույնպես ընկալվել են իբրև Գր. Նյուսացու երկասիրություն:

յությունները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու բյուզանդական մատենագրի հարուստ ու բազմաժանր գրական վաստակի հայերեն թարգմանությունների տեղի, ժամանակի, բնույթի, թարգմանիչների ինքնության մասին։

Պահպանված տեղեկությունների քննությանն անցնելուց առաջ ավելորդ չէ նախ անդրադառնալ այն հարցին, թե այդ ուղղությամբ ինչ է կատարվել հայագիտության նախորդ սերնդի կողմից։ Սակայն այս առումով ևս մեր սպասելիքները մեծ լինել չեն կարող այն պարզ պատճառով, որ Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունները, աննշան բացառությամբ, այսօր էլ անտիպ են, պահպանվում են ձեռագիր վիճակում և, բնականաբար, դրանց ուսումնասիրության գործը կապված է ոչ քիչ դժվարությունների հետ։ Ասվածի հավաստումն է այն իրողությունը, որ հայագիտության մարզում գոյություն չունի բյուզանդական մատենագրի գրական ժառանգությունն ամփոփող-գնահատող որևէ հոդված կամ հաղորդում։ Ուստի պիտի մտածել, որ հայագիտական գրականության մեջ եղած Գրիգոր Նյուսացու կյանքի ու գործունեության, նրա ճառերի ու թղթերի մասին եղած նկատառումներն ու առանձին գնահատության օրինակները արդյունք են ոչ թե այս կամ այն խնդրի մասնավոր հետազոտության, այլ, առանց բացառության, մակաբերվում են հարակից հարցերի քննության առիթով։

Այդուամենայնիվ, որո՞նք են եղած ընդհանրացումները։ Նոր հայկազյան բառարանագիրները ձեռքի տակ ունեցել են Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների յոթ անուն գործ և, զանազան քաղումներ կատարելիս, բառարանագրության հնարավորության սահմաններում, արել են նաև բյուզանդական մատենագրի այս կամ այն երկի թարգմանության ժամանակին ու բնույթին վերաբերող արժեքավոր դիտողություններ։ Այսպես, օրինակ, բառարանագիրների բնութագրմամբ՝ Գրիգոր Նյուսացու «Յաղագս երգոյ երգոցս» և «Դրուատ ի սուրբն Ստեփանոս» ընդարձակ գործերը հին թարգմանություն են, «միջակ ոճով»[1]։ Նույն «հին թարգմանութիւն» ձևակերպմամբ է բնորոշվում նաև «ի սուրբ Թեոդորոս» ներբողը[2]։ Մի փոքր այլ է «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն» գործի հայերեն թարգմանության բառարանագիրների

[1] ՆՀԲ, Ա, 16։

[2] Տե՛ս նույն տեղում։

բնորոշումը. «Թարգմանութիւն ըստ նիւթոյն՝ տարբեր ոճով հելլենականաւ ի Սահփաննոսէ Սիւնեցւոյ ի սկիզբն Ը դարու»[3]: Բառարանագիրները գտնում են, որ նույն ոճով, բերևս «առաւել հին թարգմանութիւն է» բյուզանդական մատենագրի «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» ճառը[4]:

Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների լավագետ Գ. Զարբհանալյանի համոզմամբ՝ բյուզանդական մատենագրի «Խաւսք յինն երանութիւնսն» ընդարձակ ճառը նույնպես պիտի դասել «կրտսերագոյն թարգմանչաց» թարգմանությունների շարքը[5]:

Շատ ավելի ընդհանրական է Հ. Տաշյանի ձևակերպումը. հանգամանորեն քննելով կևդ Կալիսթենեսի «Վարուց Աղեքսանդրի» թարգմանության բնույթն ու լեզուն, նա գրում է. «Մասնաւոր մտադրութեան արժանի է այն՝ որ Կալիսթենեայ լեզուն շատ նմանութիւն ունի ինչպես Խորենացւոյ Պատմութեան, նոյնպէս նաեւ Փիլոնի, Նիւսացւոյ եւն թարգմանութեանց լեզուին»[6]:

Կարապետ եպիսկոպոսը «Կնիք հաւատոյ» ժողովածուի առաջաբանում անհրաժեշտ է նկատում արձանագրել, որ «Յաղագս կազմութեան մարդոյ» երկը թարգմանվել է Ստ. Սյունեցու ձեռքով, Տաշյանի առաջադրած 716 կամ 717 թթ.[7]:

Ա. Զամինյանը ծանոթ է Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների եղած հատվածական հրատարակություններին, որոնց հիման վրա ենթադրում է, որ «Նիւսացւոյ գրուածքները թարգմանուած են Ջ դարու մէջ»[8]:

Ն. Ակինյանի բնորոշումը նույնպես ընդհանուր է և չի բխում Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հետ կապված որևէ խնդրի մասնավոր քննությունից: Խոսելով հունաբան թարգմանությունների մասին, հետազոտողը Դավիթ Անհաղթի Սահմանքի, Եվսեբիոսի Քրոնիկոնի,

---

3 ՆՀԲ, Ա, 16:

4 Նույն տեղում:

5 Դ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ իե:

6 Յակոբոս վ. Տաշեան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղէքսանդրի, Վիեննա, 1892, էջ 209, համմ. էջ 211—212:

7 Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914, էջ XVIII:

8 Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 90:

Աղեքսանդրի Պատմության շարքում հիշատակում է նաև Փիլոնի, Պղատոնի, Նյուսացու և Նազիանզացու անունները[9]:

Հայագետների նմանօրինակ ընդհանրացումների հիմքը, այդուհանդերձ, պահպանված մատենագրական-ձեռագրական այն ուղղակի կամ միջնորդավորված վկայություններն են, որոնք հնարավորություն են տալիս բյուզանդական մատենագրի գործերի հայերեն թարգմանությունների հետ կապված հարց արծարծել: Այս առումով չափազանց արժեքավոր է Ստ. Օրբելյանի (1245—1305) հաղորդումը VIII դարի մատենագիր Ստ. Սյունեցու (680—735) կանոնավոր ուսումնառության, պատրաստության ու թարգմանական գործունեության մասին. «Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի Դաւիթ անուն և թագաւորական սեղանոյն կենառի. և ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ դիրսն սրբոյն Դիոնիսիոսի. և դնէ ինքն դժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ զԲնութեան և զԿազմութեան...»[10]: Սույն տեղեկության իսկության շուրջ արդարացիորեն որևէ կասկած չի կարող լինել այն պարզ պատճառով, որ Ստ. Օրբելյանը հրաշալի գիտեր Ստ. Սյունեցու կյանքի ու գործունեության մանրամասները և ամենայն ստուգությամբ վերապատմում է դրանք: Պահպանված երկու տասնյակից ավելի ձեռագրական հիշատակությունները ևս նույնն են վկայում[11]:

Տվյալ պարագայում մեր ասելիքը վերաբերում է թարգմանության խնդրում գործակից ունենալ-չունենալուն, այն հարցին, թե Ստ. Սյունեցին մենա՞կ է թարգմանել Գրիգոր Նյուսացու աշխատանքը, թե՞ աշ-

---

[9] Տե՛ս Ն. Ակինեան, Դասական հայերէնը եւ վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 168:

[10] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 135:

[11] Ձեռագրական նյութի համեմատումն ու դասդասումը ցույց են տալիս, որ Ստ. Սյունեցին առհասարակ լավատեղյակ է եղել «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական վաստակին և Գր. Նյուսացու հիշյալ գործից բացի թարգմանել է Բ. Կեսարացու «Ճառ ցաւագս ձայնից» աշխատանքը. «երանելոյն Բարսղի յաղագս ձայնից, թէ ուստի իցեն կամ յորմէ գոյան, զոր թարգմանեաց Ստեփաննոս փիլիսոփա, զի նա եղև երաժիշտ և հմուտ ձայնից ամենայն կենդանեաց և բաժանեաց զձայնս ի մասունս» (ձեռ. № 1267, էջ 341ա). Հրատարակությունը տե՛ս «Արարատ», 1894, էջ 256, Համմ. Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, ե—ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 1388: Հ. Անասյանը «Ճառս ցաւագս ձայնից» երկի հեղինակային պատկանելության շուրջ կասկած ունի (տե՛ս նույն տեղում):

խատակից է ունեցել հիշյալ Դավիթ հյուպատոսին։ Այս առումով հայագետների կարծիքը միանշանակ չէ։ Նոր հայկազյան բառարանագիրների պնդմամբ, ասվեց, Նյուսացու նշված գործի թարգմանիչը Ստ. Սյունեցին է և գործակցության խնդիր չկա[12]։ Նույն կարծիքին են Գ. Զարբհանալյանը և Հ. Տաշյանը[13]։ Սակայն կա նաև ուրիշ տեսակետ, որի համաձայն Ստ. Սյունեցին «Յաղագս կազմութեան մարդոյ» գործը «կը թարգմանէ գործակցութեամբ Դաւիթ անունով մէկու մը»[14]։ Անհրաժեշտ է նկատել, որ նման եզրակացության հնարավորություն է տալիս պատմիչի հաղորդումն ինքնին, ուր պարզորոշ ասված է, որ Ստ. Սյունեցին Դավիթ հյուպատոսի «ձեռնտուութեամբ...թարգմանէ...զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ»։ Ձեռնտուություն բառը Նոր հայկազյան բառարանագիրների բացատրությամբ նշանակում է ձեռնտու լինելն, ձեռնկալություն, օգնություն, սատարություն, նպաստ[15] և այլն։ Բառիս առաջադրված իմաստները միանգամայն ճիշտ են արտացոլում պատմիչի հաղորդման էությունը՝ Ստ. Սյունեցին իր նպատակադիր թարգմանական գործունեության ոլորտում մենակ չէ։

Բարեբախտաբար Ստ. Օրբելյանի հաղորդումը իր տեսակի մեջ միակը չէ։ Համաբնույթ սկզբնաղբյուրների որոնումը ցույց է տալիս, որ կան բավարար կռվաններ մտածելու, որ Ստ. Սյունեցու թարգմանական գործունեության ոլորտը սոսկ Դավիթ հյուպատոսի օժանդակությամբ չի սահմանափակվում։ Մինչդեռ պարզվում է, որ Մխ. Այրիվանեցու (1222—1291) մի երկում պահպանված տեղեկության համաձայն «Յաղագս կազմութեան մարդոյ» գործը, ինչպես նաև հունարեն գտնադան ուրիշ բնագրեր հայերեն թարգմանելիս Ստ. Սյունեցուն աշխատակցել է թարգմանական պատրաստությամբ օժտված հմուտ գործընկեր, Այրիվանքի միաբան, իր իսկ ուսումնակից-հասակակից «Գրիգոր անուն» մատենագիրը։ Ահա թե ինչ է գրում Մ. Այրիվանեցին Ստ. Սյունեցու «առաջադեմ գիտության» ու գործունեության մասին խոսելիս. «Էր եւ ընկեր սորա ի նմին քաղաքէ քհայ. ոմն Գրիգոր անուն, ի սբ. ուխտէն Այրիվանայ... Երկոքին սոքա ընտիրք և զարմանալիք, յառաջադէմք ի

---

[12] Տե՛ս ՆՀԲ, Ա, 16։

[13] Գ. Զարբհանալեան, Նշվ. աշխ., էջ 371, Հ. Տաշյան, Յուցակ..., էջ 45, 681։

[14] Հելլենաբանութիւն եւ հելլենաբան թարգմանիչք հայկական լեզուի (տե՛ս «Բազմավէպ», 1875, էջ 121), համմտ. «Յաղագս կազմութեան մարդոյ», Գր. Նիւսացիի, թարգմանում է Դաւիթ Հիւպաթոսի հետ (Ս. Պողարեան, Հայ գրողների, Երուսաղէմ, 1971, էջ 113)։

[15] ՆՀԲ, Բ, 154։

գիտութիւն գրոց եւ յարուեստս երաժշտականութեան։ Սոքա միաբանեալ գնացին իմաստասիրաց յԱթէնս եւ ուսան զամ. սահմանս փիլիսոփայութիւն. իմաստնոց արտաքնոց, և քաջատեղեակք եղեն ածաշունչ. բնագրեանց և մեկնչաց։ Անտի եկեալ, եկին ի Թզրաբնակ քաղաքն Կոստանդնուպաւլիս...։ Անդ գտին նոքա զգիրսն Դիոնեսիոսի Արիսպագացոյ... Թարգմանեցին զնա ի յունականէն ի հայ բարբառ...։ Դտին և ի նմին քաղաքի զբազմիմաստ գիրսն Գրիգորի Նիւսացոյ, որ վս. բնութե. մարդոյ եւ կազմութե. կարգեալ էր, և զայն ևս Թարգմանեցին»[16]։

Վկայակոչված քաղվածքում երկբայելի, թեական ոչինչ չկա. ամեն ինչ ասված է շատ պարզ ու որոշակի՝ «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատանքները հունարենից հայերեն են Թարգմանվել Ստ. Սյունեցու և «Գրիգոր անուն» Թարգմանիչ-մատենագիրների համատեղ ջանքերով, Կոստանդնուպոլսում։ Փաստորեն Մխ. Այրիվանեցու հաղորդման նորը կամ տարբերությունը Ստ. Օրբելյանի նույնաբնույթ տեղեկությունից այն է, որ իբրև Գրիգոր Նյուսացու Թարգմանիչ հիշատակվում է բոլորովին նոր անուն։ Եվ դա միանգամայն հասկանալի է այն պարզ պատճառով, որ նշված Թարգմանիչ-մատենագիրների գործունեության հետ են կապվում ոչ միայն Նյուսացու կամ Եմեսացու նմանանուն մեկական գործերը, այլ նաև ուրիշ աշխատանքներ։ Իրականում խոսքը ծրագրավորված, որոշակի մշակված սկզբունքներով գործող տևական Թարգմանական գործունեություն ծավալելու մասին է, որ, բնականաբար, մեկ-երկու աշխատակից-կատարողների ձեռնարկումներով դժվար էր իրացնել։

Ի լրումն Ստ. Օրբելյանի և Մխ. Այրիվանեցու վերոբերյալ հաղորդումների, ունենք նաև 1227 թ. Գրիգոր Նյուսացու գործերի ընդօրինակության առիթով գրված Սիմեոն Պղնձահանեցու հիշատակարանը, որտեղ նույնպես բյուզանդական մատենագրի գործերի հայերեն Թարգմանությունների մասին խոսելիս ընդօրինակողը, չխորանալով Թարգմանության մանրամասների մեջ, դրանք դիտում է մեկից ավելի Թարգմանիչների գործ. «աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացոյ...որ թարգմանչացն գրած էր...»[17]։

---

[16] Կարեգին Յովսէփեանց. *Մխիթար Այրիվանեցի. Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր. Նիւսագէմ, 1931, էջ 17։* Վերոբերյալ հաղորդման նյուսացուն վերաբերող մասը տե՛ս նաև նույնի «Խաղրակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ», Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 181, հմմտ. էջ 253, 375։

[17] Ձեռ. № 1013, էջ 241բ։

Ստ. Օրբելյանի, Մխ. Այրիվանեցու, Ս. Պղնձահանեցու վերոբերյալ տեղեկությունների ստուգությունը հավաստվում է շատ ավելի հին ու հավաստի վկայությամբ. խոսքը Օրբելյանի և Այրիվանեցու հիշատակած Թարգմանիչ-մատենագիր Ստ. Սյունեցու անվամբ պահպանված թարգմանական հիշատակարանի մասին է[18]*: Ահա այսպիսի տեսք ունի Մաշտոցի անվան Մատենադարանի 1260 թ. ընդօրինակված № 469 ձեռագրում պահպանված այդ հիշատակարանը. «Ի-երորդի [=վեցհազարերորդի] Մ-երորդի [=երկերիւրերորդի] Ի-երորդի [=քսաներորդի] է-երորդի [=եւթներորդի] արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոյ՝ ի չորեքտասաներորդի ընդիքտիոնին, յառաջին ամի թագաւորութեանն Լէոնի, թարգմանեցան գիրքս սրբոյն Գրիգորի Նւսիա էպիսկոպոսի, ի ստոյգ աւրինակաց, ի Կոստանդնուպաւլիս, ի ձեռն Դաւթի հիպատոսի և ի թագաւորական սեղանոյն յանկիւնաւռի*[19]*, ի ձեռն Ստեփաննոսի քահանայի և քերդողի, աշակերտի տեառն Մովսէսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի: Յիշեցէք զնոսա ընդաւրինակողք և փոխեցէք զբանս յիշատակի ի յոյս փրկութեան աշխատողացն և յիշողացդ առ Քրիստոս...»*[20]*:

---

[18] *Ստեփանոս Սյունեցու հիշատակարանը, ինչ խոսք, միաժամանակ կարևոր սկզբնաղբյուր է VIII դարում հայ իրականության մեջ ծավալված գրական-մշակութային իրավիճակի գնահատման առումով: Կասկածից վեր է, որ այն ծանոթ է եղել Ստ. Օրբելյանին. այդ են վկայում բառացի նմանությունը օրինակները. համմտ. «ի ձեռն Դաւթի հիպատոսի և ի թագաւորական սեղանոյն յանկիւնաւռի» (Ստ. Սյունեցի), «ծանօթացեալ մեծ հիպատոսի մի Դաւիթ անուն և թագաւորական սեղանոյն կենաւռի» (Ստ. Օրբելյան): Մխ. Այրիվանեցու տարբերակը նման ենթադրության հնարավորություն չի տալիս:*

[19] *«Յանկիւնաւռ»-ի դիմաց այլուր ունենք կենաւռի, կիսաւրի, կիճաւռի և նման բնթերցումները: Հ. Տաշյանի հավաստմամբ՝ կիճաւռ տարբերակը «արդէն 1864-ին շատ լավ հնինած կերեւայ Բրոսսէ: Յայտնապէս կը տեսնուի, որ «կենաւռ» սխալ գրութիւն մը կրնայ ըլլալ փոխանակ «կելար» գրելու, որ է լատինական* cellarius *բառը...» (Յակովբոս Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ, Վիեննա, 1895, էջ 8):*

[20] *Ձեռ. № 469, էջ 117 ա, ձեռ. № 620, էջ 150ա-բ, ձեռ. № 1500, էջ 602 ա: Ակագ. Լ. Խաչիկյանը գտնում է, որ սույն № 469 ընդօրինակությունները գրվել է «Մեծքար անունով անապատում» (տե՛ս նրա՝ Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի. «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 35, ծան. 42): Վերոբերյալ հիշատակարանը պահպանվել է «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատանքների գրեթե բոլոր ընդօրինակություններում: Այն հրատարակվել է մի քանի անգամ, տարբեր ձեռագրերի հիմքի վրա, ուստի և ոչ միօրինակ տեսքով: Տե՛ս Միքայել Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Բ, ի Վիեննայ, 1785, էջ 555, Նեմնսիոսի փիլիսոփայի Եմնացւոյ Յաղագս բնութեան մարդոյ, Վիեննայի, 1889, էջ 162, Գ. Զարբհանալեան, Մատենադարան..., էջ 371, Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 7, Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք*

Վերոբերյալ հիշատակարանը գրչական մասնակի տարբերություններով և հետագա ոչ մեծ ընդմիջարկություն-փոփոխություններով հանդիպում է երկու տասնյակից ավել ընդօրինակություններում: Կա ձեռագրերի մի խումբ, որոնցում այն ընդօրինակվել է Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատանքի ավարտից հետո և Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի սկզբնամասում[21]: Այս իրողությունն էլ հնարավորություն է տվել մտածելու, որ նշված թարգմանական հիշատակարանը «Յաղագս բնութեան մարդոյ» գործի Ստ. Սյունեցու թարգմանությանն է վերաբերում և ոչ թե Գրիգոր Նյուսացու հիշյալ աշխատանքին, «մանաւանդ թէ բուն յիշատակարանն Սիւնեցւոյն այս մասին կը վերաբերի և ոչ թէ Նիւսացւոյն ճառին»[22]: Սակայն Ն. Եմեսացու և Գ. Նյուսացու հայերեն թարգմանությունների գրչագրերի, համապատասխան հիշատակարան-հիշատակագրությունների համեմատումն ու դասդասումը ցույց են տալիս, որ նման ընդհանրացման համար չկան բավարար հիմքեր և ահա թե ինչու:

1 Արսեն Սուքրյանին հավանաբար ծանոթ չէ ձեռագրերի ավելի մեծ թիվ կազմող այն խումբը, որոնցում նշված հիշատակարանը ընդօրինակվել է «Յաղագս կազմութեան մարդոյ» գործի ավարտամասում[23]:

2 Սույն գլխի նախորդ բաժնում, հեղինակային պատկանելության հարցեր քննելիս, տեսանք, որ ինչ-ինչ պատճառներով Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատանքը միջնադարում վերագրվել է Գր. Նյուսացուն, ուստի և պիտի ենթագրել, որ միևնույն թարգմանական հիշատակարանի անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով այն

ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 55, Բարգէն արքեպիսկոպոս, Յուցակ ձեռագրաց Դպրեվանից ազգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 593, Մ. Յուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, II, կազմեց Նուարդ Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 314, Ն. Պողարյան, Յուցակ..., հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 293, Ն. Պողարյան, Յուցակ..., հ. Դ, Երուսաղեմ, 1969, էջ 187, Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 638, Լ. Գ. Միհասեան, Յուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց Բանգարանի, հ. Բ, Վիեննա, 1972, էջ 175, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 24—25:

21 Տե՛ս ձեռ. № 6848, էջ 150ա, ձեռ. № 3463, էջ 129բ—130ա, ձեռ. № 6622, էջ 168 ա, ձեռ. № 418, էջ 74 բ, ձեռ. № 2908, էջ 111ա-բ:

22 Արսեն Սուճրի, Նեմեսիոսի մարդակազմութեան դրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը (տե՛ս «Բազմավէպ», հ. ԼՀ, 1880, էջ 326):

23 Տե՛ս ձեռ. № 463, էջ 80 ա, ձեռ. № 466, էջ 181 բ, ձեռ. № 421, էջ 85 ա և այլն:

ընդօրինակվել է մեկ անգամ, Նյուսացու աշխատասիրություն համարվող «Յաղագս բնութեան մարդոյ» երկի վերջնամասում և «Յաղագս կազմութեան մարդոյ» գործի սկզբնամասում:

3 Վերոբերյալ հիշատակարանի ոճից ինքնին երևում է, որ ենթադրվող թարգմանությունները մեկից ավելի են, և որ դրանք պատկանում են Գրիգոր Նյուսացու գրչին. «թարգմանեցան գիրս սրբոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեայ»:

4 Թվարկված երկու աշխատանքներն էլ հայերեն են թարգմանվել նույն ժամանակահատվածում, միևնույն թարգմանչի՝ Ստ. Սյունեցու ձեռքով, ուրեմն առավել ևս անհրաժեշտություն չկար յուրաքանչյուր գործ առանձին օժտելու նույն բովանդակությամբ՝ թարգմանական երկու հիշատակարանով, մանավանդ որ դրանք ընդօրինակվում էին կողք կողքի, նույն գրչի ձեռքով, միևնույն ձեռագրում:

Այժմ մի քանի խոսք քննվող հիշատակարանի կրած ընդմիջարկությունների, մասնակի փոփոխությունների և Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների ժամանակի մասին: Բազմաթիվ ձեռագրերում նշված հիշատակարանի «ի չորեքտասաներորդ ընդիքսիոնին» արտահայտությունից հետո ունենք «իսկ ըստ հայում թուականին ՄԻԱ»[24] մասնավորեցումը: Մ. Ջամչյանը հանգամանորեն քննել է հիշատակարանում վկայակոչված անձանց գործունեության ժամանակագրությունը, անդրադարձել է նաև «իսկ ըստ հայում թուականին» կապակցությանը և եզրակացրել, որ այն «չայտնի սխալ գրչաց է»[25]: Միանշանակ է նաև Հ. Տաշյանի կարծիքը՝ «սխալն ակնյայտնի է»[26]: Նախորդ հետազոտողների պատմաբանասիրական ուսումնասիրությունների արդյունքներին իր իսկ նկատառումներն ավելացնելով Գ. Հովսեփյանը տվյալ խնդիրը լուծում է միանգամայն համոզիչ եղանակով. «Արարչութեան 6227 թուականը հաւասար է Փրկչականի 719 թուին, որ համապատասխան է Լեւոն Գ-ի եւ Սահակիոս Սիւնեցու ժամանակներին: Մինչդեռ եթէ հայ ՄԻԱ թուականի վերայ աւելացնենք 553 (Սարկաւագապիր տումարի հաշուով), կը ստանանք 774, որ Լեւոն Դ-ի տարին է»: Այսպես-

---

[24] Ձեռ. № 1500, էջ 602 ա, ձեռ. № 620, էջ 150 ա, ձեռ. № 1828, էջ 292ա-բ և այլն: Մ. Ջամչյանի հրատարակության հիմք ձեռագրում ՄԻԱ-ի փոխարեն եղել է ճկն (տե՛ս Մ. Ջամչյան, նշվ. աշխ., էջ 555):

[25] Մ. Ջամչյան, նշվ. աշխ., էջ 555:

[26] Հ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, էջ 9:

ղից կարող ենք եզրակացնել, որ... «իսկ ըստ Հայում ՄԻԱ» յետին յաւելումն է, Լեւոն Դ-ի եւ Լեւոն Դ-ի թուականների շփոթութեամբ»[27]:

Որ հետազոտողի «յետին յաւելումն է» վերապահումը միանգամայն տեղին է, հաստատվում է վերեւում վկայակոչված Մաշտոցի անվան Մատենադարանի № 469 ձեռագրի օրինակով, ուր «իսկ ըստ Հայում ՄԻԱ»-ն Ստեփանոս գրչի ձեռքով ավելացվել է լուսանցքում և միայն հետագա ընդօրինակություններում է մուծվել բնագիր և այդ եղանակով դարձել հիշատակարանի մաս:

Ինչ վերաբերում է Եմեսացու և Նյուսացու հիշյալ աշխատանքների Ստ. Սյունեցու թարգմանության ժամանակին, ապա պիտի նկատել, որ հետազոտողները, չնչին բացառությամբ, համամիտ են Հ. Տաշյանի այն եզրակացությանը, «թէ 716 կամ 717 թուականն է միայն ուղիղն՝ այն ատոյգ է»[28]:

Որոշ տարակարծություններ կան թարգմանիչների կատարած դերի շուրջը: Այսպես, օրինակ, նշված հիշատակարանի մի հրատարակված տարբերակի առիթով, Ստ. Սյունեցու կապակցությամբ ծանուցվում է. «այլ խնդրելի է թէ արդեօք ինքնի՞ն իցէ թարգմանիչն թէ լոկ սրբագրող կամ յարդարող թարգմանութեանն յիշատակելոյն ի նմանէ Դաւթի հիւպատոսի...»[29]: Առաջադրվող կասկածը, ավելի ճիշտ՝ կատարված աշխատանքի նման բաժանումը իրականում որևէ արդարացում չունի: Նախ պիտի ասել, որ բուն սկզբնաղբյուրը՝ թարգմանական հիշատակարանը, նման հետևության հնարավորություն չի տալիս, ուր շատ հստակ ասված է, որ «թարգմանեցան գիրքս... ի ձեռն Դաւթի հիպատոսի... և ի ձեռն Ստեփաննոսի քահանայի»: Ստացվում է այն թյուր տպավորությունը, որ թարգմանիչ կատարողների հիշատակվող հերթականությամբ պիտի առաջնորդվել և նախապատվությունը Դավիթ հյուպատոսին վերապահել, որովհետև բուն հիշատակարանում առաջինը նրա անունն է տրվում: Աշխատանքի նման ձևական բաժանումը որևէ կերպ չի արդարանում և ինքնին մերժելի է: Մինչդեռ պիտի մտածել, որ թարգմանական հիշատակարանի հեղինակը հասկանալի պատճառով առաջինը դործընկերոջ անունն է տալիս, մանավանդ որ վերջինս պաշտոնական անձ է:

---

[27] Յիշատակարանք ձեռագրաց, էջ 55, հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, է—ԺԲ դդ., էջ 26, ծան. 1:

[28] Տե՛ս Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 10, հմմտ. Մ. Գ. Դրիզոռեան, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ-Լիբանան, 1958, էջ 32:

[29] Նեմեսիոսի փիլիսոփայի եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ, էջ 162, ծան. 2:

Բացի այդ՝ եղած ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրները Ստեփանոս Սյունեցի թարգմանիչ-մատենագրի մասին միանգամայն դրվատանքով են խոսում և ոչ մի առիթով նրան սրբագրող-հարդարողի օժանդակ դեր չի վերապահվում: Այնպես որ Նյուսացու թարգմանիչներ պիտի ընդունել հավասարապես թե՛ Դավիթ Հյուպատոսին և թե՛ Ստեփանոս Սյունեցուն:

Տվյալ պարագայում էական նշանակություն ունի նրանց կատարած թարգմանությունների շրջանակների ճշգրտումը: Ասվեց, որ նշված թարգմանական հիշատակարանը գրվել է «Յաղագս բնութեան մարդոյ» և «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատանքների թարգմանության առիթով: Միաժամանակ հայտնի է, որ Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկից երկու ընդարձակ հատված կա VI դարի վերջին և VII դարի սկզբին կազմված «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմում[30]: Տվյալ դեպքում երկու տրամաբանական հետևություն կարելի է անել: Մեկ այն, որ «Կնիք հաւատոյ» ժողովածուի պատրանական թարգմանությունները բոլորովին օտար թարգմանչի աշխատանք են և, հասկանալի է, ընդհանրական չեն ձեռագրերով պահպանված թարգմանության հետ: Եվ երկրորդ հնարավոր ենթադրությունն այն է, որ միջնադարում Ստ. Սյունեցու և Դավիթ Հյուպատոսի հայտնի թարգմանության առանձին հատվածներ հետագայում են մուծվել «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ, այլապես անհասկանալի կմնա VIII դարի թարգմանության հայտնությունը Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի (մահ. 628 թ.) օրոք կազմված ժողովածուի էջերում:

Բոլոր պարագաներում հարցի համեմատաբար ստույգ պատասխանը հնարավոր է ստանալ հրապարակված հատվածների և մեկ-երկու ձեռագիր տարբերակի համեմատության եղանակով: Այդ նպատակով ընտրել ենք «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի ամբողջական ընդօրինակությունների երկու տարբերակ, որոնցից մեկի՝ № 468-ի համեմատության արդյունքներն արտացոլել ենք բուն տեքստում, մյուսինը՝ № 469-ի տարբերությունները՝ տողատակում, այլընթերցումների տեսքով: Արդ հետևենք համեմատության ընթացքին:

---

30 Կնիք հաւատոյ, էջ 267—276, 289—293:

Եռանելոյն Գրիգորի, եղբօրն Բասղի, որ առ յաւուրիւն Կենի հաւատոյ *(էջ 267—276)*

1 մարմինն (էջ 267)
2 բանն
3 անկարելի
4 այսպիսոյ
5 մեծարասցուք
6 ի քննաքարոզին
7 ասացելոցն
8 զանազանս աւարտեաց
9 զի
10 սոքաւք
11 իսկ
12 զի
13 այնց զի
14 բանն
15 յիսկզբանն
16 անդ
17 երուսաղէմացոց
18 որպիսի
19 որ և արժանի զարմանալոյ եղև աշակերտացն Տեառն (էջ 268)

Գրիգորի եպիսկոպոսի, եղբաւրն Բասղի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն...

Ձեռ. № 468[31] *«Ժողովածու» ԺԲ—ԺԴ դդ. (էջ 1ա—115բ)*

մարմինսն
բան
անկարել (էջ 78ա)
այսպիսին
մեծարասցէ
ինքն զքարոզին
իսկ ասացելոցն
ամենազանս առաղրեաց բանս
քանզի
նոքաւք
իսկ ապա
իբրու զի
նոցա թէ
բանս
ի սկզբան
անդի
Երուսաղէմացւոց
որպիսի պարիսպքն
որ եւ աշակերտացն Տեառն արժանի զարմանալոյ համարեալ եղեւ

---

[31] *Տողատակի անթվակիր տարընթերցումները երկու դեպքում էլ՝ այս և հաջորդ համեմատության համար, արդյունք են № 469 ընդգրկի ունեցած տարբերությանն։*

1 մարմինսն (էջ 172 բ) դատիցի.] դատեսցի. 2 բան. 3 անկարել. ոչ] ոչ է. 4 այսպիսին 5 մեծարասցէ. 6 ինքն զքարոզին. 7 իսկ ասացելոցն. 8 ամենազանս առաղրեաց բանս. 9 քանզի. փորձն] փորձ. 10 նոքաւք. ասացուածս] ասացուածն. 11 իսկ ապա. յառաջն] յառաջագոյն. ասացելոցն] ասացելոց. 12 իբրու զի. 13 նոցա թէ. 14 բանս (էջ 173ա) 15 ի սկզբան. 16 անդի. 17 երուսաղէմացւոց. 18 որպիսի պարիսպքն. աշտարակքն. 19 որ և աշակերտացն Տեառն արժանի զարմանալո համարեալ եղև. հանել. 21 զՏէր. զերևելիսն. 22 պատմութիւն. 23 յայտնէ ասելով առ նա. 23 գործս. որպիսի] և որպիսի. 24 շինուածս. 26 վաւերածութիւնն և զպականութիւն 27 առ այնժամ. 28 մի (էջ 173 բ)։

20 զՏէրն	*զՏէր*
21 պատմումն	*պատմութիւն*
22 յայտ առնելով ասէ	*յայտնէ ասելով առ նա*
23 գործք	*գործքս*
24 շինուածն	*շինուածքս*
25 զաւերումն՝ զապականումն	*զաւերութիւն եւ զապականութիւն*
26 առժամայն	*առ այնժամ*
27 միոյ (էջ 269)	*մի (էջ 79ա)*

Այսպիսի տեսք ունեն հրատարակված երկրորդ հատվածի և գրչադիր օրինակների տարբերությունները։

Ձեռ. № 468, էջ 58բ—59բ

Երանելոյն Գրիգորի Նիւսացոյ, եղբօր Բասղի, Յաղագս՝ աճասնականաւ ի մեզ ախտ առի ի յանասնական բնութիւն ազգակցութեան պատճառ ունիմ
Կնիք հաւատոյ, էջ 289—293

1 ի սկզբանէ	*ի սկզբամանէս*
2 զիւրաքանչիւր	*զիւրաքանչիւրն*
3 յաղբերէ	*յաղբերէ*
4 ախտից	*ախտիցն (էջ 58բ)*
5 ընդ	*ըստ*
6 տրամադրութեան	*տրամադրութեաննն*
7 վկայիլ	*վկայել*
8 անասնոց	*անասնոցն*
9 պատճառանայ	*պատճառացն*
10 յանդունդս	*յանտուստն*
11 մարդն	*մարդ*
12 ծննդեան	*ծնընդեաննն*
13 ցանկութեանն	*ցանգութեաննն*
14 յաւելից	*աւելին*

---

1 ի սկամանէս. 2 զիւրաքանչիւրն. 3 յաղբիւրէ. յորդեալ] յորդել. 4 ախտիցն. մարդկային] մարդկային. 5 ըստ. 7 վկանել. սկզբունսն] սկզբունս. 8 անասնոցն. 9 պատճառացն. 10 յանտուսան. 12 ծնընդեանն (էջ 159 ա) 14 աւելին. 15 աւելութիւն. 16 այսոսանայն. 17 յատաւածավանելուչ. մարդկային] մարդկաին. 18 բնութիւն. 19 ինքեանն 20 մարդկայինն (էջ 159 բ)։

15 սիրոյ առելութիւն	*առելութիւն*
16 այսպիսիք	*այսպիսիքս*
17 յաստուածային	*յաստուածավայելուչ*
18 բնութիւնս	*բնութիւնն*
19 ինքեան	*ինքեանն (էջ 59ա)*
20 մարգկային (էջ 289)	*մարդկայինն (էջ 59բ)*

Այսպիսով, երկու դեպքում էլ համեմատությունների ընթացքը կարելի է շարունակել, սակայն պարզորոշ երևում է, որ արդյունքը մնալու է նույնը այն պատճառով, որ տպագիր հատվածների և համեմատվող ձեռագրերի ունեցած տարբերությունները էական, արմատական չեն և վստահությամբ կարելի է ասել, որ ընդօրինակման ճանապարհով պայմանավորված տարընթերցումների շրջանակներից դուրս չեն գալիս, այսինքն՝ գրչական են և ոչ թարգմանական։ Ասվածից հետևում է, որ «Յաղագս կազմութեան մարդոյ» երկասիրության երկրորդ, գուգահեռ թարգմանություն ենթադրելու հիմքեր չկան։ Փաստորեն «Կնիք հաւատոյ» տպագիր հատվածները եղած միակ ամբողջական թարգմանությունից են քաղվել և, բնականաբար, «նոքա չէին կարող է դարի սկզբում կազմուած ժողովածուի մէջ գտնուել, այլ պէտք է յետոյ աւելացուած լինին»[32]։

Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակի առումով ուշագրավ է նաև նույն ժողովածուում պահպանված երկու այլ հատվածների առկայության փաստը[33], որը ինքնին հնարավորություն է տալիս մտածելու, որ, այնուամենայնիվ, «Կնիք հաւատոյի» նյութերի հավաքման-դասդասման շրջանում կային բյուզանդական մատենագրի առանձին ճառերի պատրաստի կամ ընթացիկ թարգմանություններ, որոնք նյութով ու բովանդակությամբ միանգամայն հարմար էին նկատվում ոչ միայն որոշակի գործնական նպատակով կազմվող ժողովածուի դավանական բնույթին ու առաջադրվող պահանջներին, այլ նաև կազմողի ճաշակին ու հետաքրքրություններին և այդ իսկ պատճառով ընդգրկվում էին ժողովածուի կազմում։

Բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանությունների ժամանակի իմաստով նույնքան օգտակար կարող է լինել նաև V—VIII դարե-

---

32 *Տե՛ս հատոր, էջ XIX։*

33 *Նույն տեղում, էջ 24—25՝ Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի, Եղբայր Բասղի՝ յԵրուսղութիւնն, էջ 348՝ Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ Առ ի մարդանալն Տիառն։*

րում շերտ առ շերտ կազմված[34] (ենթադրվում է երեք շերտ[35]) «Գիրք թղթոց» ժողովածուն, ուր զանազան պատասխան թղթերի առիթով, «որպէս վկայեաց երանելի Գրիգոր Նիւսեայ», «որպէս և Գրիգոր Նիւսեայ ասէ» և նման ձևակերպումների տակ հաճախ վկայակոչվում են Նյուսացու դավանական խնդիրներն արծարծող որոշ գործեր: Այսպես, օրինակ, գրքի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» թղթում ընդարձակ քաղումներ կան Գրիգոր Նյուսացու և Բասիլ Կեսարացու աշխատասիրություն համարվող, խմբագրություններով տարածված «Հարցմունք և պատասխանիք» աշխատանքից: «Գիրք թղթոցում» պահպանված մեծ ու փոքր քաղումները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ «Կնիք հաւատոյ» բովանդակած թարգմանություններից բացի, մեզանում V—VIII դարերում կային բյուզանդական մատենագրի գործերի ուրիշ թարգմանություններ ևս, որոնք և հղվում կամ վկայակոչվում էին եկեղեցական-պաշտոնական թղթակցություններ վարելիս: Անշուշտ, չի բացառվում նաև ընթացիկ թարգմանությունների հնարավորությունը, մանավանդ որ գործին առնչվող անձինք ժամանակի գիր ու գրականության ընթացքը հովանավորող պետական, եկեղեցական անվանի գործիչներ էին:

Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակի ու միջավայրի հստակման առումով էական նշանակություն կարող են ունենալ այդ գործերի՝ հայոց ինքնուրույն մատենագրության հետ ունեցած առնչակցության, թողած հետքերի բացահայտումն ու քննությունը: Հայտնի է, որ Մ. Խորենացին ծանոթ է եղել Գրիգոր Նյուսացու «Ի կոտորումն մանկանցն Բեթղեհէմի ի Հերովդէէ» և «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառերի հայերեն թարգմանություններին և օգտվել է դրանցից: Նշված երկրորդ հուշարձանի և Խորենացու Հայոց պատմության առանձին հատվածների մեր ձեռքի տակ եղած նմանության օրինակները, ինչպես կպարզվի հետագա քննությամբ, հնարավորություն են տալիս ասելու, որ Խորենացու պատմության գրության ժամանակահատվածում (474 թ.), հայերեն թարգմանությամբ կար «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառը, որից և երբեմն բառացի քաղումների

---

[34] «Գիրք թղթոցի» կազմության մասին տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Ա, մասն Բ, Պէյրութ, 1959, էջ 833—834:

[35] Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Մի փորձ «Գիրք թղթոցի» ԻՒրի մասերի վերականգնման ուղղությամբ. «Էջմիածին», 1960, № 6, էջ 28—29:

տեսքով, հաճախ էլ վերապատմելու եղանակով օգտվում էր Մովսես Խորենացին[36]։

Հայագիտությանը ծանոթ է Նյուսացի-Խորենացի առնչակցության մեկ այլ փաստ ևս։ Խոսքը բյուզանդական մատենագրի «Դրուատ ի սուրբն Ստեփանոս՝ նախավկայն Աստուծոյ» ճառի հայերեն թարգմանության և Խորենացու Պատմության ընդհանրության մասին է, «որուն վերջաբանը փոխ առած է Մ. Խորենացի-Ս. Հռիփսիմեայ ներբողեանին մէջ»[37]։

գ) ՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու գործերի հայերեն թարգմանությունների գրչագրերի, որոնք պահպանվել են հիմնականում ժողովածուների տեսքով, Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունները ցրված են գրչագրերում, և գրեթե չկան նրա գործերի թարգմանություններն ամփոփող համահավաք ժողովածուներ*։ Պահպանված գրչագիր ընդօրինակությունները այլ հետևության հնարավորություն չեն տալիս։ Ամենևին չբացառելով նման ժողովածուների երբեմնի գոյության հավանականությունը, միաժամանակ պիտի նկատել, որ չի բացառվում նաև այն տարբերակը, ըստ որի Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանությունները մեզանում նախապես ժողովածուների վերածելու անհրաժեշտություն կարող էր նաև չլինել, ուստի և հետագա ընդօրինակողները չէ, որ պիտի հոգային այդ մասին։

---

[36] Կ. Մ. Մուրադյան, Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառի հայերեն թարգմանությունը և Մովսես Խորենացին (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 139—149)։

[37] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ, յօրինեց Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 232։

* Այս առումով բացառություն պիտի համարել Հովհաննես Սարկավագի հայտնի ցանկը, ուր, ինչպես նկատել ենք սույն ուսումնասիրության ներածության մեջ, իբրև Նյուսացու աշխատասիրություն հիշատակվում է յոթ գիրք։ Սարկավագի ցանկին ծանոթ է եղել և գրանից օգտվել է Մխիթար Այրիվանեցին։ Այդ առթիվ պահպանվել է հետևյալ հիշատակագրությունը. «Աշխատասէր եւ գիտնական Մխիթար վարդապետ, որպէս կարծի, Մ. Գնդարդայ՝ որ եւ Այրիվանք կոչի, առաջնորդ եւ արքեպիսկոպոս, ընտրեաճօ հատաճէ զգործս երեսելիս, ընդ որս եւ զնիւսեայնե» (Հ. Տաշյան, Յուցակ..., էջ 554, համմ. ձեռ. № 582, էջ 40 ա, ձեռ. № 8509, էջ 79 ա)։

Բյուզանդական մատենագրի գործերի հայերեն գրչագիր նախօրինակների շրջանակների և հավաքածոներում պահպանված ձեռագրերի հարաբերության առումով տեղին է հետևյալ մեկնաբանությունը. Նյուսացու գրական վաստակի հայոց միջնադարյան գրականության հետ ունեցած առնչակցության մեր բացահայտած օրինակների, ինչպես նաև տեղական պատճառ-լուծմունքների ճանապարհին ծնված գրական արժեքավորման փորձերի քննությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ Գրիգոր Նյուսացուց կատարված ոչ բոլոր թարգմանություններն են հասել մեզ։ Հիմքեր կան ենթադրելու, որ չեն պահպանվել հետևյալ գործերի հայերեն թարգմանությունները.

ա) Ջատագովական մեկնութիւն ի Վեցաւրեայն՝ գրված եղբոր՝ Պետրոսի խնդրանքով** (բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 61—124)։

բ) Ընդդեմ Եւնոմիանոսի (բնագիրը տե՛ս PG, t. 45, էջ 244—1121)։

գ) Ի սուրբ Բասեղ (բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 788—817)։

դ) Ի սուրբ Մարիննայ (բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 960—1000)։

ե) Յաղագս աղաւտասիրութեան (բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 453—489)։

Առաջադրված ցանկը կարելի է շարունակել։ Հայերեն թարգմանությամբ հավանաբար պիտի լիներ նաև Գրիգոր Նյուսացու «Աւ Թէոփիլոս Աղէքսանդրու» երկը, որի բնագիրը մեզ չհաջողվեց գտնել, ինչպես նաև Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսին ուղղված նրա մի թուղթը (բնագիրը տե՛ս PG, t. 45, էջ 221—236)։ Առաջադրված գործերից առաջինի նկատմամբ կասկած չի կարող լինել այն պարզ պատճառով, որ այն քաղումների տեսքով ծանոթ է Սահակ Պարթևին և Վարդան Այգեկցուն***։ Ինչ վերաբերում է երկրորդ թղթին, ապա պիտի ենթադրել, որ նույն հեղինակի «Ի Մելիտոս...» դամբանական ճառի V դ. հայերեն թարգմանության առկայության պայմաններում (որը, ինչպես կտեսնենք, ծանոթ է Մովսես Խորենացուն) և այդ ճառի նկատմամբ եղած տեղական բուռն հետաքրքրության ոլորտում (նկատի ունենք առկա մեկնողական բնույթի երկերը****) Մելիտոսին ուղղված նրա թուղթը հազիվ թե անուշադրության մատնվեր։

Դատելով Բասեղ Կեսարացու համանուն գործի նկատմամբ հայ իրականության մեջ եղած ուշադրության չափ ու ծավալից, դավանական

** Հ. Տաշյանը գտնում է, որ «նիւսացին իւր այս գրուիիւնը 379-ին գրած էր» (տե՛ս նրա Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, մատն առաջին, Վիեննա, 1895, էջ 3)։

*** Տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 423, 424, համմտ. ձեռ. № 3295, էջ 350ա։

**** Տե՛ս ձեռ. № 1879, էջ 202բ—203ա, ձեռ. № 4150, էջ 8բ—9ա։

խնդիրների շուրջ սկիզբ առած միջնադարյան հին ու նոր քննարկումների շրջանում, հակված ենք կարծելու, որ մեր թարգմանիչ-մատենագիրներին կարող էր հետաքրքրել նաև Գրիգոր Նյուսացու «Ընդդէմ Ապողինարի» երկը (բնագիրը տե՛ս PG, t. 45, էջ 1124—1277)։

Ինչ վերաբերում է վերոբերյալ ցանկին, ապա այս դեպքում ևս կան մատենագրական որոշակի հիմքեր։ Այսպես, օրինակ, ձեռագրական հավաքածոներում հանդիպում են «Ջատագովական մեկնութիւն ի Վեցաւրեայն» երկի հղման-հիշատակման առանձին դրվագներ, «Ընդդէմ Եւնոմիանոսի» աշխատանքի հայերեն թարգմանությանը ծանոթ են և դրանից օգտվում են Սահակ Պարթևը***** և Ստեփանոս Սյունեցին******։

Ինչպես պարզ դարձավ մատենագիտական նյութերի հավաքման-դասադասման ընթացքում, Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունները (ճառ, քարոզ, խրատ, ներբող, մեկնություն, դամբանական, վարքագրություն և այլն) ցրված են մոտ 200 գրչագրերում։ Դրանք ընդօրինակվել են ԺԲ—ԺԸ դարերի ժամանակահատվածում։ Քանի որ, ասվեց, չունենք Գրիգոր Նյուսացու գրական վաստակի հայերեն առկա թարգմանությունները բովանդակող ամբողջական ժողովածուներ, ուստի այս կամ այն գործի մատենագիտական տեղեկատու նյութը (խորագիր, մուտք, դրվագների բաժանում, ենթախորագրերի դրևորում, հիշատակարան-հիշատակագրության արձանագրում և այլն) արտացոլելիս հիմք ենք ընդունել ոչ թե մեկ, այլ մի քանի գրչագրեր, հասկանալի պատճառով նախապատվությունը տալով հին և առավել ամբողջական ձեռագրերին։ Առաջարկվող մատենագիտությունը այդ իսկ պատճառով միօրինակ չէ առկա վկայակոչությունների ուղղագրության իմաստով։ Գրչագրերը հղել ենք ըստ ժամանակագրական կարգի, ժամանակի ցուցում չունեցող ձեռագրերը վկայակոչել ենք շարքի վերջում։ Մաշտոցի անվան Մատենադարանի գրչագրերի նյութերը արտացոլելիս հղել ենք սկիզբ և ավարտ մատնացուցող էջահամարները։

Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նյուսացու աշխատության արդյունք Հարցումը գրչագրերում հայտնի է չորս խմբագրությամբ։ Առաջին խմբագրությունում միօրինակություն չկա ոչ միայն խորագրի, այլև հեղինակային պատկանելության առումով (Գրիգոր անվան տակ հեղինակալիցներ են հանդես գալիս Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Նազիանզացին և

***** Տե՛ս Գիրք Թղթոց, էջ 450, 474։

****** Տե՛ս ձեռ. Մ948, էջ 235բ, էջ 238ա, էջ 238բ, համմ. ձեռ. Մ8194, էջ 143ա, էջ 147ա, էջ 148ա։ Ստ. Սյունեցու Թղթի հրատարակությունը տե՛ս Գիրք Թղթոց, էջ 373—395։

Գրիգոր Լուսավորիչը)։ Հաջորդումն տարածված խորագրին զուգահեռ այն երբեմն կոչվում է նաև Վարդապետութիւն։ Երկրորդ տարբերակում ունենք համեմատաբար քիչ միջամտված խորագիր և բնագիր, ուր առանձնակի հոգածություն կա ընդգծելու Նյուսացու և Բարսեղի հարազատության պարագան։ Եղած ընդօրինակություններից (նյութով և խորագրով) առանձնանում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 10168 գրչագրի պարունակությունը, որը պայմանականորեն կոչում ենք երրորդ տարբերակ։ Չորրորդ տարբերակը խորագրի առումով միօրինակ է, սակայն բուն նյութին ծանոթ չլինելու պատճառով (համապատասխան ձեռագրացուցակներում եղած տեղեկանքները միայն խորագրին են վերաբերում) հնարավոր չէ բնագրի շուրջ դատողություն անել։

Գրիգոր Նյուսացու ճառերից առանձին մեծ ու փոքր հատվածներ դրշագրերում ընդօրինակվել են հիմնականում «սրբոյ Գրիգորի ասացեալ», «Նիւսացի ասէ», «հատուածք ... Նիւսացի», «Գրիգոր Նիւսացւոյ» կամ պարզապես «Նիւսացւոյ» խորագրերի տակ։ Հասկանալի պատճառով այսօր դժվար է ստույգ որոշել այդ հատվածների տեղերը բուն բնագրերում (դրանք հաճախ մեկ համառոտ նախադասություն են)։ Նշված քաղում-հղումները պահպանվել են որոշակի նպատակով կազմված միջնադարյան «քաղուածո» բնագրերում, թեև քիչ չեն նաև առանձին սկզբնաղբյուրի տեսքով վկայակոչելու դեպքերը։ Այդ կարգի մատենադիտական նյութերը նպատակահարմար գտանք հղելու մեկ ընդհանուր, ձեռագրերում հաճախադեպ Սրբոյ Գրիգորի ասացեալ միջնադարյան ձևակերպման տակ։

Խորագիր և սկիզբ մատնացույց հիմք գրչագրի մասին հնարավորին չափ պատկերացում տալու նպատակով նշվում է գրչագրի բովանդակության անվանումը և ժամանակը (եթե հայտնի է)։ Ձեռագրացուցակներում նյութերը հաճախ մատուցվում են միայն սկիզբը մատնացույց էջահամարներով, երբեմն էլ դրանք առհասարակ բացակայում են։ Հասկանալի է, որ նման դեպքերում հնարավորություն չենք ունեցել վերացնելու այդ բացը, ուստի և բավարարվել ենք ձեռագրացուցակների տվյալներով։ Խորագրային նկատելի տարբերությունները արտացոլել ենք յուրաքանչյուր դեպքում։

1. Առ այնոսիկ որ ասեն եթե մեծ է Հայր քան զՈրդի (բնագիրը տե՛ս PG, t. 46, է, 553—576). «Զոր ինչ ախտանան առ բազմածագիկան բուրաստանացն, որք այնոցիկ են ցանկացողք տեսութեանց, որոց ոչ առ ինչ մի երեւեցելոցն յաղագս համապատու գեղեցկութեանն աչք հաս-

տատին, այլ յամենիսեան ցանկութեամբք ցնդին, որք եւ ոչ ի միոջէ կամիցին վրիպել», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4146 (1194 թ.), էջ 35բ—53բ։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 1500, էջ 810ա—813ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 429, էջ 77—87, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 320, էջ 28ա—39ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4149, էջ 35բ—52բ, ձեռ. № 60, էջ 28ա—39բ, ձեռ. № 1657, էջ 171բ—182բ, Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռ. № 119, էջ 33ա—44բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 115, էջ 29բ—42ա, ձեռ. № 113, էջ 25բ—38ա, ձեռ. № 3495, էջ 25բ—38բ, ձեռ. № 114, էջ 25բ—36ա, ձեռ. № 112, էջ 26բ—39բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1003, էջ 35բ—51ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 99, էջ 35ա—49ա, ձեռ. № 61, էջ 35բ—50ա, ձեռ. № 98, էջ 22ա—30բ, ձեռ. № 58, էջ 24բ—36ա, ձեռ. № 465, էջ 134բ—148ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1085, էջ 508—535, ձեռ. № 794, էջ 66—95, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 38, Արմաշի վանքի ձեռ. № 91, էջ 35—50, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 170, էջ 26բ—36բ, ձեռ. № 1660, էջ 177ա—181բ, ձեռ. № 8215, էջ 104ա—108բ, ձեռ. № 3284, էջ 27ա—39ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1340, էջ 33—63, ձեռ. № 128, էջ 61—80, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 40, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 96, էջ 32բ—44բ, ձեռ. № 64, էջ 17բ—24բ, ձեռ. № 1111, էջ 15ա—21ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 400, ձեռ. № 2114, էջ 40—58։

2. Տեառն Գրիգորի Նիւսացւոյ ժողովողին։ Մեկնութիւն առաջիկա բանիցն բանսն[1] (բնագիրը տե՛ս PG, t. 44,էջ 616—753). «Բանք ժողովողի, որդւոյ Դաւթի՝ թագաւորի Իսրայէլի յԵրուսաղէմ. ունայնութիւն ունայնութեանց, ասաց ժողովողն, ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ սնոտի է», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1013[2] (1227 թ.), էջ 1ա—40բ։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 1500, էջ 635բ—655ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 390, էջ 242բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2708, էջ 114ա—149բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 820, էջ 363ա, Մաշ-

---

[1] Համմ. Գ. Ջարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վիեննա, 1889, էջ 365—366 (այսուհետև՝ Մատենադարան հայկական թարգմանութեանց)։

[2] Սույն երկի բոլոր գրչագրերը հունարենի նմանությամբ ունեն ը խոսմ, սակայն, ի տարբերություն Գր. Նյուսացու մյուս գործերի, սույն ձեռ. «խոսքերը» խորագրային ձևակերպումներ չունեն։

տոցի անվան Մատ. ձեռ. № 2851, էջ 39ա—51բ, Կեսարիայի ս. Կարապետ վանքի ձեռ. № 23, էջ 109—158, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 436, էջ 42ա—68ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 873, էջ 3, Գալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ 236, ձեռ. № 87, էջ 578—581, ձեռ. № 92, էջ 139—206, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 757, էջ 228ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217, էջ 283ա—313բ։

3. Նորին Երանելոյն Գրիգորի Նիւսիայ եպիսկոպոսի խաւսք յինն երանութիւնսն[3] (բնագիրը տես՝ PG, t. 44, էջ 1193—1301)։ Երանի է աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից. Ո՞ արդեաւք այնպէս ի ժողովեալ ասիցէ[4], մինչ զի աշակերտ լինելով բանին և ընդ նմա ելանիցէ յերկրէ հովտացս և ի նուաստագոյն իմաստից ի հոգևոր լեառնն ի բարձր տեսութիւնն...» Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1013 (1227 թ.), էջ 121ա—151ա։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 3782, էջ 238ա—239բ («Տէրն մեր եւ արարիչ զապականացու բնութիւնն անտես առնելով զբնութեանս կանխաւ ձայնէ տկարագունիցն...»), ձեռ. № 7129, էջ 69բ—70ա («Զայս խորհեսցի իւրաքանչիւր ոք...»), ձեռ. № 1400 («Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացո՝ երանի աղքատաց...»), էջ 696ա—711բ, ձեռ. № 1525, էջ 265ա—268ա (Երանելոյն Գրիգորի Նիւսիա եպիսկոպոսի ի Տեառն բանն), էջ 519ա—520բ (Տէր մեր եւ արարիչ զապականութիւն անտես առնելով զբնութիւնս կանխաւ ձայնէր տկարագունիցն...), Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 212, էջ 79ա—79բ (Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ յինն երանութեանց գոց. «Այն ինչ խորհեսցի ասէ ի ձեզ, որ և ի Քրիստոս Յիսուս»), նույն Մատ. ձեռ. № 265, էջ 2ա—70ա (Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ ի բանն տեառն, որ ասէ. «Երանի աղքատաց հոգւով...»), Երուսաղեմի Հայկ Մատ. ձեռ. № 390, էջ 1ա, Զմմառի վանքի ձեռ. № 508, էջ 2ա—42ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 620, էջ 3ա—41բ, ձեռ. № 164 (Յաղագս երանութեանցն), էջ 194բ—212բ, ձեռ. № 749, էջ 1ա—123ա, ձեռ. № 4253, էջ 61ա—97ա, ձեռ. № 1385, էջ 202ա—224ա, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 430, էջ 37բ—38բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 820, էջ 3ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ.

---

[3] Համմ. Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 362—374։ Գ. Զարբհանալյանի օգտագործած ցուցակը ունեցել է տասնչորս բան։ Հունարենը ունի ութ ճառ։

[4] Համմ. Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 362, Ժողովեալս իցէ, Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ..., Բ, էջ 848։

№ 2851, էջ 12ա—29ա, Կեսարիայի ս. Կարապետ վանքի ձեռ. № 23, էջ 1—61, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 436, էջ 8ա—41բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 225, էջ 22բ—23բ (Ի յիշատակի սրբոյն Ստեփանոսի յառաջ սարկաւագի և նախավկայի, երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի, յինն երանութեան գրոց. «Տէրն մեր և արարիչ՝ զապականութիւն անտես առնելով զբնութեանս, կանխաւ ձայնէ տկարագունիցն», նույն Մատ. ձեռ. № 215, էջ 90ա—94բ, ձեռ. № 210, էջ 8բ—9ա (Գրիգորի Նիւսացո՝ յինն երանութեանց գրոց. «Այս խորհեսցի ասէ ի ձեզ, որ և ի Քրիստոս յիսուս՝ որ և ի կերպարանս աստուծոյ էր»), Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. №87, էջ 564—574, ձեռ. №92, էջ 1—52, Բրուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 602, էջ 1, ձեռ. № 757, էջ 7ա, ձեռ. № 1050, էջ 3, ձեռ. № 2144, էջ 110։

4. Նորին Գրիգորի ասացեալ ի հայր մեր, որ յերկինսն. (բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 1120—1193). «Զաղօթիցն մեզ զվարդապետութիւն՝ աստուածայինս պատմէ բան, որովք արժանաւորաց իւրոց աշակերտացն փութով ծանօթութիւն լինէր աղօթիցն հայցուած, որպէս ընտանեցուցանել պատշաճ իւրմէ զաստուածային լսաւորութիւն[5] բանիցն աղօթիցն ի ներքոյ դնելով», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1500 (1283 թ.), էջ 712ա—723բ։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 1897, էջ 114ա—115ա, ձեռ. № 1013, էջ 152ա—175բ, ձեռ. № 4150, էջ 48ա—բ, ձեռ. № 620, էջ 41բ—71ա, ձեռ. № 749, էջ 123ա—214բ, ձեռ. № 436, էջ 26բ—41բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 265, էջ 70ա—125բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 948, էջ 387, Անկյուրիայի ձեռ. № 2, էջ 317, Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 92, էջ 52—93, ձեռ. № 64, էջ 462—590։

5. Գրիգորի եպիսկոպոսի, եղբաւրն Բասղի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն, գլուխ յորում է իմն մասնաւորական յաղագս աշխարհիս բնախաւսութիւն և գեղեցիկ իմն և պայծառ պատմութիւն[6] (բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 124—256). «Զի եթէ ընդ այնոսիկ, որ ձեռն առացուածոցն պարտ է պատուել զայնոսիկ, որ ի ձեռն առաքինութեանն զանազանեալ են», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 468 (ԺԲ—ԺԳ դդ.), էջ 1ա—115բ։

---

[5] Աւրժանաւորաց և լսաւորութիւն բառերի «օ»-ն կարդացել ենք «աւ»։

[6] Հմմտ. Մատենադարան Հայկական Թարգմանութեանց, էջ 371։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 3782[7]*, էջ 55ա—57ա, ձեռ. № 7729*[8] *(Երանելւոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ի յարութիւն մեռելոց), էջ 182ա—183բ, ձեռ. № 469, էջ 117բ—200բ, ձեռ. № 470, էջ 118ա—213ա, ձեռ. № 1500, էջ 602ա—622բ, ձեռ. № 715, էջ 154ա—210ա, ձեռ. № 1525, էջ 166ա—170բ («Այդ բերեաւ ոմ առ լուծեալ եւ բակտեալ մարմինն հայեցեալ, եւ առ չափս իւրոյ զաւրութեանն զաստուածութիւնն դատեցի»), ձեռ. № 1138, էջ 369բ—370ա, ձեռ. № 5253, էջ 1ա—65ա, ձեռ. № 6848*[9]*, էջ 150բ—187բ, ձեռ. № 54*[10]*, էջ 237ա—294բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 390, էջ 721ա, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 226, էջ 101ա—103ա* (Գրիգորի Նիւսացւոյ [ի կազմութեան գրոց],

---

[7] *Սույն ԺԲ դարի ընդօրինակությունը Նյուսացու գործի՝ գիտությանը հայտնի հնագույն ընդարձակ հատվածն է։*

[8] *Ունի հետևյալ սկիզբը՝ «Այդ բերեաւ ոք առ լուծեալ եւ բակտեալ մարմինն հայեցեալ եւ առ չափս իւրոյ զաւրութեանն զաստուածութիւնն դատեցի», հմմտ. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1, էջ 135 ա՝ Հ. Տաշյանը Վիեննայի սույն գրչագիրը նկատի ունենալով գրել է. «պակասաւոր է ճառս» (տե՛ս նրա «Յուցակ հայկերէն ձեռագրաց...», էջ 5)։ Սակայն նշված բնագիրը ոչ առանձին ճառ է, ոչ էլ պակասաւոր, այլ Նյուսացու «ի մարդոյն կազմութիւնն» գործի գլուխներից մեկն է։ Այն հրատարակվել է «Կնիք հաւատոյ» ժողովածուում (Ս. Էջմիածին, 1914, էջ 267—276) հետևյալ խորագրի տակ՝ Եռաճելոյն. Գրիգորի, եղբօրն Բասղի, որ առ յարութիւնն։ Նույն «Կնիք հաւատոյ»-ում հրատարակվել է Նյուսացու նշված աշխատանքի մեկ այլ հատված ևս, հետևյալ խորագրով և սխալագրով. Եռաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ, եղբօր Բասղի, Յաղագս՝ անասնականաց ի մեզ ախտ առ ի յանասնական բնութիւն ազգակցութեան պատճառս ունին–«Քանզի կարծեմ ի սկզբանէ յայտնեալ և դիւրագանչիւր ախտս իրրու յայրելիք ումեմնէ ընդ մեզ կապեալ» (էջ 289—293)։*

Ձեռագրերում նման մի հատված էլ հայտնի է վասն երակ առնելոյ՝ արտահայ սրբոյն Գրիգոր Նիւսացին խորագրի տակ։ Ունի հետևյալ սկսվածքը. «Զի առաջին աւուրն յոմանի յայլ, կու բռնատիս... զի ՔԷ (Մաշտոցի անվան Մատ. ձեռ. №№ 507, 463 «զի ՔԷ»-ի փոխարեն ունի «մի ՔԷ») առնես արիւնն ի վերայ մարդոյ չորանայ», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1465, էջ 249բ—251ա, ձեռ. № 507, էջ 321ա-բ, ձեռ. № 695, էջ 132ա—133ա, ձեռ. № 8089, էջ 25ա-բ, ձեռ. № 1495, էջ 150, ձեռ. № 463, էջ 183ա, ձեռ. № 45, էջ 319բ—322ա, ձեռ. № 737, էջ 50ա-բ, ձեռ. № 34, էջ 357ա, Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 92, էջ 742։ Հայտնի է այլ հատված ևս՝ Գրիգորի Նիւսացւոյ... վասն ննջեցելոց խորագրի տակ (տե՛ս ձեռ. №6929, էջ 254ա—255բ)։ Հմմտ. Մատենադարան Հայկական բարգմանութեանց, էջ 372՝ Ի յիշատակ ճանգուցելոց ի Քրիստոս ննջեցելոց, Եռաճելոյ Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ի յարուրիւն մեռելոց։

[9] *Նյուսացու գործի սույն ընդօրինակությունը ԺԴ դարի գրչություն է, թերթերի թափվածության պատճառով այն վերջից թերի է։ Ահա նյութի ավարտը՝ «ի գոյութիւն հաստատութիւն այսպիսի իւրեանց կարծեաց բերեն զայն» (էջ 187բ)։*

[10] *Գրչագրիս 264ա—294բ էջերը ԺԷ դարի ընդօրինակություն են։*

վասն յարութեան. «...այժմ շարժին, և յառնեն՝ որք այժմ ոչ շարժին», նույն Մատ. ձեռ. № 318, էջ 39ա—40բ, (Յաղագս չորից տարերց՝ Գրիգորի Նիւսացոյ. «Տարերք են չորս, ուստի գոյանան ամենայն կենդանիք, որք ի ցամաքի, և որք ի ջուրս») Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 3463, էջ 130բ—227բ, ձեռ. № 1649, էջ 253ա—338ա, ձեռ. №993, էջ 212բ—213բ, Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. № 146 (համառոտեալ բաղդատաբար), էջ 48ա—66բ, ձեռ. № 294, էջ 161ա (համառոտեալ), ձեռ. № 466, էջ 240ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 620, էջ104բ—150ա, ձեռ. № 2508. էջ 131ա—232բ, ձեռ. № 4802 (Յիշատակ հանգուցելոցն երանելոյն Գրիգորի Նիւսացոյ ի մարդկազմութենէն՝ ասացեալ չորեքշաբթի. «Այլ թերեւս որ առ լուծեալ և քակտեալ մարմինս հայեցեալ և առ չափ իւրոյ զաւրութեանն զաստուածութիւնն դատեսցի...»), էջ 237ա—240ա, ձեռ. № 3184, էջ 83ա—129բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 678, էջ 161ա, ձեռ. № 294, էջ 161ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 466, էջ 115ա—181բ, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 392, էջ 62ա—110ա, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 289, էջ 96ա—130ա (Վասն կազմութեան մարդոյ՝ մեծին Գրիգորի Նիւսացոյն, համառոտեալ բաղդատաբար. «Ի չորից գոյացեալ ասի մարդն, զի չորք պատճառք են եղելութեան ամենայն գոյից»), Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 7135, էջ 174ա—317ա, Նոր Բայազետի ձեռ. № 1, էջ 318բ—363բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 3979, էջ 140ա—143բ, ձեռ. № 497, էջ 485բ—500ա, ձեռ. № 2041, էջ 350ա—355բ, ձեռ. № 419, էջ 66ա—102բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 820, էջ 265ա, Ջմմառի վանքի ձեռ. № 521, էջ 31ա, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 166, էջ 88բ—158բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 417, էջ 79ա—143բ, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 437, էջ 105ա—130ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 463, էջ 80ա—140բ, ձեռ. № 464 (Վասն կազմութեան մարդոյն համառոտեալ բաղդատաբար[11]), էջ 72բ—95ա,

---

11 Վահրամ Թորգոմյանը Փարիզի հայերեն բժշկական ձեռագրերի նկարագրության աշխատությունում է նաև Գր. Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործին։ Ինչպես երևում է նկարագրությունից, առաջարկվող գրշագիրը այս շարքը հիշեցնող համառոտ ընդօրինակություն է։ Ունի հետևյալ խորագիրը՝ Մեծին Գրիգորի Նիւսացոյ համառոտեալ բաղդատայրար. Վասն բնութեան մարդոյն։ Նկարագրողը գրշագրի հետ կապված այլ մանրամասներ չի հաղորդում։ Վ. Թորգոմյանը հիշատակում է Գր. Նյուսացուն և նրա թարգմանիչ Ստ. Սյունեցուն, վերջինիս համարելով 5-րդ դ. հեղինակ (տե՛ս Վահրամ Տ. Թորգոմեան, Հայ բժշկական ձեռագիրը Փարիզու, «Արեւելք», կ. Պոլիս, 1889, 20 Հոկտեմբերի, № 1731)։

ձեռ. № 467, էջ 95ա—162ա, ձեռ. № 552, էջ 125ա—214բ, ձեռ. № 1828, էջ 248ա—292բ, ձեռ. № 2103, էջ 384ա—447ա, ձեռ. № 2509, էջ 111բ—198բ, ձեռ. № 6622, էջ 168բ—230բ, ձեռ. № 9427, էջ 124ա—188ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 466, էջ 3ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2708, էջ 51ա—87ա, ձեռ. № 9827 (Յաղագս կազմութեան մարդոյն... համառօտեալ բաղդատաբար), էջ 77ա—85բ, «Հանդէս Ամսօրեայի» ձեռ. № 6 (Հեթիմարաեան Գրիգոր Նիւսացւոյ), էջ 1—384, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 421, էջ 50ա—85ա, ձեռ. № 418, էջ 75ա—127բ, ձեռ. № 6228, էջ 12ա, Դալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ 251, ձեռ. № 81, էջ 115—190, ձեռ. № 92, էջ 430—502, էջ 722—742, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 348 (Վասն կազմութեան մարդոյն... համառօտեալ բաղդատաբար), էջ 29, Զմմառի վանքի ձեռ. № 508, էջ 173ա—242ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 757, էջ 695, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1034, էջ 18ա—26ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1122, էջ 124ա—բ, ձեռ. № 1346 (Յաղագս կազմութեան մարդոյն... համառօտեալ բաղդատաբար), էջ 1, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2376, էջ 135ա, Դալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ 251։

6. Յորդորումն մանկանց ի կուսութիւն. Նորին յաղագս կուսութեան, եթէ սեփհական է աստուածայնոյն և է անմարմին բնութեանն կուսութիւն, Գրիգորի Նիւսացւոյ[12] (բնագիրը տե՛ս PG. t. 46, էջ 317—416). «Բազմաց կանխաւ եղև կուսութիւն՝ առ ի ցոյցս բանիւ պատճառ բիւրս տալով պատուասիրացն զպատճառանն, ի տանիլն հոչակել բանիւ և եղելովք ուղղութեամբքն շնորհացն դուարճանալ», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1013 (1227 թ.), էջ 176ա—200բ։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 469, էջ 201ա—259բ, ձեռ. № 470, էջ 216ա—287ա, ձեռ. № 1500, էջ 622ա—635բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 212, էջ 375ա—376բ (Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ի Կուսութեան գրոց. «Մտաւոր և բանական կենդանիս այս մարդ՝ պոսի ի Կուսութեան գրոց. «Մտաւոր և բանական կենդանիս այս մարդ՝ աստուածային անարատ բնութեանն գործ», Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 394, էջ 1, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1525, էջ 341ա—

---

[12] Հմմտ. Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 366—367։ Գ. Զարբհանալյանի օգտագործած գրչագրում սույն երկը ունեցել է բանևրկու բան, հմմտ. Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 420։ Հունարեն նախօրինակը ունի 24 գլուխ։

343ա, (Մտաւոր եւ բանական կենդանի այս մարդ՝ աստուածային եւ անարատ...), ձեռ. № 844[13], էջ 158ա—213բ, ձեռ. № 3771, էջ 316բ—320ա («Մտաւոր և բանական կենդանի այս մարդ՝ աստուածային և բանական»), Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 390, էջ 162ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 3463, էջ 228ա—320բ, ձեռ. № 1523, էջ 586բ—588ա («Մտաւոր և բանական կենդանի այս մարդ՝ աստուածային և անարատ»), ձեռ. № 1649, էջ 338բ—350բ, ձեռ. № 471, էջ 1ա—44բ, Ջմմառի վանքի ձեռ. № 508, էջ 242բ—292բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 993, էջ 428ա—429ա, ձեռ. № 620, էջ 71բ—104ա, ձեռ. №2508, էջ 233ա—308բ, ձեռ. № 3184, էջ 130ա—168բ, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 394, էջ 335ա—359բ, ձեռ. № 392, էջ 110ա—146ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 7135, էջ 318ա—411բ, ձեռ. № 2389, էջ 103բ—107բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 820, էջ 113ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 202, էջ 320ա—321բ (Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի. Յորդորումն մանկանց ի կուսութիւն. «Մտաւոր և բանական կենդանի այս մարդ՝ աստուածային և անարատ բնութեան գործ եղև»), Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 467, էջ 162բ—210բ, ձեռ. № 2389, էջ 103բ—107բ («Մտաւոր և բանական կենդանի այս մարդ՝ աստուածային և անարատ...»), ձեռ. № 2103, էջ 448ա—490ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154բ, էջ ՋԿԲ, Թավրիզի Հայ. ձեռ. № 51, էջ 357ա—358բ, Կեսարիայի ս. Կարապետ վանքի ձեռ. № 23, էջ 73, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2851, էջ 30ա—38ա, ձեռ. № 2708, էջ 88ա—111բ, ձեռ. № 420, էջ 1ա—27ա, ձեռ. № 421, էջ 88ա—105բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 2807, էջ 192բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 6452, էջ 127ա—164բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2376, էջ 45բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 757, էջ 156ա, Վալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 87, էջ 574—578, ձեռ. № 92, էջ 516—519, ձեռ. № 54, էջ 260—263, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2, էջ 23ա (Մեծի երեմ շաբաթին երանելոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ ասացեալ ի Կուսութեանն գոց. «Մտաւոր եւ բանական կենդանի այս մարդ աստուածային եւ անարատ բնութեանն գործ եւ նմանութիւն եղեւ»), Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 215, էջ 40ա—43ա (Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ. Առ ի յորդորումն մանկանց սրբոյ եկե-

[13] Գրչագիրս վերջից պակասավոր է։

ղեցւոյ ի կուսութիւն. «Մտաւոր և բանական կենդանի այս մարդ՝ աստուածային և անարատ բնութեանն գործ և նմանութիւն եղև»։

7. Երանելոյ տեառն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի, եղբօր Բարսղի, թուխ[14] յաղագս Երգոյ Երգոցս[15] (բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 756—1120). «Ընկալայ որպէս վայել էր քում պարկեշտ վարուցդ[16] և սուրբ անձինդ զփոյթն յաղագս Երգ Երգոցն. դէմ յանդիման և գրով մեզ հրամայեցեր, որպէս դի ըստ յարմարակաչ տեսութեանն երևեալ, որ ծածկեալ իցէ ի բանսն իմաստութիւնն[17] առ ձեռն պատրաստ առացելոց բանիցն մտածութեամբք մաքրեալ, յաղագս որոյ յաւժարելով ընկալա վասն այսոցիկ զհոգն», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 5253[18] (ԺԴ դ.), էջ 65ա—210ա։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. №2684[19–20], էջ 1ա—240ա, ձեռ. № 7729, էջ 153ա—բ, ձեռ. № 1013, էջ 41ա—120ա, ձեռ. № 1500 (Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ Երգ Երգոցն մեկնութիւն), էջ 655ա—696ա, ձեռ. № 4391, էջ 131բ—140բ (Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ յաղագս Երգ Երգոցին. «Գահաւորակ արար իւր արքայ Սողոմոնի փայտից Լիբանանու, զսիւնսն արար արծաթեղէնս և զնստարան՝ ոսկեղէնս...»), վեննա-

---

[14] Նման թուղթ ձևակերպում է պահպանվել նաև այլուր. տե՛ս ձեռ. № 1152, էջ 1ա, № 2514, էջ 1ա, № 1153, էջ 149ա, № 436, էջ 70ա։

[15] Համմ. Մատենադարան հայկական ձարգմանութեանց, էջ 367—370։ Գ. Զարբհանալյանի օգտագործած գրչագիրը ունեցել է ԺԴ բան։ Մինչդեռ հայտնի է, որ հունարենում նույնի օգտագործած գրչագիրը ունեցել է ԺԴ բան։ Այդ իրողությունը հետազոտողին հիմք է տվել գրելու, թե «հայ թարգմանիչ է ԺԵ բան։ Այդ իրողությունը հետազոտողին հիմք է տվել գրելու, որ ունի յոյն սկզբնագիրն» մանուկեան մէջ կը պակսի վերջին ճառն հնգետասաներորդ՝ զոր ունի յոյն սկզբնագիրն (տե՛ս նույն տեղում, էջ 370)։ Պիտի ենթադրել, որ անվանի հայագետի ձեռքի տակ եղել է պակասավոր գրչագիր, որը և նման բնդհանրացման հիմք է հանդիսացել։ Ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ Գրիգոր Նյուսացու «Երգ Երգոցի մեկնության» հայերեն թարգմանությունը ամբողջական է, քանի որ թերագիր գրչագրերի կողքին պահպանվել են նաև բազմաթիվ ամբողջական ձեռագրեր (տե՛ս, օրինակ, ձեռ. № 1013, էջ 41ա—120ա)։

[16] Ձեռ. № 1500՝ պարկեշտութեանդ վարուց։

[17] Ձեռ. № 1500՝ իմաստասիրութիւն։

[18] Գրչագիրս ունի Ժ խոսք, պակասում են վերջին հինգ ենթագլուխները։

[19–20] Գրչագիրս «Երգ Երգոցի» հնագույն ընդօրինակությունն է (ՆԻԲ—973Բ.), այն պակասավոր է, սկզբնամասից թերթ է ընկած, առաջին խոսքից ընդամենը մի քանի տող պահպանվել և սկսվում է «... ագոյն եւ աստուածավայելչաբար բանս այս» (էջ 1ա) և պահպանվել է «... ագոյն եւ աստուածավայելչաբար բանս այս» (էջ 1ա) և պահպանվել է սկսվում

տիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 212, էջ 169բ—170ա (Երանելւոյն Գրիգորի Նիւսեայ եպիսկոպոսի՝ յերգ երգոց մեկնութենէն. «Եկեսցէ Հովանի վիմին մերձ ի նախապարիսպն։ Ասացեալս այսպիսի ինչ է»), Թավրիզի հայերեն ձեռ. № 34, էջ 131բ—140բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1152, էջ 1ա—136ա, ձեռ. № 5259, էջ 1ա—10բ («Փեսայն Հարան ասէ՝ ահավասիկ կաս գեղեցիկ իմ...»), Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. №390, էջ 362ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1981, էջ 100ա—133բ, ձեռ. № 2514, էջ 1ա—171բ, ձեռ. № 1153, էջ 149ա—310ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 820, էջ 428ա, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202, էջ 139ա—140ա, էջ 434ա—435բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 3276, էջ 59ա—բ, ձեռ. № 5193, էջ 2ա—26բ («Նմանեցաւ արքայութիւն յերկնից դանձի ծածկելոյ ագարակի, ասէ Տէրն, դանձուն և արքայութեանն, զոր գտանէ խնդրողն...»), Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154, էջ Նխէ, ձեռ. № 154գ, էջ Ռ3Գ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2851, էջ 52ա—78ա, ձեռ. № 2708, էջ 150ա—225ա, Կեսարիայի ս. Կարապետ վանքի ձեռ. № 23, էջ 171—258, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 436, էջ 70ա—122բ, Անկյուրիայի ձեռ. № 1, էջ 244, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2978, էջ 1ա—34բ, ձեռ. № 8914, էջ 90ա, ձեռ. № 2715, էջ 76ա, Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ 223—224, ձեռ. № 87, էջ 581—592, ձեռ. № 92, էջ 207—342, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 757, էջ 342ա, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 304[21], էջ 226ա—236ա (Մեկնիչ երգ երգոցի համառօտ. «Սիաւ եմ ես և գեղեցիկ։ Սիաւ վասն անհաւատութեան ասէ, և գեղեցիկ՝ վասն հաւատոցն»)։

8. Երանելւոյն Գրիգորի Նիւսացւոյ՝ Բան խոստովանութեան հաւատոյ. «Խոստովանիմք զորդին Աստուծոյ զբանն Աստուած խոնարհեալ կամաւ հաւր և սուրբ հոգւոյն, բնակելով յորովայնի Աստուածածնին և միշտ կուսին՝ առեալ կատարելապէս զմեր բնութիւնս զմարմին, զոգի և զմիտս, ոչ փոփոխելով զմարմինն յանմարմնութիւնն և ոչ բանն Աստուած փոփոխեալ յանփոխելի իւրմէ բնութենէն», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 866 (ԺԴ դ.), էջ 180ա—182ա։

Տե՛ս նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1, էջ 65բ, Անկյուրիայի ձեռ. № 1, էջ 91, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 7489, էջ 46ա («Որ

---

[21] Վենետիկի «Մայր ցուցակի» հեղինակը սույն բնօրինակության գրչի գրաւումը այս կերպ է մեկնաբանում. «Մեկնութիւնս է Գր. Նիւսացւոյ, որ երգ երգոցի Ա. գլխու 4 համարէն կը սկսի, և կը բաղկանայ ԺԲ գլուխներէ» («Մայր ցուցակ», Բ, էջ 1155)։

ոչ խոստովանի զՔրիստոս իննամսեայ ծնեալ ի կուսէն...»), Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 210, էջ 139ա—140բ։

9. Երաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի, եղբայր Բասղի, յերկրորդութիւն[22]. «*Մի*[23] *կարգաւորապէս ցուցանի ի սրբոյ երրորդութեանն բնութիւնն՝ ոչ խառնակեալ յիւրաքանչիւր գոյակցութեանց, առանձնաբար երևելոյ նոցա յատկութիւնն, և ոչ ծանաւթիւնք ի միմեանս փոփոխեալ՝ որպէս թէ նշանակ հայրենի դիմացն յորդի կամ ի Հոգի փոփոխումն ընդունիցի կամ որդւոյ դարձեալ ի մի ոք կացելոց յարմարեալ», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2607 (1300 թ.), էջ 359բ—376բ։*

Տե՛ս նաև Թավրիզի Հայ. ձեռ. № 14, էջ 124բ—125բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4207, էջ 124բ—125բ, ձեռ. № 3651 (Ջի կարգաւորապէս...), էջ 279բ—280բ, ձեռ. № 8467 (Ջի կարգաւորապէս...), էջ 173բ—174բ։

10. Երկրորդ աւուրն երաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ներբողեան ասացեալ ի ծնունդն Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ[24] *(բնագիրը տե՛ս* PG. t. *46, էջ 1128—1149). «Խորհուրդ մեծ և սքանչելի յայսմ աւուր տեսանեմք եղբարք, հովիւք հնչեն ընդ հրեշտակս, տան աւետիս որդոց մարդկան, ոչ ի լերինս հատից բարբառին և ո՞չ ի դաշտս ճաշանց*[25] *ննջեն, այլ ի Բեթղեհեմ քաղաք Դաւթի երգեն ղերգս հոգևորս», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4869 (1482 թ.), էջ 149բ—156ա։*

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 7729 (խաւսք ի ծնունդն Քրիստոսի), էջ 33բ—36բ, ձեռ. № 3791, էջ 36բ—42բ, ձեռ. № 5246, էջ 43ա—47բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. 917, էջ 70։

11. Երաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի՝ ի կոտորումն[26] մանկանցն Բեթղեհեմի ի Հերովդէ[27]. «*Դարձեալ ևս ծերունիս առ ի բանից*

---

[22] *Առաջարկվող խորագիրը վերցրել ենք «Կնիք հաւատոյ»-ից, ուր հրատարակվել է ճառիս սկզբնամասը (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 24—25)։*

[23] *Հրատարակության օրինակում և գրչագրերի մի մասում մի ընթերցման փոխարեն պահպանվել է գի։*

[24] *Սույն ներբողը № 5246 գրչագրում կոչվում է «Քարող վասն ծննդեանն Քրիստոսի» (էջ 43ա)։ Գրիչը թողել է հետևյալ ծանուցումը. «Յաղագս այսր երկէ մայրս մերս սի» (էջ 43ա)։ Գրիչը թողել է հետևյալ ծանուցումը. «Յաղագս այսր երկէ մայրս մերս սուրբ նկեղեցի ի բերանոյ գպրաց և ի վկայութեան սրբոյ Մովսէսի բերթողի, որ ասէ խորհուրդ» (էջ 43ա)։*

[25] *Ջեռ. № 3791, էջ 36բ՝ խաշանց։*

[26] *Գրչագրում՝ կատառումն, այլուր՝ կոտորումն, որին և հետևում ենք։*

[27] *Հրատարակությունը տե՛ս «Յայսմաւուրք», կ. Պոլիս, 1834, հավելված, էջ 1—3՝ Երաճելոյն Գրիգորի Նիւսեայ եպիսկոպոսի ասացեալ ի մանկունսն Բեթղեհեմի. «Դարձեալ ևս ծերունիս առ ի բանից*

ածիմ ասպարէս։ Դարձեալ որպէս մայր ոք, որ ի բազում մանկասնութեանց եւ թշուառացեալ պախտաժէտ, եւ զաղքատ իմոյ մըտաց ստինս ճմլել հարկաւորիմ», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 7729 (1200—1202 թ.), էջ 43բ—45բ։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 3782, էջ 161բ—164բ, ձեռ. № 1525, էջ 7բ—10բ, ձեռ. № 1523, էջ 17ա—19ա, «Հանդէս ամսօրեայի» ձեռ. № 23, էջ 129ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1520, էջ 339բ—342բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1բ, էջ 636, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7, էջ 309բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 212, էջ 53բ—57բ (երրորդ աւուրն՝ երանելոյն Գրիգորի Նիւսեայ եպիսկոպոսի ասացեալ ի մանկունսն Բեթղեհէմի. «Դարձեալ ծերունիս ես...»), Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 996, էջ 52ա—54բ (Սքանչանայք արդեւք դի հրճուեալ ձեզ ևրևիմ...), էջ 54բ—58բ, ձեռ. № 993, էջ 23ա—25ա, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 228, էջ 30ա—34ա, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202, էջ 54ա—56ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 941, էջ 211բ—213բ, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 223, էջ 323ա—326ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154, էջ 20, ձեռ. № 2807, էջ 59բ, Մաշ-

---

ալ ծերունիս ես՝ առ ի բանից յածիմ յասպարէս...», հմմտ. Մատենադարան Հայկական թարգմանութեանց, էջ 373՝ խօսք ի մանկունսն Բեթղեհեմի, ուր կատարեցան ի Հերովդէէ։ Տպագիր և ձեռագիր օրինակների միջև կան էական տարբերություններ։ Համառնարար այդ օտար միջամտությունների չափ ու ծավալի հետ պիտի կապել նաև այն իրողությունը, որ միևնույն գործը առաջին ևաո, խասւ Երկրորդ տարբերակումներով ստանձնացնելու անհրաժեշտություն է առաջացել։ Միաժամանակ պիտի նկատել, որ նշված ոչ մի օրինակությունը նորօրյա միջամտության արդյունք չէ, այլ ունի ձեռագրական հիմք։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հնագույն բնդօրինակություններից մեկում (ձեռ. № 3782, ճառընտիր ԺԲ դար) նշված թարգմանության երկու տարբերակները բնդօրինակվել են կողք կողքի (տե՛ս էջ 160բ—161բ՝ Այլ ի ժամանակին իրրեւ ծնաւ Քրիստոսի ի Բեթղեհեմ..., հմմտ. էջ 161բ—164բ՝ Դարձեալ ես ծերունիս...)։ Ընդ որում՝ այս գրչագիրը միակը չէ. նույն իրողությունն է առկա նաև նշված հավարածոյի № 1525 ձեռագրում (ճառընտիր, ԺԳ դ., տե՛ս էջ 7բ—10բ՝ Նորին Գրիգորի Նուսացւոյ խասւ Երկրորդ ի մանկունսն Բեթղաեհեմի եւ ի Հերովդէս. Բ.-Դարձեալ ծերունիս ես՝ առ ի բանէդն ածիմ յասպարէզ, հմմտ. էջ 5բ—7բ՝ Երկրորդ աւուրն Գրիգորի Նիւսացւոյ՝ ասացեալ ի մանկունսն Բեթղաեհեմի՝ առաջին ճառ. Սքանչանայք արդեւք դի հրճուեալ ձեզ երևիմ եւ զուար [ճանամ,] եւ կոխեմ զայս առուգապէս տխուր ցաւագնութիւնս...)։ Կատարված միջամտության բնույթի, ենթադրվող թարգմանություն-խմբագրությունների հարաբերության անդրադառնալու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ ճառս հունարեն նախօրինակը, որը մեզ հասու/հրատարակությունների շրջանակներում չհաջողվեց գտնել։

տոցի անվան Մատ. ձեռ. № 5244, էջ 23ա—30բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 233, էջ 36բ—39բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 299, էջ 18ա—24բ, ձեռ. № 808, էջ 61ա, ձեռ. № 2383, էջ 129բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 228, էջ 16բ—18բ (Երաներկյոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի՝ խաւսք ի մանկունսն Բեթղեհէմի, որ կոտորեցան ի Հերովդէէ. «Դարձեալ ես ծերունիս...»), Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2786, էջ 27բ—29բ, ձեռ. № 6706, էջ 1ա—5ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2074, էջ 697:

12. Նորին ի Մեղիտոս եպիսկոպոս Անտիոքացի՝ ասացաւ ի Կոստանդինուպաւլիս (բնագիրը տե՛ս PG. t. 46, էջ 852—864). «Աճեցոյց մեզ զիւր առաքելոցն նոր առաքեալս, որ թուեցաւ ընդ աստուածային առաքեալսն, ձգեցին նուրբքն առ ինքեանս զնման աւրինակն, զնահատակ՝ նահատակքն, զպսակեալս՝ պսակեալքն, զսուրբն՝ հոգով, մարքուրքն՝ սրտիւք, զքարոզ բանին, սպասաւորք բանին», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 823 (1266 թ.), էջ 9բ—18ա:

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 1500, էջ 845բ—847ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217, էջ 156ա—159ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 429, էջ 348—354, ձեռ. № 877, էջ 98—105, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 393, էջ 76ա—80ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 324 (Գրիգոր Նիւսացի, ի Թաղման ևառէն), էջ 159բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4234, էջ 107ա—114ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1414, էջ 177—183, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 6988, էջ 10ա—17ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 304, էջ 105բ—108ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 3787, էջ 196ա—198բ, ձեռ. № 996, էջ 298ա—304բ, ձեռ. № 2909, էջ 105բ—108ա, № 2615, էջ 7բ—12ա[28] (10—19):

---

28 «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառի հատվածական բնագրին հայերեն թարգմանությունը, որը պահպանվել է № 993 ձեռագրում («Ճառընտիր», 1456 թ.), հետևյալն է. Գրիգորի Աստուածաբանի Աննիանձու Եպիսկոպոսի խաւսք ի Մեղիտոս Եպիսկոպոսապետն Անտիոքու՝ ասացեալ ի Կոստանդնուպաւլիս: «Աճեցոյց մեզ զիւր առաքելոցն նորա առաքեալս, որ թուեցաւ ընդ մեծասան առաքեալսն: Ձգեցին նուրբք առ ինքեանս զնման աւրինակ, զնահատակ՝ նահատակքն, զպսակեալս՝ պսակեալքն, զսուրբն՝ հոգւով. մարքուրքն՝ սրտիւ, զքարոզն բանին, սպասաւորք բանին: Արդ՝ երանելի է Հայրն մեր առաքելական խորանակցութեամբն և առ Աստուած զառնալովն: Երանելի է Հայրն մեր առաքելական խորանակցութեամբն և առ Աստուած զառնալովն: Բայց ոդորմելիք մեք, քանզի ոչ թողացուցանէ երանելիս լինել մեզ ի Հաւրն բարեժառանգութենէ՝ տարաժամ որբութիւնս: Նմա լաւագոյն է ընդ Քրիստոսի լինել, բայց մեզ չար, որ սրտշեալ ի հայրենի վերակացութենէն, վասն զի ահա խորհրդեան ժամանակ և

13. Երաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի Ներբողեան ի սուրբ հայրն Եփրեմ[29] *(բնագիրը տե՛ս* PG. t. *46, էջ 820—849). «Շարժեն զիս միտք իմ, ով եղբարք, նայել իմաստութեամբ յառակն տէրունական խորհրդական ճրագին, որ յԱւետարանն պատմի և ընդլարձակէ զլեզու իմ զաւրութիւն մտացս առ ի յայտնել զդի խորոչ ծածկեալ իմաստոն», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 993 (1456 թ.), էջ 733բ—737բ:*

Տե՛ս նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201, էջ 220ա—227ա, առ սուրբ երրորդութիւն, զիտէ զսահման խոստովանութեանն, վասն զի բաժանէ անբաժանաբար ըստ բնութեանն և միաւորէր բաժանմամբ ըստ առանձնաւորութեանն):

14. Երաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի՝ ասացեալ Ներբողեան ի թաղումն Տեառն և ի Յովսէփ Առեմաթացի[30]. *Դովելի է ինձ այս եկեղեցական աւրէնք, որ պատրաստեաց մեզ այսպէս զերեքաւրեայ մահուան և զյարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զյիշատակս տանելով ի գանձանակի մեռելոց, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1523 (ԺԴ դ.), էջ 624ա—639ա:*

Տե՛ս նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201, էջ 220ա—227ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1520, էջ 106բ—112ա, ձեռ. № 993, էջ 461բ—464բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 173, էջ 196, Մաշտոցի

խորհրդակիցն լռեաց. պատերազմ շարչ զմեզ պաշարէ, պատերազմ հերձուածողական և որ զաւրավարն լինի» (էջ 258բ):

Մաշտոցի անվան Մատենադարանի № 3782 («Ճառընտիր», ԺԲ դ.) և №1524 («Ճառընտիր», 1401 թ.) ցուցակներում Ճառս հատվածական գոյության պնդումը իրական չէ (տե՛ս «Le Muséon», Louvain, *1977,* t. *9,* fasc. *3—4,* p. *336): Դրանցից առաջինում պահպանվել է հետևյալ հաղորդումը միայն. «Գրիգորի Աստուածաբանի ի Մեդիտոս եպիսկոպոս Անտիոքու ի նորան ժողով անդ փոխեցաւ ի քիկանց գիտ և կարպաս» (էջ 104բ): Մյուս ձեռագրում ընդհանրապես որևէ հիշատակություն չկա մեզ հետաքրքրող գործի մասին: № 6228 ցուցակում («Ժողովածու», ԺԲ դ., էջ 18ա) ընդօրինակվել է ճառիս խորագիրը և միայն առաջին տողը:*

[29] *Հմմտ. Մատենադարան հայկական ԹարգմանութԻանց, էջ 373: Բանասեր Լևոն Տեր-Պետրոսյանի մի հաղորդման համաձայն ներբողիս հայերեն թարգմանության բնագիրը իր իսկ աշխատասիրությամբ պատրաստ է հրատարակության և լույս կտեսնի արտասահմանյան հայագիտական հանդեսներից մեկում:*

[30] *Հրատարակությունը տե՛ս «Գիրք և ճառ հոգևոր արարեալ յուղափառ և յաստուածարան վարդապետաց», Կ. Պոլիս ՌՃՀԱ-1722, էջ 204—227: Հրատարակության խորագիրը մասամբ տարբերվում է ցուցակիր օրինակից. ճառ Երաճելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ասացեալ ի թաղումն Տեառն Յիսուսի Քրիստոսի և ի Յովսէփ Առեմաթացին, Հմմտ. Մատենադարան հայկական ԹարգմանութԻանց, էջ 372:*

անվան Մատ. ձեռ. № 2124, էջ 532ա—536բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154բ, էջ ՌԿէ, ձեռ. № 2807, էջ 266բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 215[31], էջ 68ա—76բ։

15. Դրուատ ի սուրբ Ստեփանոս Նախավկայն Աստուծոյ[32] (բնագիրը հմմտ. PG, t. 46, էջ 701—721, 721—736). «Մեծ է աւր յիշատակի վկային եւ զամենեսեան յարուցանէ կոչել ի սպասաւորութիւն բանիս...», Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (1439 թ.), էջ 265բ (անանուն)։

Տե՛ս նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 212, էջ 462ա—464ա (սկզբից բերի. «...Հոյութիեան ի նա ձգելով, զոր և ի նոյն ինքն ի տէրն նորա, ի ժամանակին որ վասն տաճարին էր բանս»), Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 731 (Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ներբողեան ասացեալ ի սուրբ Ստեփանոս...), էջ 20ա, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 426 (Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի Ներբողեան...), էջ 29—37, Ղալաթիայի Ազգ. Մատ. ձեռ. № 54 (Նորին Գրիգորի Նիւսացւոյ ի Ներբողեան ճառէն, որ ի սուրբ Ստեփանոս Նախավկայ...), էջ 245—248, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 210, էջ 114ա—116ա (Սրբոյն Գրիգորի Նիւսեա եպիսկոպոսի (ի սուրբ Ստեփանոս Նախավկայն). «Մեծ է աւր յիշատակի վկային...»), նույն Մատ. ձեռ. № 224, էջ 21ա—25բ (Դրուատ Գր. Նիւսացւոյ). ի սուրբ Նախավկայն Ստեփանոս. «Մեծ է աւր յիշատակի Նախավկային...»), ձեռ. № 218, էջ 51բ—53ա։

16. Առաջին շաբաթի աւր ազուացիցն՝ ի յիշատակի սրբոյն Թէոդորոսի՝ երանելոյն սրբոյն Գրիգորի Նիւսացոց եպիսկոպոսին ներբողեան ասացեալ[33] (բնագիրը տե՛ս PG. t. 46, էջ 736—748). «Ով դուք Քրիստոսի նոր ժողովուրդք, սուրբ հաւատ, թագաւորեալ քահանայութիւն, որ յամենայն կողմանց քաղաքացիք իսկ և գաւառացիք ի միասին հաւսեալ լինիք հանդիսիս, ուստի՞ սրդ առեալ ընշան ճանապարհիդ առ

---

[31] Վենետիկի № 215 ցրչագրում տաւնել-ի փոխարեն ունենք առնել (տե՛ս Մայր ցուցակ..., Բ, էջ 251)։

[32] Հմմտ. Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 373՝ ի սուրբ Ստեփանոս։ Գ. Զարբհանալյանը գտնում է, որ «Հայկական թարգմանութիւնս մեծապէս կը տարբերի ի յոյն սկզբնագրէն»։ Պարզվում է, որ հնարաւորում պահպանվել է նաև խոշագիրը կրող, բայց բովանդակութեամբ տարբեր երկու ճառ։ Հայերեն առկա միակ թարգմանութիւնը համընթաց չէ հունարեն տարբերակներից և ոչ մեկի հետ. այն միջանկեալ խմբագրութեան տպավորութիւն է թողնում։

[33] Հմմտ. Մատենադարան հայկական թարգմանութեանց, էջ 372՝ Ներբողեան ասացեալ ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս, որոյ յիշատակն կատարի, որ ի սուրբ քառասնորդացն չորեքշաբթի աւրն։

այսոսիկ հանդիսանայք սրբազան տեղի», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 6196 (1227 թ.) էջ 311բ—315ա։

Տե՛ս նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 200, էջ 265բ—269ա, նույն Մատ. ձեռ. № 202, էջ 601ա—604ա (Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի՝ Ներբողեան ասացեալ ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս, որոյ յիշատակն կատարի, որ ի սուրբ Խառասնորդացն յառաջին չաբաթ աւուրն...)։

17. Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ Կեսարու եպիսկոպոսի Յաւետիս սուրբ Աստուածածնին եւ կուսին Մարիամու։ *«Այսաւր հրեշտակական դասիւք աւրհնեցգութիւնք պայծառանան և փայլումն գալստեանն Քրիստոսի զհաւատացելովքն հրճուի։ Այսաւր պայծառ գարունն մեր արդարութեան արեգակն պայծառ լուսով շուրջ փայլեաց զմեզ և լուսաւորեաց զխորհուրդս», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4869 (1482 թ.), էջ 202բ—205բ։*

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 4709 (...յաւետիս Աստուածածնին), էջ 32բ—42ա, ձեռ. № 1524 (յաւետիս Աստուածածնին)*, էջ 63բ—66բ, ձեռ. № 4802* (...յաւետիս սուրբ Աստուածածնին)*, էջ 53բ—56ա։*

18. Երանելոյն Գրիգորի Նիսիա եպիսկոպոսի Ի բանն Տէրունական, որ ասէ, թէ այսպէս արժան է կալ յաղաւթս. *«Զաղաւթից մեզ զվարդապետութիւն աստուածահնս պատմէ բան, որովք արժանաւորաց (ի) իւրոց աշակերտացն փութով ծանաւթութիւն լինէր աղաւթիցն հայցուած որպէս ընտանեցուցանել պատշաճիցէ զաստուածային լուսաւորութիւն բանից աղաւթիցն ի ներքոյ դնելով», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1525 (ԺԹ դ.), էջ 284բ—286ա։*

19. Գրիգորի եռամեծի բաջ հռետորի և տիեզերալոյս վարդապետի խարոզ վասն գալստեան և դատաստանի[34]. *«Զի որպէս փայլակն, որ ելանէ յարևելից ...առաջինն ծածուկ և ողորմութեամբ որպէս զանձրև ի վերայ դեղման և երկրորդն յայտնի և արդարութեամբ, և հրով», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2567 (1659 թ.), էջ 64բ—69բ։*

20. Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ արարեալ ի սուրբ զատիկն և ի կենսաբեր յարութիւն Քրիստոսի՝ միաբանութեամբ Աւետարանչացն բանից եւ ի բացայայտումն կանանցն իւղարերից *(բնագիրը տե՛ս PG. t. 46, էջ 600—689). «Այսօր յարեաւ Քրիստոս ի մեռելոց եւ յարոյց ընդ իւր, զի վայր անկեալ բնութիւնս ի մեղացն մահուանէ», Մաշտոցի անվան Մատ.*

---

[34] *Նյուսացու սույն բարոզը երբեմն ընդմիջարկվում է լուծմունքին հատուկ տեղական միջամտություններով։*

ձեռ. № 2124 *(1665—1669 թթ., էջ 542բ—553բ)*, ձեռ. № 7729 (Երևանի Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ի յարութիւն մեռելոց. «*Այդ ինչպես ոք առ լուծեալ եւ քակտեալ մարմինն հայիցեալ...*»:

21. Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ. «*Եւ արդ զի ելանէ ի լեառն Տէրն, որ յաղագս իւր էջ, զի զմեզ ընդ ինքեան ի վեր հանցէ*», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 4381 *(ԺԲ դ.)*, էջ *134բ—160բ*:

22. Աւրհնութիւն աւրհնութեանց Գրիգորի Նիւսացւոյն. «*Այսօրիկ աւրինադրութիւն է այնմ, որ կոչին զմեզ յիւր հաւասարութիւնն, որոյ իմաստութեանն ըստ աստուածային վկայութեանն ոչ գոյ չափ... արդ ծանիր դու զքո պատուականութիւնդ եւ մի մոլորիր զհետ ուղւոյն, որ են ի հաւատ սատանայի*», Սեբաստիայի ս. Նշան վանքի ձեռ. № 153, էջ *24*:

23. Նորին Գրիգորի Նիւսեայ ի ըղձոյն, զոր գրեաց յանդիմանութիւն առ Թաթուղ ոմն վանական, *որ շնդհալ էր ի քուեայս և ի խաղս հեթանոսականս, յորմէ թէ*[35] «*Լուսաւոր և մտերիմ...*», Ղալաթիայի Հայոց ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ *263—264*:

24. Վարք եռանելոյն Գրիգորի Սմանչելագործի Նէոկեսարացւոյ, գրեալ զպատմութիւն սորա սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ[36] *(բնագիրը տե՛ս*

---

35 Գրչագրերում կան ճառներ, որոնք թեև կրում են Գրիգոր Նյուսացու անունը, սակայն որոշակի հիմքեր կան դրանց հեղինակային պատկանելությունը կասկածի տակ առնելու։ Այդ կարգի բնագրերից են.

ա) Յաղագս տաւեի սրբոյ խաչին. «*Ամենայն բարեկամ ի գալուստ և սիրելոյ ուրա-խարարք են, և տրամահալածք։ Իսկ որք բազում երախտեաց և առատ բարեաց պատ-ճառ լեալ իցեն ի գալն իւրեանց յաճախին զուրախութիւնն մանաւանդ թէ ըստ բարե-սէր և պարգեւասէր կամացն, ունայնաձեռն ոչ իցէ ի գալն և ի դատարկ*», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 836 *(ԺԴ դ.)*, էջ *255բ—268բ*:

բ) Տեսութիւն իմն բնական յաղագս այնր, որ ըստ նիւթոյն և բնութեան և մտացն... «*Եւ ինձ ասի, և բնականագոյն իմն գոլ ըստ մասին այսորիկ տեսանել ի ձեռն որոյ ուսանել իմն գոյ ի ճահագունիցն օրինակաց վասն գեղեցիկն ամենեցուն, և առօել է առ որ բարին*», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 844 *(1325 թ.)*, էջ *98ա—120ա*:

գ) Նորին Բառոզ վասն խնդրոյ ի բանն. խնդրեցէք նախ զարեւայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այլն. «*Ի ձեռնավութենէ հոգւոյն սրբոյ և օժանդակութեամբ աղօ-թից ձեր կամիմ ասասանօր յաղագս երից իրաց... տալ բանիս, որ ասէ՝ խնդրեցէք։ Առաջին՝ վասն խնդրողաց, երկրորդ՝ վասն արբայութեան, երրորդ՝ վասն խնդրուածոց*», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2567 *(1659 թ.)*, էջ *69բ—72բ*:

36 Հրատարակությունը տե՛ս «*Յաւմաւուրք*», կ. Պոլիս, *1834*, էջ *241—243*՝ վարք Երանելոյն Գրիգորի Սմանչելագործի Նէոկեսարացւոյ, գրեալ զպատմութիւն սուրբ սրբոյն Գրի-գորի Նիւսացւոյ. «*Սուրբն Գրիգորիոս Սքանչելագործն էր ի քաղաքէն Նէոկեսարու, և ծնօղքն էին հեթանոսք...*»։ Հմմտ. «*Վարք և վկայաբանութիւնք սրբոց*», Ա, Վենետիկ, *1874*, էջ *317—321*, *Մատենագարան հայկական թարգմանութեանց*, էջ *372*:

PG, t. 46, էջ 893—957). «Սուրբն Գրիգորիոս Սքանչելագործն էր ի քաղաքէն Նէոկեսարու եւ ծնաւղքն էին հեթանոսք», Կիլիկիայի կաթողիկոսության հայերեն ձեռ. № 1 (1310—1311 թթ.), էջ 205բ—209բ։

Տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 2789, էջ 127ա—183բ, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201[37], էջ 404ա—405բ, ձեռ. № 257, էջ 175ա—178ա (Երանելոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ ի վարս եւ ի սքանչելիս սրբոյն Գրիգորի Սքանչելագործի Նիւկեսարեա եպիսկոպոսի. «Էին ամենայն ուսուք հաւաքեալ մանկունք...»), Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 8179, էջ 292բ—296ա, Դալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ 243—245, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 10, էջ 167ա, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202, էջ 531ա—546ա (Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ... «Այսպէս վայելեաց ի կենցաղումս ըստ երկնային կոչմանն, և ընդ սուրբս ամենայն հանգեաւ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր[38]...»)։ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7, էջ 178ա, ձեռ. № 213, էջ 71ա, ձեռ. № 219, էջ 121ա, ձեռ. № 228, էջ 57բ, ձեռ. № 437, էջ 217բ, ձեռ. № 1048, էջ 118բ—121ա։

25. Ա. Վարդապետութիւն սրբոյն Բասեղ[ի] և Գրիգորի. «Բասեղ ասէ. Յորժամ ոչ երկինք էին և ոչ երկիր յորոյ վերայ հանդչէր աթոռ աստուածութեանն։ Գրիգոր ասէ. Ի վերայ տարրական լուսազգեաց աւդոյն»։ Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 6308 (ԺԵ դ.), էջ 159ա—164բ։

Տե՛ս նաև նույն Մատ. ձեռ. № 9474, էջ 12ա—17ա, ձեռ. № 3406 (Հարցումն Բասեղայ առ սուրբն Գրիգոր), էջ 96ա—101բ, Ջմմառի վանքի ձեռ. № 124 (Հարցումն Բասեղի Կեսարացւոյ ընդ Գրիգորի Նիւսացւոյ), էջ 177բ—180բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 503 (Հարցմունք սրբոյն Բասեղի եւ պատասխանիք Գրիգոր եղբաւրն նորին), էջ 181բ—186ա, ձեռ. № 3672 (Հարցում...), էջ 122ա—131ա, ձեռ. № 728 (Հարցումն սրբոյն Բասղի եւ պատասխանի սրբոյն Գրիգորի Աստուածարանի), էջ 23ա—28բ, ձեռ. № 834 (Հարցումն Բասեղայ առ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն), էջ 123ա—132ա, ձեռ. № 2079 (Այս խրատու հարցմանց Բասեղի է զան եղբայր իւր Գրիգոր Նիւսացին, զոր հարցեալ, թէ ուր հանգչի Աստուած), էջ 276բ—278բ, ձեռ. № 2004 (Հարցմունք Բասեղի և Գրիգորի), էջ 55ա—60ա, ձեռ. № 697 (Հարցումն

---

[37] Ը. Սարգիսյանի համոզմամբ՝ «գլխովին կը տարբերի Վարքս տպագրից» («Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին ի Վենետիկ», Բ, Վենետիկ, 1924, էջ 56)։

[38] «Յորժ կը տարբերի ԲՂ տպագրեալն և ԲՂ մեր Ը. 201»,-նկատել է Ը. Սարգիսյանը (տե՛ս «Մայր ցուցակ...», Բ, էջ 108)։

սրբոյն Բարսեղի Կեսարացոյ առ սուրբն Գրիգոր), էջ 102ա—137բ, Ջրմմառի վանքի ձեռ. № 167 (Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի եւ Բարսղի ասացեալ...), էջ 156ա—166ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 9322 (Հարցմունք...), էջ 98ա—110բ, ձեռ. № 8565 (Հարցումն...), էջ 19ա—26բ, ձեռ. № 2245 (Վարդապետութիւն...), էջ 238բ—244ա, ձեռ. № 8461 (Հարցումն...), էջ 42ա—45բ, ձեռ. № 706 (Հարցումն սրբոյն Գրիգորի և վարդապետութիւնի), էջ 10ա—14բ, ձեռ. № 2079 (Այս խրատս հարցմանց Բարսեղի է...), էջ 276բ—278բ, ձեռ. № 2168 (Վարդապետութիւն...), էջ 133ա—138ա, ձեռ. № 614, էջ 193ա—195ա, ձեռ. № 6643 (Այս խրատս հարցմանց Բարսղի...), էջ 217բ—220բ, ձեռ. № 7102 (Հարցմունք Բարսեղի առ սուրբ Գրիգոր ասաց վասն երկնի և երկրի եղանակաց), էջ 221ա—225ա, ձեռ. № 7276 (Հարցմունք...), էջ 237ա—241ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 345 (Հարցումն...), էջ 86ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 7697, էջ 1ա—14ա, ձեռ. № 8398, էջ 33ա—41բ, ձեռ. № 6146 (Հարցումն պատասխանիք հոգեկիր վարդապետին ասացեալ), էջ 18բ—24ա, ձեռ. № 737, էջ 37ա—39ա, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 869 (Հարցմունք...), էջ 113բ, ձեռ. № 990 (Հարցմունք...), էջ 41ա—49բ, ձեռ. № 345 (Հարցումն Բարսեղի եւ պատասխանիք Գրիգորի եղբօր նորին Բարսեղի), էջ 86ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 9416 (Հարցմունք...), էջ 7ա—17բ:

Բ. Հարցումն Բարսեղի Կեսարացոյն ընդ սրբոյն Գրիգորի Նուսացոյն՝ եղբարն իւրում. «Բարսեղ ասէ. Քանի՞ ամ եկաց Ադամ ի դրախտն: Գրիգոր ասէ. Ընդ առաւօտան եմուտ եւ ընդ երեկն ել: Բարսեղ ասէ. Յո՞ր երկիր գնաց: Գրիգոր ասէ. Յերկիրն Քանանու», Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 260 (1420 թ.), էջ 1ա—13բ:

Տե՛ս նաև Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 541, էջ 241բ—244բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 371, էջ 212ա, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1127[39], էջ 117ա—125բ, ձեռ. № 345, էջ 86ա, ձեռ. № 4288, էջ 219ա—236ա, Ջրմմառի վանքի ձեռ. № 167 (Կանոն եւ հարցմունք ս. Բարսղի հայրապետին եւ պատասխանիք Գրիգորի), էջ 181բ—185ա, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 437, էջ 267բ—295բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 9244, էջ 74ա—76ա, ձեռ. № 6476, էջ 285ա—բ:

---

[39] Այս բնագրի հետ ամենևին առնչություն չունի 125բ—133ա էջերում իրեն չարուեստակութիւն ընդօրինակված անխորագիր Հարցումբ:

Գ. Բարսղի և Գրիգորի խնդիր յաղագս ուղղափառ հաւատոյ հարցմունք և պատասխանիք. «[Բարսեղ ասէ.] Կարողութիւն իցէ արդեւք պատմել ինչ յաղագս որդւոյ նախքան զինել աշխարհի։ Գրիգոր ասէ. Եթէ ոք զկնի հարւր և չետ որդւոյ էր պատմեսցէ», Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 3710 (ԺԳ դ.), էջ 363ա—368բ։

Տե՛ս նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 2481 (Բարսղի և Գրիգորի Նիւսացւոյ խնդիր յաղագս ուղղափառ հաւատոյ), էջ 361, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 10168 (Խօսք սրբոյն Գրիգորի Նիւսացւոյն և իւր եղբաւրն Բարսղի հարցուտ ճնճուիւն ընդ միմեանս), էջ 78ա—87բ, Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 497, էջ 458ա—463բ։

Դ. Հարցմունք Բարսեղի Կեսարացւոյն ընդ սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ՝ եղբօրն իւրում, Թավրիզի Հայ. ձեռ. № 11, էջ 219ա—236ա։

Տե՛ս նաև Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 428, էջ ԻԳ, Թավրիզի Հայ. ձեռ. № 10, էջ 188ա—189բ, ձեռ. № 18, էջ 53ա—56բ, Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 92, էջ 534—550։

«Սրբոյ Գրիգորի ասացեալ»

Մաշտոցի անվան Մատ. ձեռ. № 1555, էջ 293ա, 294ա, ձեռ. № 500, էջ 323բ, ձեռ. № 1981, էջ 181բ, ձեռ. № 1712, էջ 204ա, 205բ, 210ա, ձեռ. № 4132, էջ 198ա—200ա, ձեռ. № 2137 (պահպանակ), ձեռ. № 1465, էջ 250բ—251ա, ձեռ. № 507, էջ 321ա—բ, ձեռ. № 695, էջ 132ա—138ա, ձեռ. № 892, էջ 37ա, ձեռ. № 463, էջ 80ա—140ա, ձեռ. № 1495, էջ 150ա, ձեռ. № 2251, էջ 157բ—158ա, ձեռ. № 576, էջ 123բ, ձեռ. № 2041, էջ 350ա, ձեռ. № 737, էջ 50ա—բ, ձեռ. № 600, էջ 143բ—144ա, էջ 147ա, էջ 156ա, ձեռ. № 1960, էջ 17ա, ձեռ. № 8089, էջ 25ա—բ, էջ 45ա, ձեռ. № 4381, էջ 134բ—136ա, էջ 136ա—137բ, էջ 137բ—143ա, 143ա—145ա, 145ա—146ա, 146բ—149բ, 149բ—151բ, 151բ—152բ, 152բ—155բ, 155բ—157ա, 157ա, 157ա—158բ, 158բ—160բ, ձեռ. № 8914, էջ 90ա։ Կիլիկիայի կաթողիկոսության Հայկերեն ձեռ. № 20, էջ 45ա—բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2286, էջ 99ա, ձեռ. № 17, էջ 8բ—13բ, ձեռ. № 47, էջ 64բ—68բ, ձեռ. № 324, էջ 159բ, ձեռ. № 99, էջ 69ա, ձեռ. № 229, էջ 13ա, ձեռ. № 364, էջ 27ա, Զմմառի վանքի ձեռ. № 428, ձեռ. № 5259, էջ 1ա—10բ, ձեռ. № 136, էջ 269բ, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 59, ձեռ. № 410, էջ 21բ—23ա, էջ 312ա—312բ, էջ 253ա—257ա, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. №767, էջ 34, ձեռ. № 656, էջ 794բ, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ.

№ 229, էջ 15բ, Անկյուրիայի ձեռ. № 71, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2229, էջ 5ա, Կեսարիայի ս. Կարապետ վանքի ձեռ. № 23, էջ 259—266, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1486, էջ 5ա, 39բ, 157ա, ձեռ. № 1504, էջ 124ա, Ներսիսյան դպրոցի ձեռ. № 12, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1640, էջ 1, Դալաթիայի Հայոց ազգ. Մատ. ձեռ. № 54, էջ 696—697, ձեռ. № 23, էջ 228, Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 206, էջ 25ա, ձեռ. № 220, էջ 70ա[40]։

---

[40] Կան Գրիգոր Նյուսացու ճառերի հատվածական հրատարակումներ ևս.

ա) Երանելոյն Գրիգորի Նիւսացոյ՝ Առ ի մարդաճալն Տեառն. «Զայս խորհիցի, ասէ, ի ձէնջ, որ ի Քրիստոս...» (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 348)։

բ) «Երանելւոյ Գրիգորի եպիսկոպոսի ի Նիւսայ» խորագրի տակ Գր. Նյուսացու գործերից երկու փոքր հատվածի (կնս էջանոց) հրատարակությունը տե՛ս «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ վարդապետի և Երուանդ վարդապետի, Ս. էջմիածին, 1908, էջ 25, 83։

ԳԼՈՒԽ Դ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ (V Դ.)

ա) ՆՅՈՒՍԱՑԻ-ԵՂԻՇԵ ԱՌՆՉԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻ ԴՐՎԱԳ

Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտների դասին է պատկանում անվանի մատենագիր Եղիշեն։ Նրա կյանքն ու գործունեությունը, մանավանդ թողած գրական ժառանգությունը մշտապես գտնվել են հայագիտության ուշադրության ոլորտում[1]։ Եղիշեի աշխատությունների մեծ մասը արժանացել է մեկից ավելի հրատարակությունների[2]։ Նրա մատենագրական ժառանգության մասին եղած հնագույն հիշատակությունը թերևս Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունն է. «Եւ Եղիշէ զՊատմութիւն սրբոց վարդանանցն, և զԴիւրս կանոնացն, և այլ մեկնութիւնս Գրոց սրբոց և զշարշարանաց Փրկչին»[3]։ Գանձակեցին, ինչպես տեսնում ենք, անվանապես հիշատակում է միայն Վարդանանց պատմությունը, մինչդեռ Եղիշեի ճառերը, մեկնությունները, «Հարցմունք և պատասխանիք» երկը և այլ աշխատանքներ չեն հիշատակվում, ուստի դրանց գոյությունը պիտի ենթագրել համապատասխան ժանրային անվանումների տակ։ Մեզ հետաքրքրող «Հարցմունք և պատասխանիք» երկը հրատարակության է պատրաստել անվանի հայագետ Ն. Ակինյանը, ֆրանսերեն թարգմանությունն իրագործել է Ս. Կոզյանը[4]։ Եղիշեի հիշյալ աշխատանքին ծանոթանալիս դժվար չէ նկատել, որ հեղինակը

---

[1] Նրա մասին եղած գրականության ցանկը տե՛ս «Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխատությամբ Ն. Տէր-Միքելեան, Երևան, 1957, էջ 204—219։

[2] Տե՛ս «Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», ի Վենետիկ, 1838, էջ 1—307, «Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», ի Վենետիկ, 1859, էջ 5—382։

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 29։

[4] «Եղիշէի վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի Գիրս ծննդոց», հրատարակեց՝

ԳԼՈՒԽ Դ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ (V Դ.)

ա) ՆՅՈՒՍԱՑԻ-ԵՂԻՇԵ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ԴՐՎԱԳ

Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտների դասին է պատկանում անվանի մատենագիր Եղիշեն: Նրա կյանքն ու գործունեությունը, մանավանդ թողած գրական ժառանգությունը մշտապես գտնվել են հայագիտության ուշադրության ոլորտում[1]*: Եղիշեի աշխատությունների մեծ մասը արժանացել է մեկից ավելի հրատարակությունների*[2]*: Նրա մատենագրական ժառանգության մասին եղած հնագույն հիշատակությունը թերևս Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունն է. «Եւ Եղիշէ զՊատմութիւն սրբոց Վարդանանցն, և զԳիրս կանոնացն, և այլ մեկնութիւնս Գրոց սրբոց և զշարշարանաց Փրկչին»*[3]*: Գանձակեցին, ինչպես տեսնում ենք, անվանապես հիշատակում է միայն Վարդանանց պատմությունը, մինչդեռ Եղիշեի ճառերը, մեկնությունները, «Հարցմունք և պատասխանիք» երկը և այլ աշխատանքներ չեն հիշատակվում, ուստի դրանց գոյությունը պիտի ենթադրել համապատասխան ժանրային անվանումների տակ: Մեզ հետաքրքրող «Հարցմունք և պատասխանիք» երկը հրատարակության է պատրաստել անվանի հայագետ Ն. Ակինյանը, ֆրանսերեն թարգմանությունն իրագործել է Ս. Կոզյանը*[4]*: Եղիշեի հիշյալ աշխատանքին ծանոթանալիս դժվար չէ նկատել, որ հեղինակը*

---

[1] *Նրա մասին եղած գրականության ցանկը տե՛ս «Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխատությամբ Ն. Տէր-Միքելեան, Երևան, 1957, էջ 204—219:*

[2] *Տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», ի Վենետիկ, 1838, էջ 1—307, «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», ի Վենետիկ, 1859, էջ 5—382:*

[3] *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 29:*

[4] *«Եղիշէի վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի Գիրս ծննդոց», հրատարակեց՝*

ցանէն ի բնութեանն բանի յառաջագոյն գոլ եւ կամ յառաջագոյն լինել ասեմք բնութեամբ սերմանն։ Այլ զասիւ իմն բնութեանն այն, որ կայ ի ներքս ի սերմանն զաւուրիւնն երեւել. սակայն ոչ այլ ի սմա սերմանիկ բնութիւն, քան նմին բանի եւ զմարդկային (էջ 96ա) սերմն կարծեցաք յառաջնում գոյացութեանն պատճառի ի միասին սերմանեալ բնութեանն զաւուրիւն եւ տարածանիլ եւ երեւիլ ի ձևոն բնական իմն կարգաւորութեան, առ կատարեալն յառաջ անցեալ, ոչ ինչ ընկալեալ արտաքուստ ի պատճառս կատարելութեան, այլ զինքն ի կատարեալն ի ձևոն կարգի մատուցեալ» (էջ 96բ, հմմտ. ձեռ. №469, «Ժողովածու», 1260 թ., էջ 186ա)։

կան զաւրութեամբ տակըն եւ բոյսըն, շաւասն եւ բիստ եւ այլն, թէպէտ ի հատն ոչ երեւի, այլ զաւրութեամբ կան ի նմա. այսպէս եւ ի մարդոյ կատարելո, որ դամենայնն լիով ունի՝ սերմն ի անկանի ի կինն, դամենայնն լիով ունի նոյն սերմն զաւրութեամբ, որպէս տունկ հատանել յորթոյ եւ տնկեալ՝ զաւրութեամբ զամենայն ինչ զորթոյն ունի՝ ղուռ եւ դպտուղ եւ զտերեւս» (էջ 44—45)։

Առաջադրված դրվագների ընդհանրության բնույթից անկախ նկատելու է, որ Եզիշեի սկզբնաղբյուրների շարքում անվանապես հիշատակվում է նաև Գր. Նյուսացու անունը. «Ոմանք ասացին՝ յորոց է Գրիգոր Նիւսացի»։ Ավելին, բուն շարադրանքի ընթացքում նա կրկին նկատում է, որ առաջադրվող բացատրությունը և տրենի օրինակի վկայությունը (աւրինակ բերէ ղհատ ցորենոյ) ևս մատուցվում են ըստ բյուզանդական մատենագրի շարադրանքի։ Ինչ վերաբերում է Նյուսացու հատվածի հայերեն թարգմանության և բնագրի փոխհարաբերությանը, ապա նկատելու է, որ հայերեն թարգմանությունը համընթաց է բնագրի հետ։ Չկան թարգմանության բնույթով ու թարգմանչի նախասիրությամբ պայմանավորված նկատելի փոփոխություններ ու միջամտություններ։ Ահա այսպիսի տեսք ունի վկայակոչված հայերեն հատվածի հունարեն *համապատասխանությունը*. „Ἀλλ´ ὥσπερ ἐν τῷ σίτῳ φαμὲν ἤ ἐν ἑτέρῳ τινὶ τῶν σπερμάτων, ἅπαν ἐμπεριειλῆθαι τῇ δυνάμει τὸ κατα τὸν στάχυν εἶδος, τὸν χόρτον, τήν καλάμην, τάς διά μέσου ζώνας, τὸν καρπὸν τοὺς ἀνθέρικας καὶ οὐδὲν τούτων ἐν τῷ τῆς φύσεως λόγῳ προϋπάρρειν, ἤ προγίνεσθαι φάμεν τῇ φύσει τοῦ σπέρματος, ἀλλὰ τάξει μέν τίνι φυσικῇ, τὴν ἐγκειμένην τῷ σπέρματι δύναμιν φανερῦσθαι, οὐ μὴν ἑτέραν ἐπεισκρίνσθαι φύσιν κατὰ τὸν αὐτὸν λόγον καὶ τὴν ἀνθρωπίνην σποράν ὑπειλήφαμεν ἔχειν ἐντῇ πρώτῃ τῆς συστάσεως ἀφορμῇ συνεσπαρμένην τὴν τῆς φύσεως δύναμιν. Ἐξαπλοῦσθαι δέ καὶ φανεροῦσθαι διά τίνος φυσικῆς ἀκολουθίας πρὸς τὸ τέλειον προιοῦσαν, οὐ

προσλαμβάνονσάν τι τῶν ἔξωθεν εἰς ἀφορμὴν τελειώσεως, ἀλλ' ἑαυτὰς εἰς τὸ τέλειον θὶ ἀκολουθίας προάγουσαν"[7]:

Վերոբերյալ զուգադիր դրվագներում, ինչպես տեսնում ենք, բառացի նմանության ընդարձակ օրինակներ չկան: Իբրև ընդհանրության նշմար կարող է մատնացուցվել ընդամենը մեկ-երկու արտահայտություն: Այսպես, օրինակ, Գր. Նյուսացու «ցորեան... յայլում իմիք սերմանեացն» կապակցության դիմաց Եղիշեի հատվածում ունենք նույնաբնույթ «ցորենոյ եւ զայլոց սերմանց» կամ՝ «զմարդկային սերմն կարծեցաք յառաջնում գոյացութեանն պատճառի» դիմաց՝ «սերմանն աճելոյն եւ մարդ լինելոյն» և այլն: Սակայն նշված հատվածների շրջանակներում նմանության օրինակներ փնտրելը ինքնին ճիշտ չէ, որովհետև, ասվեց, Եղիշեն վերապատմում է սկզբնաղբյուրի համապատասխան միտքը և ոչ թե այս կամ այն պատրաստի դրվագը նույնությամբ իր շարադրանքի մեջ մուծում, ինչպես դա լինում է «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունների հայոց ինքնուրույն գրականության վրա թողած հետքերում: Նյուսացի-Եղիշե ընդհանրության առաջադրված դրվագը ունի մեկ այլ առանձնահատկություն ևս. մատենագրական առնչակցության սույն օրինակը ոչ հաճախադեպ այն դեպքերից է, երբ մեր գրական հուշարձանը կրում է բյուզանդական մատենագրության ազդեցության կնիքը ոչ թե հայերեն թարգմանության ընդունված ճանապարհով, այլ անմիջականորեն բնագրի միջնորդությամբ: Տվյալ պարագայում բացատրության այլ եղանակ առաջադրելը ճիշտ չի լինի: Պահպանված մատենագրական վկայությունների համաձայն՝ Գր. Նյուսացու հիշյալ երկը հայերենի է թարգմանվել VIII դարի մատենագիր Ստ. Սյունեցու ձեռքով: Ունենք Ստ. Օրբելյանի ուղղակի վկայությունը Ստ. Սյունեցու թարգմանական գործունեության մասին. «թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ զԲնութեան և զկազմութեան»[8]: Հասկանալի պատճառով Եղիշեն չէր կարող ծանոթ լինել Գր. Նյուսացու աշխատանքի հայերեն թարգմանությանը և օգտվել նրանից:

Համադրվող հատվածները ուշագրավ իրողություն են ներկայացնում նաև բառագանձի առումով: Նրանցում կարելի է մատնացուցել բառեր, որոնք այլուր չեն ավանդված, ուստի և միայն առաջադրվող վկայու-

---

[7] Patrologiae cursus completus. Series graeca (այսուհետև PG), t. 44, էջ 236:

[8] «Պատմութիւն Նահանգին Սիսական», արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արհեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 135:

թյամբ են հայտնի: Այսպես, օրինակ, Գր. Նյուսացու հատվածում ունենք ծրուցմ բառը ի մէջ ծրուցեն կիրառությամբ, որը նոր հայկազյան բառարանագիրների բացատրությամբ նշանակում է «յօդք ծղօտից և եղեգանց»[9]: Բնականաբար, սույն մեկնաբանության հիմքը Գր. Նյուսացու համապատասխան հատվածն է, որովհետև բառիս կիրառության այլ օրինակ-հղում բառարանագիրներին ծանոթ չէ: Ի մէջ ծրուցեն հայերեն կապակցության հիմքը բնագրի ձև. մեջաս շաոաչ[10] (ընդ մէջ գօտի[11]) արտահայտությունն է: Եղիշեի հատվածում իբրև բառական եզակի վկայության օրինակ հիշատակելու է շաւաւ բառը[12]:

Այսպիսով, վերոշարադրյալը ընդհանրացնելու դեպքում կարելի է եզրակացնել, որ «Հարցմունք և պատասխանիք» երկի հեղինակը, ի թիվս այլ աղբյուրների, օգտվել է նաև Գր. Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի հունարեն բնագրից: Ասվեց, որ այն հայերենի է թարգմանվել VIII դարում, Ստ. Սյունեցու ձեռքով: Համադրվող հատվածների նման տեղիները հիմնականում ընդհանուր-իմաստային են և ոչ բառական-հատվածական:

բ) «Ի ՄԵԼԻՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ...» ՃԱՒԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ, «Ի ՄԵԼԻՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ...» ՃԱՒԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐ

Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների մեջ թարգմանության բնույթով, բառագանձի ինքնատիպությամբ, մանավանդ հայոց հին գրականության հետ ունեցած առնչակցությամբ, կարելի է ասել, առանձնանում է նրա «Ի Մելիտոս եպիսկոպոս...» խորագիրը կրող գործը: Ժանրային իմաստով այն չի կարելի ո՛չ ճառ կոչել, ո՛չ էլ դամբանական: Հայերեն թարգմանության ձեռագրերում սույն աշխատանքը մերթ խաւսք է կոչվում, մերթ էլ պարզապես «Ի Մելիտոս եպիսկոպոս...»: Մինչդեռ հունարեն բնագրի խորագրում կա շատ հատուկ ժանրային բնորոշում. σὲπιτάφιος λόγος»[1] (դամբանական

---

[9] ՆՀԲ, Ա, 1029:
[10] PG, t. 44, էջ 236:
[11] ՆՀԲ, Ա, 1029:
[12] Տե՛ս ՆՀԲ, Բ, 474:
[1] Տե՛ս PG, t. 46, էջ 820—864:

ճառ)։ Արդ՝ Գրիգոր Նյուսացու աշխատանքի հունարեն բնագիրը բառ առ բառ հայերենի թարգմանող, ինչպես կտեսնենք, հունարենի պատճենահոլման եղանակով բազմաթիվ բառեր ստեղծող հայերենի թարգմանիչը ինչու՞ չի ընկալել կամ, թերևս, հարմար չի նկատել հայերենի փոխանցել հունարենում պահպանված ժանրային առանձնացումը՝ դամբանական ճառ տեսքով։ Մեր առաջին թարգմանիչները նույն կերպ են վարվել «Երեք մեծ կապադովկացիների» համարնույթ մյուս գործերի հետ ևս։ Այսպես, օրինակ, Գրիգոր Նազիանզացու եղբորը՝ Կեսարիոսին և Բարսեղ Կեսարացուն նվիրված Նազիանզացու նշանավոր դամբանականները հայերենի են թարգմանվել «Ի Կեսարիոս եղբայրն իւր» և «Ի Բասիլիոս Կեսարացի» խորագրերի տակ, թեև երկու դեպքում էլ հունարենում ունենք ἐπιτάφιος[2] (դամբանական) բնորոշումը։ Ասվածին պիտի ավելացնել Բարսեղ Կեսարացու 33 բնագրից կազմված «Պահոց գրքի» հայերեն թարգմանությունը, որտեղ նույնպես բնագրի այս կամ այն ժանրային պատկանելության ցուցումը թարգմանության համար պարտադիր չի նկատվել։ Թեև այսօր դժվար է ստույգ ասել, թե այդ երկերի հունարեն բնագրերի խորագրերը մեզ են հասել նախնական, հեղինակային տեսքով։ Միանգամայն հնարավոր է ենթադրել միջնադարյան գրիչների, հետագայում հնարավոր է նաև հրատարակիչների նմանօրինակ միջամտություններ։ Հայերեն թարգմանությունների խորագրերում առավելապես ձգտում կա «սրբոյ հօրն մերոյ» սկսվածքով նկարագրական եղանակով ներկայացնելու նախ հեղինակը, ապա գործը։ Մինչդեռ հեղինակի անունը, շնչին բացառությամբ, բացակայում է հունարեն բնագրերի խորագրերում։ Առաջարկվող հայերեն թարգմանություններում առավելապես հոգ է տարվում ընթերցողին ներկայացնելու ենթադրվող անձը իր բոլոր, այսպես կոչված՝ ուսանելի կողմերով, քան ժանրը իր մանրամասներով։ Եվ դա ուներ իր հիմնավորումը։ Այս կամ այն նշանավոր հոգևոր գործչի անձի ու գործունեության ուսանելի դրվագներն էին ի ցույց հանվում և ոչ թե ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները մատնացույցվում։ Եվ այդ նպատակին էին ծառայեցվում ոչ միայն խորագրերը, այլև հայերեն թարգմանությունների հիշատակարան-հիշատակագրություններն անգամ։

«Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանական ճառը ասվել է 381 թ., Կոստանդնուպոլսում կայացած Երկրորդ տիեզերական ժողովի ժամանակ, Անտիոքի նշանավոր Մելիտոս եպիսկոպոսի մահվան կապակցությամբ։

[2] Տե՛ս PG, t. 35, էջ 756—789, PG, t. 36, էջ 493—606։

IV դարի 80-ական թվականներին արևելյան եկեղեցու սյուներից մեկի մահվան տխուր հետևանքները պատկերացնելու իմաստով ուշագրավ կարող է լինել Մաշտոցի անվան Մատենադարանի № 996 «Ճառընտրում» Նյուսացու քննվող երկի ընդօրինակության առիթով կատարված հետևյալ հիշատակագրությունը. «Արդ՝ այժմ լուայք զասացեալսս ի մէնջ, քանզի յիշեցաք զասացեալ զփոխումն երջանիկ հայրապետին՝ զորք մնացեալ զմեզ զժողովուրդ այսքան բազմութեան: Վասն զի նա քաղաքավարեալ ի մարմնի ըստ առաքելոյն բանի՝ զինչ որ ի ոք պատեբռազմ պատերազմեալ զընթացսն կատարեալ զճգնութեան և զառաքինութեանն. զհաւատսն պահեաց, որ ի սուրբ Երրորդութիւնն, և կա, և մնա նմա արդարութեան պսակն, զոր հատուցէ յաւուր մեծի արդար դատաւորն: Ոչ միայն նմա, այլ և որք հետևին վարուց նորա և որոշեն զանձինս յերկրաքարշ վարուց և խորհին զանդ երանութիւնսն և ուղղեսցեն զշաւեղս իւրեանց ի կեանսն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս»[3]: Նյուսացին, որ նույնպես եկեղեցու նշանավոր հայրերից էր, բնականաբար, շատ ավելի խորն էր զգում կատարվածի ողբերգական հետևանքները, եկեղեցուն սպառնացող վտանգի սահմանները, հոգևոր հաստատության շրջանակներում և նրանից դուրս դավանական խլրտումների առաջն առնելու հնարավոր ուղիները, նշանավոր սուրբ հայրերի կյանքի ու գործունեության ուսանելի դրվագները ի ցույց դնելու նպաստավոր եղանակներն ու ոլորտները և այլն: Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսի գործունեությունն այս իմաստով ինքնին ուսանելի էր:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը Գր. Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանական ճառի հայերեն թարգմանության հետ կապված բանասիրական-աղբյուրագիտական այլևայլ խնդիրների քննությունն է: Հուշարձանիս բնագրի և թարգմանության համեմատությունը ցույց է տալիս, որ ճառիս հայերեն թարգմանությունը հիմնականում համընթաց է հունարեն բնագրի հետ. հայերենը, կարելի է ասել, բառացի թարգմանության տպավորություն է թողնում: Բնագրի և թարգմանության ընդհանրական կետերը դասդասելով ըստ առանձնահատկությունների կարելի է դրանք բաժանել մի քանի խմբերի.

1 Հայերեն թարգմանությունում կան բայական կապակցություններ (անդեմ և դիմավոր), որոնք հունարեն բնագրի բառացի թարգմա-

[3] Ձեռ. № 996, էջ 304ա-բ:

նութ յան եղանակով պահպանել են սկզբնագրի ձևերն ու գեղարվեստական արտահայտչամիջոցները[4].

«մախանքն կողոպտեցին» (էջ 10բ)— «φθόνου ἀπασυλήσαντος» (էջ 853)
«տապան ընդունին» (էջ 13ա)— «σορὸν ἐκποδέχονται» (էջ 856)
«տապանական պարէր» (էջ 17բ)— «σκῆνος ἐχόρευσεν» (էջ 861)
«տապանակ առաքեցին» (էջ 13ա)— «κιβωτὸν προέπεμψαν» (էջ 856)
«լեզու... խաւսի» (էջ 12բ)— «γλῶσσα ἐκείνη» (էջ 856)
«սրտի գրեալ» (էջ 13ա)— «καρδίας ἐγγεγραμμέναι» (էջ 856)
«ձայնեցից բանիւ» (էջ 11բ)— «ὑπερφωνήσω τῷ λύγῳ» (էջ 853)
«անզարդացաւ գեղեցկութիւնդ» (էջ 12բ)— «ἀπεκοσμήθη τὸ κάλλος» (էջ 856)
«ցամաքեցաւ խոտն» (էջ 12բ)— «ἐξηράνθη ὁ χόρτος» (էջ 856)
«ոչ սգայր ի մխիթարութիւն» (էջ 13բ)— «οὐ προσιεμένη παράκλησιν» (էջ 857)
«մատուակեաց գշնորհն» (էջ 15ա)— «οἰνοχοήσας τὴν χάριν» (էջ 860)
«լալ ընդ լացեալսն» (էջ 11բ)— «κλαιειν μετὰ κλαιόντων» (էջ 853)
«խնդալ ընդ խնդացեալսն» (էջ 11բ)— «χαίρειν μετὰ χαιρόν» (էջ 853)
«պայծառացուցանել զբանն» (էջ 10բ)— «καταφαιδρῦναι τὸν λόγον» (էջ 853)
«զդադարեցուցանել զփափագումնն» (էջ 14ա)— «ἀναπαῦσαι τὸν πόθον» (էջ 857)
«ծանրասցի սգով» (էջ 13բ)— «βαρύ πενθείτω» (էջ 857)

2 Քննվող հուշարձանի հայերեն թարգմանությունում կարելի է առանձնացնել անվանական արտահայտությունների մի խումբ, որոնք դարձյալ հունարենի հիմքի վրա են առաջացել և ուղղակի բառական թարգմանության հետևանք են.

«աշացն հանդարտութիւն» (էջ 12բ)— «ἀμμαεων γλιήνη» (էջ 856)
«շրթանցն ժպտումն» (էջ 12բ)— «χείλους μειδίαμα» (էջ 856)
«յաշաղանք չարութեանց» (էջ 12բ)— «βασκανία κακὴ» (էջ 856)
«զամպ տրտմութեանս» (էջ 10ա)— «νὺπης νεφέλεν» (էջ 852)
«թշուառութեան մառախղով» (էջ 10ա)— «συμφορᾶς γνόφῳ» (էջ 852)
«հոգոյս աչաւք» (էջ 10ա)— «ψυχῆς ὀφθαλμοῖς» (էջ 852)
«սպասաւորութիւն բանի» (էջ 10ա)— «ὑπηρεσίαν τοῦ λόγου» (էջ 852)
«ձայն... ախտիս» (էջ 10ա)— «φωνὴν... τοῦ πάθους» (էջ 852)

[4] Տողատակի ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով սույն և հետագա բառակապակցությունների էջերը հղում ենք բուն տեքստում, հայերեն բաղումները՝ ըստ մեր կազմած քննական բնագրի հիմք ձեռագրի (№ 823, էջ 9բ—18ա), հունարենը՝ ըստ PG-ի հրատարակության (հ. 46, էջ 852—864):

«հասարակաց մարմին» (էջ 9բ)—«κοινὸν σῶμα» (էջ 852)
«զհոգեւոր հարսանիսն» (էջ 10բ)—«πνευματικὸν... γάμον» (էջ 852)
«զբանիցն զաւժիտս» (էջ 10բ)—«λόγων ἔδνα» (էջ 854)
«ոգոյ ղեկն» (էջ 11ա)—«ψυχῶν πηδάλιον» (էջ 853)
«կենցաղոյս ծով» (էջ 17ա)—«βίου θάλασσαν» (էջ 861)
«ախտակցութեամբ զարտաւսրդ» (էջ 11բ)—«συμπαθείας δάκρυας» (էջ 853)
«արջնագգեստ բանիւ» (էջ 10բ) — «μελανειμονοῦντες τῷ λόγῳ» (էջ 853)
«նախանձու զհաւատն» (էջ 14ա)— «ζηλῶ τῆς πίστεως» (էջ 857)
«զկաւշիկս ոգոյն» (էջ 17ա)—«ὑπόδημα τῆς ψυχῆς» (էջ 861)

3 Հաջորդ արձանագրելի իրողությունը թարգմանության ճանապարհով որոշիչ-որոշյալի համաձայնությամբ պայմանավորված արտահայտչամիջոցների խումբն է, որոնք, որքան մեզ հայտնի է, այլուր չեն հանդիպում և հատուկ են սույն հուշարձանի հայերեն թարգմանությանը.

«բարի ամուսնութեանն» (էջ 14բ)— «καλῆ συζυγίᾳ» (էջ 860)
«զհերձուածողական մառախուղն» (էջ 14բ)—«αἱρετικὸν ζόφον» (էջ 857)
«թշուառական պատմութեանն» (էջ 13ա)—«δυστυχοῦς ἀγγελίας» (էջ 856)
«պայծառ առագաստն» (էջ 11ա)— «λαμπρὸν ἱστίον» (էջ 853)
«զխաղաղական ճառագայթն» (էջ 10ա)—«εἰρήνης ἀκτῖνα» (էջ 852)
«զաստուածային զձայնն» (էջ 12բ)—«θείας φωνῆς» (էջ 856)
«զաւտար թշուառութիւնն» (էջ 11բ)—«ἀλλοτρίαν συμφορὰν» (էջ 853)
«տարաժամ որբութիւնս» (էջ 9բ)—«ἡ ἀωρία τῆς ὀρφανίας» (էջ 852)
«բարուց խարիսխն» (էջ 11ա)— «γνώμης ἄγκυρα» (էջ 853)
«քաջ նաւուղին» (էջ 11ա)— «καλὸς κυβερνήτης» (էջ 853)
«քաջ փեսայն» (էջ 10բ)— «καλὸς νυμφίος» (էջ 853)
«զսուրբ նուէրս» (էջ 12բ)—«ἅγνὸν ἀνάθημα» (էջ 856)
«առատ լուսով» (էջ 11ա)—«πλουσίῳ τῷ φωτὶ» (էջ 853)
«աստուծոյ այրն» (էջ 13ա)—«Θεοῦ ἄνθρωπος» (էջ 856)
«ողջունող աչն» (էջ 12բ)— «εὐποσήγορος δεξιὰ» (էջ 856)
«տրտմական թշուառութեանց» (էջ 13բ)— «τὰ λυπηρὰ τῶν συμφορῶν» (էջ 857)

4 Քննվող գրական հուշարձանում կան հունարենի նմանությամբ միևնույն բառակազմական սկզբունքով կազմված բառեր, որոնք, դատելով նոր հայկազյան բառարանագիրների հղումներից, չնչին բացառու-

թյամբ, հայոց թարգմանական և ինքնուրույն մատենագրությանը ծանոթ են մեկ կամ երկու կիրառությամբ։ Այդպիսի բառերից են.

աղախնական (էջ 12ա)— δουλικῶς (էջ 853)
այլալեզու (էջ 17բ)— ἑτερόγλωσσος (էջ 861)
անարատ (էջ 12ա) ἄχραντος (էջ 857), ἄμεμπτος (էջ 856)
անգիտութիւն (էջ 16բ)—ἀγνόημα (էջ 861)
անզարդանալ (էջ 12բ)— ἀπεκοσμήθη (էջ 856)
անհաւատալի (էջ 17ա)—ἀπιστούμενον (էջ 861)
անհրահանդ (էջ 10բ)— ἀμελέτητος (էջ 857)
անշարժ (էջ 16ա) —ἀκίνητος (էջ 861)
անպտուղ (էջ 16ա)— ἄκαρπος (էջ 861)
աստուածապաշտ (էջ 12ա)—θεοσεβής (էջ 856)
բազմամասնաբար (էջ 17բ)— πολυμερῶς (էջ 861)
բարեժառանգութիւն (էջ 9բ) — εὐκληρίαν (էջ 852)
բարեսիրմիկ (էջ 12ա)— εὐγενής (էջ 856)
խորանակցութիւն (էջ 9բ)— συσκήνια (էջ 852)
համալեզու (էջ 17բ)— ὁμόγλωσσος (էջ 861)
մեծաձայն (էջ 10ա)— μεγαλοφώνως (էջ 852)
ստոման (էջ 13ա)— στόμνος (էջ 856)

Թվարկված օրինակներն իրենց համապատասխան կիրառություններով հիմնականում V դարի թարգմանական մատենագրությունից են քաղվել (Ս. Գիրք, Եփրեմ, Բարսեղ, Նազիանզացի, Նյուսացի, Ոսկեբերան և այլն)։ Ուրիշ վկայություն չունենալու պատճառով ոչ թարգմանական գրականությունից օրինակներ են ընտրվել X—XII դդ. գրական հուշարձաններից, երբեմն էլ Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների ազդեցությամբ հայտնված վաղ շրջանի ինքնուրույն գրականությունից (տե՛ս Խորենացու օրինակները)։ Հասկանալի է, որ Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի թարգմանությանը դիմելու դեպքում բառարանագիրները անգործածական և բարեժառանգություն բառերի բացատրության առիթով չէին բավարարվի Հովհաննես Դրասխանակերտցուց ու Սարգիս Շնորհալուց քաղված մեկական օրինակներով։

5 կան դարձյալ հունարենի հիմքի վրա առաջացած բառեր, որոնք անծանոթ են նոր հայկազյան բառարանագիրներին։ Ահա այդ բառերը իրենց համապատասխան կիրառություններով.

ա) «Այլ ինքեանէմ հանդիպի Աստուծոյ»[5]— ἀλλ αὐτοπροσώπως ἐντυγά-

---

[5] Ձեռ. № 823, էջ 16բ։

γιτεῷ Θεῷ»[6]։ Հայկազյան բառարանագիրները վկայակոչում են ինքնագէպ ինքնադիմաբար բառերը, բայց ոչ ինքնագէմ։ Հասկանալի է, որ վերջինս հունարեն αὐτοπροσώπος բառի թարգմանությունն է։ Բառս, որքան մեզ հայտնի է, այլուր վկայված չէ։

բ) «Յաճախագոյն հայելով բիւրամարդ բազմութիւնն»[7]—«κατα πυκνωθέντες ὁ μυριάνθρωπος δῆμος»[8]։ Հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ, դատելով համաբարբառային գրականությունից, բիւրամարդ բառի ուրիշ կիրառություն արձանագրված չէ։ Սույն եզակի կիրառությանը չեն անդրադարձել նաև Նոր Հայկազյան բառարանագիրները, թեև նրանք ձեռքի տակ ունեցել են «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի հայերեն թարգմանությունը։ Դժվար չէ կռահել, որ բիւրամարդ բառը առաջացել է հունարենի μυριάνθρωπος-ը թարգմանելու ճանապարհով և միանգամայն ուշադրության արժանի բառական միավոր է։

գ) «Զիարդ քաջն Դաւիթ բազմամասնաբար եւ յոգեւարիճակաւանապէս...»[9]—«πῶς ὁ καλὸς Δαβὶδ πολυμερῶς καὶ πολυτρόπως»[10]։ Տվյալ պարագայում մեր ասելիքը յոգեւարիճակապէս բառի մասին է։ Հայկազյան բառարանում մեկական օրինակ-վկայակոչությամբ հղվել են յոգեօրիճակ և յոգեօրիճակաբար իմաստամոտ բառերը, բայց բառարանում չկա առաջարկվող յոգեւարիճակապէս ընթերցումը։ Բառիս կիրառության այլ օրինակ մեզ ծանոթ չէ, ուստի մեկնաբանության միակ սկզբնաղբյուրը մնում է վերոբերյալ վկայակոչությունը։ Մի բան պարզ է, որ այն հունարեն «πολυτρόπως» բառի հայերեն թարգմանությունն է, որը վկայված չէ նաև Առձեռն բառարանում և առհասարակ անծանոթ է հայ բառարանագրությանը[11]։

Այսպիսով, վերոբերյալը հիմք է տալիս ասելու, որ Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» երկի հայերեն թարգմանությունը մեր թարգմանական գրականության ինքնատիպ ու երևելի հուշարձաններից է։ Վերջինիս բնագրի և թարգմանության համադրական քննությունը նպաստավոր կարող է լինել հին հայերենի կառուցվածքի, բառագանձի

---

[6] PG, էջ 861։
[7] Ձեռ. № 823, էջ 17ա։
[8] PG, էջ 861։
[9] Ձեռ. № 823, էջ 17ա-բ։
[10] PG, էջ 861։
[11] Նախորդ ինքնագէմ և բիւրամարդ բառերը վկայված են Առձեռն բառարանում։

և ոճական առանձնահատկությունների ուսումնասիրության իմաստով:

Նույնքան ուշագրավ է այդ թարգմանական երկի մուտքը հայոց ինքնուրույն գրականություն, որովհետև այն ամենից առաջ և բավական սերտ կերպով կապվում է Մովսես Խորենացու նշանավոր «Ողբի» հետ: Խորենացու Պատմության սկզբնաղբյուրներին անդրադարձած նախորդ սերընդի հայագետներից շատերը տարբեր ձևակերպական ու բառարանագրական աղբյուր-հղումների հենքի վրա արձանագրել են, որ բյուզանդական մատենագրի սույն ճառը ծանոթ է եղել Խորենացուն, որից օգտվել է նա իր նշանավոր «Ողբը» շարադրելիս[12]: Ահա այսպիսի տեսք ունի Նյուսացի-Խորենացի առնչակցությունների հին ու նոր ցանկը:

Ձեռ. № 823
(«Ժողովածու», 1266 թ.)

Ողորմիմ ձեզ, ով եկեղեցիդ, առ քեզ է բանս, Անտիոքու քաղաքդ: Ողորմիմ քեզ յանկարծակի փոփոխմամբդ այդուիկ[13]:

«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», *Տփղիս, 1913*

Ողորմիմ ձեզ, եկեղեցի Հայաստանեաց, խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին, ի քաջէն ղրկեալ ի հովուէ և ի հովուակցէ[14]:

Հին վրացերեն թարգմանություն. „გწყალობ შენ, ეკლესიაო...“[15]:

---

[12] Ն. Բլուզանդացի, «Քննասէր», պրակ երկրորդ, Ստորհոլմ, 1887, էջ 60, 61, Կ. Տ. Պատմաճեան, Քննութիւն ողբոյն Մովսիսի Խորենացւոյ (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1891, էջ 362—364), Գր. Խալաթեանց, Մովսէս Խորենացի եւ իւր աղբիւրները («Յառաջատ Արարատի», 1897 թ. նոյեմբեր եւ դեկտեմբեր), էջ 536—538, Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 365, Г. Халатьянц, Армянские Аршакиды, М., 1903, часть II, материалы, էջ 140—143: Ն. Ակինեան, Մովսէս Խորենացւոյ Ողբը Դաւոնդ երէցի Պատմութեան վերջաբանն է, «Հանդէս ամսօրեայ», 1930, № 1—2, էջ 7—41, Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 217—218:

[13] Ձեռ. № 823, էջ 12բ, Համմ. «Քննասէր», 1887, էջ 60, Կ. Պատմաճյան, նշվ. աշխ., էջ 362, Գր. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 536, Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 27, Г. Халатьянц, էջ 14: Ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով նյուսացու ճառի միայն ընդգծված մասի հունարենն ենք հղում:

[14] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց (այսուհետև՝ Մ. Խորենացի), էջ 358:

[15] «Ի Միլիտոս եպիսկոպոս...» ճառի համադրվող հատվածների հայերեն թարգմանության հունարեն բնագրի հետ ունեցած հարաբերությունը լրացուցիչ վերահսկելու նպատակով համար նկատեցինք միաժամանակ վկայակոչել նման կամ նույնական հատվածների հին վրացերեն թարգմանության XI դ. համապատասխան մասերը ըստ Մ. Կոբիաշ-

Բնագիր. «Ἔλεῶ σε, ὦ Ἐκκλησία»[16]:

Նահատակն ի հանդէսն կոչեցաւ և նահատակէր յաղագս ճշմարտութիւնն քրտամբք: Իսկ հարսն համբերէր ողջախոհութեամբ զամուսնութիւնն պահելով: *Ժամանակ էր ի մէջ յոլով, և ոմն սեղեխաբար յանդգնէր յանարատ յառագաստն:* Այլ հարսն ոչ աղտեղանայր...[17]:

Զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսաւորին, և հարսնեղ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց: Դարձեալ մինչ երթեմն ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստդ և հարսնիդ ոչ աղտեղացար...[18]:

Հին վրացերեն թարգմանություն. «ხოლო მეორემან მან შეუგინებელად დაჰმარხა, მეუღლებად იგი მისი სიწმინდე... ვინმე პყრობაჲ უხრწნელისა მის სასძლოჲსა..[19].“

Բնագիր. ἡ δὲ ὑπεμενεν ἐν σωφροσύνῃ τὸν γάμον φυλάττουσα,.. τις μοιχικῶς κατεπεχείρει τῆς ἀχράντου πασάδος. Ἀλλ' ἡ νύμφη οὐκ ἐμιαίνετο...[20]:

Նմա յաւագոյն էր ընդ Քրիստոսի լինել՝ լուծանելով ի մարմնոյն, *բայց մեզ չար որոշել ի հայրենի վերակացութենէն (էջ 9բ)*... Նա ի գոգսն Աբրահամու հանգչի[21] *(էջ 15ա—բ)*:

...լուծեալ ի մարմնոյս *ընկերան և գործակցան*: Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակել, և յԱբրահամեանն հանգչել ի գոգս...[22]:

Վիլու վերջերս իրացրած միակ քննական հրատարակության (տե՛ս Ց. ყობიაშვილი, გრიგოლ ნოსელის „შესხმაჲ მწყემსი ანტიოქელისაჲ“ տե՛ս «Ძველი ქართული მწერლობის მატიანე», II, თბილისი, 1935, էջ 92—104, այսուհետև՝ «Ძველი ქართული მწერლობის მატიანე»):

16 PG, *էջ 856:*

17 *Ձեռ. № 823, էջ 14, համմ. «Քննական էջ», 1887, էջ 61,* Կ. Պատմաճյան, *նշվ. աշխ., էջ 362,* Գ. Խալաթյանց, *նշվ. աշխ., էջ 537,* Г. Халатьянц, *էջ 141,* Ն. Ակինյան, *նշվ. աշխ., էջ 28:*

18 Մ. Խորենացի, *էջ 359:*

19 «Ძველი ქართული მწერლობის მატიანე», *էջ 100:*

20 PG, *էջ 857:*

21 *Ձեռ. № 823, էջ 15ա-բ, համմ.* Գ. Խալաթյանց, *նշվ. աշխ., էջ 537—538,* Г. Халатьянц, *էջ 140:*

22 Մ. Խորենացի, *էջ 359—360:*

Հին վրացերեն թարգմանություն. «Ոմանք უმჯობეს ·იყო ჴორცთագან განსვლითა ქრისტეს თանա-կոփած...[23] «Եւ զամենայն այս ըստ նմին ասացեալ է ի տեղիս այսոսիկ»[24]:

Բնագիր. «Ἐκεῖνο κρεῖττον ἦν τὸ σὺν χριστῷ εἶναι. διὰ τῆς ἀναλύσεως» *(852)*, «...ὁ μὲν ἐν τοῖς κόλποις τοῦ Ἀβραὰμ ἀναπαύεται»[25]:

Ահա խորհրդեան ժամանակ, եւ խորհրդակից լռեալ է: Պատերազմն զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերձուածողական եւ, որ զաւրավարն լինի, ոչ ոք է: Վտանգի հիւանդութեամբ հասարակաց մարմին եկեղեցւոյս, եւ դժիշկն ոչ գտանեմք[26] *(էջ 9բ)*:

Պատերազմն զմեզ շուրջ պաշարէ, և Մականէ ոչ փրկէ... արհաւիրք ի հեթանոսաց և մարտ ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ[27]:

Հին վրացերեն թարգմանություն. «Ծերոլոսա գարե-ցոպցացտ, ծերոլոսա ՄՂვალებელთასა...»[28]:

Բնագիր. «Πόλεμος ἡμᾶς περιστοίχισται, πόλεμος αἱρετικός»[29]:

Կամիմ եթէ որպէս կարողութիւն է, պնդելով զիմ տկարութիւնս... ի վերայ հարն Յունաստանեան ողբալով: Այլ զինչ կրեցից, զի՞ արդ բռնադատեցից զքեզուս ի սպասաւորութիւն բանի[30] *(էջ 10ա)*:

Աւաղ զրկանացս, աւաղ Յունական պատմութեանս. ո՞րպէս զախտս հանդուրժեցից բնիկ. զիա՞րդ զմիտս իմ և զքեզուս պնդեցից, և հատուցից զրանս հարցն...[31]:

---

[23] «Ժողովածո ქართული მწერლობის მატიანე», *էջ 95*.

[24] *Նույն տեղում, էջ 101*:

[25] PG, *էջ 860*:

[26] *Ձեռ. № 823, էջ 9բ, համմ.* Գ. Խալաբյանց, *նշվ. աշխ., էջ 537—538*, Ն. Տեր-Միքայելյան, *նշվ. աշխ., էջ 218*:

[27] Մ. Խորենացի, *էջ 360*:

[28] «Ժողովածո ქართული მწერლობის მატიანე», *էջ 95—96*:

[29] PG, *էջ 852*:

[30] *Ձեռ. № 823, էջ 10ա, համմ.* Գ. Խալաբյանց, *նշվ. աշխ., էջ 360*, **Г. Халатьянц, *էջ 140***.

[31] Մ. Խորենացի, *էջ 360—361*:

Հին վրացերեն թարգմանություն. «զարեղա ցաուժուլո ენასა მსახურებდ სიტყუსაս»[32];
Բնագիր. «Πῶς βιάσομαι γλῶσσαν εἰς ὑπηρεσίαν τοῦ λόγου»[33];

Յայնժամ իբրեւ ի հարսանիս պարէամ, եւ այժմ ողորմելի ի վերայ ախտիս հառաչեմք: Յայնժամ առագաստի երգի եւ այժմ՝ ի վերայ գերեզմանի ողբ[34] *(էջ 10բ):*

...յուսայաք հարսանեաց պարել, անվհտհր երգութիւամբ կրթեալք, և առագաստի ասել երգս, արդ փոխանակ խրախճանութեանն ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ...[35]*:*

Հին վրացերեն թարգմանություն. «ვითარცა მექორწინენი განვსცხრებოდეთ... მაშინ სასძლოჲსასა, ხოლო აწ საფლავისას ვგალობთ»[36];
Բնագիր. «Τότε γαμικῶς ἐχορεύομεν... Τότε ἐπιθαλάμιον, νῦν ἐπιτάφιον ἄδομεν»[37];

Ուր էի՞ զաղջ աչացն հանդարտութիւն, ուր՝ զուարթ շրթանցն ժպտումն, ուր բարի ողջունող աչն[38]*:*

Որ է՞ զաղջ աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահաւորութիւն առ թիւրս. ուր զուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն...[39]*: (էջ 361):*

Հին վրացերեն թարգմանություն. «რამეთუ სადა არს იგი მყუდროებაჲ თუალთა მისთაჲ, სადა არს ბრწყინვალე-იგი ღიმილი ბაგეთა მისთაჲ»[40];
Բնագիր. «Ποῦ ἡ γλυκεῖα τῶν ὀμμάτων γαλήνη; Ποῦ τὸ φαιδρὸν ἐπὶ τοῦ χείλους μειδίαμα;»[41]:

---

32 «ძველი ქართული მწერლობის მატიანე» *էջ 96:*
33 PG, *էջ 852:*
34 *Ձեռ. № 823, էջ 10բ, համմտ.* Գ. Խալաբյանց, *նշվ. աշխ., էջ 361,* Г.Халатьянц *էջ 140:*
35 Մ. Խորենացի, *էջ 361:*
36 «ძველი ქართული მწერლობის მატიანე», *էջ 96:*
37 PG, *էջ 852:*
38 *Ձեռ. № 823, էջ 12բ, համմտ. «Քննասէր», 1887, էջ 61,* Կ. Պասմանյան, *նշվ. աշխ., էջ 362,* Г. Халатьянц, *էջ 140 :*
39 Մ. Խորենացի, *էջ 361:*
40 «ძველი ქართული მწერლობის მატიანე», *էջ 98:*
41 PG, *էջ 856:*

Ով բշուառական պատմութեանն այնորիկ, ով պատմէ եկեղեցւոյն պախան[42]*:*

Աւաղ զրկանացս, աւաղ բշուառական պատմութեանս. որպէ՞ս պախտս հանդուրժեցիք բերել[43]*:*

Հին վրացերէն թարգմանութիւն. «ეჰა ბავთა ესე ბოროტი და ჰამბავი საზარელი»[44]*;*

Բնագիր. *«Ὦ δυστυχοῦς ἀγγελίας ἐκείνης...»*[45]*;*

Կորեաւ եւ գնդեցկութիւնն այն, լռեաց ձայնն. կարգեցան շքրթունքն, բռնաւ շնորհն[46]*:*

Կորեաւ ժողովողն, թագեաւ նաւահանգիստն, ելի՛ք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ[47]*:*

Հին վրացերէն թարգմանութիւն. «წარხდა შუენიერებაჲ იგი საწადელი და დადუმნა ხმაჲ...»[48]*;*

Բնագիր. *«Οὖχεται τὸ κάλλος ἐκεῖνο, σεγᾷ ἡ φωνή»*[49]*;*

Լուայ եւ ձայնս ոմանս յերեմիայէ մխրականս եւ սգաւորս, որով յամայանալ զքաղաքին երուսաղէմացւոց ողբայր[50]*:*

Զմտաւ զայսոսիկ ածելով՝ հառաչումն կիս ի ներքս ընթանայ և արտօսր, և կամեցուցանէ բարբառել բան մխրական և սգաւոր[51]*:*

Հին վրացերէն թարգմանութիւն. «უწყი, რამეთუ არა უმეცარ ხართ სიტყუათა მათ და ხმათა იერემიაჲსთა...»[52]*;*

Բնագիր. *«Ἀκοῦσατε τοῦ Ἰερεμίου φωνάς τινας σκυθρωπὰς καὶ γοώδεις...»*[53]*;*

---

42 *Ձեռ. № 823, էջ 13ա, հմմտ.* Г. Халатьянц, *էջ 141:*

43 *Մ. Խորենացի, էջ 360:*

44 *«Ძველი ქართული მწერლობის მატიანე», էջ 99:*

45 PG, *էջ 856:*

46 *Ձեռ. № 823, էջ 15բ, հմմտ.* Դ. Խալաբյանց, *նշվ. աշխ., էջ 538:*

47 *Մ. Խորենացի, էջ 361:*

48 *«Ძველი ქართული მწერლობის მატიანე», էջ 102:*

49 PG, *էջ 860:*

50 *Ձեռ. № 823, էջ 15բ, հմմտ.* Г. Халатьянц, *էջ 141:*

51 *Մ. Խորենացի, էջ 362:*

52 *«Ძველი ქართული მწერლობის მატიანე», էջ 102:*

53 PG, *էջ 860:*

Մանր ոսկերք եւ նախ բան զմաւ կրթեալ ի մեռելութիւն, տրտմական թշուառութեանց մերոց յիշատակ[54]:

Վասն հանգուցանելոյ զպարկեշտն զայն մարմին և նախ բան զմահն կրթեալ ի մեռելութիւն[55]:

Հին վրացերեն թարգմանություն. «ბორველი სიკუდილისაცა მწურთელნი სიკუდილისანი»[56];

Բնագիր. «καὶ πρὸ τοῦ θανάτου μεμελετηκότα νέκρωσιν»[57];

Համեմատությունների վերաբերյալ շարքը արդյունք է Մ. Խորենացու «Ողբի» և Գր. Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի հայերեն թարգմանության համադրության: Հասկանալի է, որ ընդհանրական տեղիներ կգտնվեն Մ. Խորենացու Պատմության մյուս մասերում ևս: Սակայն մի բան պարզ է, որ նմանության մեծ ու փոքր հատվածների բացահայտված և չբացահայտված օրինակներից անկախ Խորենացու «Ողբը», ինչպես նկատվել է, «գրված է Գրիգոր Նյուսացու հայտնի դամբանական ճառի խոր ազդեցության տակ»[58]: Ընդ որում՝ խոսքը երկու ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությամբ պայմանավորված ձևական ընդհանրության մասին չէ, այլ բուն նյութի, շարադրանքի, հիմնական ասելիքի: Արդ՝ փորձենք ընդհանրացնել այդ բնույթի նմանությունները:

ա) Երկու դեպքում էլ ողբերգականը իրական է, առարկայական. Գր. Նյուսացու համար եղերականը դավանական բուռն վեճերի պայմաններում արևելյան եկեղեցու ծանր վիճակն է՝ պայմանավորված Անտիոքի նշանավոր Մելիտոս եպիսկոպոսի անակնկալ մահվան հետ՝ «Ողորմիմ քեզ, ով եկեղեցիդ»[59]: Մ. Խորենացուն հուզողը հայոց թագավորության վերացումն է, ազգային հոգևոր հաստատության երերուն վիճակը՝ «Ողորմիմ քեզ, եկեղեցիդ Հայաստանեաց»[60], երանելի ուսուցիչների՝ Սահակի և Մաշտոցի մահը:

---

54 Ձեռ. № 823, էջ 13բ, համմ. «Քննասէր», 1887, էջ 60, Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 536, Г. Халатьянц, էջ 143:

55 Մ. Խորենացի, էջ 357, համմ. էջ 362՝ նախ բան զմահուն մեռելութիւն:

56 «ძველი ქართული მწურლობის მატიანე», էջ 99:

57 PG, էջ 857:

58 Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 217:

59 Ձեռ. № 823, էջ 12բ:

60 Մ. Խորենացի, էջ 358:

բ) Հարս ու փեսայի փոխարերական պատկերը միանգամայն նույն ենթատեքստն ու նպատակադրումն ունի թե՛ Նյուսացու և թե՛ Խորենացու երկում։

գ) «Պատերազմն հերձուածողական» նույնական մտահղությամբ է պաշարել թե՛ բյուզանդական մատենագրին և թե՛ մեր Պատմահորը, որովհետև երկու դեպքում էլ խոր անհանգստության բուն պատճառը մեկ է՝ մի դեպքում «որ զաւրավարն լինի, ոչ ոք է»[61] (Նյուսացի), մյուս դեպքում՝ ըստ Խորենացու՝ «խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»[62]։

դ) «Ո՞ւր», «զի՞նչ», «ո՞վ» և նման սկսվածքով հարցադրումները թե՛ Նյուսացու և թե՛ Խորենացու համար ոչ միայն պատասխան չեն ակնկալում, այլև բովանդակում են նույն հարցումի ժխտական պատասխան-լուծումը։

ե) Երկու հուշարձաններում էլ քննադատության, տարակուսանքի ու դժգոհության բուն պատճառը տեսանելի է շրջապատող իրականության ոլորտում, իրական է և ոչ վերացական։

զ) Լավատեսության, պայծառ ապագայի դիվքը համադրվող երկերում պիտի փնտրել անցյալի փառավոր դրվագները վերապատմելու գրական եղանակի մեջ։

Այսպիսով, վերոբերյալ բառական, ոճական, իմաստային և կառուցվածքային նմանությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ Խորենացին իր նշանավոր «Ողբը» շարադրելիս ծանոթ է եղել Նյուսացու քննվող դամբանական ճառի հայերեն թարգմանությանը։ Ինչ խոսք, Խորենացու պատրաստությունը (բյուզանդական մատենագրությունն ու լեզուն հիմնավորապես իմանալը) հիմք է տալիս մտածելու, որ Պատմահայրը Նյուսացու աշխատանքին կարող էր ծանոթ լինել նաև բնագրով։ Մյուս կողմից գայթակղիչ հանդամանք կարող է հանդիսանալ թարգմանական գործի համար հատուկ պատրաստվող Խորենացու իսկ վկայությունը. «Ես այր եմ ծերացեալ... և անպարապ ի թարգմանութեանց»[63]։ Այսուհանդերձ՝ հիմնավոր կռվաններ կան պնդելու, որ Խորենացին օգտվում է Նյուսացու Դամբանական ճառի հատկապես հայերեն թարգմանությունից։ Որո՞նք են այդ կռվանները։

---

[61] Ձեռ. № 823, էջ 9բ։

[62] Մ. Խորենացի, էջ 360։

[63] Մ. Խորենացի, էջ 353։

ա) Նյուսացին գրում է. «Հարսն համբերէր ողջախոհութեամբ զամուսնութիւնն պաճելով... ոմն սեղեխաբար յանդգնէր յանարատ յառագաստն: Այլ հարսն ոչ աղտեղանայր...»[64]: *Այս նույն միտքը առկա է Խորենացու մոտ.* «Հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պաճելով... ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստդ և հարսնդ ոչ աղտեղացար...»[65]: *Այս նույնական հատվածներից յուրաքանչյուրը հարս բառի կիրառության երկուական օրինակ է պարունակում՝ հարսն համբերէր, հարսն ոչ աղտեղանայր, մինչդեռ Նյուսացու ճառի հունարեն բնագրում ունենք նման մեկ կապակցություն.* «Ἀλλ' ἡ νύμφη οὐκ ἐμιαίνετο...»[66] *(=այլ հարսն ոչ աղտեղանայր)*:

բ) Նյուսացի. «լաւագոյն էր ընդ Քրիստոսի լինել»[67]:

Խորենացի. «Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակել»[68]: Վկայակոչված հատվածների նմանությունը ակնհայտ է և լրացուցիչ մեկնաբանության անհրաժեշտություն չկա: Տվյալ պարագայում մեր ասելիքը ընդգծված բառերի որոշ տարբեր երանգներին է վերաբերում: Նյուսացու լաւագոյն և լինել բառերի դիմաց Խորենացու «Ողբում» համապատասխանաբար ունենք լաւ և բնակել: *Նյուսացու ճառի բնագրում ասված է՝* «κρεῖττον ἦν τὸ σὺν χριστῷ εἶναι»[69], *որի ճշգրիտ արտացոլումն է առկա հին հայերեն թարգմանությունը: Հասկանալի է, որ Նյուսացու լաւագոյն և լինել ընթերցումները բնագրի κρεῖττων*[70] *և* εἶναι[71] *(εἰμί) բառերի թարգմանությունն են: Արդ՝ որոշ տարբերության երանգով հանդերձ՝ Խորենացու միտքը շատ ավելի ընդհանրական է Նյուսացու դամբանական ճառի հայերեն թարգմանության հետ, քան հունարեն նախօրինակի:*

գ) Նյուսացի. «Ով թշուառական պատմութեանն»[72]:

---

64 *Ձեռ. № 823, էջ 14բ—15ա:*

65 Մ. Խորենացի, *էջ 359:*

66 PG, *էջ 858:*

67 *Ձեռ. № 823, էջ 15ա:*

68 Մ. Խորենացի, *էջ 360:*

69 PG, *էջ 852:*

70 Древнегреческо-русский словарь, т. I, Москва, 1958, I *էջ 980 (այսուհետև՝* ДРС*)*:

71 ДРС, I, 464:

72 *Ձեռ. № 823, էջ 13ա:*

Խորենացի. «Աւա՛ղ թշուառական պատմութեանս»[73]: Այս նույնական արտահայտությունների հիմքը Նյուսացու ճառի հունարեն բնագիրն է «Ὦ ὀστυχοῦς ἀγγελίας»[74], որտեղ, ինչպես տեսնում ենք, պատմութեանն բնթերցման դիմաց ունենք ἀγγελία[75](ἀγγελίη)—լուր, տեղեկություն, գեկույց: Արդ՝ Նյուսացու ճառի հայերեն թարգմանության և Խորենացու «Ողբի» նմանության այս և նախորդ օրինակներից կարելի է եզրակացնել, թե Խորենացին օգտվում է բյուզանդական մատենագրի «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի հայերեն թարգմանությունից և ոչ թե հունարեն նախօրինակից: Հակառակը պնդելու դեպքում հարկադրված կլիներնք ընդունելու, որ Նյուսացու խնդրո առարկա ճառի թարգմանիչը և նույն երկի հունարենից օգտվող Խորենացին միմյանցից բոլորովին անկախ օգտագործում են նույնաոճ արտահայտություններ ու կապակցություններ, մի բան, որ գրեթե անկարելի է[76]: Խորենացին միջնադարյան գրական գործիչ է և, բնականաբար, առանձնապես հոգ չի տանում քաղում-հղումները մասնավորեցնելու ուղղությամբ, մանավանդ եթե դրանք շարադրանքի փաստական կողմին չեն վերաբերվում: Նյուսացու գործից կատարված խորենացու քաղումները այդպիսիք չեն: Այդուհանդերձ՝ Խորենացին մի առիթով արձանագրում է. «որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց»[77]:

Սակայն բյուզանդական մատենագրի երկին ծանոթ լինելու հանգամանքը այն թյուր տպավորությունը չպետք է թողնի, թե Խորենացին սոսկ բանաքաղությամբ է տարված, և որ նրա հռչակավոր «Ողբը» սահմանագործական առումով քիչ է ինքնուրույն: Նման մոտեցումը ամենից առաջ նշանակում է բնավ չգնահատել այն հարուստ ու բազմաժանր թարգմանական մատենագրությունը, որը նախորդել է մեր ինքնուրույն գրականությանը և դարեր շարունակ գոյատևել է վերջինիս

---

73 Մ. Խորենացի, էջ 360:

74 PG, էջ 856:

75 ДРС. I, 18:

76 Կամ, ինչպես, կարելի է մտածել, որ Նյուսացու ճառի թարգմանիչը լինելով հանդերձ՝ Խորենացին, սակայն, գրական-թարգմանական տարբեր մոտեցում է դրսևորում: Բյուզանդական մատենագրի երկը թարգմանելիս նա աշխատում է անպայման մնալ բնագրի սահմաններում, հարազատորեն վերարտադրել բնագրի յուրաքանչյուր միավորը, մինչդեռ, սեփական շարադրանքում իր իսկ թարգմանությունից օգտվելիս նույն երևույթի շուրջ կիրառում է տարբեր մոտեցում: Սա նույնպես նվազ հավանական ենթադրություն է:

77 Մ. Խորենացի, էջ 359:

զուգընթաց։ Հայտնի է, որ մեր ինքնուրույն մատենագրության երևելի ներկայացուցիչները, այդ թվում է առաջին հերթին Խորենացին, միաժամանակ մեր նշանավոր թարգմանիչներն են եղել։ Թարգմանելու և ինքնուրույն գրական երկ ստեղծելու պրոցեսը մեզանում տևական ժամանակ համընթաց են եղել։ Այնպես որ ասորի կամ հույն մատենագրի այս կամ այն գործի թարգմանիչը կարող էր թարգմանվող նյութի բովանդակությունը ակնհայտ նմանությամբ վերարտադրել նաև ինքնուրույն երկ ստեղծելիս՝ ամենևին չզգալով դրա օտարամուտ լինելը։ Խորենացին, թվում է, այս իմաստով շատ լավ ապացույցներ կարող է տալ։ Ավելին, Խորենացու Պատմության օրինակը ցույց է տալիս, որ Նյուսացու երկի հայերեն թարգմանությանը ծանոթ լինելու իրողությունը նրան չի զրկել ինքնուրույնությունից, իր ասելիքը յուրովի մատուցելու խորհնացիական հնարավորությունից։ Նույնիսկ նմանությունների մեջ Խորենացու ասելիքը որոշակիորեն տարբերվում է սկզբնաղբյուրի հաղորդումից։ Վկայակոչենք այս կարգի ընդհանրության մեկերկու օրինակ.

ա) Նյուսացին եկեղեցու տխուր վիճակը նկարագրելիս օգտագործում է «ով Քշուառական պատմութեանն»[78] արտահայտությունը։ Խորենացին նման առիթով ու նրա հետևությամբ ունի՝ «աւա՜ղ Քշուառական պատմութեանս»[79]։ Խոսքը տվյալ դեպքում ով, աւաղ, որպիսի հուզական երանգների տարբերությանն է վերաբերում։ Նյուսացու թարգմանիչը բնագրի կոչական (ω) օմեգան թարգմանել է բառացի նշանակությամբ՝ ով։ Դա միակ դեպքը չէ. նա, չնչին բացառությամբ, այդպես է վարվել նաև մնացած դեպքերում (ով չար[80]-ῶ πονηρός[81], ով եկեղեցիք[82]—ὦ Ἐκκλησία[83], ով Քշուառական[84]—ὦ δυστυχής[85], ով ասիցէ[86]—τίς ἐρεῖ[87], որպիսի ձայն դարձեալ[88]—ὦ οἵα φωνὴ[89] և այլն)։ Մինչդեռ

78 Ձեռ. № 823, էջ 13ա։
79 Մ. Խորենացի, էջ 360։
80 Ձեռ. № 823, էջ 11ա։
81 PG, էջ 853։
82 Ձեռ. № 823, էջ 12բ։
83 PG, էջ 856։
84 Ձեռ. № 823, էջ 13ա։
85 PG, էջ 856։
86 Ձեռ. № 823, էջ 13ա։
87 PG, էջ 856։
88 Ձեռ. № 823, էջ 13բ։
89 PG, էջ 837։

Նյուսացու ճառի հայերեն թարգմանությունից օգտվող Խորենացին նախընտրել է զարմանք, զայրույթ, վրդովմունք, վիշտ, տրտմություն ու թախիծ արտահայտող ասող տարբերակը: Իրականում տվյալ մարքի, արտահայտության համար ճիշտը Խորենացու ընտրությունն է: Փաստորեն բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանությունն աչքի առաջ ունենալով հանդերձ՝ Պատմահայրը բնագրին, ասելիքի իր ընկալումն ունի և նմանությունների մեջ էլ, ասվեց, տարբեր է սկզբնաղբյուրից:

բ) Խորենացին Հայոց աշխարհի անմխիթար վիճակին անդրադառնալիս միաժամանակ հիշում է իր երանելի ուսուցիչներին և այդ առիթով օգտագործում է «զիարդ զմիտս իմ և զլեզուս պնդեցից»[90] արտահայտությունը, որը ընդհանուր եզրեր ունի Նյուսացու «զի՞արդ բռնադատեցից զլեզուս»[91] նմանօրինակ ձևակերպման հետ՝ «Πῶς βιάσομαι γλῶσσαν»[92]: Առաջին հայացքից թվում է, թե այս և նման բնորոշումների՝ պնդեցից և բռնադատեցից այլևայլ բառերից մեկը պիտի ճիշտ համարել և մյուսը սրբագրել ըստ նախորդի: Բայց իրականում երկուսն էլ ճիշտ են իրենց տեղերում: Գր. Նյուսացու հատվածում բռնադատեցից բառը ստուգելի է բնագրով. այն հունարեն «βιαίως» բառն է, որն ունի «ուժով, բռնությամբ, ուժ գործադրելով»[93] իմաստները և միանգամայն տեղին է օգտագործված: Մինչդեռ Խորենացու խոսքը իր երանելի ուսուցիչների հիշատակին անդրադառնալուց առաջ միտքն ու լեզուն պնդելու մասին է: Ինչպես տեսնում ենք, հիմքում ընդհանրական այս ձևակերպումները բուն ասելիքի մեջ միանգամայն տարբեր են:

գ) Ծայր առած դավանական վեճերին անդրադառնալիս Նյուսացին գրում է. «պատերազմ զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերձուածողական»[94]: Նույնպիսի մտահոգություն ունի նաև Խորենացին՝ աչքի առաջ ունենալով բյուզանդական մատենագրի հիշյալ ձևակերպումը. «պատերազմ զմեզ շուրջ պաշարէ... մարտք ի հերձուածողաց»[95]: Նյուսացու ճառի հունարեն բնագրում պատերազմ բառի երկու կիրառության դիմաց էլ ունենք «πόλεμος»[96], որից հետևում է, թե բյուզանդական մատե-

90 Մ. Խորենացի, էջ 360—361:
91 Ձեռ. № 823, էջ 10ա:
92 PG, էջ 852:
93 Տե՛ս ДРС, I, էջ 295:
94 Ձեռ. № 823, էջ 9բ:
95 Մ. Խորենացի, էջ 360:
96 PG, էջ 852:

նագրի հայերեն թարգմանիչը հարազատ է մնացել բնագրին և երկու դեպքում էլ բառս թարգմանել է պատերազմ: Խորենացին չի կրկնել սկզբնաղբյուրի ձևակերպումը՝ պատերազմ բառի երկրորդ կիրառության համար ընտրելով նույնի մարտ հոմանիշ-տարբերակը: Կատարվածը սոսկ կրկնությունից խուսափելու նպատակով հարմար բառընտրության օրինակ չէ, այլ, ավելի շուտ, երևույթի ճշմարիտ գնահատման խորենացիական ըմբռնում: Դավանական հողի վրա առաջացած խլրտումները Խորենացին բնորոշում է մարտ տերմինով[97]: Նյուսացի-Խորենացի ընդհանրական հատվածներում կարելի է վկայակոչել այս բնույթի նոր օրինակներ ևս: Սակայն դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ վկայակոչված զուգահեռ ձևերի ուշադիր քննությունը հիմք է տալիս ասելու, որ սկզբնաղբյուրի հետ ունեցած նմանությունների շրջանակներում էլ Խորենացին առանձնանում է ոչ միայն իր ասելիքով, այլ նաև մատուցման եղանակով ու ոճի ինքնատիպությամբ: Նյուսացու թարգմանիչը աշխատում է ամեն կերպ տեղավորվել բնագրի բառերի ու արտահայտությունների շրջանակներում, ձգտելով հնարավորին չափ զերծ մնալ միջամըտություններից ու բառական հավելումներից: Նա չանում է գտնել հունարենի համապատասխան հայերեն համարժեքը, իսկ չգտնելու կամ չընախընտրելու դեպքում բառապատճենման եղանակով կարողանում է ստեղծել ենթադրվող բառը կամ տերմինը: Սակայն բնագրին հետևողականորեն հարազատ մնալու միտումը տվել է նաև իր ոչ ցանկալի արդյունքը: Քննվող հուշարձանում կան ոչ քիչ թվով հատվածներ, որոնք ծանրաշունչ են ու դժվարընկալելի, ուր միտքը չունի ցանկալի հստակություն, խճողված է ու զրկվել անհասկանալի: Անշուշտ շատ ավելի նկատելի է այն իրողությունը, որ հայերեն թարգմանությունը հիմնականում հստակ է, պարզ է ու մեկին, այն տեղ-տեղ, կարելի է ասել, բանաստեղծական ձև ու հնչեղություն ունի: Ահա այդ բնույթի մեկ օրինակ.

---

97 «Պատերազմ» և «մարտ» բառերի համարնույթ կիրառության օրինակ կա նաև Գրիգոր Նազիանզացու «Ի Գրիգորիոս եպիսկոպոս, Բասղի մերձ կացելոյ, յնս ձևնադրութեանն եւ ի վկայսն» ճառի հայերեն թարգմանությունում. «Եւ այն է դժնդակ պատերազմն, այս է մարտ մեծ...» (ձեռ. № 823, էջ 30բ), համմ. բնագիր. „καὶ οὗτος δεινος ὁ πόλεμος. καὶ αὕτη παράταξις μεγάλη:..„(PG,t. 35, էջ 837): **Սակայն այս դեպքում պարզվում է, որ բառական նշված երանգավորման հիմքը ճառիս հունարեն նախօրինակն է:**

Զիա՞րդ անզարդացաւ գեղեցկութիւնդ,
Զիա՞րդ կողոպտեցաւ զարդն,
Որպէ՞ս յանկարծակի ի վայր անկաւ ծաղիկն,
Ճշմարտապէս ցամաքեցաւ խոտն
Եւ անկաւ ծաղիկն[98]։

Բնագիր. Πῶς ἀπεκοσμήθη τὸ κάλλος;
Πῶς ἀπεσυλήθη ὁ κόσμος;
Πῶς ἐξαίφνης ἀπερρύη τὸ ἄνθος;
Οὕτως ἐξηράνθη ὁ χόρτος,
καὶ τὸ ἄνθος ἐξέπεσεν[99].

Բոլորովին այլ են Խորենացու ստեղծագործական խառնվածքը, բնագրի հետ աշխատելու, այս կամ այն թարգմանությունից օգտվելու նրա նախընտրած եղանակները։ Նյուսացու երկի հայերեն թարգմանությունից օգտվող Խորենացին երբեք այս կամ այն միտքը հեղինակային կառուցվածքով ու բառային կազմով նույնությամբ չի վերաբնակեցնում իր շարադրանքի մեջ։ Նա աշխատում է օտարամուտ շերտերը հարստացնել, ընդարձակել տեղական, հայկական անհրաժեշտ նյութի իր իսկ մեկնաբանությամբ, գրավոր ու բանավոր աղբյուրներից քաղված շահեկան այլազան տեղեկություններով։

Աչքի առաջ ունենալով «երեք մեծ կապադովկացիների», մասնավորապես Գրիգոր Նազիանզացու ճառերի հայերեն թարգմանությունների հետքերը Խորենացու «Հայոց պատմության» վրա, հայ բանասիրության մեջ անցյալում փորձ է արվել Պատմահորը ընդունելու Նազիանզացու ճառերի թարգմանիչ։ Նույն հաջողությամբ նրան կարելի է համարել նաև Նյուսացու ճառերի թարգմանիչ, որովհետև նման ենթադրության փաստական հիմքը այս դեպքում էլ մնում է նույնը։ Նման ընդհանրացման համար նպաստավոր գործոն է դիտվել նաև Խորենացու՝ Բյուզանդիայում կրթություն ստանալը, բյուզանդական մատենագրությունն ու հունարեն լեզուն հիմնավորապես իմանալը։ Հայագիտության մեջ Խորենացու մասին ուղղակի արձանագրվել է. «Ի Նազիանզացւոյ ճառից փոխ առեալ ցիր եւ ցան կտորները կը ցուցընեն թէ ի հայրենիս դառնալէն առաջ արդէն կարդացած եւ թարգմանած էր այդ ճառերն, ուստի՝ թէ՛ Ողբը գրած ժամանակ եւ թէ՛ Պատմութիւնը

---

98 Ձեռ. № 823, էջ 12բ։
99 PG, էջ 856։

խմբագրած միջոցին՝ իւր թարգմանութիւններէն հատուածներ կը ներմուծէր. եւ այս՝ ոչ միայն ի նպաստանպատակ, այլ եւ ի նիւթացոյց...»[100]: *Այս տեսակետը բավական տարածված է հայագիտության մեջ և բանավոր եղանակով պաշտպանվում է նաև մեր օրերում: Սակայն «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունների հարյուրավոր ձեռագրերի քննական դասդասումն ու Խորենացու քաղում-հղումների համադրական ուսումնասիրությունը բացահայտում են հեղինակի իսկ ձեռքով ընտրած օտար հատվածների հարաբերությունը դրանց բուն սկզբնաղբյուրի հետ, ըստ ամենայնի վեր հանում քաղումների ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը հին ու նոր բնագրերում:*

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Խորենացուն Նյուսացու ճառերի թարգմանիչ չի կարելի համարել մի շարք պատճառներով: Ամենից առաջ պիտի նկատել, որ այդ մասին չկա, չի պահպանվել որևէ հիշատակություն ո՛չ Խորենացու գործերում, ո՛չ էլ այլուր: Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի հայերեն թարգմանության վրա հնարավոր չէ ցույց տալ Խորենացուն բնորոշ լեզվի ու ոճի, արտահայտչանպանակի որևէ նմուշ: Նյուսացու թարգմանիչը, ասվեց, աշխատում է ամեն կերպ տեղավորվել բնագրի շրջանակներում, մինչդեռ Խորենացին ստեղծագործողի, գրական երկ ստեղծողի իր խառնվածքով չի կարող պարփակվել բնագրի հաղորդածի ոլորտում և միջամրտում է ինքնաբերաբար: Այս իմաստով կրկին հիշելի են վերևում վկայակոչված օրինակները, ուր Նյուսացու ճառի հայերեն թարգմանության ով-ը Խորենացին ընթերցում է աւաղ, պնդեցից-ը՝ բռնադատեցից, պատեռազմ-ը՝ մարտ: Պարզորոշ երևում է, որ Խորենացին բառընտրության իր ուրույն սկզբունքն ունի, որը էապես տարբեր է Նյուսացու թարգմանչի մոտեցումից: Ի վերջո, Նյուսացու ճառերի հայերեն թարգմանությունը պիտի գոյություն ունենար, հայ իրականության մեջ տարածված լիներ մինչև Խորենացու «Ողբի» կամ «Հայոց պատմության» գրվելը, որից այնուհետև օգտվելու հնարավորություն ունենար Պատմահայրը:

Այնուամենայնիվ, ե՞րբ է հայերենի թարգմանվել Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանական ճառը: Այս հարցի պատասխանը ուղղակիորեն կապվում է մեկ այլ հարցի հետ՝ ե՞րբ է գրվել Խորենացու «Ողբը», որտեղ Նյուսացու ճառի հայերեն թարգմանությունից

---

[100] Ա. Պասմաճյան, նշվ. աշխ., էջ 363, համմ. «Քննասէր», էջ 30, 31:

10-ից ավելի հատվածներ են օգտագործվել։ Հայագիտության մեջ տիրապետող կարծիքի համաձայն՝ «Ողբք Խորենացւոյն երևին գրեալ նախ քան զպատերազմն Վարդանանց»[101]։ Եթե մի փոքր ավելի մասնավորենք այս միտքը, ապա պիտի ընդունենք, որ «440-ին կամ 441-ին» երանելի ուսուցիչների մահվան «ցավի ու վշտի թարմ տպավորության տակ»[102] է գրվել Խորենացու հիշյալ աշխատանքը։ Առաջարկվող թվականը նորովի քննելու ու նոր փաստերով հավաստելու կամ մերժելու անհրաժեշտություն չենք տեսնում։ Եթե վիճելի է «Ողբի» գրության առաջարկվող ժամանակը, ապա Նյուսացու մեզ հետաքրքրող ճառի թարգմանությունը պիտի տեղավորել մինչև 480-ական թվականները, այսինքն Խորենացու Հայոց պատմության ստեղծման ժամանակահատվածում, որը ավելի հաստատուն է և մեծ տեղաշարժերի անհրաժեշտություն չի պարտադրում։

Նյուսացու քննվող ճառի հայերեն թարգմանությունը Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու («Վեցաւրեայ», «Ի Բասիլիոս Կեսարացի») երկերի թարգմանությունների հետ կրկին հաստատում է այն պնդումը, թե մեզանում, այսպես կոչված դասական թարգմանություններին զուգընթաց կատարվել են նաև հունաբան թարգմանություններ, և որ հունաբան թարգմանությունները առանձնացնելու և անպայման մի քանի տասնամյակով նո՛ւ տանելու անհրաժեշտություն չենք տեսնում։ Ավելին, դասական և հունաբան կոչված թարգմանությունների ոչ քիչ դրվագներ կարելի է ցույց տալ միևնույն երկում։ Այս իմաստով լավ օրինակ է «Վեցաւրեայի» հայերեն թարգմանությունը (V դ. առաջին կես)։ Բնագրի և թարգմանության որոշակի տարբեր հարաբերությունների շատ օրինակներ կան նույն հեղինակի «Պահոց գիրք» անվանված ընթերների ու ճառերի ժողովածուի մեջ։ Նույն ժամանակահատվածում թարգմանված Գր. Նազիանզացու «Ի Բասիլիոս Կեսարացի» երկը հունաբան թարգմանության ուշագրավ օրինակ է։ Հունաբան թարգմանությունների նույն շարքին է պատկանում նաև «Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանական ճառը, որի թարգմանության առանձնահատկություններին անդրադարձանք վերևում։ Համաբնույթ թարգմանությունների օրինակ կա Նյուսացու նաև մյուս գործերում։

---

101 «Քննասէր», 1887, էջ 1։

102 Ն. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 217, համմ. Կ. Պասմաճյան, նշվ. աշխ., էջ 363։

Արդ՝ ինչպես բացատրել այս երևույթը։ Թվում է, հավանական մեկնաբանության երկու եղանակ կա. ա) կամ պիտի ընդունել, որ V դարում մեզանում կային մեկից ավելի թարգմանական գործող դպրոցներ, ուստի և առկա թարգմանությունների լեզվաոճական ու բառապանձային ընդգծված առանձնացումները պայմանավորված են տարբեր դպրոցների ոչ միօրինակ թարգմանական նախասիրություններով։ բ) Կամ էլ կարելի է ենթադրել, որ գրեթե համաժամանակյա այդ թարգմանությունները կատարվել են միևնույն մշակութային հաստատության ոլորտում, սակայն տարբեր ուսումնառություն ստացած ու ոչ միանման գրական ճաշակի տեր թարգմանիչների ձեռքով։ Հիմքեր կան ընդունելու սույն՝ երկրորդ բացատրությունը։

Հայտնի է, որ Սահակի և Մաշտոցի կողմից մեզանում տարվում էր հատուկ «ծրագրավորված» թարգմանական գործունեություն։ Մաշտոցի անմիջական հոգածությամբ աշակերտների մի խումբ հմտանում էր «յասորի դպրութիւնն», մեկ այլ խումբ՝ «ի յունական դպրութիւնն»[103]։ Ավագ և կրտսեր անվանումների տակ պահպանված թարգմանիչ-մատենագիրների երեք տասնյակից ավելի անունների գոյության փաստն ինքնին խոսում է ոչ միայն թարգմանությունների թեմատիկ բազմազանության, այլև դրանց տարառճ լինելու մասին։

դ) «Ի ՍՈՒՐԲ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԷՈԴՈՐՈՍ» ՆԵՐԲՈՂԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ*

Գրիգոր Նյուսացու սույն երկը գիտական բնագրի խորագրում կոչվում է ներբող (ἐγκώμιον)[1]։ Ժանրային այդ անվանումը նույնությամբ պահպանվել է նաև հայերեն թարգմանության մեջ։ Այն նյութով ու բովանդակությամբ համապատասխանում է ներբողի այն տեսակին, որ մասնագիտական գրականության մեջ ընդունված է կոչել դամբանական ճառ կամ գերեզմանական խոսք[2]։

---

[103] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 46։

* Սույն քննության նախնական տարբերակը հոդվածի տեսքով լույս է տեսել «Պատմա-բանասիրական հանդեսում», 1991, № 2, էջ 115-122։

[1] Տե՛ս Gregorii Nysseni Sermones, pars II, Köln, 1990, էջ 61—71, համմա· PG, t. 46, էջ 736—748։

[2] Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 6196 (Ճառընտիր, 1227 թ.), էջ 311բ—315ա։ Ներբողի ժանրի մասին հանդամանալից հետազոտություն ունի բանա-

Գրիգոր Նյուսացին կիրառում է ներբողյալի արժանիքների ընդգծման, բացահայտման այլազան ձևեր, տվյալ պարագայում՝ Թեոդորոսի կյանքի ու գործունեության արժանահիշատակ դրվագների վերհանում: Վկայակոչենք դրանցից մեկը. «Բարեպաշտութեամբ եւ հաւատով, որ ի Քրիստոս յամենայնի պարծելով, ոչ միայն ի ճակատի իւրում գրել զխոստովանութիւնն, եւ ոչ տակաւին գեւ ընտիր գոլով արիութեանն, եւ ոչ անհմուտ մարտի եւ պատերազմի, այլ արիագոյն անձամբ զարաւոր լինէր առ վիշասն զդազարմունս, ոչ թուլակի, ոչ զանգիտելով»[3]: Նույն նպատակին ծառայող մեկ այլ տարբերակ է հարցման միջոցով մեծավորների, անվիճելի հեղինակություն համարվող անունների հետ համագրության եղր որոնելու եղանակը. «Ո՞վ ոք ի թագաւորացն այսպիսի պատուով պատուեալ լինի: Ո՞վ ոք յայնցանեաց, որ գերազանցութեան առ մարդկան երեւեալ, այսպիսի յիշատակաւ փառաւորեցաւ: Ո՞վ ոք ի զարաւորաց... այսպիսի են երջանիկք, իբրեւ զղինուորս զայս...»[4]:

Արժանիքների ընդգծման յուրահատուկ եղանակ է ունկնդիրների հակվածության, ներբողյալին մոտիկից շփվելու, որևէ կերպ առնչվելու ներկանների այլազան դրսևորումների արտացոլումը: Նման դրվագներից մեկում կարդում ենք. «Եթէ ոք երբէք այնպիսի բարի հանդիպմամբ շնորհեցէ զիշխանութիւնն, որպիսի ինչ բազմափափագ եւ ձիրն ըզձից վերագոյն գտին զայսոսիկ, որ զփորձ են առեալ եւ նովին ցանկութեամբ զծարաւ լցեալ: Քանզի իբրեւ զմարմին կենդանի եւ ծաղկեալ զնա տեսողքն համբուրեալ լինին աչաւք, բերանաւք, լսելեաւք, որ յամենայն զգայութիւնան հասուցանելով...»[5]:

Կերպավորման գործում էական տեղ է հատկացվում գեղարվեստական արտահայտչամիջոցների ողջ համակարգի լիարժեք դրսևորման հնարավորությանը: Գրիգոր Նյուսացու դամբանական ճառում կան ճաշակավոր համեմատությունների բազմաթիվ օրինակներ, հին ու նոր թևավոր արտահայտությունների նպատակադիր կիրառման ուշագրավ դրվագներ, մակդիրների հարկավոր առատության ոչ քիչ թվով օրինակներ: Եվ այդ ամենը բծախնդիր հոգացողությամբ ծառայեցվում է

ներ Ա. Ղազինյանը (տե՛ս Հայ միջնադարյան դրականության ժանրեր, Երևան, 1984, էջ 127—178):

3 Ձեռ. № 6196, էջ 313ա:

4 Նույն տեղում, էջ 312բ:

5 Նույն տեղում, էջ 312բ:

Թեոդորոսի կերպարի ամբողջացմանը, նրա շուրջ հյուսվող պատմության համոզիչ ու ավարտուն տեսք ստանալուն։

Հայոց թարգմանական բազմաժանր գրականության կարևորությունը մեղանում վաղուց է արձանագրվել և նոր փաստարկումների անհրաժեշտություն չկա։ Քանի որ այն նախորդել է մեր ինքնուրույն մատենագրությանը, ապա, բնականաբար, գրավոր մշակույթի համեմատաբար հին շերտ է ներկայացնում և իբրև այդպիսին ենթադրում է որոշակի գրական առնչակցություն նոր ձևավորվող ազգային գրականության ժանրային ոլորտներում։

Նոր հայկազյան բառարանի կազմողները (այսուհետև՝ ՆՀԲ) ձեռքի տակ ունեցել են Գրիգոր Նյուսացու մեկ տասնյակ անուն գործերի հայերեն թարգմանություններ և օգտվել են դրանցից։ Թարգմանական այդ հուշարձանների կարևորության, դրանց բառագանձի ինքնատիպության մասին կարող է որոշակի պատկերացում տալ հետևյալ իրողությունը. մի քանի տասնյակի են հասնում այն օրինակ-հղումները, երբ բառարանագիրներին ծանոթ երկու վկայություններից մեկը, հաճախ հնագույնը, Գրիգոր Նյուսացու գործերից է քաղվում։ Առավել արձանագրելի երևույթ է մեկական օրինակներով հայտնի բառաբացատրությունների խնդիրը. ՆՀԲ միայն Ա տառի օրինակների մի մասի համեմատությունը ցույց է տալիս, որ շուրջ երեք տասնյակ եզակի կիրառությամբ հին հայերեն բառեր կան, որոնք ավանդվել են բուզանդական մատենագրի բացառապես «Յաղագս Երդոյ երդոցս», «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն», «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» և «Վարք երանելոյն Գրիգորի Սքանչելագործի» երկերի հայերեն թարգմանությամբ։ Այդպիսիք են. անկատարելապէս, անկարաբար, անկողմանումն, անկուած, անհաստ, անհաւասարելի, անհաւատարիմ առնել, անմեծութիւն, անուանական, անուժագոյն, անպնդաբար, անցանակ, ապրասամ (ապրասադ), աղանդական, աղջանջ, ամենախահութիւն, ամենապղծութիւն, ամուսնաբար, այսրանդրաբերութիւն, այրապատկեր, անգիտակութիւն, անգործագոյն, անգունութիւն, անդրաբերութիւն, անդրոյթք, աներկչոտութիւն, անզմտաւածելի, անժողով, անկամաւոր և այլն։

Ամենևին չխորանալով թվարկված բառերի՝ հունարեն նախօրինակների հետ ունեցած բառակազմական առնչակցությունների խնդիրների մեջ, պիտի արձանագրել, որ դրանք առաջացել են թարգմանական հողի վրա, Գրիգոր Նյուսացու ճառերի թարգմանիչների ձեռքով ու հունարեն նախօրինակների ակնհայտ նմանությամբ։

«Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» դամբանական ճառի հայերեն թարգմանությունն էլ իր հերթին որոշակի հետաքրքրություն կարող է ներկայացնել բառագանձի ինքնատիպության իմաստով: Նշված հուշարձանում ևս կան թարգմանության ճանապարհով առաջացած բառեր և արտահայտություններ, բառակապակցությունների նոր ու ինքնատիպ ձևեր: Պիտի նկատել, որ այս կարգի ընթերցումների առատությունն առաջին հերթին պայմանավորված է բնագրին բառացի հետևելու, հունարեն բառերն ու բառակապակցությունները նույն երանգով հայերենի փոխանցելու թարգմանչի ցանկությամբ:

Համեմատությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում հայերենի թարգմանիչը իրոք կարող էր բնագրի այս կամ այն բառ-տերմինի համար ընտրել համեմատաբար պարզ, այլուր վկայված տարբերակ: Բայց նույն բնագրում քիչ չեն նաև այն օրինակները, երբ թարգմանիչը այդպես չի վարվել: Նման դեպքերում, չնչին բացառությամբ, հունարեն բնագրի համապատասխան բառը, հաճախ նաև արտահայտությունը սակավ գործածական է նաև հունարենում (օրինակ՝ πολυπόθητος[6], φλογοτρόφον[7], γλωττοφόρος[8], νεόλεκτος[9] և նման մի շարք բառեր): Պարզվում է, որ կարևոր դեր պիտի վերապահել հունարեն նախօրինակի լեզվի բարդությանը, նեղիմաստ պատմափիլիսոփայական տերմինների առատությանը, այն փաստին, որ կան բառեր, որոնք թերևս եզակի վկայվածության կամ, չի բացառվում, դժվար բացատրելիության պատճառով լիովին հասու չեն եղել թարգմանչին:

«Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» երկի հայերեն թարգմանության տեքստում բառագանձի իմաստով ուշադրության արժանի օրինակները կարելի է բաժանել մի քանի խմբի:

Բառեր, որոնք անծանոթ են ՆՀԲ-ին, այլուր ավանդված չեն, ուստի և բացատրելի են սույն ճառում պահպանված եզակի կիրառությամբ:

ա) «Այսպիսի անզգայիւս առուեստասխրութեամբս սխրացոյց զաչս»[10] մաթի հունարեն համապատասխանությունում ասված է. «τοῖς αἰσθητοῖς οὕτω φιλοτεχνῆμασιν ἐνευπαθήσας τὴν ὄψιν»[11]: Մինչև բուն ասե-

---

[6] Sermones, էջ 63_{21}:
[7] Sermones, էջ 63_{7}:
[8] Sermones, էջ 63_{10}:
[9] Sermones, էջ 64_{18}:
[10] Ձեռ. № 6196, էջ 321բ:
[11] Sermones, էջ 63_{15}:

լիքին անցնելը, մի քանի խոսք աւգզայիւս ընթերցման մասին: Ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ այն պահպանվել է միայն Վենետիկի հավաքածոյի № 202 (=512) գրչագրում, մեր ձեռքի տակ եղած մյուս ձեռագիր աղբյուրներում այն առհասարակ բացակայում է: Միաժամանակ պարզվում է, որ նշված բառի դիմաց բնագրում ունենք αἰσθητος (αἰσθητός), որը նշանակում է զգայական, զգայելի, զգալեաւք: Հայերեն թարգմանության ժխտական տարբերակը, որը տվյալ պարագայում բնավ չի արդարանում, հավանաբար բնագրի αἰσθητός-ը անαἰσθητός ընթերցելու արդյունք է:

ՆՀԲ-ն «սխրացուցանեմ» բառի տակ վկայակոչում է այս նույն միտքը և միաժամանակ առուեստասխրութեամբս բառը ընթերցում առուեստասիրութեամբ[12]: Սակայն նման միջամտությունը (եթե այն տպագրական վրիպակ չէ) Գրիգոր Նյուսացու ճառի գոնե այս հատվածի համար վերապահելի է, բացատրության այլ ուղի փնտրելն անխմաստ է, որովհետև բառիս կիրառության ուրիշ օրինակ, դատելով համաբարբառային գրականության առկա հրատարակություններից, ավանդված չէ: Առուեստասխրութեամբ ընթերցումը բնագրի φιλοτέχνημα **բառը** թարգմանելու ճանապարհով է առաջացել (նշանակում է՝ արվեստավոր կառույց, նաև՝ արվեստի գործ)[13]: Համապատասխանության այս փաստից բացի՝ առուեստասխրութեամբ բառի գոյությունը պիտի արձանագրել նաև այն պատճառով, որ այդ նույն հատվածում Գրիգոր Նյուսացին պատմում է Թեոդորոսի սխրաճալու (=աքանչանալ, հրաշանալ, հիանալ)[14], կերպագրությամբ «առ որմ խոսելու» նրա կարողության մասին, որը և հայերենի թարգմանչին հնարավորություն է տվել հունարենի նմանությամբ ստեղծելու առուեստասխրութիւն բառը:

բ) «Քանզի իբրեւ նստաւ չարաբաստն այն ի չար դատարանն՝ դատավորն եւ դատապետն ի միասին գոլով...»[15] նախադասությունը թարգմանությունն է հունարեն հետևյալ հատվածի. σὸ δαίμων αὐτῶν πονηρὸν δικ αστήριον καὶ ἡγεμὼν καὶ **ταξίαρχος** εἰς τοῦτο συνελθόντες»[16]: Բնագիր-թարգմանություն համադրությունից պարզվում է, որ դատա-

---

[12] *Տե՛ս* ՆՀԲ, *Բ, 718:* Բառարանագիրները աւգզայիւս-ը նույն բացատրության առիթով փակագծում ընթերցում են զգալեօք:

[13] Древнегреческо-русский словарь, том. II. М., 1958, էջ *1734 (այսուհետև՝* ДРС):

[14] *ՆՀԲ, Բ, 718:*

[15] *Ձեռ. № 6196, էջ 313ա:*

[16] Sermones, *էջ* 65_{15-16}:

պետ-ը հունարեն ταξίαρχος -ի նմանությամբ կազմված բառ է (максuарх, командир)[17]: Հայերենի թարգմանիչը բնագրի հետևությամբ նույն հրամանատար, վերակացու ոչ սովորական իմաստներն է տեսնում դատապետ բառի սույն կիրառության մեջ:

Գրիգոր Նյուսացու սույն ճառի հայերեն թարգմանությունում կան մեկ տասնյակից ավելի բառեր, որոնք առաջացել են հունարեն նախօրինակը պատճենելու, վերջինիս իմաստը հայերենի փոխանցելու տարբերակով: Այդ բառերի բացատրության միակ աղբյուրը, դատելով ՆՀԲ-ի հղումներից, մնում է «Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» ճառի թարգմանությունը[18]: Ստորև ներկայացնում ենք այդ կարգի մի խումբ բառեր իրենց հունարեն համապատասխան օրինակներով.

ամբոխաբեր (էջ 314բ)—λεωφόρος (էջ 70_4)
անյանգապէս[19] (էջ 314բ)—ἄληκτον (էջ 70_2)
արաւրադիր (էջ 311բ)—ἀροτήρ (էջ 61_{10})
բազմափափագ (էջ 312բ)— πολυπόθητος (էջ 63_{21})
բոցասնոյց (էջ 312ա)—φλογοτρόφον (էջ 63_7)
Թուլակի (էջ 313ա)—δειλός (էջ 65_{14})
լեզուադպեաց (էջ 312ա)—γλωττοφόρος (էջ 63_{10})
մարմնավաճառ (էջ 314ա)—κρεωπώλης (էջ 69_2)
նորակարգ (էջ 312բ)— νεόλεκτος (էջ 64_{18})
տարափառութիւն (էջ 314ա)— ἀδοξία (էջ 68_7)
տղայտեսակ (էջ 313բ)—νήπιο· (էջ 66_{21})
քաջահանդէպ (էջ 313ա)— εὐστοχος (էջ 66_4):

Հայերենի թարգմանիչը հունարեն այս բառերի բուն իմաստին, հիմնական նշանակություններին հետամուտ լինելու պարագայում շատ

---

17 Տե՛ս ДРС, II, 1602:

18 Անեռեակ, առասագուրիւն, արիագունին, բաղկացուրիւն, բանապանոյճ, բացագործել, գաղատոս, կերպազգուրիւն, չարաբաստ, խաչապտուղ, Թեղի և նման տասնյակ բառերի բացատրության ժամանակ ՆՀԲ-ի օրինակներից մեկը, հաճախ առավել հինը քաղվել է Գրիգոր Նյուսացու սույն ճառից:

19 № 6196 գրչագրում պահպանվել է գրեթե նույնիմաստ անյագապէս ընթերցումը, որը բառարանագիրները վերընթերցում են անյանգապէս և իբրև բացատրության օրինակ մասնակի միջամտություններով վկայակոչում այս նույն հատվածը: Առաջադրված տարբերակի օգտին է խոսում նաև բնագիրը (ἀληκτον անդադար, անդուլ): Տիքստի անգրաւ (=անաւարտ, անեղը, անվախճան, անսպառ, անբաւ) հարադիրը ևս հուշում է, որ անյանգապէս-ը առավել ճիշտ է արտացոլում հեղինակի ասելիքը:

դեպքերում, թերևս, կատեղծեր կամ կնախընտրեր դրանց առավել հասկանալի ու հայ մատենագրության մեջ վաղուց տարածում գտած համարժեքներ։ Բայց քանի որ նա հիմնականում առաջնորդվել է բառերի ու արտահայտությունների արտաքին կառուցվածքային, առաջին հայացքից հիմնական թվացող նշանակությամբ, ապա արդյունքում առաջացել են ոչ սովորական, նշված եղակի կիրառությամբ ընթերցվող ու բացատրվող մի շարք բառեր։ Այսպես՝ հունարենում «λεωφόρος»-ը նշանակում է մեծ ճանապարհ[20], ուստի թարգմանիչը պիտի նախընտրեր ճանապարհ, ճամփայ գրաբարում հայտնի, կիրառության հնագույն օրինակներ ունեցող բառերից մեկը կամ մյուսը։ Մինչդեռ աչքի առաջ ունենալով հունարեն նախօրինակի ենթիմաստները, կազմել է ամբոխաբեր բառը, որը այլուր, նախօրինակից անջատ իրավացիորեն կարող է արհեստական ու սարքովի թվալ։ Տվյալ պարագայում խոսքը Թեոդորոսի հիշատակը հավերժացնող «զմրջեանցն բերելով զնմանութիւն»[21] ամբոխի անվերջ հոսքի մասին է։

Վերոբերյալ ցանկում մարմնավաճառ բառի միակ վկայությունը տվյալ կիրառության օրինակն է։ Հիմքը այս դեպքում հունարեն κρεοπόλης բառն է։ Հայերենի թարգմանիչը ինչ-ինչ պատճառով, վերանալով բառիս ավանդված մսավաճառ, մսագործ[22] իմաստներից, այն վերարատդրել է մարմնավաճառ նյութական նշանակությամբ։ Պիտի նկատել, որ մսավաճառ, մսագործ բառերի և դրանցով կազմված բարդությունների կիրառության օրինակներ կան մեր միջնադարյան մատենագրական հուշարձաններում և ցանկության դեպքում Գրիգոր Նյուսացու թարգմանիչը կարող էր դիմել դրանց օգնությանը։

Նույնպիսի բացատրությամբ պիտի օժտել նաև տղայատեսակ կիրառության մեր ունեցած վկայությունը։ Հունարեն νήπιος հիմքը նշանակում է դեռատի, մանկամարդ[23]։ Հունարենին համարժեք մանուկ, մանչ, աղա բառերի ոչ քիչ թվով հին օրինակներ կան ավանդված, որոնց հաղիվ թե անհաղորդ լիներ Գրիգոր Նյուսացու ճառի թարգմանիչը։ Այդուհանդերձ՝ առաջադրվել է տղայատեսակ սևեփական ընթերցումը, որը չունի կիրառության այլուր պահպանված որևէ տարբերակ։

Անհրաժեշտության դեպքում հնարավոր է համապատասխան մեկնաբանությամբ օժտել վերոբերյալ և համաբնույթ բառերից յուրաքան-

---

[20] ԴՐՀ, I, *1023*։
[21] *Ձեռ. № 6196, էջ 314բ*։
[22] *Տե՛ս* ԴՐՀ, I, *981*։
[23] *Տե՛ս* ԴՐՀ, I, *1133*։

չյուրը։ Սակայն դրա հարկը չկա, որովհետև առաջադրված բացատրությունները բավարար պատկերացում կարող են տալ թարգմանչի բառընտրության և առհասարակ արժարծվող երևույթի մասին։

Առաջադրված ցանկը և դրանից դուրս մնացած ոչ քիչ թվով համաբնույթ բառ-ընթերցումների առկայությունը «Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» ճառի քննվող թարգմանությունում հնարավորություն են տալիս մտածելու, որ թարգմանիչը որոշակի ծրագրի շրջանակներում իրացնում է շատ ավելի դժվար խնդիր. նա հունարեն նախօրինակի հենքի վրա, հունարենի բառակազմական սկզբունքներին հետևելով, ըստեղծում է նկարագրական թարգմանություն-տարբերակ։ Գիտական գրականության մեջ նման թարգմանությունները ժամանակին որակվել են նյութական տերմինով։ Բնավ չնույնացնելով սույն գրական երկի հայերեն թարգմանությունը նյութական կոչված թարգմանությունների հետ (տարբերակիչ գծերը բավական շատ են), պարզապես պիտի արձանագրել, որ այս և նյութական հռչակված թարգմանությունների միջև կան որոշակի ընդհանրական եզրեր։

«Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» ճառի հայերեն թարգմանության բնույթի, լեզվի ու ոճի մասին մեր պատկերացումները հնարավորին չափ ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրանում պահպանված դարձվածներին ու բառակապակցություններին։ Համեմատությունը ցույց է տալիս, որ թարգմանության առումով որոշակի դժվարություններ ունեցող այդ ոճական միավորները ևս առաջացել են հունարենի հենքի վրա՝ նախօրինակի իմաստային ձևերն ու գեղարվեստական արտահայտչամիջոցները պահպանելու որոշակի միտումով։ Այդ բառակապակցություններն առաջին ընթերցմամբ ոչ միայն անսովոր են ու անբարեհունչ, այլև խորթ ու անհարազատ են թվում հին հայերենի բառ ու բանի շրջանակում։ Ստորև ներկայացնում ենք այդ արտահայտություններից մի քանիսը, որոնք միաժամանակ կարող են պատկերացում տալ հեղինակի ոճական ընկալումների, պատկերավոր արտահայտությունների ու մակդիր-համեմատությունների եղանակով կերպավորման ունեցած փորձի մասին.

անեռեւելի բարեկամ (էջ 314բ)— ἀόρατος φίλος (էջ 70_{14-15})
անզարհուրելի կամաւք (էջ 313ա) — ἀκαταπλήκτῳ τῇ γνώμῃ (էջ 66_{4})
անհմուտ մարտ (էջ 313ա)— ἄπειρος πολέμου (էջ 65_{12})
առասպելեալ մաւր (էջ 313բ)— μυθευομένῃ μητρὶ (էջ 67_{12})
դատապարտող դատակնիք (էջ 314բ)— κατακρίνουσα ψῆφος (էջ69_{18})

զբարբարոսական մրրիկն (էջ 311բ)—τὴν βαρβαρικὴν ζάλην (էջ 61$_{15}$)
զբոցասնոյցն... զհնոցն (էջ 312ա)—φλογοτρόφον...κάμινον (էջ 63$_{7-8}$)
զմթացեալ ծիրանիսն (էջ 314ա)—σκοτεινὴν πορφύραν (էջ 68$_{21}$)
զտանջողական փայտից (էջ 314ա)— βασανιστηρίου ξύλου (էջ 69$_{6}$)
իգական աստուածուհի խոստովանելով (էջ 313բ)—θήλειαν ὁμολογῶν θεόν (էջ 66$_{22}$)
իշխանական վստահութիւնս (էջ 313բ)—ἄρχοντος θάρσος (էջ 67$_{26}$)
հեղգային տարակուսելով (էջ 313ա)—ἐπεῖχον ἠπορημένοι (էջ 66$_{16}$)
մակերեւութեանն հանգստի (էջ 312բ)—τῇ ἐπιφανίᾳ τῆς ἀναπαύσεως (էջ 63$_{18}$)
յանձնառական աւթեան (էջ 314բ)—ἀνεκτὸν καταγώγιον (էջ 70$_{1}$)
յատակս գետնոցս (էջ 312բ)— πατούμενον ἔδαφος (էջ 63$_{14}$)
յարիական ճակատամարտութեանն (էջ 313բ)— ἀνδρικὴν πρᾶξιν (էջ 67$_{10}$)
սպառազինական ընտրութիւն (էջ 313ա)— ὁπλιτικοὺς καταλόγους (էջ 65$_{4}$)
ստորանկեալ դողութեամբ (էջ 313ա)— προσκυνεῖς κατὰ τὸ δοκοῦν (էջ 60$_{1-2}$)
տարեւորական տաւնիք (էջ 314բ)—ἐνιαυσιαίοις ἑορταῖς (էջ 70$_{2}$)
ցաւքն հրոյն (էջ 314բ)—πυρὸς ἀλγηδόνι (էջ 70$_{17-18}$)։

Թարգմանչի հիմնական հոգացողությունը եղել է հնարավորության սահմաններում ճշգրիտ՝ բառ-բառի, կապակցությունը-կապակցության տեսքով հայերենի փոխանցել բնագիրը, չհամահարթել հեղինակի ոճը՝ հարազատ մնալով բնագրի անգամ առանձին տարառճ դրսևորումների նկատմամբ։ Բնագրի առանձին այլառճ դրվագները ոչ միայն չեն համահարթվել, այլև նույն երանգով ու բնագրային ոչ միօրինակությամբ փոխանցվել են հայերենի։ Իբրև ասվածի վկայություն կարելի է հիշատակել տողատվելու, չափածոյի վերածվելու հնարավորությամբ օժտված հունարենի այն հատվածները, որոնք նույն հաջողությամբ տողատվում, հանգավորվում են նաև հայերին տեքստում։ Այսպես, օրինակ, խոսելով Թեոդորոսի «ի գեղեցիկ եւ յերանելի առ Աստուած» ճանապարհվելու մասին, Գրիգոր Նյուսացին անդրադառնում է նաև հանգուցյալի թողած հիշատակի խնդրին, որը, եթե փորձենք տողատել, կունենա հետևյալ տեսքը.

գիշատակ ջանի մրցանացն
եթող ի վարդապետութիւն՝
ժողովուրդք հաւաքելով,
զնկեղեցիս խրատելով,

դհրհշտակ խաղաղութեան կոչելով,
առ մեզ հայցելով
յԱստուծոյ զպատշաճն եւ զաւգուտն[24]։

Թարգմանիչը ճիշտ նույն հետևողականությամբ, գրեթե առանց բառ տեղաշարժելու, հայերենի է փոխանցում հունարեն նախօրինակի բոլոր բանաձևային ձևակերպումներն ու թևավոր արտահայտությունները։ Ահա դրանցից մի քանիսը իրենց հունարեն. համապատասխանություններով։

ա) Թարգմ. «ի փոքրագունից զմեծագոյնն ուսիր, ի ստուերից զնախատիպն իմասջիր»[25]։

Բնագիր. «ἐκ τῶν μικρῶν τὰ μεγάλα κατάμικθε, ἐκ τῶν σκιῶν τὰ ἀρχέτυπα νόησον»[26]։

բ) Թարգմ. «Սիրելի է իւրաքանչիւրն յատուկն»[27]։

Բնագիր. «φίλον γὰρ ἑκάστῳ τὸ ἴδιον»[28]։

Թարգմ. «Զի բարի է ինձ ի տան Աստուծոյ յանկեալ լինել առաւել քան զբնակել ի յարկս մեղաւորաց...»[29]։

Բնագիր. «Παραρριπτεῖσθαι καλὸν ἐν τῷ ὄικῳ τοῦ θεοῦ μᾶλλον ἢ οἰκεῖν ἐν σκηνώμασιν ἁμαρτωλῶν»[30]։

Գրիգոր Նյուսացու քննվող ճառի պահպանված հայերեն թարգմանության և բնագրի համեմատությունը հնարավորություն է տալիս արծարծելու նաև բնագիր-թարգմանության մասնակի անհամապատասխանության առանձին դեպքեր[31]*, մեկ-երկու պարագայում նաև հայերեն թարգմանության մեջ բառական ոչ ճիշտ ընթերցման, աղավաղման օրինակներ։*

Քահանայապետության արժանավորության հարցին անդրադառնալիս Թեոդորոսի պատասխան խոսքում կարդում ենք. «Զի որ առ վատթարագոյնն մեծն է եւ առաջին կարգեալ նա եղկելի եւ թշուառական՝

---

[24] *Ձեռ. № 6196, էջ 314բ, հմմտ.* Sermones, *էջ* 69_{21-24}։

[25] *Նույն տեղում, էջ 312բ։*

[26] Sermones, *էջ* 64_{13-14}։

[27] *Ձեռ. № 6196, էջ 312բ։*

[28] Sermones, *էջ* 64_{21-22}։

[29] *Ձեռ. № 6196, էջ 314ա։*

[30] Sermones, *էջ* 68_{17-18}։

[31] *Այսպես, օրինակ, իրրև թարգմանության և բնագրի ոչ լիարժեք համապատասխանության օրինակ կարելի է վկայակոչել «Այլ նա հաստատուն դիմաւք...» (էջ 313ա) պարբերության երկրորդ կեսը (հմմտ.* Sermones, *էջ* 66_{8-15})։ *Կան այլ բնույթի անհամապատասխանության նշմարներ ևս։*

որպէս առ իրասն անիրաւագոյնն եւ առ սպանողսն մանաւանդ կարծրագոյնն»[32]։ Դժվար չէ կռահել, որ ընդգծված արտահայտության մասում խաթարվածության հետք կա. խոսքը առ իրասն բնթերցման որոշակի անհամապատասխանության մասին է ասվել մտքի շրջանակներում։ Գրչագրերը այլ ընթերցման որևէ տարբերակ չեն պահպանել։ Սակայն Վենետիկի հավաքածոյի № 202 (=17) ձեռագրում հետագայում այլ ձեռքով ու գրչությամբ նշված կապակցության առ-ը ան կարդալու ղգուշավոր փորձ է արվել (չի չնչվել առ-ը, այլ վերևում ավելացվել է ան)։ Նման սրբագրության միտքը հաստատվում է համապատասխան հատվածի բնագրով. առ իրասն անիրաւագոյնն կապակցության դիմաց հունարենում առկա է «τοῖς ἀδίκοις ὁ ἀδικώτερος»[33]։ Այլևս պարզ է, որ անհամապատասխանությունը հունարեն ἀδίκοις (=անիրաւ[34]) բառի դիմաց առ իրասն ընթերցումն է, որը հունարենի նմանությամբ և Վենետիկի հավաքածոյի նշված ձեռագրի օտար ձեռքի միջամտության հետևությամբ պիտի վերընթերցել անիրասն։

Այսպիսով, Գրիգոր Նյուսացու «Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» դամբանական ճառի թարգմանության վերոբերյալ քննությունը հնարավորություն է տալիս կատարելու որոշ եզրակացություններ.

ա) Թեոդորոսին նվիրված սույն երկը նյութով ու բովանդակությամբ, կառուցվածքով ու ժանրով համապատասխանում է ներբողի այն տեսակին, որը կոչվում է դամբանական ճառ (կառուցվածքային և այժմեական մասնակի շեղումները հասկանալի են և հատուկ քննության նյութ չեն կարող դառնալ)։ Ի տարբերություն նույն հեղինակի նույնանյութ «Ի Մելիտոս եպիսկոպոս...» երկի, սույն աշխատանքը թե՛ բնագրում և թե՛ հայերեն թարգմանությունում պահպանել է ներբող անվանումը։

բ) «Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» ճառի հայերեն թարգմանության լեզուն ընդհանուր առմամբ հունաբան հայերենն է։ Կան բազմաթիվ բառեր, արտահայտություններ ու ոճական միավորներ, որոնք հասկանալի ու բացատրելի են դառնում հիմնականում հունարեն նախօրինակների համադրության պայմաններում։ Բառերի ու արտահայտությունների այդ խումբը էական մասով անծանոթ է ՆՀԲ-ին (և առհասարակ հայ բառարանագրությանը), իսկ եթե ծանոթ է, ապա միայն սույն հուշարձանի հայերեն թարգմանությամբ։

---

[32] Ձեռ. № 6196, էջ 314ա։

[33] Sermones, էջ 68_{12-13}։

[34] ДРС, I, 35։

դ) Նյութական կոչվող թարգմանության տպավորություն թողնող այս հուշարձանի լեզվաոճական ինքնատիպ վիճակը մասամբ էլ պայմանավորված է բնագրի, բուն նյութի պատմափիլիսոփայական ատաղձով, հեղինակային բառագանձի բարդությամբ:

դ) Բնագրին հարազատ մնալու թարգմանչի հետևողականությունը պահպանվել է ամենուր: Այդ իսկ պատճառով հունարենում եղած որոշ տարաոճության հեղինակային երանգները նույնությամբ կան նաև հայերեն թարգմանության տեքստում. չափածոյի հնարավորությամբ օժտված հատվածները, բանաձևային ձևակերպումները, թևավոր արտահայտություններն ու մակդիրավոր կապակցությունները գրեթե նույնությամբ պահպանվել են նաև հայերեն օրինակում:

ե) Բնագիր-թարգմանության անհամապատասխանության եղած ոճական-շարահյուսական անհարթությունները, ինչպես նաև մեկ-երկու բառական խաթարվածության օրինակները ոչ թե գրչական միջամտության, այլ սովորական վրիպման արդյունք են և որևէ առնչություն չունեն բուն թարգմանության հետ:

ԳԼՈՒԽ Դ

ՆՅՈՒՍԱՑՈՒ ՃԱՌԵՐԻՑ ՈՒ ԹՂԹԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԳԱ ՔԱՂՈՒՄՆԵՐԸ (X—XIII ԴԴ.)

ա) «ՅԱՂԱԳՍ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐ

Գրիգոր Նյուսացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների շարքում առանձնանում, ուրույն տեղ է զբաղեցնում «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ Յաղագս Երգոյ երգոց» խորագիրը կրող աշխատությունը: Նյուսացու գրական վաստակի հայերեն թարգմանություններն ամփոփող մի քանի տասնյակ ձեռագրերի համեմատումն ու դասդասումը ցույց են տալիս, որ «Յաղագս կազմութեան մարդոյ» գործից հետո, ձեռագրերի առատությամբ ու հնությամբ աչքի է ընկնում «Յաղագս Երգոյ երգոց» մեկնությունը. միայն Մաշտոցի անվան Մատենադարանում կա տասնութ հիմնականում ամբողջական ընդօրինակություն: Նույն Մատենադարանում է պահվում «Յաղագս Երգոյ երգոցի» 973 թ. Տարոնում գրված երկաթագիր օրինակը: Պահպանվել է գրչի (Պետրոս) հիշատակարանը[1]. «Ի ՆԻԲ (422+551=973) թուականութեանն Հայոց եւ ՉԻԵ Հռոմի թուականութեանն գրեցաւ Մեկնութիւն Երգոյ երգոցս[2] ի գաւառին Տարաւնոյ, ձեռամբ Պետրոսի անարժան գրչի, հրամանաւ հաւր Կիւրակոսի եւ համակամութեամբ եղբարցս, վասն յիշատակի հոգւոց իւրեանց, ի ժամանակի փոխման յաշխարհէ Գրիգորի[3] Մամիկոնենից եպիսկոպոսի: Եւ յետ մահուան նորա բազում շփոթումն

---

1 *Հրատարակությունը տե՛ս* Գ. Ջարբհանալեան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 370,* Գաբեզին Ա. կաթողիկոս, *Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 127—128,* Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, *Ե—ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ61—62:*

2 Գ. Ջարբհանալյան, *նշվ. աշխ., էջ 370՝ Երգոց Երգոյս:*

3 *Նույն տեղում, Հիբ Գրիգորի:*

եւ հակառակութիւն եղեւ վասն ձեռնադրելոյ եպիսկապոս[4]։ Արդ աղաչեմ զամենեսեան զընթերցուղսդ՝ յորժամ ընթեռնուք զլուսաւոր եւ բազմափայլ գիրսս սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ՝ եղբաւր[5] Բարսղի, եւ լուսաւորիք եւ աւգտիք ի սմանէ[6] ընթերցմամբ եւ կամ գրչութեամբ, զստացաւղս[7] սորա՝ հանդերձ եղբարբքս, յաղաւթս չիշեսջիք ի Տէր, եւ Աստուած ձեզ ողորմեսցի իւրում գալստեանն, յորժամ զսուրբս իւր պսակէ փառաւք...»[8]։

«Երեք մեծ կապադովկացիների» գործերի հարյուրավոր ընդօրինակությունների շարքում, փաստորեն, № 2684 գրչագիրը հայագիտության ծանոթ պահպանված հնագույն օրինակն է։ Քիչ չեն նաև Գր. Նյուսացու նշված աշխատանքի հետ կապված միջնադարյան տեղական հետաքրքրությունների ճանապարհին ծնված մեկնությունների, պատճառների ու լուծմունքների ձեռագիր ժողովածուները[9]։ Վերջիններս, չնչին բացառությամբ, ուղեկցվում են գրառաջք կոչված գրական-բանասիրական համառոտ հետազոտություններով, բառերի, արտահայտությունների ու ոչ հաճախադեպ դարձվածների բացատրություններով, ինչպես նաև առաջադիր երկի այս կամ այն ամբողջական դրվագը մեկնելու, որոշակի պարզությամբ օժտելու տվյալ ժանրին հատուկ եղանակներով։ Այդ ամենը, անշուշտ, բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանությամբ շրջանառության գտած գրական վաստակը արժեքավորող մասնագիտական գրառումներ են՝ միանգամայն արժանի պատշաճ ուշադրության։

Գրիգոր Նյուսացու «Յաղագս Երգոյ երգոց» աշխատանքը կոչված էր առաջին հերթին մեկնելու Ս. Գրքի «Երգ երգոցի» բարդ, դժվարըմբռնելի, հաճախ այլաբանորեն ասված, որոշակի դժվարություն ներկայացնող այն հատվածները, որոնք հասու չէին ընթերցող լայն շրջանների համար։ Նման աշխատանքը, հարկավ, առաջին հերթին պահանջում էր Աստվածաշնչի խոր իմացություն, նրա գրքերի շուրջ ստեղծված

---

4 Գարեգին Ա. կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 127՝ եպիսկոպոսի։

5 Գ. Ջարբհանալյան, նշվ. աշխ., էջ 370՝ եղբաւրս։

6 Գ. Ջարբհանալյան, նշվ. աշխ., էջ 370՝ նմանէ։

7 Գարեգին Ա. կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 128՝ զստացաւղ։

8 Ձեռ. № 2684, էջ 240ա—բ։

9 Տե՛ս ձեռ. № 1897, էջ 109բ—112բ, № 4150, էջ 44ա—45ա, № 1981, էջ 99ա—133բ, № 6481, էջ 84ա—բ, № 1480, էջ 380ա—384բ, № 5193, էջ 40ա—69բ, №4765, էջ 69բ—70ա, № 47, էջ 285բ, № 2851, էջ 83բ—84ա, № 621, էջ 21ա—27բ, № 4765, էջ 69բ—70ա և այլն։

մեկնողական հարուստ գրականության պատշաճ ծանոթություն և առհասարակ սուրբգրական գրականության լավատեղյակություն։

Բյուզանդական մատենագրի սույն երկի և Ս. Գրքի առնչակցության իմաստով անհրաժեշտ է նկատել, որ, ինչպես ցույց է տալիս համեմատությունը, ընդհանրության օրինակները հիմնականում աստվածաշնչական հայտնի արտահայտությունների, առանձին բանաձևային ձևակերպումների հետ են կապվում։ Մինչդեռ Գր. Նյուսացու աշխատանքում եղած բացատրությունները վերանում են այդ ամենից, ընդարձակվում ու ծավալվում են ենթադրվող մեկնաբանության ոլորտից դուրս և հաճախ վերածվում ավանդական հարս ու փեսայի (եկեղեցի-Քրիստոս) փոխաբերական թեմայի շուրջ հյուսված բաց ու ընդարձակ ղրույցի։ Եվ դա ոչ թե ստեղծագործական բուռն տարերքին տուրք տալու, ասելիքին ինքնաբերաբար տրվելու արդյունք է, այլ Ս. Գրոց բազմաթիվ ու այլազան փոխաբերական դրվագների բացահայտում, ծրագրավորված նոր ու ինքնատիպ մեկնաբանություն։ Դրանում համոզվելու համար պիտի հետևել Գր. Նյուսացու մի բացատրությանը, որը անմիջական աղերս ունի առաջադրված մեկնաբանության հետ։ Ս. Գրքից վերցված «Զի ահա ամեն էանց, անձրեւն հեռացաւ...»[10] աստվածաշնչական քաղումից հետո նա գրում է. «Բայց պարտ եւ արժան վարկանիմ ոչ կալ մնալ մտաց ի մանրամասնաբար յայտոցիկ նկարագրութիւնսն, այլ սոքաւք յառաջանալ ի յայտնեալ ի ձեռն բանիցս ի խորհուրդն, որպէս զի յայտնել դգանձս մտացն զծածկեալսն ի բանսն»[11]։ Սույն բացատրությունից միաժամանակ երևում է, որ Ս. Գրքի նկարագրությունների շրջանակներից դուրս գալու հեղինակի ձգտումը, առաջադիր մտքի խորհուրդը բացելու, յուրովի մեկնաբանելու Գր. Նյուսացու հոգածությունը ամենևին էլ ինքնանպատակ չէ։

Նույնաբնույթ բացատրությունների ու հիմնավորումների կարելի է հանդիպել նաև Գրիգոր Նյուսացու աշխատանքի առիթով գրված հայերեն մեկնողական բնույթի մի շարք գործերում։ Այսպես, օրինակ, Դավիթ Քոբայրեցու (XII դ.) հեղինակությամբ հայտնի մի պատճառի[12] գրառաջքում կարդում ենք. «Այսպես լուաք ի պատմող վարդապետաց, թէ Գրիգոր ոմն առաքինի, փակակալ եկեղեցւոյն Կեսարու, առանձնա-

---

[10] Համազասպ Ոսկեան, Երգ երգոց առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը, Վիեննա, 1924, էջ 50, Բ, 11 (այսուհետև՝ Երգ երգոց)։

[11] Ձեռ. № 1013, էջ 71ա։

[12] Յաղագս երգոյ երգոց՝ տեսութիւն փաստարանութեան, ի նոյն Դաւիթ ասացեալ (տե՛ս ձեռ. № 1879, էջ 230բ—232ա)։

պէս խնդրեալ ի Գրիգորէ Նիւսացոյ զվերլուծական մեկնութիւն մարմնատեսիլ բանիցն Սողոմոնի, որոյ անուն՝ Երգոյ երգ և աւրհնութիւն աւրհնութեանց։ Ասի թէ Գրիգորն այն ընթերցեալ զգեղայյարմար մեկնութիւն ժողովողին և կարի հաւանեալ։ Վասն այնորիկ հարկաւորէ զԳրիգոր Նիւսացի, նախ բանիւ և ապա գրով ազաչել, զի և այսմ սրատես դիպաղաբար վերլուծումն ի յանդիմանութիւն, որոց ոչ գիտեն զմիտս աստուածային բանիցս, և նորին աղագաւ խոտան համարին զվերադրեալսն վասն այլակերպ բանիցն, որ ի սմա ծածկեալ է»[13]։

Սույն մտքի առաջին մասը, ինչպես տեսնում ենք, վերաբերում է Դավիթ Քոբայրեցու պատճառի ստեղծագործական պատմությանը։ Հաջորդ կետի միջոցով հեղինակը հիմնավորում է մեկնության անհրաժեշտությունը նրանց համար, «որոց ոչ գիտեն զմիտս աստուածային բանիցս», որովհետև այլաբանորեն ասված ենթատեքստը, «որ ի սմա ծածկեալ է», չի ընկալվում սովորական ընթերցմամբ, ուստի և մեկնության անհրաժեշտությունը ինքնին հասկանալի է։

«Երգ երգոց» մեկնությունը կապված է եղել ոչ քիչ թվով դժվարությունների հետ։ Նման աշխատանքի լրջությունն ու բարդությունը առավել տեսանելի են եղել կատարողի՝ Գրիգոր Նարեկացու համար։ Այդ է վկայում մեկնաբանի՝ Գրիգոր Արծրունուն, հասցեագրած Նարեկացու հետևյալ բացատրությունը. «Հրաման քո աստուածասէր թագաւորութեանդ, ով տէր արքայ, բուռն և աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր՝ մեկնել զերգ երգոց, այնոցիկ էր, որ ըստ Սողոմոնին է հոգւով։ Զի եթէ Նիւսացին Գրիգոր, որ կատարեալ վարդապետ էր և հոգիաբնակ, ի բուն կատարմանէ մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գտանի, ո՞ր չափ ևս առաւել ես, որ ամենայնիւ տգէտ եմ և ունայն ի հոգւոյն շնորհաց, ոչ կարացից հետևել մտացն ասացելոց ի Սողոմոնեան հոգւոյն»[14]։ Սույն ուղերձը սեփական կարողությունը ամենահամեստ եղանակով որակելու ընդունված գրական եղանակ լինելուց բացի, ունի նաև որոշակի իրական-փաստական հիմք։ Իրողությունն այն է, որ Գր. Նարեկացին այդ պահին ընդամենը 26 տարեկան էր և

---

13 Ձեռ. № 1879, էջ 230բ—231ա։

14 Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի, էջ 271 (այսուհետև՝ Մեկնութիւն Երգոց երգոյն), հրատարակությունը տե՛ս Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1840, էջ 271—367, հմմտ. Յուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի Մատենադարանին, կազմեց՝ Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 294—295։

բնական է ենթադրել, որ որքան էլ բարձր լիներ նրա ստացած վանական-վարդապետական պատրաստությունը, անուրանալի՝ գրականստեղծագործական բնատուր օժտվածությունը, այդուհանդերձ, գաղտնիք չէ, որ նա չուներ աշխատասիրելու գոնե նվազագույն փորձ։ Միաժամանակ նկատելու է, որ նույն հայոց միջնադարյան գրականության մարզում կան ոչ քիչ թվով օրինակներ, որոնք հնարավորություն են տալիս պնդելու, որ նման ընդգծված կարողության պայմաններում տարիքը վճռորոշ նշանակություն ունենալ չի կարող։

Մինչդեռ Նարեկացու Մեկնության ժամանակի շուրջ կասկած չի կարող լինել, որովհետև գործի ավարտամասում պահպանվել է հեղինակի հիշատակարանը, ուր կա ոչ միայն ժամանակի հստակ սահմանազատում («ի ՆԻԶ (=426+551=977) թուականութեանս Հայոց»[15]), այլև բուն գործը ստանձնելու հետ կապված ուղղակի բացատրություն. «Ապա ի հոգս եղեալ թագաւորին այսպիսի իրի, յղէ առ իս միանգամ և երկիցս, որում ոչ իշխեցի ընդդիմանալ, զի ծանեայ, եթէ աստուածահաճոյ է հրամանն, և մեկնեցի զերգս երգոյն նորին հրամանաւ»[16]։

Գրիգոր Նարեկացին, անշուշտ, լավածանոթ էր Սողոմոնի «Երգ երգոցի» շուրջ ստեղծված հարուստ գրականությանը, մասնավորապես Հիպողիտոս Բոստրացու, Որոգինեսի, Եպիփան Կիպրացու, ինչպես նաև Գրիգոր Նյուսացու մեկնողական աշխատանքներին։ Սակայն ըստանձնած գործի դժվարությունը, տվյալ գրական ժանրին հատուկ պարտավորեցնող ավանդական եղանակը Նարեկացուն հարկադրում են համեմատության եզր որոնել համաբնույթ մատենագրական հուշարձաններում։ Հավանաբար այդ նույն որոնման ճանապարհին, իր իսկ նախասիրության թելադրանքով Նարեկացին իբրև կատարելության չափանիշ ընտրում է Գր. Նյուսացու աշխատանքը, որի հեղինակը, սակայն, «կատարեալ վարդապետ» լինելով հանդերձ՝ «ի բուն կատարմանէ մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գտանի»։

Հասկանալի է, որ Նարեկացու սույն ձեռնարկումը առաջին հերթին

---

[15] Նույն տեղում, էջ 367, հմմտ. *Н. Я. Марр*, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, III, СПб., 1901, стр. XIII.

[16] Նույն տեղում, էջ 367։ Կարծիք կա, որ «Երգ-երգոցի Մեկնութիւնը կարելի չէ նկատել ծնունդ Նարեկ Աղօթամատեանի հեղինակի մտքին ու սրտին» («Բազմավէպ», 1961, էջ 10)։ Այս պարագայում մեզ զրաղեցնողը հեղինակային պատկանելության խնդիրը չէ, այլ «Երգ երգոցի մեկնության» սկզբնադրյուրներից մեկի՝ Գրիգոր Նյուսացու համանուն երկի առնչակցության բնույթի հարցը։

ընկալելու է իբրև առաջադրված խնդրի բարդության չափանիշ։ Ասվածը միաժամանակ հնարավորություն է տալիս մտածելու, որ Նարեկացին ըստ էության ծանոթ էր Նյուսացու Մեկնությանը և, ինչպես կտեսնենք, օգտվում է նրա հայերեն թարգմանություններից[17]։ Ավելին, հիմքեր կան մտածելու, որ Գրիգոր Նարեկացին ձեռքի տակ ունեցել է ոչ միայն Գր. Նյուսացու, այլև Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու ճառերի ու թղթերի մի մասի հայերեն թարգմանությունները և օգտվել է դրանցից։ Այդօրինակ գրական առնչակցության առաջին բացահայտողը ինքը՝ Նարեկացին է։ Պարզվում է, որ իր նշանավոր «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատությունը շարադրելիս հաճախ բառացի վկայակոչման եղանակով, երբեմն էլ առանց հեղինակի անունն ու համապատասխան գործը հիշատակելու, վերապատմելու ճանապարհով Նարեկացին օգտվում է կապադովկացի մատենագիրների գործերից։ Նարեկացու Մեկնության վրա առկա են Բ. Կեսարացու «Ի սուրբ Նահատակն Քրիստոսի Ստեփանոս»[18] ներբողի, Գր. Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» գրքի յոթ ճառերի[19], «Յաղթեցայ» գրքի «Յաթանասիոս եպիսկոպոս Աղէքսանդրացի» դամբանականի, ինչպես նաև Գր. Նյուսացու «Յաղագս Երգոյ երգոց» մեկնության հետքերը։

Արդ՝ բյուզանդական մատենագրի նշված աշխատության պահպանված հետքերի, Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» երկի հետ ունեցած առնչակցության մասին որոշ պատկերացում կազմելու համար վկայակոչենք ընդհանրության մի քանի օրինակ.

1 Նյուսացի. «Սեաւ եմ ես եւ գեղեցիկ՝ դստերք Երուսաղէմի, իբրև զխորան Կեդարու եւ իբրեւ զվրանն Սողոմովնի։ Մի հայիք յիս,

---

[17] Որքան մեզ հայտնի է, Նյուսացի-Նարեկացի առնչակցության խնդիրը հայագիտության մեջ առ այսօր ոսոկ ակնարկվել է. «Դարձեալ Նարեկացին զԳրիգորի Նիւսացւոյ զերգ երգոցին մեկնութիւն (զոր չէ տեսեալ մեր), ուրեք ուրեք յառաջ բերէ ի մեկնութեան իւրում» (Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 124), «Գրիգոր Նիւսացին գրած է Երգ երգոցի մեկնութիւն մը եւ անկէ օգտուած է Գրիգոր Նարեկացին իր համանուն երկին մէջ» (Երգ երգոց, էջ 40)։

[18] Տե՛ս ձեռ. № 822, էջ 218ա—222ա, համմ. Մեկնութիւն Երգոց երգոյն, էջ 336, 352։

[19] Այդ ճառերն են՝ «Ի ծնունդն Քրիստոսի», «Ի յայտնութիւն Տեառն», «Ի Մկրտութիւնն», «Յամենասուրբ պասեայ և ի հեղգութիւնն», «Ի նոր կիրակէն», «Վասն հարուածոյ կարկտին» և «Յաղագս աղքատասիրութեանն», համմ. Գր. Նարեկացի, նշվ. աշխ., էջ 279, 290, 294, 302, 306, 314, 331, 362, 364, 365, 366։

զի ես եմ սեւացեալ, վասն զի խեթի հայեցաւ յիս արեգակն։ Որդիք մաւր իմոյ մարտեան ընդ իս, եդին զիս պահապան յայգիս՝ զայգի իմ ոչ պահեցի»[20]։

Նարեկացի. «Սեաւ եմ ես և գեղեցիկ՝ դստերք Երուսաղէմի, իբրև զվրանն Կիդարու, և իբրև զխորանն Սողոմոնի։ Մի հայիք յիս, զի ես եմ սեւացեալ, զի խեթիւ հայեցաւ յիս արեգակն։ Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս. և եդեալ զիս պահապան այգեստանին, զի զայգին իմ ոչ պահեցի»[21]։

2 Նյուսացի. «Զիոյն իմոյ ի կառան Փարաւոնի նմանեցուցից զքեզ, մերձաւոր իմ»[22]։

Նարեկացի. «Զիոյն իմոյ ի կառան Փարաւոնի նմանեցուցից զքեզ մերձաւոր իմ»[23]։

3 Նյուսացի. «...եկ ընդ հովանեաւ վիմին, մերձ ի նախապարիսպն, ցոյց ինձ զդէմս քո, լուր ինձ զձայն քո, զի ձայն քո՝ քաղցր եւ դէմք քո՝ գեղեցիկք»[24]։

Նարեկացի. «Ցոյց ինձ զդէմս քո, և լսելի արա ինձ զբարբառ քո. վասն զի ձայն քո քաղցր է և դէմք քո գեղեցիկ»[25]։

4 Նյուսացի. «Յանկողնի իմում ի գիշերի ասէ խնդրեցի, զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա եւ ոչ գտի, կոչեցի զնա եւ ոչ լուաւ ինձ...»[26]։

Նարեկացի. «Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա և ոչ գտի, կոչեցի զնա, և ոչ ետ ինձ ձայն»[27]։

Համադրվող հատվածների նմանությունը, ավելի ճիշտ՝ նույնությունը ինքնին ակնհայտ է (խոսքը ս. Գրքից կատարված քաղումին չի վերաբերում)։ Վկայված և առհասարակ եղած ընդհանուր տեղիների համեմատումն ու դասդասումը որոշ ընդհանրացումների հնարավորություն են տալիս։

Նարեկացին խնդրո առարկա սկզբնաղբյուրից օգտվում է բառացի

---

[20] Ձևռ. № 1013, էջ 49բ, բնագիրը տե՛ս PG., t. 44, էջ 788։

[21] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 282, հմմտ. երգ երգոց, Ա, 4—5։

[22] Ձևռ. № 1013, էջ 55ա, բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 808։

[23] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 285, հմմտ. երգ երգոց, Ա, 8։

[24] Ձևռ. № 1013, էջ 69ա, բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 857։

[25] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 294։

[26] Ձևռ. № 1013, էջ 76բ, բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 888։

[27] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 296, հմմտ. երգ երգոց, Գ. 1։

քաղման եղանակով և որ հիմնականում անհրաժեշտ է նկատում հիշատակել օգտագործվող հեղինակի անունը և ոչ թե համապատասխան գործի խորագիրը։ Պիտի նկատել, որ այս նույն սկզբունքը կիրառվում է նաև մյուս կապադովկացի մատենագիրների աշխատանքներին դիմելիս։

Ընթերցողին օգնելու-կողմնորոշելու նպատակով Նարեկացին հուշում է, առաջադրվող վկայակոչությամբ չբավարարվելու դեպքում, դիմելու բուն նյութի համեմատաբար ընդարձակ ու առավել համոզիչ բացատրությանը։ Ընդհանրության հարակից դրվագներում կան այդ կարգի օժանդակ բացատրություններ։ Ահա դրանցից մեկը. «Արդ ես ի համառօտն եմ ի փութալ. և թէ երկայն կամիս լսել զբանս, երթ առ Նիւսացին Գրիգոր»[28] կամ՝ «... զյանկագոդն ընդարձակ բանից ի Նիւսացին Գրիգոր յուղարկեցից»[29]։

Ս. Գիրքը և ընդհանրապես հոգևոր մատենագրությունն անուն առ անուն իմացող Գրիգոր Նարեկացին երբեմն համեմատության եղր է որոնում Գրիգոր Նյուսացու երկի և նրա բուն սկզբնաղբյուրի ընդհանրական մասերում և, առանց վարանելու, նախապատվությունը վերապահում է բյուզանդական մատենագրի միջամտությանը։ Մի մեկնաբանության առիթով նա տալիս է հետևյալ բացատրությունը. «Զայս երգ երգոցս փեսային բանիւ ասէ. և Նիւսացին Գրիգոր բաժանէ զայս, և հարսինն բանիւ ասէ, որում և մեք հաւանիմք»[30]։

Որքան էլ պետական-պաշտոնական հողի վրա դրվեր Նարեկացու գործի ստեղծման հիմքը (ասվեց, մեկենաս-պատվիրատուն Արծրունյաց թագավորն էր), այդուհանդերձ, թվում է, Մեկնութիւն Երգոց երգոյն աշխատության գրության բուն պատճառը պիտի փնտրել «Երգ երգոցի» սյուժեի՝ հարս ու փեսայի անվան շուրջ հյուսվող լիրիկական պատմության նկատմամբ X դարում եղած հասատատուն հետաքրքրության ազի մեջ, որը և հարկադրել է Նարեկացուն «բացայայտել զխորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել»[31]։

«Մեկնութիւն Երգոց երգոյն» երկում հանդիպող քաղում-հղումները, անկախ իրենց ծավալից ու հեղինակային պատկանելությունից, բնաւ չեն նսեմացնում Նարեկացու երկի գրական-մատենագրական ար-

---

[28] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 285։

[29] Նույն տեղում, էջ 296։

[30] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 294, համմ. «Նաև սուրբ Լուսաւորիչն մեկնէ այսպէս. թէպէտ և Նիւսացին Գրիգոր այլազգ (նույն տեղում, էջ 301)։

[31] Մեկնութիւն երգոց երգոյն, էջ 367։

ժեքը: Ավելին, դրանք էապես նպաստում են թարգմանական հարուստ մեկնողական գրականության ընդհանուր ֆոնի վրա դիտարկելու և արժեքավորելու նարեկացու անձի ու գործի մեծությունը, ըստ ամենայնի գնահատելու հայոց ինքնուրույն գրականության մարզում ծնված առաջադիր մեկնողական աշխատանքի նշանակությունը:

Խոսելով գրական առնչակցություններիմասին ակադ. Մ. Աբեղյանը գրում է. «Ոչ մի կլասիկ մատենագիր չկա, որ հնության մեջ յուր վարժապետն ու վարպետը կամ յուր հովանավորող սուրբը-փիրը չունենա: Բայց և ոչ մի մատենագիր էլ չկա, որ յուր այդ վարպետին հավասարվելու հավակնություն ունենա, այլ միայն աշխատում են իրենց վարպետի կատարելության մոտենալ, նմանելով նրան, չկարծելով անգամ, թե կարելի է և ուրիշ տեսակ դրել»[32]:

Հայագետի սույն ձևակերպումը, անշուշտ, տիպական է և առաջին հերթին վերապահելի է գեղարվեստական գրականության ոլորտի համար, մանավանդ որ այն ասվել է «ֆրանսիական կլասիցիզմի» քննության առիթով: Սակայն այդ իրողությունը բնավ չի բացառում միջնադարյան մատենագրական հուշարձաններում ևս որոնելու նշված գրական պրոցեսի առանձին դրսևորումների հնարավորությունը, քանի որ գեղարվեստական գրականության նախահիմքերը ճիշտ նույն մատենագրության էջերից դուրս դժվար է պատկերացնել: Այլ խնդիր է, որ գրական ազդեցության իրացումը երկու հնարավոր ճանապարհ կարող է ունենալ. մի դեպքում ստեղծագործողը իր հզոր նախորդի ազդեցությունից ազատվել չի կարողանում և, հասկանալի է, գրական արտադրանքը շարունակում է մնալ բառացի քաղումների կամ, լավագույն դեպքում, վերաշարադրանքի ոլորտում և ակամայից դառնում է նվազ հետաքրքրական:

Մյուս, առավել դժվար, բայց և գերադասելի լուծումը սկզբնաղբյուրի շրջանակներից դուրս գալու, նրա ազդեցությունից ազատվելու, ըստեղծագործական նոր որակ տալու եղանակն է: Այս պարագայում կատարվող քաղում-հղումները ասելիքը առավել հավաստի դարձնելու օժանդակ միջոց են դառնում և ոչ թե բուն շարադրանք: Հայոց միջնադարյան գրական առնչակցություններին (գոնե «երեք մեծ կապադովկացիների» գործերի շրջանակներում) առավել բնորոշ է ընդհանրության երկրորդ տարբերակը: Նարեկացու գործը, նրանում եղած ոչ

---

32 Մ. Աբեղյան, Երկեր, է, Երևան, 1975, էջ 222:

բնագրածակ, հատվածական, հաճախ բանաձևային բնորոշումների տեսքով պահպանված վերաբնակեցումները հիմք են տալիս ասելու, որ Նյուսացի-Նարեկացի նմանության օրինակները պատկանում են երկրորդ խմբին:

Նարեկացու երկում եղած ընդհանուր տեղինները, չնչին բացառություններով, նույնական են Գր. Նյուսացու բուն տղբյուրի՝ Ս. Գրքի «Երգ երգոց» հետ, թեև քաղվել են բյուզանդական մատենագրի Մեկնության հայերեն թարգմանությունից: Համեմատ դեպ՝ այդ իրողությունը Նյուսացի-Նարեկացի առնչակցության դեմ չի կարող վկայակոչվել երկու հիմնական պատճառով: Նախ՝ նման դեպքերում, գրեթե միշտ, շատ հաճախ է պատահում Նարեկացու գրվածական վերաբերմունքը հղվող նյութի ու նրա հեղինակի, տվյալ պարագայում՝ Գր. Նյուսացու նկատմամբ: Մյուս, ոչ պակաս կարևոր իրողությունն այն է, որ Ս. Գիրք-Գր. Նյուսացի-Գր. Նարեկացի ընդհանուր շղթայի մեջ կան օղակներ, որոնցում Նարեկացու քաղումը ինչ որ չափով հեռանում է Սուրբ Գրքից և առավել համընթաց է բյուզանդական մատենագրի Մեկնության հայերեն տարբերակի հետ: Ահա այդ կարգի մեկ օրինակ.

Երգ Երգոց (Վիեննա, 1924)	Գր. Նյուսացի (Յաղագս Երգոյ Երգոց, ձեռ. № 1013)	Գր. Նարեկացի (Մեկնութիւն Երգոց Երգոյն, Վենետիկ, 1840)
Սևաւ եմ ես և գեղեցիկ դստերք Երուսաղեմի: Իբրև վրանն Կեդարու, իբրև վրառանն Սողոմոնի: Մի հայիք յիս, զի ես սեւ եմ սևացեալ: Զի անտես արար զիս արեգակն: Որդիք մաւր իմոյ մարտեան ընդ իս: Եդին զիս պահապան յայգեստանին: Զրայգին իմ ոչ պահեցի (Ա, 4-5):	Սևաւ եմ ես և գեղեցիկ՝ դստերք Երուսաղէմի, իբրև վրառան Կեդարու և իբրև վրառանն Սողոմովնի: Մի հայիք յիս, զի ես եմ սևացեալ, վասն զի խեթի հայեցաւ յիս արեգակն: Որդիք մաւր իմոյ մարտեան ընդ իս,եդին զիս պահապան յայգիս՝ զայգի իմ ոչ պահեցի (էջ 49բ):	Սևաւ եմ ես և գեղեցիկ՝ դստերք Երուսաղէմի, իբրև վրառան Կեդարու, և իբրև վրառանն Սողոմոնի: Մի հայիք յիս, զի ես եմ սևացեալ. զի խեթիւ հայեցաւ յիս արեգակն: Որդիք մօր իմոյ մարտեան ընդիս և եդեալ զիս պահապան այգեստանին, զի զայգին իմ ոչ պահեցի (էջ 282):

Համադրվող հատվածների նմանությունն ակնհայտ է, իսկ ինչ վերաբերում է դրանց տարբերություններին, ապա դրանք երկու կարգի են՝ բառական և դարձվածքային: Նյուսացու հատվածի խոռան (δέρρις) և վրան (σκήνωμα) *ընթերցումների հետ հավանաբար գրչական ճանապարհով* գրափոխություն է կատարվել, որովհետև նույնի հունարեն բնագրում նշված բառերը առկա են պահանջվող շարադասությամբ.

«Իբրև զխորան Կեդարու» կապակցության դիմաց ունենք՝ «ὡς σκηνώματα Κηδάρ»[33], իսկ «իբրև զվրանն Սողոմովնի» փոխարեն՝ «ὡς δέρρεις Σολομώνος»[34]։ Սույն բառական դրափոխության օրինակը, հավանաբար, առաջացել է ընդօրինակության եղանակով, որովհետև Գր. Նյուսացու Մեկնության հայերեն թարգմանության որոշ ձեռագրերում պահպանվել է ճիշտ հունարենին համընթաց բառական շարադասություն։ Ուստի բավարար հիմքեր կան մտածելու, որ այն քննելի խնդիր չէ։

Երկրորդ, առավել խնդրական կետը վերաբերում է համադրվող օրինակների դարձվածքային ոչ միօրինակությանը։ Ս. Գրքի «Երգ երգոցի» «անտես արար զիս արեգակն» մտքի դիմաց Նյուսացու և Նարեկացու տեքստերում համապատասխանաբար ունենք՝ «խեթի հայեցաւ յիս արեգակն», «խեթիւ հայեցաւ յիս արեգակն» միմյանց հետ միանգամայն նույնական, սակայն Ս. Գրքի օրինակից էապես տարբերվող ընթերցում։ Նյուսացու միտքը այս մասում ուշադրության արժանի ձեռագրական այլ տարբերակ չունի և, որ ամենակարևորն է, համընթաց է, ավելի ստույգ՝ բառացի թարգմանությունն է հունարեն բնագրի. «ὅτι παρέβλεψέ με ὁ ἥλιος»[35]։ Թվում է, սավածը մի հետևության հնարավորություն է տալիս՝ համապատասխան սաստվածաշնչական սկզբնաղբյուրի առկայության պայմաններում էլ Նարեկացու ընդհանրական հատվածների հիմքը մնում է Նյուսացու Մեկնության հայերեն թարգմանությունը։

բ) ՀԵՏԱԴԱՐՁ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ
(Անանիա Սանահնեցի, Ներսես Շնորհալի, Վարդան Այգեկցի)

XI դարի անվանի տոմարագետ-մատենագիր, Հաղբատ-Սանահնի կրթական-մշակութային հռչակավոր հաստատության սան Անանիա Սանահնեցու անունը նույնպես կապվում է Գրիգոր Նյուսացու գրական վաստակի, հատկապես դավանական խնդիրներ արծարծող ճառերի հայերեն թարգմանությունների հետ։ Հայտնի է, որ նա աշակերտել է նշված դպրոցի հիմնադիր-վերակացու Դէոսկորոս Սանահնեցուն, թո-

---

[33] PG, t. 44, էջ 788։
[34] PG, t. 44, էջ 788։
[35] PG, t. 44, էջ 788։

ղել է բավական բազմաժանր գրական ժառանգություն (ճառ, թուղթ, մեկնություն, խրատ, կանոն, աղօթք)։ Ա. Սանահնեցու պատրաստության, մշակութային գործունեության ու մատենագրական ժառանգության կենսագործունեության մասին միանգամայն նպաստավոր են արտահայտվել մեր միջնադարյան գրականության շատ անվանի ներկայացուցիչներ։ Այսպես, օրինակ, անդրադառնալով Սանահնի դպրոցի սուրբ հայրերի գործնականությանը՝ Գրիգոր Մագիստրոսը «Պատասխանի սրբազան եղբարցն սուրբ ուխտին Սանահին...»[1] թղթում գրում է. «Մեք ոչ կամեաք յայսմանէ չիշատակել ինչ, քանզի դուք առաւել տեղեակ էք ձերով աստուածեղէն և մաքուր տեսութեամբ, սակայն երեր բան սակս իմոյ ի ձէնջ տարագրութեան և փափաքանաց»[2]։

Առավել բնութագրական է Կիրակոս Գանձակեցու գնահատականը, ուր կա ոչ միայն Սանահնի դպրոցի ու նրա վարդապետների դիտաուսումնական գործունեության ջերմ, հաստատուն գնահատություն, այլև Անանիա Սանահնեցու գրական վաստակի ազգային նշանակության ճշմարիտ վերհանում։ Ահա թե ինչ է գրում Կ. Գանձակեցին. «Իսկ յԱրեւելս արք անուանիք և դիտնականք լուսաւորիչք եկեղեցւոյ՝ Անանիա վարդապետ ի Սանահինն, յաւուրս Դէոսկորոսի, այր մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի, և գրոց աստուածայնոց մեկնող։ Սորա ասեն ի մի հաւաքեալ ի մեկնութիւնն առաքելոյ զբանսն Եփրեմի և Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի և այլ սրբոց արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց, արար և խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն առ օրինակս. գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանն, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասեն, և զներբողեանն Շողակաթին»[3]։ Մատենագիտական ավելի ընդգրկուն տեղեկանք, գրական վաստակի կենսագործունեության առավել համոզիչ գնահատության օրինակ, թվում է, այլուր դժվար է ակնկալել։

---

[1] Հաղբատ-Սանահին մշակութային կենտրոնի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Վաղդասպետաց Հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը (վրացերեն), Թիֆլիս, 1928։

[2] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 136—142։

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 112—113։

Անանիա Սանահնեցու մատենագրական ժառանգության մեջ, դավանական խնդիրների արծարծման իմաստով, մանավանդ Հրեշտակի երկվության (մարդ-աստված) շուրջ ծավալված հին ու նոր վեճերի շրջանում, դատելով պահպանված ձեռագրերից, բավական տարածված ու հայտնի է եղել նրա «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատությունը: Ձեռագրերի համեմատումն ու դասդասումը ցույց են տալիս, որ այն պահպանվել է երկու տարբերակով կամ, կարելի է ասել, խմբագրությամբ՝ համառոտ[4] և ընդարձակ[5]: Պիտի ենթադրել, որ Անանիա Սանահնեցու աշխատանքի համառոտ տարբերակը նույնպես ծառայել է նույն նպատակին և որ սկզբ, համահավաք առձեռն տարբերակ ունենալու գաղափարը ևս պայմանավորված է եղել տեղական, որոշակի միջավայրի համար նախատեսվող անհրաժեշտությամբ:

Հայտնի է, որ Անանիա Սանահնեցին այդ երկը ձեռնարկել է գրել Պետրոս Գետադարձի (1019-1058) խնդրանքով, սակայն այն ավարտել է Պետրոս Գետադարձի քեռորդու՝ Խաչիկ կաթողիկոսի (1058-1065) գահակալության շրջանում: Սանահնեցու աշխատանքն ունի շատ հստակ, հարցերի որոշակի խմբի հիմնավոր ու համոզիչ պատասխան առաջադրող բովանդակություն: Հիմնական խնդիրը վերաբերում է Քրիստոսի մարդ-աստված լինելու գոյություն ունեցող պնդմանը: Անանիա Սանահնեցին հիմնավորապես մերժում է երկու բնության գաղափարը և պաշտպանում ու ճշմարիտ է համարում մի բնության թեզը, հակառակի է, դրանով իսկ սատար կանգնում ազգային եկեղեցու ուղղադավանության գաղափարին:

Միջնադարի համար փաստարկված ու տրամաբանական են նրա առարկությունները: Այսպես, օրինակ, մարդ-աստված տարբեր էությունները ի մի ձուլողների պնդումները նա մերժում է հետևյալ պատճառաբանությամբ. «Արդ դայս հաւաստով, թէ աստուած եւ մարդն շարայարեցան ի միմեանս, եւ մարդն մարդ է, եւ աստուածն՝ աստուած: Ու մարդն քաղցնու, եւ ծարաւի, եւ աշխատի, եւ ննջէ, եւ անարգի, եւ չարչարի, եւ մեռանի: Ու աստուած անկարաւտ, անչարչարելի եւ անմահ մնայ յիւր բնութիւնն... Եվ մարդն կրէ զկիրս մարմնոյն եւ աստուած անկրելի մնա ի կրից մարմնոյ»[6]:

---

[4] Ձեռ. № 2174 (ժողովածու, 1309 թ.), էջ 185ա—196ա:

[5] Ձեռ. № 5618 (ժողովածու, ԺԴ դ.), էջ 1ա—195ա:

[6] Ձեռ. № 5618, էջ 65ա-բ:

Շարունակելով նույն միտքը՝ Անանիա Սանահնեցին անդրադառնում է մարդ-աստված փոխհարաբերության միջնադարի համար բավական հաճախադեպ ու առավել ակնհայտ դրվագներից մեկին՝ մարդուն կրթելու, բնության օրենքների ու օրինակների (դաղափարների) անհրաժեշտ իմացությամբ օժտելու աստծո հոգածության խնդրին. «Եւ ընդէր այնչափ ժամանակս աստուած յառաջագոյն կրթէր զմեզ աւրինաւք, եւ աւրինակաւք, եւ մարգարէիւք ածել զմեզ ի հաւատս ճշմարիտս եթէ զայդ կամէր ի մէնջ պահանջել աստուած, թէ իմացիք զի մարդն մարդ է մահկանացու եւ չարշարելի, եւ ընդ կարեաւք մարմնոյ հարկեալ, եւ աստուած անչարշարելի, եւ անմահ, եւ յամենայն կարեաց ազատ: Ահա զայդ գիտէաք ի սկզբանէ եւ, զոր գիտէաք զինչ պետք էր, զնոյն հաւատովք ուսանել»[7]:

Մարդ-մահկանացուի և անմահի (աստծո) հնարավորությունների ու բնաւաւր կարողությունների սույն համադրման բուն նպատակը միանգամայն հասկանալի է. մերժել, հիմնավին անընդունելի համարել դրանք նույնացնող մեկ էության տեսքով ընդհանրացնելու բոլոր փորձերը: Շատ հստակ ու որոշակի է Սանահնեցու հետևությունը. «Հաւատաք յայդոսիկ մեռեալ եւ անպատուհն»[8]:

Արդ, ինչպես և սպասելի էր, Հակաճառությունը շարադրելիս[9] Անանիա Սանահնեցին ձեռքի տակ ունեցել է և բառացի քաղումների եղանակով օգտվել է հայբրանական գրականության դրեթե բոլոր անվանի ներկայացուցիչների դավանական-աստվածաբանական խնդիրներ արծարծող գործերի հայերեն թարգմանություններից, այդ թվում նաև Կր. Նյուսացու համապատասխան ճառերից ու թղթերից: Սանահնեցու սկզբնաղբյուրների շարքում պիտի դասել նաև Տիմոթեոս Կուզի (V դ.) «Հակաճառութիւն առ սահմանեալն»[10] խորագրով ժողովածուն, որի նպատակն էր եկեղեցու սուրբ հայրերի աշխատություն-

---

[7] Ձեռ. № 5618, էջ 65բ—66ա:

[8] Ձեռ. № 5618, էջ 66ա:

[9] Անանիա Սանահնեցու և նրա Հակաճառության մասին տե՛ս Երուանդ սարկաւագ, Հազարատ և Սանահին վանքերը («Արարատ», 1901, էջ 271—277, 338—348), Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցու «Հակաճառության» դավանաբանական աղբյուրները («Էջմիածին», 1981, է, էջ 49—54):

[10] Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի Ա Երուանդ վարդապետի. Ս. Էջմիածին, 1908, էջ 1—396:

նների օգնությամբ հիմնավորապես մերժել Քաղկեդոնի ժողովի վճիռները և սատար դառնալ Քրիստոսի մի բնության թեզը պաշտպանող հոգևոր հաստատությունների պայքարին: Ժողովածուի հայերեն թարգմանության հրատարակիչները այն միտքն են հայտնել, որ Անանիա Սանահնեցու Հակաճառության սկզբնաղբյուրները (Իրենիոս, Գր. Սքանչելագործ, Հովհան Ոսկեբերան, Աթանաս, Կյուրեղ, երեք մեծ կապադովկացիներ և այլք) «մեծ մասամբ նույնանում են Տիմոթէոսի գրքում եղածների հետ»[11]: Անշուշտ, հրատարակիչների սույն վերապահությունը վկայակոչվող հեղինակների ցանկի նույնության մասին պիտի լինի և ոչ թե նշված հուշարձաններում շրջանառություն գտած հատված-հղումների: Հակառակ պարագայում այն տպավորությունը կարող է ստացվել, որ Ա. Սանահնեցին Հակաճառության նյութերը քաղել է VI դարի կեսերին հայերենի թարգմանված[12] Տիմոթեոս Էլուրոսի համանուն երկի պատրաստի ժողովածուից: Մինչդեռ համեմատությունը ցույց է տալիս, որ նշված թարգմանական հուշարձանին ծանոթ լինելով հանդերձ՝ Ա. Սանահնեցին մերժում է պատրաստի ժողովածուի նյութերը վերաբնակեցնելու եղանակը, որ նույն հեղինակների շրջանակներում էլ նա նյութերի ընտրության իր մոտեցումն ունի: Դրանում համոզվելու համար կարելի է դիմել Գր. Նյուսացու համեմատության օրինակին: Տիմոթեոսի գրքում առկա է Գր. Նյուսացուց քաղված երկու ոչ մեծ հատված[13], մինչդեռ Անանիա Սանահնեցին բյուզանդական մատենագրի տարբեր ճառերից ընտրել է բոլորովին նոր ու ընդարձակ մասեր[14]:

Նշված ժողովածուի նկատմամբ եղած մյուս ակնհայտ առանձնահատկությունն այն է, որ Անանիա Սանահնեցին հակված է երբեմն հրաժարից բացատրությամբ օժտելու այս կամ այն նյութը, բացահայտելու առաջադրվող հղման նպատակը, ուղղակի առնչակցության բնույթը քննվող խնդրի հետ: Ասվածի մասին պատկերացում կազմելու համատով ավելորդ չէ ծանոթանալ Գր. Նյուսացու «Ի Մելիտոս եպիսկո-

---

[11] Նույն տեղում, էջ XXI:

[12] Հուշարձանիս թարգմանության ժամանակի խնդրին անդրադարձել են Գ. Տեր-Մկրտչյանը, Ն. Ակինյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Պ. Անանյանը և ուրիշներ: Առավել համոզիչ է Ե. Տեր-Մինասյանի առաջադրած նշված ժամանակահատվածը (տե՛ս Ե. Գ. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 394—410:

[13] Նույն տեղում, էջ 25, 83:

[14] Տե՛ս Ձեռ. № 5618, էջ 161բ—164ա, 170բ—171ա:

պես...» ճառի հայերեն թարգմանությունից օգտվելու առիթով Սանահնեցու տված նման մի բացատրությանը. «Իսկ Աստուածաբան Անձիանձուն[15] յաճեցոյց ճառին[16], որ առ Մեղիտոս զերեզմանական ևս զեղեցկապես բերէ ի բերանոց կարկատումն հերձուածողաց, յորում ճառի այսմ վերագոյն գոլէ զգեղեցկագիր առն աստուածայնոյ Մեղիտոսի բարեփառ դիմառնութեան առ երկաբնականս»[17]:

Նյուսացի-Սանահնեցի առնչակցությունների մեր համեմատության արդյունք բոլոր օրինակների վկայակոչությունն ու մանավանդ քննությունը, հասկանալի պատճառով, սույն աշխատանքի հնարավորության սահմաններից դուրս է: Սակայն ավելորդ չէ նկատել, որ եղած նմանության օրինակները ընտրվել են Նյուսացու տարբեր ճառերից, բայց ճիշտ նույն սկզբունքով, գրեթե առանց միջամտության: Ամենուր սկզբնաղբյուրի ենթադրվող հատվածը համապատասխան եղանակով կապվում է նոր նյութի հետ և շարադրանքի նորորակ ամբողջությունից արվում է անհրաժեշտ հետևություն:

Այնուամենայնիվ, Ա. Սանահնեցու քաղումների բնույթի մասին որոշ պատկերացում կազմելու նպատակով փորձենք ներկայացնել ընդհանրության մեկ օրինակ.

Ի Մելիտոս Եպիսկոպոս...[18]
Ձեռ. № 823 («Առ նաւարկութիւն» 1266 թ.
էջ 9բ—18ա)

Եկն զգնացուցանել մեզ զպատմուճանս փնասայի, եւ ոչ վրիպեցաւ ի փութոյն, եդ ի վերայ բարի ամուսնութեանն, դարձուածն պսակ նմանեցաւ Տեառնն իւրում, որպէս ի Կանայպալիլեացոյ Տէրն[19], նոյնպէս եւ աստ նմանողն Տեառնն: Քանզի զհրէական զատփորս հերձուածո-

Անանիայի Հայոց վարդապետի լուծման և մատուռան երկաբնակացն...
Ձեռ. № 2174 («Ժողովածու», 1309 թ., էջ 185ա—196ա)

Ասէ, նմանեցաւ Տեառն իւրում, որպէս ի Կանադալելիա Տէրն, նոյնպէս և աստ նմանողն Տեառն: Քանզի զհրէական սատփորս հերձուածողական ջրով լցեալս, լի սեռն գինով արար՝ զաւրութեամբ հաւատոյն փոփոխել զրնութիւնն հաստատե-

---

15 Խոսքը Նյուսացի-Նազիանզացի հեղինակային շփոթի մասին է, որին անդրադարձել ենք Գր. Նազիանզացու առիթով (տե՛ս Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, էջ 52—54):

16 Ակնարկում է համապատասխան ճառի սկիզբը՝ «Աճեցոյց մեզ իւր առաքելոցն...»:

17 Ձեռ. № 2174, էջ 194բ:

18 Բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 852—864:

19 Բնագրում ունենք՝ Κανὰ τῆς Γαλιλαίας ὁ Κύριος (էջ 860):

ղական ջրովս լցեալս, լիս սևան[20] գինով արար՝ զաւրութեամբ հաւատոցն փոփոխեալս զբնութիւնն հաստատեաց ի մեզ (էջ 14բ—15ա)։

աց ի մեզ (էջ 194բ—195ա, հմմտ. ձեռ. № 436, էջ 330ա-բ)։

Ընդհանրական դրվագների համեմատությունից պարզվում է, որ վկայակոչված սույն օրինակը իրավամբ կարող է նմանության չափանիշ ընկալվել Ա. Սանահնեցու Հակաճառության վրա բյուզանդական մատենագրի դամբանական ճառի հայերեն թարգմանության թողած հետքերի բնույթի իմաստով, ուստի և այս տեսանկյունով պիտի նայել նմանության բոլոր հատվածական օրինակներին և Նյուսացի-Սյունեցի հարաբերությանն առհասարակ։

Այլուր նկատել ենք, որ Ներսես Շնորհալին (1098-1173) ոչ միայն ծանոթ է եղել և օգտվել է կապադովկացի նշված մատենագիրների գործերի հայերեն թարգմանություններից, այլև գրել է Գր. Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» ճառի (հնարավոր է նաև գիրք-ժողովածուի) մեկնությունը, որից և օգտվել է Վարդան Հաղբատեցին։ Հասկանալի պատճառով նրա ուշադրությունից չեն վրիպել նաև Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությամբ պահպանված թղթերն ու ճառերը։

Իավանական խնդիրներ արծարծող «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ» խորագիրը կրող թղթում Շնորհալին դիմում է Նյուսացու «Ի Յովսէփ Արեմաթացին» ներբողի հայերեն թարգմանությանը և օգտվում է նրանից։ Ահա ընդհանրության մեկ օրինակ այդ ներբողից.

Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ներբողեան՝ ասացեալ ի թաղումն Տեառն եւ ի Յովսէփ Արեմաթացին

Ձեռ. № 993 *(«Ճառընտիր», 1453 թ., էջ 461բ—464բ)*

Շնորհեա ինձ զսուրբ մեռեալն, զի շաւշափելիցիւ զանառատ կողս նորա՝ յորմէ աղբերացաւ արիւն խոհրդական եւ ջուր վերստին ծննդեան (էջ 462ա)։

Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ. *Յերուսաղէմ, 1871*

Սմին համաձայն և Գրիգոր Նիւսացի ի բանն՝ որ վասն թաղմանն Տեառն, ի գիմաց Արիմաթացւոյն Յովսեփայ ասէ. «Նոշափելիցիւ զանառատ կողս նորա՝ յորմէ աղբիւրացաւ արիւն խոհրդական և ջուր վերստին ծննդական» (էջ 134)։

---

[20] *Ունի անխառն, պարզ, յատակ, անապակ, ջինջ իմաստներ (տե՛ս ՆՀԲ, Բ, 708), թարգմանությունն է հունարեն ἀκήρατος-ի (հմմ. ДРС, I, 63)։*

Այստեղ և այլուր եղած ընդհանրության օրինակների համեմատությունը ցույց է տալիս, որ Ներսես Շնորհալին անհրաժեշտ է նկատում հիշատակել սկզբնաղբյուր հեղինակին և նրա գործը անուն առ անուն։

Շնորհալու քաղումները, չնչին բացառություններ և համընթաց Կրիգոր Նյուսացու գործերի պահպանված հայերեն թարգմանությունների հետ, այսինքն երկուսակ հնարավոր գրչական ընթացիկ միջամտությունների դրեթե չեն ենթարկվել։

Ընդհանրության բոլոր օրինակներում վերաբնակեցված հատվածները նպատակադիր ընտրության իմաստով միանգամայն իրենց տեղում են, համարեն են հարմարեցվել նորօրյակ շարադրանքին և, կարելի է ասել, հաջողությամբ են կրում նոր ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության լուծը։

Պավանական խնդիրների արծարծման իմաստով հայոց միջնադարյան գրականության մեջ եզակի գործ է Վարդան Այգեկցու «Արմատ հատատոյ» ժողովածուն, որի հայտնաբերողն ու առաջին գնահատողը Հ. Անասյանն է[21]։ Վարդան Այգեկցու խոկ թողած մի գրառումից պարզվում է, որ այդ աշխատանքի նյութերի հավաքումն ավարտվել է 1205 թվականին. «Եւ կատարեցի զսա ի թուականին Հայոց ՈՇ և Դ-ին (654+551=1205), ի հայրապետութեան տեառն Յովհաննիսի և ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի յԿոստիւնեանց և Զաքարիայի՝ յաղթող հզօրապատութեան ի կողմն Հիւսիսոյ»[22]։

Ինչպես և սպասելի էր, Այգեկցին ձեռքի տակ ունեցել է և ընտրության է կատարել հայրբանական գրականության գրեթե բոլոր անվանի դեմքերի համապատասխան գործերից (գոնե պահպանված անվանացանկն այդ է հուշում[23])։ Աշխատության ընդարձակ առաջաբանում Վարդան Այգեկցին առաջին անհրաժեշտ բացատրությունն է տալիս իր ունեցած սկզբնաղբյուրների մասին. «Հաւաքեցի զայս ամենայն ծաղկաբնակ տառս... ուր և գտանէի վկայութիւն ի նուրբ գիրս և մեկնչացս կամ ի թուխտ գիրս, և կամ ի հաւաքումն սրբոց հայրապետաց, և բարեփառ հարցն մերոց...»[24]։

Շատ հատակ է արտահայտված օգտագործված աղբյուրների և

---

[21] Տե՛ս «Էջմիածին», 1969, է-Ը, էջ 52—55, «Էջմիածին», 1972, Ը և Թ, էջ 27—36, 45—56։

[22] Ձեռ. № 3295, էջ 338ա։

[23] Տե՛ս ձեռ. № 3295, էջ 340ա—378բ։

[24] Նույն տեղում, էջ 338ա։

առաջարկվող աշխատության նպատակաուղղվածությունը՝ «ընդդէմ ամենայն հերձուածողացն»[25]։

Նույնքան որոշակի է նաև սույն երկի կենսագործունեության ուղրտը՝ «եւ արարի քեզ առձեռն պատրաստ ղէն... քանզի խոցիւր հոգիս յորժամ սիրօրք բաժանման տգիտաբար խօսէին վասն Բ բնութեան և կամ վասն յայլոց խորհրդոց, և այս ետ ձեռնարկել մեզ յայս բան, որ ի վեր է քան զկար մեր»[26]։

Այգեկցու ընորոշած՝ «առձեռն պատրաստ ղէն» ունենալու միտքը միաժամանակ հաստատվում է «Արմատ հաւատոյ» շուրջ ստեղծված միջնադարյան գնահատության զանազան փորձերով, հարակից հիշատակարան-հիշատակագրություններով ու բուն նյութից կատարված հաճախադեպ քաղում-հղումներով։ Այդօրինակ նյութերից է նաև №3295 գրչագրում ընդօրինակված ամբողջական «Արմատ հաւատոյ» ընդարձակ հիշատակարանը։ Ահա մի հատված գրչի գնահատության սույն տարբերակից. «Սա է լոյս հոգւոյ ի խաւարային շուրեղոն յելոն մեր արեգականս։ Սա է հիմն և մայր հաւատոյ, որ կամի ճաշակել զԱստուած։ Սա դուռն արքայութեանն...»[27]։

Վարդան Այգեկցու ձեռքի տակ եղած հայրաբանական գրականության ցանկում, ինչպես և սպասելի էր, որոշակի տեղ են զբաղեցնում Գրիգոր Նյուսացու բուն գործերի և հեղինակային պատկանելության շրփոթի պատճառով նրան վերագրվող առանձին երկերի հայերեն թարգմանությունները։ «Գրիգորի Նիւսացի բնութեանց դրոցն» հղման ներքո ընդարձակ քաղումներ կան Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատանքից։ Այնուհետև, նույն Նյուսացու անվան տակ Այգեկցին օգտվում է նաև Գր. Նազիանզացու «Առ Եւնոմիացիս (Նորին ընդդէմ Եւնոմէոսի)» ճառի հայերեն օրինակից։ «Նորին քղքէն, որ առ Թէոփիլոս Աղէքսանդրու հայրապետն» խորագրի ներքո քաղում է կատարում Գր. Նյուսացու հայերեն թարգմանությամբ չպահպանված համանուն քղթից[28]։ Ի վերջո, Վարդան Այգեկցուն ընդարձակ հատվածական վերաբնակեցումների հնարավորություն է տալիս Գրիգոր Նյուսացու և Իսրսեղ Կեսարացու հեղինակությամբ հայտնի «Հարցմունք

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 338ա։

27 Ձեռ. № 3295, էջ 383բ։

28 Պարզվում է, որ Այգեկցու վկայած մի հատվածի խմբագրված տարբերակը հետքերի տեսքով պահպանվել է նաև Սահակ Պարթևին վերագրված «Ընդդէմ երկարնակաց...» ընդարձակ քղթում (տե՛ս Գիրք քղթոց, Թիֆլիս, 1901, էջ 423, համմտ. Ձեռ. № 3295, էջ 350ա)։

և պատասխանիք» ղուտ դավանական բովանդակություն ունեցող երկխոսությունը [29]:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Վարդանը թվարկված սկզբնաղբյուրներից օգտվում է հիմնականում բառացի քաղման եղանակով, նախընտրված հատվածը շարադրանքի ոլորտ է մուծում գրեթե առանց միջամտության և մեկնաբանում է այն տեղական անհրաժեշտության թելադրանքով:

Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» երկում պահպանված ընդհանրության օրինակները հնարավորություն են տալիս միաժամանակ արծարծելու Գր. Նյուսացուն վերագրվող, բայց իրականում Նեմեսիոս Եմեսացու և Գրիգոր Նազիանզացու հեղինակած առանձին գործերի հեղինակային պատկանելության հարցեր:

«Առ Թէոփիլոս Աղէքսանդրու հայրապետն» խորագիրը կրող Գր. Նյուսացու թուղթը, որքան մեզ հայտնի է, անծանոթ է մեր թարգմանական մատենագրությանը: Վ. Այգեկցու երկում եղած տեղեկությունը էական նշանակություն ունի գրական այդ հուշարձանի ոչ միայն միջնադարյան գոյության, այլև թողած հետքերի առումով:

Ջորս խմբագրությունների տեսքով պահպանված «Հարցմունք և պատասխանիք» երկխոսության հայոց ինքնուրույն գրականության մարզում եղած հետքերը օգտակար կարող են լինել այդ երկի և՛ հայերեն թարգմանության հեղինակային նախօրինակը գտնելու, և՛ հունարեն կորած բնագիրը վերականգնելու իմաստով:

Նյուսացի-Այգեկցի նմանության օրինակները կարևոր են ոչ միայն համապատասխան հուշարձանների աղբյուրագիտական քննության, այլ նաև հրատարակության պատրաստելու առումով:

X-XIII դդ. Հայոց միջնադարյան գրականության մարզում Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանությունների ակնհայտ հետքերը հնարավորին չափ ամբողջական տեսքով ներկայացնելու համար անհրաժեշտ էր անդրադառնալ նաև «Գրիգորի Վկայասիրի... վասն մոլորման Ջատկին»,[30] «Յովհաննէս վարդապետի եղնկայեցոյ՝ ի բան

---

[29] Թվարկված քաղումները տե՛ս ձեռ. № 3295, էջ 349բ—350բ:

[30] Տե՛ս ձեռ. № 502, էջ 92ա—101բ: Դատելով սույն ճառում պահպանված վկայակոչման օրինակներից, պիտի ընդունել, որ Գրիգոր Վկայասերը լավածանոթ էր հայրաբանական գրականության գրեթե բոլոր անվանի ներկայացուցիչների համապատասխան գործերին: Այդ շարքում բառացի հղման եղանակով բավական հաճախ են հիշվում նաև «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունները: Գրիգոր Նյու-

մարգարէին Դաւթի»[31] ճառերում և այլուր եղած բյուզանդական մատենագրի գործերի հայերեն թարգմանությունների հետքերին: Մինչդեռ համեմատությունը ցույց է տալիս, որ թե՛ Գրիգոր Վկայասերի (վախճ. 1105 թ.) և թե՛ Հովհաննես Երզնկացու (1225-1293) նշված աշխատանքներում և համաբնույթ գործերում պահպանված նմանության օրինակներում ևս գրական ազդեցության բնույթը չի փոխվում, առնչակցության գրեթե բոլոր սկզբունքները մնում են նույնը և վստահությամբ կարելի է ասել, որ գործ ունենք մշակութային ազդեցության միևնույն նպատակը հետապնդող նույն պրոցեսի հետ, պարզապես օրինակ-հրդումներն են տարբեր: Ուստի և նման պարագայում առնչակցության այդ օրինակներին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունն ինքնին վերանում է:

Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների հետքերի բացահայտման ու գնահատման իմաստով կարևոր են նաև միջնադարյան, այսպես կոչված, Բաղուածո ձեռագիր ժողովածուները: Դատելով դրանց բովանդակությունից, պիտի ընդունել, որ աշխատասիրողների, նյութերի ընտրությունը հոգացողների բուն նպատակն է եղել դավանական բնթացիկ խնդիրների, հին ու նոր վեճերի շուրջ ծավալվող առօրյա քննարկումների և զանազան այլ առիթների անհրաժեշտության թելադրանքով ձեռքի տակ ունենալ եկեղեցու նշանավոր հայրերի և առհասարակ հայրաբանական գրականության երևելի դեմքերի համապատասխան աշխատություններից քաղվածաբար կազմված համահավաք նյութերի ժողովածուներ: Պիտի ենթադրել, որ այս նույն նպատակով է կազմվել «Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի բան հաւատով և նորին նմանեացն» խորագիրը կրող միջնադարյան ժողովածուն[32], ուր հատվածներ կան Գրիգոր Լուսավորիչի, Դիոնեսիոսի, Եփրեմի, Հիպողիտոս Բոստրացու, Գրիգոր Սքանչելագործի, Կյուրեղի, Ոսկեբերանի, Գրիգոր Նյուսացու և այլոց աշխատանքներից: Այլևս պարզ է, աշխատասիրողը ձեռքի տակ ունեցել է Գր. Նյուսացու «Յերրորդութիւն» ճառի հայերեն թարգմանությունը և ընդարձակ քաղումների տեսքով օգտվել է նրանից:

սացու որոշ հատվածից բացի՝ քաղումներ կան նաև «Յաղագս երրոյ երրոց» մեկնողական աշխատանքից (Համմ. էջ 93բ, 94ա, 95բ, 96բ և այլն):

[31] *Տե՛ս ձեռ. № 2173, էջ 101ա—131բ (Համմ. էջ 120ա, 121բ):*

[32] *Տե՛ս ձեռ. № 2607, էջ 357ա—391ա, ձեռ. № 4207, էջ 119բ—127բ, ձեռ. № 3651, էջ 270ա—284բ:*

ԳԼՈՒԽ Ե

«ՅԱՂԱԳՍ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՑԻ» ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ

Հայագիտության մարզում վաղուց ի վեր արձանագրվել է այն իրողությունը, որ Վարդան Արևելցին (1200-1271) ծանոթ է եղել «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ Յաղագս Երգոյ Երգոց» երկասիրության հայերեն թարգմանությանը և օգտվել է դրանից: Եղած գրառումները հիմնականում կատարվել են համապատասխան ձեռագրերի նկարագրության, ինչպես նաև Վարդանի Մեկնության առաջաբանի հատվածական հրատարակության առիթներով և այդ իսկ պատճառով խիստ կարճառոտ են, ունեն մատենագիտական տեղեկանքի բնույթ: Այսպես, օրինակ, Հ. Տաշյանը Գր. Նյուսացու հիշյալ աշխատանքի առիթով նկատում է, որ այդ գործից կան «բազմաթիւ մասներ ի Մեկնութիւնն Վարդանայ»[1]: Ղ. Ալիշանի, ինչպես նաև Հ. Ոսկյանի անդրադարձը Վ. Արևելցու «Մեկնութիւն Երգոց երգոյն» երկի առաջաբանի այն հատվածի հրատարակության դիպվածով է, ուր Վարդանը իբրև սկզբնաղբյուր հիշատակում է բյուզանդական մատենագրի համանուն գործը[2]:

Վ. Արևելցու «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատությանն անդրադառնալիս Նորայր Պողարյանը արձանագրել է. «գրած է Հաղբատի

---

[1] *Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Տ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 1075, համմ. էջ 207, 210:*

[2] *Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 470—471, Հ. Ոսկեան, Յովհաննէս վանականը և իւր գործոց, Վիեննա, 1922, էջ 63—64: Նշված առաջաբանի հատվածական հրատարակությունը տե՛ս Հ. Տաշեան, Յուցակ..., էջ 207—208, Յուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի Մատենադարանին, կազմեց Մեսրոպ Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 290—291: Կա նաև ամբողջական հրատարակություն, տե՛ս Բարգէն արտուպից կարդինալոս, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 442—446:*

մէջ, Կիրակոս վարդապետի խնդրանքով, օգտուելով Որոգենէսի, Հիպոլիտոսի[3], Նիւսացիի եւ Նարեկացիի համանուն երկերէն»[4]։

Հիշատակված և առհասարակ հայագիտության մարզում եղած գրառումները, անշուշտ, կարևոր են այն իմաստով, որ յուրաքանչյուր պատեհ առիթով ընդգծվել կամ պարզապես արձանագրվել է երկու մատենագիրների առնչակցության փաստական կողմը։ Բայց երբևէ փորձ չի արվել քննելու, բացահայտելու այդ ընդհանրության բնույթն ու նշանակությունը գրական-մշակութային կարևորության առումով, ընդունելու կամ մերժելու նման հատվածների օգնությամբ միակողմանի, հնարավոր է նաև փոխադարձ սրբագրությունների հնարավորությունը, վեր հանելու հայոց ինքնուրույն գրականության ոլորտում միջնադարում շրջանառության գտած բյուզանդական մատենագրի երկից քաղված հատվածների նոր ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության հնարավորությունը և այլն։

Բարեբախտաբար, պահպանվել է Վարդան Արևելցու հիմնավորում-բացատրությունը՝ ուղղված նշված աշխատանքի պատվիրատու-մենակենաս Կիրակոս Գանձակեցուն. «յորմէ ցանկացողն դնէ զիւրն տալով զբովանդակն[5], որ է հաւատն, զի այն է մերն ամենայն։ Յորոց և դու ճանաչիս տէրունական՝ իր և անուն հարազատ մեր հղբայր, Կիրակոս[6], բաբունեաց պետ։ Եւ քաղցւայնի[7] կիրք մեր, և մեծ մասն

---

[3] «Հատուածք Հիպոլիտեայք բուս Մեկնութեանն երգոյ երգոց, որ ի Վարդանայ» բնագրի քննական հրատարակությունը, ուսումնասիրությամբ, իրացրել է ակադ. Ն. Մառը (տե՛ս Н. Я. Марр, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, III. СПб., 1901, стр LXXXVIII-CXIV)։ Մեծանուն գիտնականը Հիպոլիտոս Բոստրացու երկը քննում է հունարեն, ասորերեն, սլավոներեն, հայերեն, վրացերեն (թարգմանված հայերենից) առկա խմբագրությունների հենքի վրա։ Հետազոտողը վրացերեն թարգմանության անդրադառնալիս հատկապես ծանրանում է վերջինս հայկաբանությունների վրա (տե՛ս էջ LV—LXX) և անում բազմաթիվ արժեքավոր դիտողություններ։ Ն. Մառի համոզմամբ՝ հայերեն վերոհիշյալ բնագրի հիմք ծառայողները ունեն լեզվաոճական և քերականական որոշակի առանձնահատկություններ (տե՛ս էջ LXXV—LXXXVII)։

[4] Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 298։

[5] Ձեռ. № 5259, ձեռ. № 2603, ձեռ. № 1156, ձեռ. № 3213, ձեռ. № 1460, ձեռ. № 1121՝ զբոլորդոյն, ձեռ. № 1268՝ զբոլորգոյնն։

[6] Ձեռ. № 5259, ձեռ. № 1460, ձեռ. № 1121՝ Կիւրակոս, ձեռ. № 1268, ձեռ. № 2603, ձեռ. № 1156, ձեռ. № 3213՝ Կիրակոս։

[7] Ձեռ. № 5259՝ քաղցրայնի, ձեռ. № 1156՝ քաղցուալի, ձեռ. № 1460՝ քաղցուանի, ձեռ. № 1121՝ քաղցուայնի։

յուսոյն[8] ի սուրբ եկեղեցի, որ[9] և քում ըղձիցն կցորդել[10] հրամայեցեր, ի բան և ի գիր[11] շաւս[12], զհաւատն տեառն տալով, շնորհօք նորա կարեալ[13] մեզ զմնացեալն յերգոյ երգոյն[14], ի Գրիգորէ Նիւսացոյ, որ մեծն է՝ աղբիւր եկեղեցոյ, լնուլ առաջնորդութեամբ Եւրիպհինեա[15], համառօտ առեալ[16] և զԳրիգորին[17] ի սկզբանէ, որ ի վեր գտանի քան զկարն մեր յոյժ...»[18]:

Սուլն հաղորդման հեղինակը, ինչպես տեսնում ենք, հատակ պատկերացում ունի առաջադիր գործի ոչ միայն բնույթի ու նպատակի, այլև ենթադրվող սկզբնաղբյուրների[19] ընդգրկման մասին: Միաժամա-

---

8 Ձեռ. № 5259, ձեռ. № 1460՝ յուսոյ, ձեռ. № 1268՝ յորոյ, ձեռ. № 1156՝ որոյ, ձեռ. № 3213՝ յուսո:

9 Ձեռ. № 5259, ձեռ. № 1121՝ որում:

10 Ձեռ. № 1268, ձեռ. № 1460՝ կցորդեալ:

11 Ձեռ. № 5259, ձեռ. № 1121՝ բանիւ և գրով, ձեռ. № 2603՝ գիրս:

12 Ձեռ. № 5259՝ շուտ անկամ, ձեռ. № 1121՝ շատ անգամ:

13 Ձեռ. № 5259, ձեռ. № 2603, ձեռ. № 1156, ձեռ. № 1268, ձեռ. № 3213, ձեռ. № 1460՝ կարել:

14 Ձեռ. № 5259՝ երգոցն:

15 Ձեռ. № 5259՝ Երոգինի, ձեռ. № 1268, ձեռ. № 2603, ձեռ. № 1156՝ Որոգինեայ, ձեռ. № 3213՝ Յորոգինեա, ձեռ. № 1460՝ Որոգինեա, ձեռ. № 1121՝ Էրոգինի:

16 Ձեռ. № 5259՝ համառաւտ և այլ սակաւ ինչ եղեալ, ձեռ. № 1268՝ համառաւտեալ, ձեռ. № 2603՝ համառաւտ առել, ձեռ. № 1460՝ համառօտել:

17 Ձեռ. № 5259՝ ի Գրիգորէ:

18 Ձեռ. № 5452, էջ 1ա, հմմտ. ձեռ. № 5259, էջ 6ա, ձեռ. № 1268, էջ 240բ, ձեռ. № 2603, էջ 295ա, ձեռ. № 1156, էջ 143ա-բ: Հրատարակված օրինակներում նույնպես բառական, ոճական որոշակի տարբերություններ կան. տե՛ս Հ. Տաշյան, Յուցակ..., էջ 208, Բարգեն կաթողիկոս, Յուցակ..., էջ 443: Ի դեպ, դրշագրերում միօրինակ չեն նաև Վ. Արևելցու աշխատանքի խորագրերը. այսպես, օրինակ, № 5452 դրշագրում ունենք՝ «Հաւաքումն ի մեկնչացն Վարդան վարդապետին երգ երգոցին» (էջ 1ա), հմմտ. «Հոգիապաշծուած սուրբ հարն, լուսաւոր Վարդան վարդապետի արարեալ համառաւտ մեկնութիւն երգոյ երգոցն պարզ և դիւրահաս՝ ի խնդրոյ վարդապետին Կիւրակոսի» (ձեռ. № 5259, էջ 6ա, ձեռ. № 2603, էջ 295ա, ձեռ. № 3213, էջ 6ա), «Վարդանա վարդապետի արարեալ երգս յերգոյն մեկնութիւն՝ ի յոյն Քրիստոս» (ձեռ. № 1268, էջ 240բ), «Վարդանայ վարդապետի արարեալ վասն երգոց երգոյն Սողոմոնի մեկնութեան» (ձեռ. № 1156, էջ 143ա, ձեռ. № 8215, էջ 1ա), («...երջանիկ եւ տիեզերաբարող սուրբ վարդապետին Վարդանա հաւաքումն մեկնութեան երգոյ երգոյն...» (ձեռ. № 1460, էջ 244ա), «Հոգիապաշծուած սուրբ հարն Վարդանայ լուսաւոր արարեալ համառաւտ մեկնութիւն երգոյ երգոցն...» (ձեռ. № 1121, էջ 198ա):

19 Վարդան Արևելցին համապատասխան բաղվածքի դիմաց նշում է սկզբնաղբյուրի հեղինակի անունը համառոտագրված տեսքով. Գր (= Գրիգոր Նիւսացի), Որ (= Որոգինես), Նար (= Գրիգոր Նարեկացի), Հիպ (= Հիպոլիտոս Բոստրացի):

նակ նկատելու է, որ Վարդան Արևելցին ամենայն բարեխղճությամբ հետևում է իր իսկ առաջադրած սկզբունքին: Այսպես, օրինակ, բուն աշխատանքում Գր. Նյուսացու համանուն գործից քաղված հատվածները իրականում անհամեմատ ավելի հաճախադեպ են, քան Գր. Նարեկացու Մեկնությունից վերցված օրինակները, ուստի միանգամայն տեղին է օգտագործված հեղինակի՝ «համառօտ առնել և զԳրիգորին» մասնավորեցումը, որը, ինչպես պարզվում է, մեկ այլ գրչագրում պահպանված խմբագրությամբ կարդացվում է՝ «համառաւտ և այլ սակաւ ինչ եդեալ ի Գրիգորէ Նարեկացւոյ»[20]:

Վարդան Արևելցու Մեկնության գրչագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ նա Գր. Նարեկացու նույնանուն աշխատանքին դիմում է ընդամենը չորս անգամ[21], մինչդեռ Գր. Նյուսացուց կատարված քաղում-հղումները մի քանի տասնյակի են հասնում: Ասվածից հետևում է, թե հեղինակի առաջադրած համեմատության եղրը միանգամայն իրական է:

Ավելորդ չէ նկատել մեկ այլ հանգամանք ևս. իր օգտագործած սկզբնաղբյուրների շարքում Վարդան Արևելցին առանձնահատուկ վստահությամբ ու գնահատողի ջերմությամբ է արտահայտվում բյուզանդական մատենագրի վաստակի նկատմամբ: Այդ է վկայում նրա հետևյալ սեղմ, ամփոփ, բայց միաժամանակ ընդգրկուն ձևակերպումը. «փառաւորեալն յԱստուծոյ Գրիգոր Նիւսացի տեսեալ է զայս և լուծեալ բարիոք զհանգոյցսն, և մեք մի իշխեսցուք այլակերպել զնորայն հոգեբուխ իմաստութիւն, այլ որ ի կարգին է՝ աստուծով գնասցուք...»[22]:

Արդ՝ ե՞րբ է գրվել Վարդան Արևելցու Մեկնությունը: Այս հարցի պատասխանը պիտի փնտրել Վարդանի երկի գրչագրերում: Պարզվում է, որ պահպանված հինգ տասնյակից ավելի ձեռագրերի[23] մի մասում արձանագրվել է «Մեկնութիւն երգոց երգոյն» աշխատության գրության տեղի, ժամանակի ու հարակից հանգամանքների հետ կապված ընդարձակ հաղորդում: Ահա այն. «Ի թուիս յհաւիթն հարիւրերրորդի

---

[20] Ձեռ. № 5259, էջ 6ա, ձեռ. № 2642, էջ 583ա:

[21] Տե՛ս ձեռ. № 5452, էջ 4ա, 8բ, 16բ, 17ա:

[22] Ձեռ. № 5452, էջ 44ա:

[23] Մատենագիտությունը տե՛ս Փ. Փ. Աճրապյան, Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը, գիրք Բ, Երևան, 1989, էջ 320—321: Կան բազմաթիվ ամբողջական, ձեռագրեր, որոնք չունեն այդ հիշատակարանը (տե՛ս ձեռ. № 623, էջ 65ա, ձեռ. № 1460, էջ 297ա, ձեռ. № 1121, էջ 285բ, ձեռ. № 2642, էջ 603ա, ձեռ. № 1156, էջ 234ա):

չորեքտասաններորդի (=714+551=1265) եղև մեկնութիւն Երգոյ երգոյս ի Վարդանա գիտնականէ, տիեզերալուս և յիմաստուն վարդապետէ, յաստուածայմերձ սուրբ ուխտիս Հաղբատա, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս փրկութեանս մերոյ արեգականս և հաւր և հաւատոյդի որբութեանս[24] մերոյ ի պատրիարգութեան հայոց Կոստանդնեայ և Հեթմոյ պսակաւորին մերո, և յարհիպիսկոպոսութեան տէր Յովանիսի, զորս ի կամս իւր խնամեսցէ, և ի սէրն իւր մածուսցէ Յիսուս Քրիստոս աստուածն մեր, բանն փեսասացեալ և հարսնազգեցեալ»[25]:

Ասվեց, որ Վարդան Արևելցու իսկ հավաստմամբ՝ Գրիգոր Նյուսացու Մեկնությունից քաղված հատվածները բավական մեծ տեղ են զբաղեցնում իր աշխատանքում: Այդ առումով Գր. Նյուսացու Մեկնությունից վերցված օրինակների հետ կարող են համեմատվել միայն Հիպոլիտոս Բոստրացու երկից կատարված քաղումները: Հասկանալի պատճառով հնարավորություն չունենալով անդրադառնալ Նյուսացի-Արևելցի առնչակցության բոլոր օրինակներին ու դրանց տեքստաբանական առանձնահատկություններին, ստորև ներկայացնում ենք ընդհանրության տասնհինգ օրինակ Վարդանի երկի տարբեր մասերից, որոնք և հնարավորություն կտան ընդհանուր պատկերացում կազմելու միջնադարում կատարված գրական-մշակութային սույն ազդեցության բնույթի ու նպատակի մասին:

Արդ՝ հետևենք համեմատության ընթացքին:

Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ Յաղագս Երգոյ Երգոց Ձեռ. № 1013 (ժողովածու, 1227 թ., էջ 41ա—120ա)	Հաւաքումն ի մեկնչացն Վարդան վարդապետին Երգ Երգոցին Ձեռ. № 5452 (ժողովածու, ԺԳդ., էջ 1ա—65բ)[26]
1 Զի գինի եւ կաթն ճաշակաւքն ուրուշին եւ իմանալիք լեալք, իմանալեաց	Այլ զդիտաւորին զկամս երկիւղածաց իւրոց գնէ առաջի, ՝ի երեսս ի լսելիս արիւրդացն,

[24] Ձեռ. № 3213, էջ 62բ՝ սրբութեանս:

[25] Ձեռ. № 5452, էջ 65բ, ձեռ. № 2603, էջ 341բ, ձեռ. № 3213, էջ 62բ: Պահպանվել է նույն հիշատակարանի համառոտ տարբերակը. համմտ. «Ի թիւ ՉԺԴ (=714+551=1265) Մեկնութիւն երգո երգոյս ի Վարդանայ գիտնականէ ի տիեզերալոյս և յիմաստուն վարդապետէ» (ձեռ. № 1268, էջ 273ա): Առաջարկվող թվականի ստուգությունը ձեռագրերում և այլուր չի քննարկվում, ուստի և այն անվերապահ ընդունվել է Ն. Մառի և ուրիշների կողմից (տե՛ս H. Марр, նշվ. աշխ., էջ XII): Սակայն բանասեր Փ. Անթապյանը նկատում է, որ «ձեռագրերում երբեմն ընդհատվող «ՉԺԴ» (1265) թվականը միգուցե սկզբնագրում եղել է «ՉԴ» (1255), տե՛ս Փ. Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, էջ 139:

[26] Համմտ. ձեռ. № 5259, էջ 6ա—8օա, ձեռ. № 1268, էջ 240բ—273ա:

այնոցիկ ամենայն իրաւք եւ ընդունելութիւն նոցա հոգւոյն է զաւրութիւն, եւ համբոյրն ի ձեռն մերձենալոյն սգայութեանցն լինի: Վասն զի ոչինչ ի միմեանս շրջուիմ համբուրելովն: է իմն եւ մերձաւորութիւն հոգւոյն...[27] (էջ 47բ):

կոր կամի կցորդ առնել իւրոց ըղձից, ասելով՝ համբուրեսցէ դիս, զի անախտ սէրն ոչ կարէ ծածկիլ, և համբոյրն լինի շրջանցն նպատակ յիրեարս... (էջ 3բ):

2 Ուսանիմք անցանելով ընդ ճանապարհն եւ միւս աւանդութիւն գրոցս այսոցիկ իմաստասիրութեամբ, զի կրկին իմն է ի մեզ սգայութիւնս, մի՝ մարմնական եւ միւսն՝ աստուածային, որպէս ասէ ուրեմն առակացն բանն՝ եթէ զգայութիւն աստուածային գոցես: Քանզի համեմատութիւն իմն է ի[28] հոգեւոր զաւրութիւնս... (էջ 47բ):

Սակայն արդիւնքն յայնժամ կատարեցան, յորժամ ասաց՝ ձեր երանի աչացդ, զի տեսանեն և ականջացդ, զի լսեն: Քանզի ըստ զգայութեանէ մարմնոյն են և ճոգոյն, որպէս ասէ առակին, զգայութիւն աստուծոյ գոցես և, ըստ Յոհաննու, ձեռք մեր շուշափեցին զբանն կենաց յորժամն որ ծնաւ ամենեսեան մեզ մկրտութեամբ (էջ 3բ—4ա):

3 Ի բաց մերժեցին զնա ի դրախտին պանպաճանութենէ, փութալ յիւրեանց այգին, յորում ողկոյզն մշակի զդառնութիւն եւ խաղողն՝ դմաղձն: Այսպիսի այգի Սոդոմայ էր, այնպիսի ոտ Գոմորայ՝ դատապարտեալ ընդ Սոդոմայ...[29] (էջ 52բ):

Ախտք, որ ծնանին ի մտաց և ի խորհրդոց, ցասումն և ցանգութիւն, և հպարտութիւն, և ագահութիւն, և եղին սպանեալան այցեստանոյն, որ յայգոյն Սոդոմա էր և ոտն ի Գամորա, և ի սատանայէ մշակիալ ամենեքեան, որք զգուշանան պահելով... (էջ 8ա):

4 Զհոյն իմոյ ի կառն Փարաւովնի նմանեցուցից զքեզ, մերձաւոր իմ...[30] Այլ զաւրութիւն ընդդէմ կարգել ձիոյն Փարաւովնի ի պատմութենէս ուսանիմք, ամպ եւ դաւազան, եւ բռնագոյն հողմն, եւ խորս երկուս բաժանեալ...[31] (էջ 56ա):

Զհոյն իմոյ ի կառն, թէպէտ պատմութիւն ոչ կայ այսմ, թէ ձիք էին ընդդէմ կառացն Փարաւոնի: Այլ սատ հաւատալի է, եթէ հրեշտակական իմն զաւրութիւն ի նմանութիւն ձիոյ կայր ընդդէմ կառացն Փարաւոնի, որպէս և ինքեանք ասէին... (էջ 9բ—10ա):

5 Ամենայն գինուորականն Փարաւովնի հանդերձ ձիովքն եւ կառաւքն ընկղմեցան յալիս: Եւ զի ոչ մի ձիական զաւրութիւն ընդդէմ կարգեցաւ եգիպտացւոցն զաւ-

Զհոյն նմանեալ անդ, քանզի որպէս նաւատ ընդ նաւս կուիւ և չայրեն, նոյնպէս ձիական զաւրաց ձիաւք է չաղթել: Զի և կառք սատուծոյ ասի բիւրապա-

---

[27] Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 780:
[28] Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 780:
[29] Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 797—800:
[30] Հմմտ. Համազասպ Ոսկեան, Երգ երգոց առաջին և երկրորդ թարգմանութիւնը, ուսումնասիրութիւն և բնագիր, Վիեննա, 1924, էջ 45 (այսուհետեւ՝ Երգ երգոց):
[31] Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 809:

րուն, տարակուսանք են ուսանել, որում նրևնել Ձիոյ հակառակ եգիպտացւոցն Հարանն ի բանէն այնմ նմանին։ Քանզի ձիոյն իմոյ, ասէ, ի կաոս Փարաւնի[32], որ գործնայ զյաղթութիւն, նմանեցուցից զքեզ, մերձաւոր իմ։ Որ գործնացն զյաղթութիւն, նէթ ոչ յայտ է զի, զոր աւրինակ, ոչ է նաւամարտութեամբ յաղթել ումեք, նէթ ոչ նաւական զաւրութիւն իցէ ի նաւսն, որ զհակառակամարտ զաւրութիւն ընկղմեսցէ[33] (էջ 56ա)։

տիկք և չորք կառաւք ընդ յերկար առաքել երկիր... (էջ 10ա)։

6 Զիգ իգամոլք են, իւրաքանչիւր որ ի կին ընկերի իւրոյ վրնջեն։ Եւ մեծն Դաւիթ ահաւոր առնէ իբրեւ ձի ումեք եւ ջորի լինել, զորոյ հրամայէ ճնշել ճեմս եւ սանձիւ զկզակսն։ Յաղագս այնորիկ մխիթարէ բանիւ, որ ի կարգին է զմիտան զայն, ասելով՝ նէթ ոչ այնպիսի քո կզակդ լինիցին, թէպէտեւ ձի իցես, մինչ զի երախճանաց եւ սանձաց պէտս ունել ի ճնշումն, այլ քո յաղագս սրբութեանն իբրեւ զտատրակաց ծեատ զեղեցկացան[34] (էջ 57ա)։

Աւրիորդըն յայնպիսի նախատանաց ի բաց տանին՝ զձին ասելով։ Քանզի գեղեցկացան ծեատ էո իբրեւ տատրակի զողջախոհութեան սաճնսն դնելով ի ծրեատսն և զարդարելով ցանգալի առնեն։ Քանզի, ասեն, զտատրակ ողջախոհ քան զամենայն կենդանի... (էջ 10ա—բ)։

7 Աւրդ՝ զայս ուրեմն առ բարեկամս փեսային անցանէր բանիւ, երէ զնոտ նուռս իմ նարդոս տայ ինձ[35], զայսոսիկ եւ այսպիսի իմն ինձ իմաստասիրելով ասել, դի նէթ որ զամենայն ծաղիկ աեոյշաճոտութեան եւ կամ ի խունկ ի զանազանել տիրաց առաքինութեան հատաքեսցէ, եւ զամենայն զվարսն իւր նւղեալ ի ձեռն բոստ իւրաքանչիւր ուրուք անոյշահոտ գործոցն պատրաստեսցէ, ամենեքումբք լինի կատարեալ[36] (էջ 59բ)։

Նարդոս իմ նա զնոտ իւր ծրարս տաշխի, նղբաւրորդին իմ ինձ և ի մէջ ատեանց իմոց հանդիցէ... Նարդոս անուն է աեոյշաճոտ ծաղկի ի յոլով ծաղկանց հատաքեալ և ձիթով եփեալ ի պէտս բժշկութեան և հոտոյ. միոյն անունն զոյ նարդին (էջ 11բ)։

---

32 Համմ. երգ երգոց, Ա, 8։
33 Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 809։
34 Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 813, համմ. երգ երգոց, Ա, 9։
35 Համմ. երգ երգոց, Ա, 12։
36 Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 824։

8 Զի՞նչ էր նարդոսն հաւատարիմ, բազմագին, ի վերայ հնդկայ գխոյն տնառն և զամենայն տունն անոյշահոտութեամբն ելից: Թուի ինձ, եթէ ոչ աւտարանայ յիւղոյն յայնմանէ այս եւղ, որ զհոտ փեսայիննն տայ հարսինն[37] եւ յԱւետարանին ի վերայ նորին տեառն՝ հպկալ լնոյր անոյշահոտութեամբ գտանն, յորում ընպակցութիւնն էր[38] (էջ 60ա):

Եւ արդ զի յերգ երգոց, ճարդոս զհոտ փեսային հարսինն տայ[39] եւ յԱւետարանի բաւանդակ մարմնոյ եկեղեցւոյ[40] յամենայն տիեզերս, եւ ի բոլոր աշխարհ աւծումն անոյշահոտութեան լինի, որ յայնժամ գտանն ելից...

Ասեն փոյթ իմն լինել զարդասէր կանանց, ոչ արտաքուստ զարդուք միայն խնամեալ զինքեանս առ ի կենակիցսն ցանկութիւն, այլ եւ հնարեալ անոյշահոտութեամբ ոմանք հեշտալի արանցն զմարմինս երեւեցուցանել... եւ դմարմինն խնկելով անոյշահոտութեամբ բուրեցուցանէ... քանզի զդրութիւնս տեղւոյ առեալ ի մէջ ստեանցն ամենեւին, որ զայնպիսիսն գիտեն, ասեն[41] (էջ 60բ):

9 Քանզի նաւասարապէս կոխին առեւծ եւ վիշապ, առաւելեալքն, որպէս ասէ եւ կարիճ, որ թուին վատթարագոյնք...: Որպիսի՞ ինչ ասեմ՝ էին յորս զկնի երթային նորա ամբոխքն լերինք, դիւք էին, ի ժողովարանս էին, ի գաւառին Դերգեսացւոց, էին եւ յայլս բազումս, հակառակ մարդկային բնութեանս բարձրացեալք եւ ամբարձեալք: Յայնցանէ էին եւ բլուրք, եւ լերինք ի վեր գերազանցեալք, եւ ի ներոյ կացեալ[42] (էջ 70ա):

Այլ և նարդոսն, որ թափեցաւ ի գլուխ տեառն, և տունն լցաւ ոնտով յաւրինակ տիեզերաց: Եւ նա եղև հարսն, և հոտ գործոյ նորա եհաս աւետարանաւն յամենայն երկիր: Այլ և փեսային հոտն հարսինն գայ ամենայն մասանց անդամոց եկեղեցւոյ. ի քահանայից, ի սարկաւագաց, ի կուսից և յայրոցն, ծարաւս տաշխ, զարդասէր կանայք սովոր են ծարաւս խնկոց զպարանոցէն կախել ի վեր լանջացն: Հանգուցանել զփեսայն հոտով աւուրբեան և ի մէջ ստեանցն սիրտն կայ, ուր գանձն է բարեաց, ուստի աղբիւրաբար բխեն կենսաբեր ջերմութիւնքն յամենայն անդամսն (էջ 12ա-բ):

Հաւասարապէս զմեծամեծս և զփոքունս, հարթելով կոխմամբն զխորշութիւն և զանհարթութիւն ճանապարհին ստութենէ, կոխել զաւս և զկարիճս, զի դիւրաւ ուղղեսցի բարոյն ճանապարհ ըստ մարգարէին լերինք և բլուրք խոնարհեսցին և եղիցին դժուարինք ի դիւրին (էջ 18ա):

---

37 *Համմ. Երգ երգոց, Ա, 12:*
38 *Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 825:*
39 *Համմ. Երգ երգոց, Ա, 12:*
40 *Համմ. Փ. Անթապյան, նշվ. աշխ., էջ 294:*
41 *Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 825—827:*
42 *Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 861—864:*

10 Բայց լուիցուք դինչ եւ ընդ ակնդեցւոյն խաւսի, որ չէւ եւս ի ներքոյ որմոյնեղեւ, այլ տակաւին լուսաբերաւքն առնա բարբառի: Քանզի, ասէ, պատասխանի տայ եղբաւրորդի իմ եւ ասէ ցիս՝ արի, ակ, մերձաւոր իմ, գնդեցիկ իմ, ազաւնի իմ: Զի անա ձմեռն էանց, անձրեւն նեռացաւ, գնաց իճեւամբ: Ծաղիկք երեւեցան յերկրի, ժամանակ յայտնելոյ նեաս: Ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մեռոմ: Թզենի ընձեղեաց զպաղբոջն իւր: Այգիք ծաղկեցին, եառն զնոտ[43] (էջ 70բ):

Եւ արդ գնդեցկացաւր ազաւնո տեսակաւ. ձգեցեր յինէն ի բիզ զգնդեցկութիւն իրք հայելի, զի ձմեռն էանց, անձրեւ նեռացաւն, որք են տեսակք փորձութեան, գնաց իճեւամբ, որ փորձութեանց էր պատճառ նովաւ գնաց: Ծաղիկք երեւեցան՝ առաքինութիւնք ի հոգիս: Ժամանակ յայտնելու նեաս՝ կարելւո զաւելորդս և զպատս, զոր աղջախոհ տատրակն Յովաննէս յայտնէր ի մաքսաւորաց և ի մեզաւորաց, որք ելանէին առ նաս: Թզենի եւս զբաղբոջ իւր, որ զյաճախ գիջութիւնն, զոր ունի ի բնութիւնէն, յոլով անգամ ի ծայրապատուկսն տա, զոր բազբոջ անուանէ, որ և զուշակումն է կատարեալ պաղոյն, ուստի ինքն յոմանց, որ է խոստովանութիւնէ տեսակ: Նախ ասել ցանցաննս, զի արդարասցի, և այգիք ծաղկեցին, եառն զնոտ: Ամենեին իակ զուշակումն է գարնանն, որ կայ ի մէջ ձմերան և ամարան, յորում այգիք ծաղկեալ, զնոտն անոյշ տան երկրագործին և զաւետիս խաղողոյն և զինոյ, որ է ապաշխարութիւն արժանի պաղոյ, զոր Կարապետն պատուիրէր մերձ ասելով զաբբայութիւն աստուծոյ՝ արի, ակ մերձաւոր իմ ազաւնի (էջ 19ա-բ):

11 Եւ արդ զի մերձ է նախապարապին հովանի ի վէմն, առանց հեռաւորութեան է քեզ ի պարապէն ի վէմն փոփոխումն: Թլխատութիւն է ի պարիսպն, թլխատութիւն եւ ի վիմին, ոչխար եւ ոչխար, արիւն եւ արիւն, պատաչ եւ պատաչ. եւ ամենեքեան զրնէք նոյնք, եւ նորիմբք ի միմեանս են մերձ...: Բայց աւետարանական վէմն, զմարմնական իմատիցս կաւ ոչ ունի[44] (էջ 74ա-բ):

Ես ասեմ մի հաւր, մի ապանանէք, և ես ասեմ մի բարկանաւր. որքան մերձաւորք են անտ, թլխատութիւն և աստ: Անտ՝ ոչխար, և աստ՝ արիւն, և արիւն: Այլ անդ՝ մարմին և աստ՝ հոգի ցոյց ինձ զդէմս քո վիմով աւետարանին, զոր նախապարապեալն Մովսէս ոչ կարաց տեսանել (էջ 20ա):

---

[43] Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 864—865, համմ. երգ երգոց, Բ, 10—13:
[44] Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 877:

12 Քանզի ոչ ևս որմով աւրինացն ի միաւորութենէ փափագեցուցիւ ի բաց պարսպի։ Այլ, ասէ, ես եղբաւրորդւոյն իմոյ եւ եղբաւրորդին իմ ինձ[45], որ ևս-վուեն ի շուշանս[46] մինչեւ ծագեսցէ աւրն, եւ շարժեսցին ստուերքն[47] (էջ 75բ)։

13 Զայսոսիկ տեսեալ հարանն, եւ փութայ զբանն վաղվաղակի ի գործ ածել զբարեացն յոյս, դարձո, ասելով, զչարեացն զերծումնն, ով եղբաւրորդի իմ։ Նմանեա այծեամն կամ որբոյ եղջիւրուի ի վերայ լերանց հովսաց[48]։ Տես իրրեւ զայծամն, զմտածութիւն մարդկան յայկանելով, որ վերհուրդս սրտից ճանաչես։ Ապականէ զծնունդս չարութեանն, իրրեւ որ եղջիւրուաց վատնելով զազգ աւձից[49] (էջ 76ա)։

14 Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ Հայցեցի եւ ոչ գտի զնա[50], կոչեցի զնա, եւ ոչ լուաւ ինձ[51]։ Յարեաց եւ շրջեցայց ի քաղաքի, ի փողոցան, եւ ի հրապարական, եւ խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ Խնդրեցի զնա եւ ոչ գտի[52]։ Գտին զիս պահապանքն[53], որ շրջէին ի քաղաքին։ Մի զոր սիրեաց անձն իմ տեսէք։ Իրրեւ սուղ ինչ անցի ըստ նոսա, գտի զոր սիրեաց անձն իմ, իրրեւ փոքր ինչ զանց արարի։ Կալայ զնա եւ ոչ թողի զնա, մինչեւ մտից ի տուն մաւր իմոյ, եւ ի շտեմարանս յղացելոյն զիս[54] (էջ 76ա)։

Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ Խնդրեցի, եւ ոչ գտի, կոչեցի, եւ ոչ լուաւ ինձ։ Յարեաց եւ շրջեցայ ընդ քաղաքս, ի փողոցս եւ ի հրապարակս, խնդրեցի եւ ոչ գտի։ Գտին զիս պահապանք պարսպացն, միթէ զոր սիրեաց անձն իմ տեսէք։ Իբրեւ փոքր մի անցի, գտի զոր սիրեաց անձն իմ։ Կալա զնա եւ ոչ թողի զնա, մինչեւ մտից ի տուն մաւր իմոյ եւ ի սենեակ յղացելոյն զիս (էջ 21բ)։

---

45 Համմ. Երգ երգոց, Ա, 12։
46 Համմ. Երգ երգոց, Բ, 16։
47 Բնագիրը տե՛ս PG,t. 44, էջ 881։
48 Համմ. Երգ երգոց, Բ, 17։
49 Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 884։
50 Համմ. Երգ երգոց, Ե, 6, համմ. Գ, 1։
51 Համմ. Երգ երգոց, Ե, 6, համմ. Գ, 1։
52 Համմ. Երգ երգոց, Ե, 6, համմ. Գ, 2։
53 Համմ. Երգ երգոց, Ե, 7։
54 Բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 884—885, համմ. Երգ երգոց, Ը, 2։ Գր. Նյուսացու Մեկնության վեցերորդ ճառի սույն հատվածը մատնահի տարբերությամբ երիցս կրկնվում

15 Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ Հայցեցի զնա եւ ոչ գտի, կոչեցի զնա, եւ ոչ լուաւ։ Յարեաց եւ շրջեցայց ի քաղաքի, ի փողոցս, եւ ի հրապարակս, խնդրեցի, զոր սիրեաց անձն իմ։ Խնդրեցի զնա եւ ոչ գտի։ Գտին զիս պահապանքն, որ շրջէին ի քաղաքին։ Մի զոր սիրեաց անձն իմ տեսէք։ Իբրեւ սուղ ինչ անցի ընտ նոսա, գտի զոր սիրեաց անձն իմ։ Կալայ զնա եւ ոչ թողի զնա, մինչեւ մատի զնա ի տուն մաւր իմոյ, եւ ի շտեմարանս յղացելոյն զիս[55] *(էջ 78բ)։*

Որպէս որք մարմնովք ի գիշերի յանկողնիս միաւորին, և նա ի բաց թռեաւ ի հաստոցութենէ։ Իմացմամբ, ասէ, մտացս խնդրեցի և ոչ գտի, կոչեցի զանուանս, զոր գիւք բերեն և ոչ լաւ, զի ոչ գոյ անուն, որ զիսկութիւնն աստուծոյ յայտնէ։ Ասացի ապա յարեայց և շրջեցայց և չոգա յերկնաւին քաղաքն և ընդ ամենայն զաւրսն երկնից, զոր հրապարակ և փողոց կոչէ։ Գտին զիս անդ պահապանք պարսպացն, որ պահեն զանճառութիւնսն աստուծոյ խորքն և ոչ քննեն (էջ 21բ)։

Արդ. ի՞նչ կարելի է ասել նշված երկու մատենագիրների տեքստաբանական առնչակցության մասին։ Առաջադրված օրինակներին և առհասարակ Նյուսացի-Արևելցի նմանության ողջ ընթացքին հետևելուց հետո այն տպավորությունն է ստացվում, որ Վարդան Արևելցու քաղում-հղումները սկզբնաղբյուրի հետ ունեցած ուղղակի առնչակցության իմաստով միօրինակ չեն։ Բավական հաճախադեպ են այն հատվածները, որոնցում հայ մատենագիրը իր նախասիրությամբ ու անհրաժեշտության թելադրանքով վերապատմում, վերաշարադրում է «Յաղագս Երգոյ երգոց» երկի այս կամ այն դրվագը (համմտ. երկրորդ, երրորդ, հինգերորդ, վեցերորդ հատվածները)։ Հասկանալի պատճառով նման դեպքերում բառական ընդհանրության օրինակ փնտրելը ճիշտ չի լինի։ Սակայն բավական է ուշադիր վերընթերցել այդ կարգի հատվածները՝ համոզվելու համար, որ իրականում այդ ամենի հիմքում ընկած է բյուզանդական մատենագրի շարադրանքը։ Ընդհանրական հատվածների համեմատական հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ իրողությունը ամենից

է նույն ճառում։ Այդ իրողությունը հայերեն թարգմանությամբ չէ պայմանավորված, այլ դալիս է հունարեն բնագրից։ Կրկնվող երկրորդ հատվածը հետևյալն է. «Յանկողնի իմում ի գիշերի, ասէ, խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ Խնդրեցի զնա եւ ոչ գտի, կոչեցի զնա, եւ ոչ լուաւ ինձ։ Յարեաց եւ շրջեցայց ի քաղաքի, ի փողոցս, եւ ի գռնէն, եւ խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ Հայցեցի զնա եւ ոչ գտի։ Գտին զիս պահապանքն, որ շրջէին ի քաղաքի։ Մի զոր սիրեաց անձն իմ տեսէք։ Իբրեւ սուղ ինչ անցի ընդ նոսա, գտի զոր սիրեաց անձն իմ, իբրև փոքր ինչ զանց արարի։ Կալայ զնա եւ ոչ թողի զնա, մինչեւ մատի զնա ի տուն մաւր իմոյ, եւ ի շտեմարանս յղացելոյն զիս» (էջ 76բ, բնագիրը տե՛ս PG, t. 44, էջ 888, համմտ. Երգ երգոց, Գ, 1—4)։

[55] *Բնագիրը տե՛ս* PG, t. 44, էջ 893։

առաջ պայմանավորված է գրական սույն առնչակցության բնույթով, ամենայն հավանականությամբ, տեղական անհրաժեշտությամբ և որոշակի միջավայրի հետաքրքրություններին համապատասխան բացատրություն տալու Վարդանի մտահոգությամբ։

Մյուս նկատելի երևույթը, այսպես կոչված, սկզբնաղբյուրը հրնարավորին չափ սեղմելու, որոշ իմաստով բեռնաթափելու, հարկավոր նյութը, իրեն հետաքրքրող միտքը կամ շարադրանքի մասը վերցնելու փաստն է, որը ընդհանուր առմամբ սկզբնաղբյուրը համառոտելու եղանակ կարելի է կոչել։Կասկածից վեր է, որ այս դեպքում ևս հայ մատենագիրը առաջնորդվում է տեղական պահանջմունքները բավարարելու մտահոգությամբ։ Սակայն ի տարբերություն նախորդ կետի, տվյալ պարագայում բառացի նմանության օրինակները (բառեր, արտահայտություններ, դարձվածներ) պահպանվում են։ Դրանում համոզվելու համար փորձենք վկայակոչել մեկ օրինակ.Գր. Նյուսացու «եւ բլուրք, եւ լերինք ի վեր գերազանցեալք, եւ ի ներքոյ կացեալք» (հատված ինն երորդ) միտքը Վ. Արևելցու օրինակում արտահայտվել է երիք բառով՝ «լերինք և բլուրք խոնարհեսցին»։

Վարդան Արևելցու աշխատանքում շատ ավելի նկատելի է սկզբնաղբյուրի միտքը բացելու, ընդարձակելու, այս կամ այն համառոտ, սեղմ, հաճախ բանաձևային ձևակերպումը հարակից բացատրությամբ օժտելու եղանակով ավելի պարզ, հասկանալի դարձնելու ձգտումը, որը, եղած համաբնույթ օրինակների համադրումից ելնելով, կարելի է կոչել սկզբնաղբյուրի շարադրանքը ընդարձակելու ձգտում։ Սակայն պիտի նկատել մի հանգամանք, որը հետևողականորեն պաշտպանվում է Վ. Արևելցու գրեթե բոլոր այդ կարգի դրվագներում. Վարդանի առաջադրած բացատրությունը ուղղակիորեն ընկալվում է իբրև բյուզանդական մատենագրի համապատասխան բացատրության շարունակություն, ամենևին օտար միտք չէ և համահնչուն է ընդհանուր սյուժեի հետ։ Ահա ասվածը հաստատող նման օրինակներ.

Գր. Նյուսացի	Վ. Արևելցի
Ձմեռն էանց, անձրեւն հեռացաւ (էջ 70բ)։	*Ձմեռն էանց, անձրեւ հեռացան, որ են տեսակ փորձութեան (էջ 19ա)։*
Գնաց ինքեամբ (էջ 70բ)։	*Գնաց ինքեամբ, որ փորձութեանց էր պատեառ նովաւ գնաց (էջ 19ա)։*
Ծաղիկք երեւեցան յերկրի (էջ 70բ)։	*Ծաղիկք երեւեցան՝ առաքինութիւնք ի նոցին (էջ 19ա)։*
Ժամանակ յայտնելոյ հնաս (էջ 70բ)։	
Թղենի ընձեղեաց զբողբոջն իւր (էջ 70բ)։	

ժամանակ չայտնելո եհաս, կտրելո զաւելորդս և զգաւսս (էջ 19ա)։
Թզնի ես զրոզրոջ իւր, որ գյաճախ գիջուրիւճն, զոր ուճի ի բնութենէն, յոլով աճգամ ի ծայրապտուկսն տա (էջ 19բ)։

Նյուսացի-Արևելցի առնչակցության բնույթի, առանձնահատկությունների մասին մեր պատկերացումը հնարավորին չափ ամբողջական դարձնելու նպատակով պիտի արձանագրել մի օրինաչափություն ևս. կան հատվածներ էլ, որոնք բառացի նմանությամբ հետևում են սկզբնաղբյուրին, այսինքն փոխառու հուշարձանից նույնությամբ վերաբերնակեցվել են ընկալող երկի բնագիր։ Այդ իմաստով ուշագրավ օրինակ կարող է ծառայել վերոբերյալ համադրությունների տասնչորսերորդ հատվածը։ Միաժամանակ այդ նույն համեմատությունից, ինչպես նաև այլուր եղած նույնական դրվագների զուգադրությունից հետևում է, թե գրեթե առանց միջամտության են ներկայացվում աստվածաշնչական բացատրությունները։ Եվ դա իրոք այդպես է։

Բայց ասվածը ամենևին էլ չի նշանակում, թե Վարդան Արևելցին ձեռքի տակ ունեցել է Ս. Գրքի հայերեն թարգմանության կանոնիկ տեքստ և անհրաժեշտության դեպքում դիմել է վերջինիս օգնությանը։ Մինչդեռ այս պարագայում ուղիղ հակառակը պիտի պնդել, որովհետև բավարար հիմքեր կան մտածելու, որ Վարդանը նման դեպքերում չի դիմում Ս. Գրքի հայերեն թարգմանության օգնությանը, այլ «Երգ երգոցի» անհրաժեշտ արտահայտությունները, առանձին ձևակերպումները, երբեմն նաև ոչ ընդարձակ հատված-օրինակները, նույնպես քաղում է Գր. Նյուսացու աշխատության ճիշտ այն նույն մասերից, որոնցից օգտվում է ինքը։ Նյուսացու գործի աստվածաշնչական հղումները իրենց համապատասխան տեղայնացված հատվածներով են վերաբերնակեցվում Վարդանի բնագրի տարբեր մասերում։ Առ այդ կարելի է վկայակոչել մի քանի պատճառաբանություն։ Ահա դրանցից երկուսը.

ա) Իր ձեռքի տակ եղած, տարբեր հաճախականությամբ օգտագործած սկզբնաղբյուրները անուն առ անուն հիշատակող, այդ աղբյուրների հարկավորության անհրաժեշտությունը հատուկ ընդգծող Վարդան Արևելցին, պիտի ենթադրել, որ Ս. Գրքի հայերեն թարգմանությունից անմիջականորեն օգտվելու դեպքում կանդրադառնար նաև վերջինիս և կհղեր այն։ Մինչդեռ պահպանված գրչագրերի համեմատությունից պարզվում է, որ ո՛չ Վարդանը, ո՛չ էլ նրա գործի հետագա գրիչ-խմբագիրները բնավ չեն կարևորել այդ խնդրի անհրաժեշտությունը

(ուրիշ կարգի խմբագրական, բնագրագիտական-տեքստաբանական լուսանցագիր գրառումներ կան)։ Ավելին, Վարդանի բնագրում հիշյալ աստվածաշնչական բացատրությունների համար ևս իբրև սկզբնաղբյուր ամենուր հիշվում ու հղվում է Գր. Նյուսացու անունը։

բ) Երկրորդ իրողությունը հետևյալն է. համեմատությունը ցույց է տալիս, որ «Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի...» սկսվածքով տասնչորսերորդ հատվածի բուն սկզբնաղբյուրը Ս. Գիրքն է[56]։ Միաժամանակ պարզվում է, որ այդ նույն քաղվածքը Գր. Նյուսացու վեցերորդ ճառում մասնակի տարբերություններով երիցս կրկնվում է։ Նըշված իրողությունը, ասվեց, պատահական միջամտությամբ կամ Նյուսացու երկի հայերեն թարգմանության շրջանակներով բացատրելու չէ, որովհետև կրկնվող հատվածները նույնությամբ կան բյուզանդական մատենագրի հունարեն բնագրում։ Արդ՝ Նյուսացի-Արևելցի ընդհանրությունը ցույց է տալիս, որ Գր. Նյուսացու Մեկնության աստվածաշնչական կրկնվող բացատրությունները որոշ տարբերություններով հանդերձ կրկնվում են նաև Վարդանի աշխատանքում։ Թվում է, այս փաստի առկայությունից մի հնարավոր հետևություն կարելի է անել՝ Վարդան Արևելցու Մեկնության էջերում հանդիպող աստվածաշնչական քաղումների հիմքը նույնպես Գր. Նյուսացու համանուն երկն է։ Հակառակ պարագայում պիտի ընդունել, որ նմանության այդ օրինակները պարզապես պատահական զուգադիպության արդյունք են, մի բան, որ քիչ է հավանական։ Ասվածը հնարավորություն է տալիս եզրակացնելու. քանի դեռ չեն հայտնաբերվել, բանասիրությանը ծանոթ չեն հակառակը պնդելու հնարավորություն տվող նոր ձեռագիր աղբյուրներ, պիտի ընդունել, որ Վարդանի Մեկնության աստվածաշնչական քաղումների սկզբնաղբյուրը ևս Գր. Նյուսացու «Յաղագս երգոյ երգոց» աշխատության հայերեն թարգմանությունն է։

Այժմ մի քանի խոսք վերոբերյալ ընդհանրության օրինակներում առաջադրվող սրբագրությունների մասին։

Համադրվող հատվածների ութերորդ օրինակում Գր. Նյուսացու դրվագում կարդում ենք. «Նարդոս զհոտ փեսային հարսինն տայ», որի հիմքը աստվածաշնչական «Նարդոս իմ եւ զհոտ իւր»[57] նույնիմաստ արտահայտությունն է։ Գր. Նյուսացու միտքը բառացի թարգմանությունն է հունարեն բնագրի. «ἡ νάρδος τὴν ὀσμὴν τοῦ νυμφίου τῇ νύμφῃ

[56] Համմ. երգ երգոց, Դ, 1—4։

[57] Երգ երգոց, Ա, 12։

ծիծաւն[58], որը, թվում է, որևէ վրիպում-անճշտություն չունի, համընթաց է հատվածի թարգմանության հետ, ուստի և հայերեն առկա վիճակը որևէ միջամտության անհրաժեշտություն չունի: Մինչդեռ Նյուսացու միտքը մի փոքր այլ տեսքով է պահպանվել Վարդանի օրինակում. «այլ և փեսային հոտն հարսինն գայ», որտեղ խոսքը հոտի գալու մասին է և ոչ թե տալու, ինչպես նաև բացակայում է նարդոս անվանումը: Արդ՝ եթե սույն տարբերակը Վարդան Արևելցու ձեռքով կատարված միջամտություն չէ (իսկ նման օրինակներ կան համադրվող հատվածներում), ապա այն պիտի վերընթերցել ըստ սկզբնաղբյուրի, ուր խոսքը նարդոսի հոտը տալու մասին է և ոչ թե գալու:

Առաջադրվող սրբագրության ստուգությունը վերահսկելու հնարավորություն է տալիս նույն մատենագիրների ընդհանրության յոթերորդ օրինակը, որտեղ կրկին հանդիպում ենք նույն ձևակերպմանը և, որ էական է, երկու դեպքում էլ խոսքը նարդոսի հոտը տալու մասին է և ոչ թե գալու. «զհոտ նորա իմ Նարդոս տա ինձ» (Նյուսացի), «Նարդոս իմ եաւ զհոտ իւր» (Արևելցի):

Նույն հատվածի հետ կապված հաջորդ ասելիքը վերաբերում է առաջադրվող սրբագրության շարունակության մեջ հանդիպող Գր. Նյուսացու «մարմնոյ եկեղեցւոյ» արտահայտության դիմաց Վ. Արևելցու նախընտրած (ձեռագրերում այլ տարբերակ չունենք) «անդամոց եկեղեցւոյ» կիրառության: Համադրվող դրվագների որոշակի նմանությունը հնարավորություն է տալիս մտածելու, որ Վարդան Արևելցու հիշյալ հատվածում պահպանված արտահայտության անդամ (անդամոց) բաղադրիչը աղավաղում չլինելով հանդերձ՝ իր հայտնի նշանակությամբ[59] գոնե եկեղեցի հասկացության հետ կիրառության այլուր պահպանված օրինակ չի տալիս: Մինչդեռ Վարդան Արևելցու սկզբնաղբյուրի «մարմնոյ եկեղեցւոյ» կապակցության իսկությունը հավաստվում է նույնի հունարեն բնագրով, ուր ասված է՝ «τοῦ σώματος τῆς Ἐκκλησίας[60], պիտի ենթադրել, որ բյուզանդական մատենագրի տարբերակը նախընտրելու համար բավարար հիմքեր կան:

Վերոբերյալ տասնչորսերորդ օրինակի Գր. Նյուսացու հատվածի սկզբնամասում կարդում ենք. «Հայցեցի եւ ոչ գտի զնա, կոչեցի զնա

---

[58] PG, t. 44, էջ 825:

[59] Ունի մասն մարմնոյ կենդանեաց (ՆՀՔ, Ա, 130), մասունք մարմնոյ (Առձեռն բառարան..., էջ 49) իմաստները:

[60] PG, t. 44, էջ 825:

և ոչ լուաւ ինձ», «խնդրեցի զնա, եւ ոչ գտի»: Նյուսացու Մեկնության հայերեն թարգմանությունից օգտվող Վարդան Արևելցին այս դեպքում ևս սկզբնաղբյուրին է հետևում բառացի նմանությամբ՝ «խնդրեցի և ոչ գտի, կոչեցի և ոչ լուաւ ինձ», «խնդրեցի և ոչ գտի»: Համեմատությունը ցույց է տալիս, որ նշված բուն հատվածները հիմնականում նույնը լինելով հանդերձ՝ երկրորդ դեպքում ինչ-ինչ պատճառով երից տարվել է նա (զնա) ցուցական դերանունը և այդ իսկ պատճառով հայ մատենագրի միտքը մասամբ թերավարտ է, խնդրանքն ակամայից մնացել է անհասցե: Մինչդեռ Գր. Նյուսացու երկի և՛ վկայակոչված հատվածում, և՛ վերջինիս շարունակության մեջ ունենք զնա կիրառությունը, որը հակառակի պատճառով անհրաժեշտ է վերականգնել նաև Վ. Արևելցու հատվածում: Նշված ցուցական դերանունը կա նաև Գր. Նյուսացու Մեկնության բնագրում և կոչված է ճիշտ նույն դերը կատարելու: Բյուզանդական մատենագրի երկի հայերեն թարգմանության «ոչ գտի զնա» արտահայտության դիմաց հունարենում ունենք «οὐχ εὗρον αὐτὸν»[61], իսկ «կոչեցի զնա» և «խնդրեցի զնա» կապակցությունների փոխարեն համապատասխանաբար՝ «ἐκάλεσα αὐτὸν»[62], «ἐζήτησα αὐτὸν»[63]: **Նա (զնա)** դերանվան վերականգնման անհրաժեշտությունը հունարենից բացի, երկու դեպքում հաստատվում է նաև ասույածաշնչական համապատասխանան վկայությամբ[64]: Այսպիսով, վերոշարադրյալը հնարավորություն է տալիս ասելու, որ կան բավարար հիմքեր Վարդան Արևելցու հատվածի նշված արտահայտությունները սկզբնաղբյուրի հետևությամբ լրացնելու և վերընթերցելու «ոչ գտի զնա», «կոչեցի զնա», «խնդրեցի և ոչ գտի զնա» տեսքով:

Վարդան Արևելցու նշված հատվածին վերաբերող հաջորդ սրբագրությունը կապվում է վերջընթեր «ի սենեակ յղացելոյն զիս» մտքի հետ, որի դիմաց սկզբնաղբյուրում առկա է «ի շտեմարան յղացելոյն զիս»: Տարբերությունը, ինչպես տեսնում ենք, միայն ընդգծված բառերն են, որոնք, կարելի է ասել, հավասարապես կիրառելի են տվյալ մտքի

---

61 PG, t. 44, էջ 885:

62 Նույն տեղում:

63 Նույն տեղում: Գր. Նյուսացու երկի հայերեն թարգմանության խնդրեցի դիմավոր ձևի դիմաց (խնդրեցի զոր սիրեաց անձն իմ) հունարենում ունենք՝ «ἐζήτησα αὐτὸν» (=**խնդրեցի զնա**), տե՛ս նույն տեղում:

64 Համմ. երգ երգոց, ե, 6՝ խնդրեցի զնա եւ ոչ գտի: Կոչեցի զնա յանուանէ եւ ոչ լուաւ ինձ, համմ. նույն տեղում, Գ, 1—2:

համար։ Այնուամենայնիվ, նշված ընթերցումներից ո՞րն է նախնականը և նախընտրելին. հարցին պատասխանելու իմաստով կարևոր նշանակություն ունի Գր. Նյուսացու երկի հունարեն նախօրինակը։ Համեմատությունը ցույց է տալիս, որ բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանությունը կրկին համընթաց է հունարենի հետ, որտեղ «ի շտեմարան յղացելոյն զիս» կապակցության դիմաց ունենք» εἰς ταμίειον τῆς συλλαβούσης μεν[65]։ Հունարենի «ταμίειον» բառի դիմաց, որը ունի գանձատուն, գանձարան, պաշար, պահեստ, մառան, խորդանոց[66] իմաստները, հայերենի թարգմանիչը նախընտրել է շտեմարան տարբերակը։ Նման ընտրությունը պատահական չէ, որովհետև հունարենի բառացի հետևությամբ այն երեք անգամ է կրկնվում, երեք դեպքում էլ ճիշտ նույն վերոբերյալ մտքի դիպվածով[67]։ Այս իրողությունն էլ հիմք է տալիս մտածելու, որ Վարդան Արևելցու սեռնեակ կիրառությունը հետագա միջամտությամբ ընտրված տարբերակ կարող է լինել, մանավանդ որ ճիշտ նույնպիսի ուրիթով նույն Մեկնության մեկ այլ դրվագում, դարձյալ Գր. Նյուսացու հետևությամբ, շտեմարան բառի կիրառության օրինակ է տալիս նաև Վարդան Արևելցու բնագիրը։ Ահա այդ հատվածը. «թէ ոչ ի լրումն պիտոյից իւր ստեղծաք, այլ յանճառ բարութիւնն և այն է ըշտեմարանն մեր և մաւրն մեր տունն՝ առաջին պատճառ արարչութեանն»[68]։

Ուսումնասիրությունը շարունակելու դեպքում կարելի է Նյուսացի-Արևելցի ընդհանրության և՛ օրինակները ավելացնել, և՛ վկայակոչված հատվածներում բյուզանդական մատենագրի Մեկնության հայերեն թարգմանության հենքի վրա նոր սրբագրություններ առաջադրել։ Այսպես, օրինակ, Գր. Նյուսացու Մեկնության հայերեն թարգմանության նմանությամբ Վ. Արևելցու ասուցվոյ ընթերցումը (հատված երկրորդ)

---

[65] PG, t. 44, էջ 885։

[66] Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, էջ 1600 (այսուհետև՝ ДРС)։

[67] Տե՛ս PG, t. 44, էջ 885, 888, 893, համմտ. հայերեն թարգմանությունը, ձեռ. № 1013, էջ 76ա, 76բ, 78բ։

[68] Ձեռ. № 5452, էջ 22ա։ Ի դեպ, սրբագրվող «ի սեռնեակ յղացելոյն զիս» կապակցությունը ճիշտ նույն տեսքով պահպանվել է նաև Ս. Գրքում (տե՛ս երգ երգոց, Գ, 4)։ Սեռնեակ ընթերցումը միակն է, ուստի և հրատարակիչը ընտրության հնարավորություն չի ունեցել։ Վարդանի բնագրում վերականգնվող շտեմարան տարբերակը թերևս կարող է օգտակար լինել նաև Ս. Գրքի այս հատվածի համար։

պիտի կարդալ աստուածային, տատրակի-ն (հատված վեցերորդ)՝ զատատրակաց, յարեաց և շրջեցայ կապակցությունը (հատված տասնըշորսերորդ)՝ յարեայց եւ շրջեցայց[69], անձրեւ ետուացան-ը (հատված տասներորդ)՝ անձրեւն ետուացաւ, միթէ զոր-ը (հատված տասնչորսերորդ)՝ մի զոր և այլն):

Պարզվում է, որ Վարդան Արևելցու Մեկնությունն էլ իր հերթին հնարավորություն է տալիս վերանայելու, սրբագրելու բյուզանդական մատենագրի երկի հայերեն թարգմանության առանձին բառեր ու արտահայտություններ, որոնք, ինչպես երևում է հուշարձանի բնագրի համեմատությունից, արդյունք են գրչական միջամտության կամ հնարավոր է նաև պատահական սխալի:

Վերոբերյալ ընդհանրությունների տասներեքերորդ օրինակի Գր. Նյուսացու հատվածում կարդում ենք. «դարձո, ասելով, զչարեացն զբերումնն, ով եղբաւրորդի իմ»: Նույն ձևակերպման դիմաց Վ. Արևելցու տեքստում ունենք՝ «ասէ՝ դարձիր եղբաւրորդի» և, փաստորեն, բացակայում է զչարեացն զբերումնն միջանկյալ կապակցությունը: Գր. Նյուսացու նշված հատվածի հայերեն թարգմանության և բնագրի համեմատությունը ցույց է տալիս, որ քննվող կապակցությունը հունարենում նույնպես առանց ընդգծված արտահայտության է ներկայանում. α'Απόστρεψον, λέγουσα, ὦ ἀδελφιδέ»[70]: Այս իրողության հենքի վրա կարելի է ենթադրել, որ զչարեացն զբերումնն արտահայտությունը, թերևս, հետագա ընդմիջարկություն կարող է լինել: Եթե հավանական է սույն ենթադրությունը, ապա նշված միջանկյալ դարձվածը պիտի օտարել Գր. Նյուսացու Մեկնության հայերեն թարգմանության պահպանված տեքստից: Առաջարկվող միջամտության օգտին են վկայում և՛ բյուզանդական մատենագրի Մեկնության բնագիրը, և՛ նրա հայերեն թարգմանությունից օգտվող Վ. Արևելցու աշխատանքի հնագույն ձեռագիրը:

Երկու մատենագիրների նման հատվածների համեմատության միջոցին կարելի է հանդիպել նաև հակառակ իրողության. այսինքն Գր. Նյուսացու հունարեն բնագրի և Վ. Արևելցու Մեկնության օգնությամբ հնարավոր է լինում առանձին դեպքերում ոչ միայն օտարել, ինչպես նախորդ օրինակում, այլև լրացնել, նշված աղբյուրների օժանդակությամբ վերականգնել Գր. Նյուսացու երկի հայերեն թարգմանությունից

---

[69] Վարդան Արևելցու բնագրի հարակից դրվագում նույնությամբ պահպանվել է առաջարկվող «յարեայց և շրջեցայց» նախընտրելի ձևերը (տե՛ս հատված տասնհինգերորդ):

[70] PG, t. 44, էջ 884:

ինչ-ինչ ճանապարհով երբևիցե դուրս մնացած այս կամ այն բառը։ Այսպես, օրինակ, Գր. Նյուսացու աշխատանքում կարդում ենք. «գտին դիս պահապանքն» (հատված տասնչորսերորդ)։ Նույն միտքը Վ. Արեվելցու Մեկնության օրինակում պահպանվել է ավելի ավարտուն ու ամբողջական տեսքով՝ «գտին դիս պահապանք պարսպացն»։ Հայ մատենագրի պարսպացն մասնավորեցման անհրաժեշտությունը հաստատվում է նաև բյուզանդական մատենագրի երկի հունարեն նախօրինակով, ուր համապատասխան կապակցության մեջ ունենք κύκλος (οἰκοκλοῦντες)[71] բառը, որի իմաստներից մեկը круговая стена, крепостные стены[72] միանգամայն համահնչուն է Գր. Նյուսացու հատվածի պահանջվող բովանդակությանը։ Ասվածը հիմք է տալիս մտածելու, որ, հավանաբար, ընդօրինակման կամ ուղղակի միջամտության եղանակով Գր. Նյուսացու երկի հայերեն օրինակից օտարված պարսպացն ընթերցումը վերականգնելու հնարավորություն են տալիս թե՛ նույն երկի բնագիրը և թե՛ հայերեն թարգմանությունից օգտվող Վարդան Արևելցու Մեկնությունը։

Ճիշտ նույն սկզբնաղբյուրների համեմատության եղանակով Գր. Նյուսացու Մեկնության հայերեն թարգմանության նովուեն-ը (հատված տասներկուերորդ) Վ. Արևելցու աշխատանքի հետևությամբ պիտի վերընթերցել նովվեսցէ, որ եղջիւրուաց-ը (հատված տասներեքերորդ)՝ որոյց եղանց, այծեաման-ը (հատված տասներեքերորդ)՝ այծեման, մածի-ն (հատված տասնչորսերորդ)՝ մուծից և այլն։

Այսպիսով, վերոշարադրյալը ընդհանրացնելու դեպքում կարելի է անել որոշ եզրակացություններ.

ա) Վարդան Արևելցին ծանոթ է եղել Գրիգոր Նյուսացու «Յաղագս երդոյ երդոց» աշխատության հայերեն թարգմանությանը և իր համանուն երկը շարադրելիս օգտվել է դրանից։ Ընդհանրության բնույթից դատելով, Վարդան Արևելցին հիմնականում մերժում է սկզբնաղբյուրին նույնությամբ հետևելու, պատրաստի շարադրանքը առանց անհրաժեշտ միջամտության վերարտահայտելու միջնադարում այնքան տարածված ու ընդունելի դրական նորմ դիտվող ձևը։ Նա բյուզանդական մատենագրի երկից օգտվում է վերապատմելու, համառոտելու, ընդարձակելու, առանձին դեպքերում նաև նույնությամբ հետևելու եղանակով։

---

[71] PG, t. 44, էջ 885։
[72] ДРС, I, էջ 884։

բ) Այլևս պարզ է, որ թարգմանական մատենագրությունից օգտվելու Վարդան Արևելցու նախընտրած եղանակը ամենևին էլ պատահական չէ, այլ ունի իր հիմնավոր պատճառաբանումը: Պիտի ենթադրել, որ Վարդանի աշխատանքը նպատակ ուներ բավարարելու, գոհացում տալու ժամանակի գրական-կրթական այն միջավայրի պահանջմունքները, ուր ապրում ու ստեղծագործում էին ինքը, իր ուսուցիչ Հովհաննես Վանականը և Վարդանի Մեկնության պատվիրատու Կիրակոս Գանձակեցին:

գ) Համադրվող երկու գրական հուշարձաններն էլ փոխադարձ սրբագրությունների հնարավորություն են ընձեռում: Իսկ դա կարևոր է հայագիտության համար այն առումով, որ թե՛ Դրիդոր Նյուսացու և թե՛ Վարդան Արևելցու խնդրո առարկա աշխատանքները անտիպ են, և պահպանված ձեռագրերը բազմաթիվ փոփոխությունների ու չարդարացված միջամտություններ են ենթարկվել միջնադարյան գրիչ-ընդօրինակողների ձեռքով:

ՆՉՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվող աշխատությունը Գրիգոր Նյուսացու (335-394) գրական վաստակի հայերեն թարգմանությունների մենագրական ուսումնասիրության առաջին փորձն է մեզանում: Հայագիտության մարզում Նյուսացու մասին որևէ հոդվածի, հրապարակման չգոյությունը, հավանաբար, պայմանավորված է եղել առաջին հերթին համապատասխան հրատարակությունների գրեթե իսպառ բացակայությամբ (հրատարակվել է մեկ ճառ, երկու ներբող և առանձին ճառերի մի քանի մեծ ու փոքր հատվածներ, տե՛ս «Գիրք և ճառ հոգեշահ...», Կ. Պոլիս, 1722, էջ 204-227, «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, էջ 241-243, հավելված, էջ 1-3, «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914, էջ 24-25, 267-276, 289-293, 348): Հրատարակության բացակայության գործում պակաս կարևոր դեր չեն խաղացել նաև նրա գործերի հարյուրավոր գրչագրերի տարբեր հավաքածոներում ցրվածության և նկարագրված չլինելու հանդամանքները:

Գրիգոր Նյուսացին, ինչ խոսք, չունի Բարսեղ Կեսարացու հռետորական ձիրքն ու հասարակական գործունեությունը պայմանավորող բուռն խառնվածքը, ոչ էլ Գրիգոր Նազիանզացու ճարտասանական ոգին ու բանաստեղծական օժտվածությունը: Նա էությամբ ու նախասիրությամբ փիլիսոփա է: Այդուհանդերձ, Նյուսացու մատենագրական ժառանգության պահպանված հայերեն թարգմանությունները (ներբողներ, ճառեր, թղթեր, մեկնություններ և այլն) հայ իրականության մեջ արդարացիորեն արժանացել են նույն վերաբերմունքին ու գնահատությանը, ինչ Կեսարացու և Նազիանզացու գործերը: Ավելին, եղած գրնահատության օրինակները սկզբնավորման շրջանի և հետագա գրականության մեջ հիմնականում վերաբերվել են «երեք մեծ կապադովկացիներին» հավասարապես, երեքի համար էլ կիրառվել է ազգային սրբությունների հետ համադրելու նույն եղանակը, նրանց գործերը ընդօրինակվել են կողք կողքի և գնահատվել են միևնույն չափանիշներով:

«Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ» մենագրության արծարծած խնդիրները հնարավորություն են տալիս որոշ ընդհանրացումներ կատարելու։

Նյուսացու կյանքի ու գործունեության (տևական ժամանակ տնօրինել է Նյուսայի և Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքների հոգևոր կենտրոնները) հայտնի դրվագները, նրա «պայծառ վարդապետությունը», մանավանդ «համեղաբան մանուած» գործերը, կարելի է ասել, մշտապես գտնվել են մեր միջնադարյան մատենագրության ուշադրության ոլորտում։ Ջափածո և արձակ հիշատակարան-հիշատակագրություններում բազմիցս ընդգծվել է դրանց հարկավորության պարագան, «դժուարագիւտ» լինելը։ Ուստի պատահական չէ, որ դավանական հին ու նոր վեճերի շրջանում նրա հեղինակած այս կամ այն գործի փնտրտուքը հաճախ դուրս է եկել կրթական-մշակութային նեղ ոլորտի սահմաններից և տարվել է եկեղեցական բարձրաստիճան բանագնացությունների լայնահուն ճանապարհով։ Հասկանալի պատճառով Գրիգոր Նյուսացուն գիտեն և տարբեր առիթներով հիշատակում են Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Սեբեոսը, Անանիա Շիրակացին, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Անանիա Սանահնեցին, Գրիգոր Տղան, Պողոս Տարոնացին, Վանական վարդապետը, Կիրակոս Դանձակեցին և շատ ուրիշ անվանի մատենագիրներ։

Մեզանում հոգ է տարվել Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակը ոչ միայն թարգմանելու, ընդօրինակելու և բազմացնելու ուղղությամբ, այլև որոշակի ծրագրի շրջանակներում այդ նույն թարգմանությունների մասին ստեղծվել է մեկնողական հարուստ գրականություն (գրվել են պատճառներ, լուծմունքներ, մեկնություններ)։ Տվյալ ժանրի գործերը կոչված էին առաջին հերթին հասկանալի դարձնելու բյուզանդական մատենագրի գրական վաստակը, նպաստելու դրանց տարածմանը։ Այդ գրվածքները այսօր էլ թարգմանական մատենագրության նյութի վրա գրված ուշագրավ գրական-բանասիրական կարճառոտ գրառումներ են։ Նյուսացու գործերի «թարգմանող» (մեկնող, բացատրող) կամ «լուծող» են հանդես գալիս մեր միջնադարյան մատենագիտական եզակի հուշարձանի՝ «Գիրք պատճառացի» կազմող-հեղինակ Գրիգոր Աբասյանը, նույն ժողովածուի աշխատակից Դավիթ Քոբայրեցին, թարգմանիչ-մատենագիր Սիմեոն Պղնձահանեցին, Վահրամ Րաբունին, Եսայի Նչեցին, Գրիգոր Բջնեցին, Վարդան Կիլիկեցին, Հակոբ Թագորցին, Կիրակոս Երզնկացին և այլոք։

Միջնադարում ձեռագիր գրքի բաղմացման և տարածման ընդունված միակ եղանակը ակամայից դուռ էր բացում հնարավոր հեղինակային շփոթի, փոխադարձ վերագրումների առաջ, մանավանդ եթե առկա են աշխատասիրողների մերձավորության, արծարծվող խնդիրների նմանության, ինչպես նաև գործառնության ոլորտի ընդհանրության պարագաները: Այս առումով միանգամայն հասկանալի է «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունների իրացման և տարածման շրջանակներում ենթարկվող շփոթի հնարավորությունը: Հավանաբար, այդ ճանապարհով են Գրիգոր Նազիանզացուն վերագրվել «Ի Մելիտոս եպիսկոպոս...», «Առ այնոսիկ...» խորագրերով ճառերը, որոնց իրական հեղինակը Գրիգոր Նյուսացին է: Նույն Նյուսացու «Ընդ այսոսիկ...» ճառը միջնադարում ընդօրինակվել և մեր օրերում էլ հրատարակվել է Դավիթ Անհաղթի հեղինակությամբ: Կան նաև հակառակ իրողության օրինակներ. «Յաղագս բնութեան մարդոյ» երկը միջնադարի ավանդությամբ այսօր էլ հղվում-հիշատակվում է իբրև Գրիգոր Նյուսացու աշխատասիրություն, մինչդեռ դրա իսկական հեղինակը IV դարի մատենագիր Նեմեսիոս Եմեսացին է:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 469 գրչագրում (և այլուր) պահպանված թարգմանական հիշատակարանը (Թարգմանեցաւ գիրս սրբոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեայ...) հավասարապես վերաբերում է «Յաղագս բնութեան մարդոյ» (Եմեսացի) և «Յաղագս կազմութեան մարդոյ» (Նիւսացի) գործերի հայերեն թարգմանություններին՝ կատարված 716-717 թթ. ժամանակահատվածում: Տվյալ պարագայում Ստեփանոս Սյունեցու թարգմանական գործունեության շուրջ հղած կասկածները խիստ բանավոր են: Մատենագրական-ձեռագրական ուղղակի վկայությունները (Ստեփանոս Օրբելյան, Մխիթար Այրիվանեցի) հնարավորություն են տալիս հավաստելու, որ հիշյալ թարգմանություններն իրացնելիս Ստեփանոս Սյունեցուն աշխատակցել են Դավիթ Հյուպատոսը և Գրիգոր անուն մատենագիրը: Այս իրողությունն էլ հիմք է հանդիսացել Սիմեոն Պղնձահանեցուն համապատասխան ընդհանրացում կատարելու. «Աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացոյ... որ ի թարգիմանիչացն գրած էր»:

Ստեփանոս Սյունեցու թարգմանական հիշատակարանի «իսկ ըստ հայում թուականին ՄԻԱ» մասնավորեցումը նախնական չէ, այն հետագա ընդմիջարկություն է, ուստի և թարգմանության ժամանակի սահմանման առումով ոչ նկատառելի:

«Յաղագս կազմութեան մարդոյ» երկի ամբողջական թարգմանության և VII դարում կազմված «Կնիք հաւատոյ» ժողովածուի համապատասխան հատվածների համադրությունից պարզվում է, որ եղել է «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի մեկ թարգմանություն՝ կատարված VIII դարում: Ասվածից հետևում է, թե վերջինիս առանձին հատվածներ «Կնիք հաւատոյ» ժողովածուի նախօրինակում չէին կարող լինել, այլ ավելացվել են հետագայում:

V դարում տակավին գոյություն չուներ «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի հայերեն թարգմանական տարբերակ, այլապես Եղիշեին չէր դիմի դրա հունարենի օգնությանը, որը բյուզանդական մատենագրի բնագրից եկող հետքերի մեզ ծանոթ միակ դրվագն է:

«Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանական ճառի հայերեն թարգմանության և Խորենացու «Ողբի» ընդհանրական մասերն ինքնին Գրիգոր Նյուսացու սույն գործի թարգմանության ժամանակ են մատնացուցում (V դ. երկրորդ կես, 480-ական թվականներ):

Հին հայերենի կառուցվածքի, բառագանձի ու ոճական առանձնահատկությունների քննության, մանավանդ մեր ինքնուրույն մատենագրության վրա թողած հետքերի առումով կարևոր է «Ի Մելիտոս եպիսկոպոս...» դամբանականը: Այդ հուշարձանի հայերեն թարգմանությամբ ավանդված ոչ քիչ թվով բառակապակցություններ և ոճական ուրույն ձևեր կան, որոնք այլուր վկայված չեն, կան նաև հունաբան ճանապարհով ստեղծված բառեր, որոնք անծանոթ են Նոր հայկազյան բառարանագիրներին:

Նյուսացու դամբանական ճառի հայերեն թարգմանությունից օգտվող Խորենացին մերժում է բառացի նմանությամբ սկզբնաղբյուրին հետևելու այլուր ընդունված եղանակը: Նման հատվածների մեջ էլ Խորենացու ասելիքը տարբերվում է բյուզանդական մատենագրի հաղորդումից ոչ միայն նյութով, այլև մատուցման իր ձևով, բառի երանդավորման այն եղանակով, որը պայմանավորված է Պատմահոր ոճի ինքնատիպությամբ: Սկզբնաղբյուրները անուն առ անուն հիշատակող Խորենացին այս դեպքում հեղինակային վկայակոչություն չի կատարում, որովհետև Նյուսացու հաղորդումները վարքագրական ժանրի ծանոթ պատումներ են և ոչ թե պատմական-քաղաքական անցուդարձի վավերական գրառումներ:

«Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» երկը ժանրային-կառուցվածքային չափանիշներով համապատասխանում է ներբողի այն տեսակին, որը ընդունված է կոչել դամբանական ճառ: Սույն երկի թարգմա-

նության լեզուն հունաբան հայերենն է։ Կան հայ բառարանագրության անծանոթ մի շարք բառեր, արտահայտություններ ու ինքնատիպ կապակցություններ, որոնք հատուկ են այս հուշարձանի հայերեն թարգմանությանը և ընկալելի են առավելապես բնագրի համադրության պայմաններում։

Նույն հուշարձանի հայերեն թարգմանության և բնագրի համընթացությունը, հունարենին բառ առ բառ հետևելու թարգմանչի հետևողականությունը հնարավորություն են տալիս որոշակի ընդհանրության եզրեր տեսնելու այս և նյութական կոչվող թարգմանությունների միջև (նախօրինակի առանձին տարառոճ դրվագներն ու չափածոյի շունչ ունեցող կտորներն անգամ չեն համահարթվել, այլ նույնությամբ փոխանցվել են հայերենին)։ Լեզվաոճական այդ իրողությունը միաժամանակ արդյունք է բուն նյութի բարդության, ասելիքով պայմանավորված հեղինակային բառագանձի ինքնատիպության։

Վասպուրականի Արծրունյաց հոգացողության կարևորությունը չժխտելով հանդերձ, պիտի մտածել, որ Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց Երգոյն» աշխատության գրության բուն պատճառը (գրվել է Գրիգոր Արծրունի թագավորի խնդրանքով, 977 թ.) աստվածաշնչական «Երգ երգոցի» ավանդական սյուժեի՝ հարս ու փեսայի շուրջ հյուսված աշխարհիկ զրույցի նկատմամբ եղած հետաքրքրության մեծացումն է X դարում, որը և ստիպել է Նարեկացուն «բացայայտել զխորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել»։ Նարեկացին բառացի քաղումների տեսքով օգտվում է Գրիգոր Նյուսացու համանուն աշխատության հայերեն թարգմանությունից։ Ավելին, պարզվում է, որ աստվածաշնչական համաբնույթ բացատրությունների առկայության շրջանակներում էլ Նարեկացու սկզբնաղբյուրը մնում է Նյուսացու հրկի հայերեն թարգմանությունը։

Դավանական հին ու նոր վեճերին անդրադառնալիս, «առձեռն պատրաստ զէն» ունենալու նպատակով X-XIII դդ. մի շարք հայ մատենագիրներ առավել հաճախ են դիմում Գրիգոր Նյուսացու համաբնույթ թղթերին ու ճառերին։ «Արմատ հաւատոյ» ժողովածուի էջերում պահպանված Նյուսացու «Առ Թէոփիլոս Ազէքսանդրու հայրապետն» խորագրով թղթի հետքերը միաժամանակ վկայում են հայ թարգմանական մատենագրությանն անծանոթ այդ հուշարձանի ոչ միայն հայերեն թարգմանության երբեմնի գոյության, այլև թողած ազդեցության մասին։

«Հարցմունք և պատասխանիք» երկասիրության V–XIII դդ. մեր միջնադարյան դավանական ժանրի գործերում պահպանված հետքերը մշակութային, աղբյուրագիտական, տեքստաբանական կարևորությունից բացի, էական նշանակություն ունեն պահպանված հայերեն թարգմանությունների դասդասման, բուն թարգմանության նախօրինակը գտնելու, ինչպես նաև կորած բնագիրը վերականգնելու իմաստով։

Վարդան Արևելցին «Յաղագս երգոյ երգոց» աշխատության հայերեն թարգմանությունից օգտվում է վերապատմելու, համառոտելու, ընդարձակելու, առանձին դեպքերում նաև բառացի ընդօրինակելու եղանակով։ Նյուսացի-Արևելցի ընդհանրական հատվածները փոխադարձ սրբագրությունների հնարավորություն են տալիս։ Այդ իրողությունը կարևոր է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ երկու գրական հուշարձաններն էլ անտիպ են և ընդօրինակության ճանապարհին միջամտված։

ՀԱՎԵԼՎԱԾ

ա) «Ի ՄԵԼԻՏՈՍ ՍՊԻՍԿՈՊՈՍ...» ՃԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Նյուսացու առաջին անգամ հրապարակվող սույն ճառը գրվել է (ավելի ճիշտ՝ ասվել է) 381 թ. եվնոմիանոսների հերձվածը դատապարտող Կոստանդնուպոլսի երկրորդ սինեզերական ժողովում, Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսի մահվան կապակցությամբ: Հայերեն ընդօրինակություններում միջնադարյան գրիչներն ու մատենադիրները ամենատարբեր եղանակներով քննել են ճառիս հեղինակային պատկանելության խնդիրը (այդ մասին տե՛ս սույն աշխատանքի համապատասխան բաժնում): Ստորև ներկայացնում ենք միջնադարում ամենատարածված կարծիքներից մեկը, որը միաժամանակ, արդի տերմինով ասած, հրապարակվող գործի ստեղծագործական պատմությունն է: Ահա այդ կարծիք-հիմնավորումը, որը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 4150 («ժողովածու», ԺԹ դ.) գրչագրում.

«Պատճառ ճառիւն, որ ի Մելիտոս Անտիոքացի, ի Գրիգորէ Նիւսացւոյ»: *Ճառս այս ոչ է ասացեալ Աստուածաբանի, այլ Նիւսացի Գրիգորոյ և յայտնի նկարագրութենէ բանիցն է: Սակայն վասն կատարեալ սիրոյն առ միմեանս և աննախանձ բարուցն եղաւ յայս գիրս, զոր աւրինակ եղեալ է յԱռ որս գիրքն այն ճառ, որ ասէին, թէ՝ Հայր մեծ է քան զՈրդի, ի նոյն Գրիգորի ասացեալ: Բայց արդ տեսցուք զպատճառ ճառիս:*

Յորժամ սուրբ հարքն, հարիւր քառասուն և իննն, ի հռչակաւորն Բիւզանտիոն, որ է Կոստանդինուպաւլիս, հրամանաւ աստուածասէր թագաւորին Թէոդոսի, ի կործանումն հոգեմարտին Մակեդոնի ժողովեալ էին, յայնժամ մնային, զի լցցի թիւն խորհրդական հարիւր և յիսնիցն, որ և եղևն իսկ գալստեամբ սուրբ հայրապետին Անտիոքու, որում անուն էր Մելիտոս: Եւ ի գալն առ հայրապետսն հանդիպեցաւ նմա փոխիլ ի վերին կեանսն,// վասն որոյ առին սուրբ հարքն հանդերձ թագաւորաւն սուգ անմխիթար: Եւ ապա հարկ արարեալ հարքն

և թագաւորն Գրիգորի Նիւսացւոյ՝ բանալ զշնորհալից բերանն և խաւսել բանս գովութեան վասն ննջեցելոյն, քանզի առաւել ճոխ էր ի խաւսել բանս ողորմագինս և ողբերգականս։ Եւ նա, յանձն առեալ, ասաց զճառս զայս, և յարտասուս շարժեաց զսուրբ հարսն և զթագաւորն։ Աղիողորմ բանիւք դնէ սկիզբն՝ աճեցույց մեզ զթիւ»[1]։

Միջնադարյան այս և նմանօրինակ հեղինակային վերապահումներն, ինչ խոսք, ունեին իրենց համապատասխան հիմնավորումները և արտահայտում էին որոշակի շրջանի գրական ճաշակ ու համոզմունք արտահայտող դրսևորումներ էին։

«Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառը իբրև թարգմանական հուշարձան ինքնին կարևոր լինելուց բացի, ինչպես տեսանք, հայագիտության համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում իր բառագանձով, լեզվաոճական ինքնատիպությամբ և, մանավանդ, հայոց ինքնուրույն գրականության վրա թողած հետքերով։ Հրապարակվող գրական երկում, ասվեց, կան բառեր, որոնք անծանոթ են նոր հայկազյան բառարանագիրներին և առհասարակ հայ բառարանագրությանը։ Հաճախ հանդիպում են բայական (անդեմ և դիմավոր), անվանական, ինչպես նաև զուտ քերականական ինքնատիպ կապակցություններ ու ձևեր, որոնք այլուր չեն վկայված և հայտնի են միայն սույն թարգմանությամբ։ Եվ, ի վերջո, առաջարկվող դամբանական ճառի հայերեն թարգմանության բառացի հետքեր են նշմարվում Մովսես Խորենացու հրաշակավոր «Ողբում»[2]։

Սույն հրատարակության համար հիմք ենք ընդունել Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ գրչագրերը.[3] № 823-A (գր. Նազիանզացի, Առ Նաւարկութիւնն, 1266 թ.), № 1500-B (Ճառընտիր, 1283 թ.), № 4234-C (ժողովածու, 1307 թ.), № 6988-D (ժողովածու, 1763-1764 թթ.), № 2615-E (Առ Նաւարկութիւնն, 1850 թ.), № 3787-F (Ճառընտիր, ԺԴ դ.), № 996-G (Ճառընտիր, 1442 թ.), № 2909-H (ժողովածու, 1696 թ.)։

---

[1] Ձևո. № 4150, էջ 8բ—9ա։ Մատենադարանի մեկ այլ գրչագրում՝ «Պատճառաց գրքում», ճառիս հեղինակ է ընդունվում ոչ թե Գրիգոր Նյուսացին, այլ Գրիգոր Նազիանզացին (տե՛ս ձևո. № 1879, էջ 94ա—95ա)։

[2] Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 358—366։

[3] Ճառիս ընդօրինակություններ կան նաև արտասահմանյան հավաքածոներում. տե՛ս սույն աշխատանքի «Պահպանված հայերեն թարգմանությունների մատենագիտության» համապատասխան բաժինը։

Ձեռքի տակ ունեցել ենք նաև Վիեննայի Մխիթարյան Միաբանության Մատենադարանի № 217 ձեռագրից քաղված Գր. Խալաթյանցի հատվածական հրապարակումը (I[4]): Գր. Նյուսացու աշխատանքի հայերեն թարգմանությունը հրատարակության պատրաստելիս նկատի ենք առել նաև նույն երկի հին վրացերեն թարգմանության Մ. Գ. Կոբիաշվիլու հրատարակությունը[5]: Հունարեն բնագրի համեմատության համար հիմք ենք ընդունել մեր գրադարաններում եղած միակ հրատարակությունը[6]:

---

[4] *Г. Халатьянц*, Армянские Аршакиды в „Истории Армении" Моисея Хоренского, часть II, материалы, М., 1903, էջ 140—141:

[5] Ց. კობაიშვილი, გრიგოლ ნოსელის „შესხმაჲ მელეტი ანტიოქელისაჲ" (տե՛ս ძველი ართული მწერლობის მატიანე, II, თბილისი, 1985, էջ 92—103): Վրացերեն հրատարակությունն իրացվել է չորս ձեռագրի հիմքի վրա, որոնցից ամենահինը XI—XII դդ. ընդօրինակություն է, երկրորդը՝ XII դ., երրորդը՝ XVI դ., չորրորդը՝ XIV—XVI դդ.: Թարգմանությունը կատարվել է XI դ. վրաց անվանի մատենագիր-թարգմանիչ Գեորգի Մթաթմիդելու (Ամոանցի) ձեռքով:

[6] Տե՛ս PG., t. 46, էջ 852—864:

9բ //Ի ՄԵԼԻՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ՝ ԱՍՍԱՑԱԻ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԼԻՍ*

*Աճեցոյց մեզ զքիւ առաքելոցն նոր առաքեալս, որ թուեցաւ ընդ աստուածային առաքեալսն։ Զգեցին սուրբքն առ ինքեանս զնման աւրինակին, զնահատակ՝ նահատակքն, զպսակեալս՝ պսակեալքն, զսուրբն հոգով, մաքուրքն՝ սրտիւք, զքարոզ՝ բանին, սպասաւորք՝ բանին։ Այլ երանելի է Հայրն մեր՝ առաքելական խորանակացութեամբն եւ առ Քրիստոս դառնալովն, բայց ողորմելիք մեք։ Քանզի ոչ թողացուցանէ երանելին լինել մեզ ի Հաւրն բարեժառանգութենէ տարաժամ որբութիւնս։ Նմա լաւագոյն էր ընդ Քրիստոսի լինել՝** լուծանելով ի մարմնոյն, բայց մեզ շար որոշել ի հայրենի վերակացութենէն։ Վասն զի ահա խորհրդեան ժամանակ, եւ խորհրդակիցն լռեալ է։ Պատերազմն զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերձուածողական եւ որ զաւրավարն լինի ոչ ոք է։ Վտանգի հիւանդութեամբ հասարակաց մարմին եկեղեցւոյս, եւ զբժիշկն ոչ գտանեմք։ Տեսանէք// յորպիսի մեր իրքս կան։ Կամիմ, եթէ որպէս կարողութիւն է, պնդելով զիմ զտկարութիւնս ելանել ի վերոյ, քան զծանրութիւն թշուառութեանս եւ արձակել ձայն արժանաւոր ախտիս՝ որպէս առաքինիքն այնքիկ արարին՝ մեծաձայն ի վերայ Հաւրն թշուառութեան ողբալով։ 10ա

Այլ զի՞նչ կրեցից, զի՞արդ բռնադատեցից զլեզուս ի սպասաւորութիւն բանի, որ աւրինակ իմն իբրեւ ծանր կապանաւք թշուառութեամբքս է կապեալ, զի՞արդ բացից բերան զանասացութեամբ կալեալ, ո՞րպէս արձակեցից ձայն՝ յախտս եւ ի յողբս՝ ի սովորութենէ զգայթակղեալսն։ Զի՞արդ ի վեր հայցեայց հո-

* Հայերէն թարգմանութեան պահպանված խորագրերից ոչ մեկը համընթաց չէ բնագրի հետ։ Պատճառը, թերևս, բնօրինակ միջամտություններն են սրտի փնտրել։

** Համմ. Առ Փիլիպ., Ա, 23։

գոյս աչաւք՝ թշուառութեան մառախղով ծածկեալս, ո՞վ ինձ քայքայեցէ վխորինս զայս եւ զխաւարային զամպ տրտմութեանս: Եւ զարձեալ մաքուր ատգով պայծառացուսցէ զխաղաղական ճառագայթն: Ուստի՞ եւ ծագեսցեն ճառագայթք, լուսաւորին մերոյ
5 ի ստորինս մտելոց:

Ո՞վ չար խաւարիս զծագումն՝ լուսաւորին ոչ յուսալով, զի՞արդ
10բ Հակառակ մեզ ի մերձակա ի տեղոջս, այժմ եւ //առաջիկայ բանքն լինին: Յայնժամ իբրեւ ի հարսանիս պարէաք, եւ այժմ ողորմելի ի վերայ ախտիս հառաչեմք: Յայնժամ առագաստի
10 երգք, եւ այժմ՝ ի վերայ գերեզմանի ողբք: Քանզի յիշէք՝ յորժամ զհոգեւոր հարսանիսն մեզ հաստատեցաք՝ ընդ բարի փեսային բնակեցուցանելով զկոյս զձեզ եւ զբանիցն զաւժիտս ըստ կարողութեանն մերում ընձայեցաք, զուարճանայաք ի միասին եւ բերկրեալք էաք: Բայց այժմ յողբս մեզ խնդութիւնն փոփոխեալ յար-
15 մարեցաւ, եւ ուրախութեանն պատմուճան քուրձ եղեւ: Զոր թուի թէ լռել պարտ էր զախտն եւ ի ներքս փակեալ լռութեամբ զցաւն, որպէս զի մի՛ խանդի առնիցեմք ցորդիս առագաստին՝ ոչ ունելով զպայծառ հարսանեաց զպատմուճանն, այլ արջնազգեստ բանի՞ւ: Վասն զի բարձաւ ի մէնջ քաջ փեսայն, յանկարծակի
20 ոգով սեւացեալք եղաք, եւ ոչ է ըստ սովորութեանն պայծառացուցանել զբանն, որ զարդարէր զմեզ զգեստն, մախանքն կողոպտեցին: Լի բարեաւք ձեզ հանդիպեցաք, մերկք եւ աղքատք
11ա ի ձէնջ դառ//նամք, ուղեղ ունէաք ի վեայ գլխոյ զջահն՝ առատ լուսով պայծառացեալ, զայն շիջեալ՝ անդրէն տանիմք ի ծուխ
25 եւ ի փոշի լուծեալ ճառագայթն: Ունէաք զգանձն զայն ի խեցեղէն ամանի: Այլ գանձն է աննիւթութիւն, եւ խեցեղէն ամանն՝ թափուր, ի մեծութենէն՝ տուղացն պահի:

Զի՞նչ ասիցեն, որք առաքեցինն կամ՝ զի՞նչ պատասխանի առնիցեն, որք պահանջինն: Ո՛վ չար նաւաբեկութեանս: Զի՞արդ
30 ի մէջ նաւահանգստի յուսոյն մերոյ նաւաբեկք եղաք: Զի՞արդ բիւրաւոր բեռանց նաւն, հանդերձ նովին լրութեամբն, ընկղմեալ եղեւ, մերկս զմեզ երբեմն ի ճոխութենէն ետուր: Ո՞ւր է պայծառ առագաստն այն Հոգւովն սրբով յամենայն ժամ ուղղեալ, ո՞ւր՝ զդոյշագոյն մեր ոգոյ զեկն, որով ընդ ալէկոծութիւնս հերձուա-
35 ծողականս առանց տագնապի նաւէաք: Ո՞ր՝ անփոխադրելի բարուց խարիսխն, յոր հանդերձ ամենայն զգուշութեամբք վստահացեալք հանգչէաք: Ո՞ր քաջ նաւուղին, որ զվերինն դիտե-

լով ուղղէր զնաւն։ Իսկ արդ՝ փո՞քր, արդեաւք, իցէ պատահմունս
11բ //՝ եւ ընդունա՞յն տագնապիմ, այլ մանաւանդ ոչ հասանեմ ի
կիրսս, թէպէտեւ առաւել ձայնեցից բանիւ, ետուք փոխ մեզ,
եղբարք, տուք ախտակցութեամբ զարտասուրդ։ Վասն զի եւ դուք
յորժամ զուարճանայիք, մեք ընդ ձեզ ուրախութեանն հաղորդեցաք։ Արդ, հատուցէք մեզ զչար փոխարէնսդ. խնդալ ընդ խնդացեալն* զայս մեք արարաք, լալ ընդ լացեալն** զայդ դուք հատուցէք։

Արտասուեաց երբեմն ի միասին ժողովուրդն ի վերայ հայրապետին Յակոբու եւ զաւտար թշուառութիւնն ընտանեցոյց։ Յորժամ զհայրն յԵգիպտոսէ, որք ի նմանէ էին, բերէին ամենայն բազմութիւն զնորա թշուառութիւնն, յաւտարութեանն ողբային աւուրս երեսուն*** եւ նոյնքան դիշերն ի վերայ նորա զսուգն երկարեցին։ Նմանեցէք այլազգեացն եղբարդ եւ ազգակիցդ։ Հասարակաց էր յայնժամ աւտարացն եւ զաւտարականաց արտասուրն, հասարակաց եղիցի եւ այժմ. որպէս եւ ախտն հասարակաց է։ Տեսանէք զհայրապետս զայսոսիկ. ամենեքեան սոքա որդիք մե-
12ա րոյ Յակոբայն են, յա//զատէն**** ամենեքեան։ Ոչ ոք խորթ եւ ոչ՝ ի բացընկեցիկ, զի եւ ոչ արժանաւոր իսկ էր նմա զաղախնական վատթարազգին ի ներքս ածեալ ի բարեւտհմիկ հաւատն։ Ապա ուրեմն եւ մեր նա հայր, վասն զի հարւրն մերոյ էր նա հայր։

Լուայք այժմ եւս Եփրեմ եւ Մանասէ որքան ինչ յաղագս Հաւրն պատմեցին, մինչ զի գերազանց են, քան զբանս սքանչելիքն։ Տուք եւ ինձ ինչ յաղագս այսոցիկ ասել, վասն զի առանց վտանգի երանեալն այսուհետեւ ոչ եւս է երկնչելով ի մախանացն։ Քանզի՝ զի՞նչ եւս ինձ չար գործեսցէ։ Արդ՝ ծաներուք ո՞ էր այրն՝ բարեւտհմիկ յարեւելեայն՝ անարատ, արդար, ճշմարիտ, աստուածապաշտ՝ հեռացեալ յամենայն չար իրաց։***** Զի ոչ նախանձի իսկ մեծն Յոբ, եթէ նորա վկայութեամբքն եւ նմանողն նորա զարդարի։ Այլ՝ որք ի բարիսն հայէին մախանաւքն, տեսին եւ զմեր բարին չար ակամբ. եւ որ շրջին ընդ աշխարհ եւ

---

* Համմտ. Առ Հռոմ., ԺԲ 15։
** Համմտ. Առ Հռոմ., ԺԲ 15։
*** Համմտ. Մնունդք, Ը, 3։
**** Համմտ. Առ Գաղատ., Դ, 23։
***** Համմտ. Յոբ, Ա, 1։

առ մեզ շրջեցաւ, լայն ոտամբ նեղութեամբն ի բարի իրան մեր
յեցաւ։ Ոչ արջառոց եւ ոչխարաց հոյլս ապականեաց, բայց եթէ
12բ ոք խորհրդարար արդեաւք յեկեղեց//ին փոփոխեալ առցէ զհա-
ւատն։

Սակայն ոչ յայտոսիկ ի մեզ ի մախանաց վնաս եւ ոչ յէշս
եւ ոչ յուղտս զհարուածան գործեաց, ոչ վիրաւք մարմնոյ զզգա-
յութիւնն գառնացոյց, այլ ի նմին ինքն ի գլխոյն զմեզ կո-
ղոպտեաց։ Եւ ընդ գլխոյն անցեալ գնացին պատուականագոյն
մեր զգայութիւնքս։ Ոչ եւս է ակն, որ զերկնայինսն տեսանէ եւ
ոչ լսելիք, որ զաստուածային ձայնն լսէ եւ ոչ լեզու, որ զբ-
սուրբ նուէրս ճշմարտութեանն խաւսի։ Ո՞ւր էք քաղցր աչացն
հանդարտութիւնն, ո՞ր՝ զուարթ շրթանցն ժպտումն, ո՞ր՝ բարի
ողջունող աջն, մարմնոյ աւրհնութեամբն զմատունսն շարժելով
յառաջ մատչիմ իրրեւ ի կերպարանս իմն բարբառելով զիշուա-
ռութիւնս։ Ողորմիմ քեզ, ով եկեղեցի, առ քեզ է բանս, Ան-
տիոքու քաղաքդ։ Ողորմիմ քեզ յանկարծակի փոփոխմամբդ այ-
դուիկ։ Ջի՞արդ անզարդացար զեղեցկութիւնդ։ Ջի՞արդ կողոպտե-
ցաւ զարդն։ Որպէ՞ս յանկարծակի ի վայր անկաւ ծաղիկն։ Ճըշ-
մարտապէս ցամաքեցաւ խոտն եւ անկաւ ծաղիկն։* Ո՞ր ակն
20 չար, ո՞ր յաշաղանք չարութեանց հակառակ եկեղեցւոյն այնո-
13ա րիկ ի//կատութեամբ երգեաց։ Որպիսի՞ ինչ ընդ որս փոփոխեաց։

Պակասեաց աղբիւրն, ցամաքեցաւ գետն։ Դարձեալ չարիւն
փոփոխեցաւ ջուրն։ Ով թշուառական պատմութեանն այ-
նորիկ, ո՞վ պատմէ եկեղեցւոյն զախտն, ո՞վ ասիցէ ման-
25 կանցն, թէ որբք եղեն։ Ո՞վ պատմեսցէ հարսինն, թէ
այրի մնաց, ով չարեաց։ Ջի՞նչ առաքեցին եւ կամ ի՞նչ
ընդունին։ Տապանակ առաքեցին եւ տապան ընդունին։ Տա-
պանակ էր, եղբարք, Աստուծոյ այրն, տապանակ, որ ունէր
յինքեան զԱստուծոյ խորհուրդն զայն, ատման ոսկեղէն, հոգին
30 ոսկեղէն՝ ի աստուածային մանանայիսն, ի երկնաւոր կերակրովն
այնուիկ։ Տախտակ կտակի ի տախտակս սրտի գրեալ հոգւովն
Աստուծոյ կենդանւոյ՝ ոչ սեւով։ Քանզի ոչ էր ի մաքրութիւնն սըր-

---

* Բնագրի հետևյալ միտքը դուրս է մնացել հայերեն թարգմանությունից. „Ἐν ἐκείνῃ οἱ στῦλοι, αἱ βάσεις, αἱ κεφαλίδες, τὸ θυμιατήριον, ἡ λυχνία, τὸ ἱλαστήριον, οἱ λουτῆρες, τὰ τῶν εἰσόδων κατάπετάσματα ἐν ἐκείνῃ ἡ ῥάβδος τῆς ἱερωσύνης“ (ՀՀ 856)։

տին աղջամղջին եւ սեաւ մթացեալ խմաստքն*: Դաւաղան քահանայութեան ի ձեռն նորա բողբոջեալ: Եւ եթէ ինչ այլ, զոր տապանակին ունել լսեմք, զամենայն հոգի առնն բովանդակեալ ունէր: Փոխանակ այնոցիկ հի՞մ լռէ բանս: Պատանք մաքուրք
5 եւ կերպասուց անկուածք, անոյշ խղոյն եւ խնկոցն առատութեան
13բ ցածուն եւ բարեզարդ կնոջ /։/ պատուասիրութիւն: Քանզի ասացին որպէս զի եւ այս լինիցի ի վկայութիւն նմա, զորս քահանային արար առատապէս զշիշ խղոյն, զոր ի վերայ գլխոյ քահանայապետին եհեղ: Եւ այլ, որք յայսպիսիսն ամբողջ պահեցան
10 եւ ապա զի՞նչ. մանր ոսկերք եւ նախ քան զմահ՝ կրթեալք ի մեռելութիւն, տրտմական թշուառութեանց մերոց յիշատակ: Որպիսի ձայն դերձեալ ի Հռոմայ լինիցի:

Հռաքէլ լայր ոչ եւս զորդիս իւր, այլ զայրն եւ ոչ սգայր ի մխիթարութիւն: Թոյլ տուք, մխիթարիչք, թողէք: Եւ մի՛ զաւրացուցանէք մխիթարել: Ծանրասցի սգով այրին: Սգասցէ զվնասն, զոր տուժեցաւ: Թէպէտ եւ ոչ անհրահանգ է որոշմանն, ի հանդէս նահատակութեան յառաջագոյն սովորեալք ի բաց բառնան զմիայնութիւնն: Քանզի յիշէք ամենայն իրաւք, զիարդ ձեզ նախ քան զայս բանն մեր զնահատակութիւնս առնն պատմեաց,
20 զի ամենայնիւ պատուէր զաւրք զերրորդութիւնն եւ թուով հանդրսիցն զպատիւն ամբողջ պահեաց. հրիւք փորձութեանցն պատեբազմունք նահատակեցաւ:

14ա Լուսաւք զյարմարութիւն աշխատութեանցն, որպի//սի յառաջինսն, որպիսի ի միջինսն եւ ի վերջինսն որպիսի ոք էր: Աւելորդ
2 վարկանիմ վերստին առնուլ զասացեալսն զեղեցկապէս: Բայց այսքան եւ եթ ասել թերևս ոչ իցէ տարաժամ: Յորժամ առաջին հետս ողջախոհ եկեղեցին այն զայրն, հետս զհրեշն ճշմարտապէս ի կերպարանի Աստուծոյ պատկերեալ, հետս զսէրն աղբիւրացեալ, հետս զշնորհն շուրջ հեղալ զրթամբքն, պիտնարհութեան
30 զծայրագոյն սահմանն, զկնի որոյ ոչ եւս է իմացեալ ինչ առաւելագոյն, ըստ Դաւթայ՝ զհեզութիւնն, ըստ Սողոմոնի՝ զիմաստութիւնն, ըստ Մովսիսի՝ զբարութիւնն, ըստ Սամուէլի՝ զհաւատարմութիւնն, ըստ Յովսէփու՝ զպարկեշտութիւնն, ըստ Դանիէլի՝ զհանճարն, ըստ մեծին Եղիայի՝ նախանձու զհաւատն, ըստ

---

* Համմ. Եսայի, խ, 7:

բարձրագունին Յովաննու՝ զանապականութիւն մարմնոյն*: Եւ ես զայնքանեաց բարեաց ի միասին զընթացսն ի մի ոգին, խոցեցաւ երանելեաւ եւ ցանկութեամբն, սիրով մատցն զփեսայն զիւր սիրեաց: Այլ նախ քան զցանկութիւնն լնուլ, չառաջ քան զդադարեցուցանել զփափագումն, մինչդեռ // սիրովն եռայր, մնաց միայն, փորձութեանցն նահատակն ի հանդէսն կոչեցաւ եւ նահատակէր յաղագս ճշմարտութեանն քրտամբք: Իսկ հարսն համբերվր ողջախոհութեամբք զամուսնութիւնն պահելով:

Ժամանակ էր ի մէջ յոլով, եւ ումն սիզեխաբար յանդգնէր յանարատ յառագաստն: Այլ հարսն ոչ ազտեղանայր, դարձեալ վերստին ճանապարհ եւ դարձեալ փախուստ, երրորդ անգամ նոյնպէս՝ մինչեւ քայքայէր զհերձուածողական մառախուղն Տէրն, եւ զճառագայթ խաղաղութեանն ի վերայ ծագելով՝ առյր հանգիստ իմն երկայն աշխատութեանց յոյս: Բայց յորժամ տեսին զիրեարս եւ նորոգեցան ուրախութիւնքն եւ խնդամտութիւնքն հոգեւորք: Դարձեալ բորբոքեցաւ անձուկն, վաղվաղակի ընդ մէջ հատանէր վայելումն վերջին այս ճանապարհ:

Եկն զգեցուցանել մեզ զպատմուճանս փեսայի, եւ ոչ վրիպեցաւ ի փութոյն, եդ ի վերայ բարի ամուսնութեանն, զաւրհնութեանն պսակս նմանեցաւ Տեառն իւրում, որպէս ի Կանայ գալիլեացոց Տէրն**, նոյնպէս եւ աստ նմանողն Տեառնն: Քանզի զհրէշական զսփորս հե//ծուածողական ջրովս լցեալս, լիս սեռն դինով արար՝ զաւրութեամբ հաւատոյն փոփոխեալս զբնութիւնն հաստատեաց ի մեզ: Բաղում անգամ թակոյր զուարթութեան, քաղցր իւրով ձայնիւն առատապէս ձեզ մատուակեաց զշնորհն, յոլով անգամ ձեզ առաջի եդ զբնական խրախճանութիւնն: Նա աւրհնելով առաջնորդէր, իսկ բարիոք սոքա աշակերտքս սպասաւորք լինէին բազմութեանն՝ մանրամասն առնելով զբանն: Եւ մեք բերկրեաք՝ զազգին մերոյ զփառս մեզ առնելով: Այլ՝ իբրեւ զի զեղեցիկ, եթէ մինչեւ յայսոսիկ պատմութիւնս, իբրեւ զի երանելի, եթէ յայսոսիկ դադարէր բանս: Եւ ապա զի՞նչ չեմ այնորիկ՝ կոչեցէք, զողբացող կանայս***, ներեմիաս ասէ****: Զի եւ ոչ է իսկ

---

* Հայերենում բացակայում է հետևյալ միտքը. „κατὰ τὸν Παῦλον, ἐν τῇ ἀνυπερβλήτῳ ἀγάπῃ" (էջ 857):

** Բնագրում՝ ὡς ἐν Κανᾷ τῆς Γαλιλαίας ὁ Κύριος" (էջ 860):

*** Հայերեն թարգմանությունից դուրս է մնացել Ισραηλίτην անվանումը (էջ 860):

**** Համմ. Երեմ., Բ, 17:

այլազգ այսման սրտին զիջանել յախտէն, բայց եթէ հառաջանաւք եւ արտասուաւք թեթեւացուցանել։

Յայնժամ մխիթարէր զբաժանումնն անդրէն դառնալոյն յոյս, բայց այժմ զվերջին մեզ որոշումն բաժանեցաւ։ Վիհ մեծ ընդ
5 մէջ նորա եւ եկեղեցւոյն ի հասարակածին հաստատեցաւ, նա ի
15բ գոգն Աբր//ահամու հանգչի եւ որ բերէ զկաթ ջրոյն, զի զովացուսցէ զվտանգեցելոյն ցլեզուս, ոչ ոք է։ Կորեաւ եւ գեղեցկութիւն այն, լռեաց ձայնն, կարգեցան շրթունքն, թռեաւ շնորհն, պատմութիւն եղեւ բարի ժառանգութիւնն։ Տրտմեցուցանէր երբեմն եւ ժողո-
10 վուրդն* Հեղիաս՝ յերկրէս առ Աստուած ի վեր թռուցեալ։ Այլ մխիթարէր զորոշումնն Եղիսէոս՝ մաշկաւն վարդապետին զարդարեալ։ Բայց այժմ վէրքս առաւել քան զբժշկութիւնն է, քանզի եւ Հեղիաս ի վեր ամբարձաւ եւ Եղիսէոս ոչ ի խոնարհ մնաց։ Լուայ եւ ձայնս ոմանս ի Յերեմիայէ տխրականս եւ սգաւորս,
15 որով յամայանալ զքաղաքիս երուսաղէմացւոց ողբայր՝ որպէս զայլս ոմանս ցաւակից լինելով անցանէր եւ զայս ասէր՝ Ճանապարհք Սիոնի սգան**։ Այսոքիկ յայնժամ ասացան եւ այժմ կատարեցան։ Զի յորժամ պատմեսցի ախտն համբաւոցն, յայնժամ լցեալ եղիցին ճանապարհք սգաւորացն եւ առաջի ցնդեսցեն՝
20 որք ի նմանէ հովուեալք էին զնինուէացւոցն ձայն ի վերայ ախտին
16ա նմանելով, մանաւանդ եթէ քան զայ//նոսիկ վտանգաւորս ողբասցեն։ Քանզի նոցա ողբն երկիւղն ելոյծ, բայց սոցա լուծումն եւ ոչ մի չարեաց ի յողբոց վստահանայ։

Գիտեմ զԵրեմիայի եւ զայլ զձայնն, ի գիրս լեալ Սաղմոսացն
25 զուգաթիւ, զոր ի գերութեանն Իսրայէլի արար։ Ասէ բանն՝ եթէ յուրիս կախեցաք զմեր նուագարանս, լռութիւնն պինբանց եւ զբնարացն դատապարտելով։ Ինձ առնեմ զերգն զայն։ Քանզի եթէ տեսից զհերձուածողական զհառնակութիւնն (Բաբելոն է խառնակութեանն***) եւ եթէ տեսից զփորձութիւնն, որք ի խառնա-
30 կութենէն տարածեալս, զայնոսիկ ասեմ զԲաբելոնի զհոսումնն, առ որս նստելով լամք, զի որ անցուցանէր զմեզ ընդ այնորիկ ոչ

---

* Համմ. Ողբք, Ա, 4։

**Համմ. Սաղմ., ՃԼԶ, 2։

***Արտահայտութեանս միջանկյալությունը գալիս է բնագրից (էջ 860)։

ունիմք։ Եթէ զուտիան ասիցես եւ եթէ որ ի նոսա քնարքն, իմ են եւ այն առակքն, վասն զի առուգապէս ուռիք է կենցաղս։ Ծառ անպտուղ ուռին է։ Եւ ի մէնջ ի վայր ծորեաց կենացն քաղցր պտուղն։ Ապա ուրեմն ուռիք եղաք անպտուղք, դատարկք եւ անշարժք զսիրոյն զքնարան ի փայտն կախելով։

Եթէ մոռացայց զքեզ, ասէ, Երուսաղէմ մոռասցի զիս, աջ իմ*։ // Տուք ինձ փոքր ինչ փոփոխեալ զգրեալս, զի ոչ մեք զայն մեր, այլ աջն զմեզ մոռացաւ, լեզուն չիւրում ի բիմսն մատղեաց, զձայնին արտաքս զճանապարհն ախեաց, զի մի եւս մեք զքաղցր ձայնն զայն լսիցեմք։ Այլ՝ ջնջեցէք յինէն զարտաստուս, վասն զի սգամ արտաքո քան զարժանն ի վերայ ախտիս կանացի լեալ։ Ոչ առաւ ի մէնջ փեսայն՝ ի միջի մերում կա, թէպէտեւ մեք ոչ տեսանեմք։ Յանմտանելիսն է քահանայն ի ներքնագոյն, քան զվարագոյրն, ուր յառաջընթացն յաղագս մեր եմուտ Քրիստոս**, եթող զմարմնոյն զառագաստ։ Ոչ եւս առակաւ եւ սաւերաւ երկնաւորացն սպասաւորէ, այլ ի նոյն ինքն հայի յիրացն կերպարանս ոչ եւս հայելեալ եւ առակաւ, այլ ինքնագէմ հանդիպի Աստուծոյ, մաղթէ յաղագս մեր եւ ժողովրդեանս անգիտութեանց։

Ի բաց եդ զմաշկեղէն պատմուճանն***, քանզի եւ ոչ իսկ են պետք, որք ի դրախտին շրջին այնպիսեաց պատմուճանաց։ Այլ ունի զդեստ, զոր մաքրութեամբ վարուքն իւրովք էանկ։ Եւ ընկալաւ զպատուական առաջի Տեառն զարբոցն մահ։ Մանաւանդ եթ//է ոչ մահ, այլ խզումն կապանաց։ Քանզի խզեցէր, ասէ, զկապանս իմ****։ Արձակեցաւ Սիմէոն, ազատեցաւ ի կալանաց մարմնոյն։ Որոգայթն փշրեցաւ, ճնճղուկն թռեաւ։ Նկիր զնգիպատոս, զաղմկական կեանսս. էանց ոչ ընդ Կարմիր ծովն ընդ այն, այլ ընդ Սեաւ ընդ այս եւ ընդ աղջամղջին կենցաղոյս ծով, եմուտ յերկիրն աւետեաց, ի վերայ լերինն համաստահիրեաց Աստուծոյ, ելոյծ զկաւշիկս ոտից, զի մաքուր գնացիւք մտացն ի վերայ սուրբ երկրին գնասցէ*****, յորում երեւի Աստուած։

---

* Համմտ. Սաղմ., ՃԼԷ, 6։
** Համմտ. Առ Եբր., Զ. 20։
*** Համմտ. Ծննդք, Գ, 21։
**** Համմտ. Սաղմ., ՃԶ, 14։
***** Համմտ. Ելից, Գ, 5։

Զայս ունելով, եղբա՛րք, զմխիթարութիւն, զուք, որ զոսկերան Յովսէփայ յերկիրն աւրհնութեանցն տանիք, լուարուք Պաւղոսի՝ որ երաշխաւորն լինի: Մի՛ տրտմիցիք իբրեւ զայլսն, որք ոչ ունին յոյս*: Աւասցէք անդ ժողովրդեանն, պատմեցէք զգեղեցիկ պատ-
5 մութիւնն: Աւասցէք զանհաւատալի սքանչելիսն՝ զիարդ ի ծովուն դէմսն յաճախադոյն հայելով բիւրամարդ բազմութիւնն մի էր ըստ ի միասին կալով մարմինն ամենեքեան՝ իբրեւ զջուր ինչ աւ ի տապանին յուզարկումն ալի շարժեալ: Զիարդ քաջն Դաւիթ բազ-
17ր մամա//նաբար եւ յոգնաւրինակապէս ի բիւր եւ ի կարգս պին-
10 քըն բաժանելով յայլալեզուս եւ ի համալեզուս առ տապանակաւն պարէր: Զի՞րդ յերկոցունց կողմանցն հրոյ գետք յաճախութեամբք ջահիցն իբրեւ ջրոյ իմն հոսումն, առանց որոշելոց հոսեալք մինչ եւ ոչ էր կարողութիւն ական քմբռնել յերկարաձգեալ լինէր:

Աւասցէք ժողովրդեանն ամենայնի զյաւժարմտութիւնն, զաւա-
15 քելոցն զխորանակցութիւն: Զի՞արդ վարշամակք ի մարմնոյն նոքա, ի ս ահապանութիւն հաւատացելոցն հանեալք լինէին: Մերձ կացեալ ի պատմութիւնս թագաւոր տխրեալ ի վերայ տխտին եւ յաթոռոցն ի վեր յարուցեալ եւ քաղաքն ամենայն յուզարկաւորութեամբ սրբոյն փոփոխեցաւ: Մխիթարեսջիք զմիմեանս բանիւքս
20 այսոքիւք: Գեղեցկապէս Սաղմոն բժշկէ զտրտմութիւնն, քանզի հրամայէ, որոց ի տրտմութեանն են, դինի տալ**: Աւ ձեզ զայս ասեմ, որք աստուածային այգւոյն էք մշակք: Տուք զձեր դինիդ տրտմեցելոցն ոչ զարբեցութիւնն, այլ որ զսիրտն զուարճացուցա-
18ա նէ, անապակադոյն խառնելով եւ առատա//բար յաջողեցէք բանին
25 տաշտիւք: Մինչ զի մէնջ զարձեալ յուրախութիւն զառնալ յախտէս եւ ի մխիթարութիւն ձեւք՝ հանդերձ ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում փառք***:

---

* Համմ. Աւ Թեսաղ., I, Դ, 12:

** Հայերեն թարգմանութեան չունի բնագրի շարունակվող հետևյալ մասը. „οὐ τὸν τῆς μέθης ἐργάτην, καὶ τῶν φρενῶν ἐπίβουλον, καὶ φθορέα τοῦ σώματος, ἀλλὰ τὸν τὴν καρδίαν εὐφραίνοντα, ὃν Προφήτης ἡμῖν ἐπεδείκνυε λέγων" (էջ 864),

*** Հունարենն ավարտվում է այսպես. „καὶ Πατρὶ εἰς τοὺς αἰῶνας τῶν αἰώνων. Ἀμήν" (էջ 864), որը բացակայում է հայերեն թարգմանությունում:

1 նորին ի CDE. *Մելիտոս* A

1-2 ի յիշատակ Յոհաննու Երուսաղէմացւոյ եպիսկոպոսի երանելոյն Գրիգորի Աստուածաբանի ասացեալ F, բուն բարեկենդանին շաբաթն աւր յիշատակ սուրբ հարյապետացն ճ և Ի եպիսկոպոսացն, որք Կոստանդինուպաւլիս ժողովեցան՝ ընդդէմ հոգէմարտին Մակեդոնի եւ խոստովանեցին զսուրբ Հոգին ճշմարիտ ընդ Հաւր եւ ընդ Յորդւոյ, որոց գլուխ Մելիտոս եպիսկոպոս եւ Գրիգոր Աստուածաբան եւ այլք, որք ընդ նոսա, որք նզովեցին զՄակեդոն. Գրիգորի Աստուածաբանի ի Մեղիտոս եպիսկոպոս Անտիոքու, որ ի նմին ժողով անդ փոխեցաւ ի Քրիստոս G. Գրիգորի Աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի Անտիոքու խօսք ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքու ասացեալ ի Կոստանդնուպօլիս H

2 Կոստանդինպաւլիս A, Կոստանդինուպօլիս CDE

3 աճեցոյ G

4 աստուածայինն] մետասան ACDEFGH

5 աւրինակին F

5 զնահատակն[1] ACEG, զնահատակ D, զնահատակնն E, նահատակքն H. պսակեալքս C, զպսակեալսն D, զպսակեալն EFG, հոգով]+եւF. հոգւով H

6 սրտիւ F.

7 սպասաւոր E, սպասաւորն F. հայրն] հայրապետս H

8 խորանակցութեամբն] խորհրդակցութեամբ ACDEF

9 քանզի] քան F. թուղացուցանէ A, թուլացուցանէ E

10 բարի ժառանգութենէն G. որբութիւնս] սրբութիւնսE, որբութեամբ F. էր] է FG

11 չար]+է F

12 խորհրդեանն C, խորհրդոց F, խորհրդածու G.

13 ժամանակ]+է F պատերազմս DE, պատերազմ FH.

14 պաշարեաց ADE, պաշարեալ է G. պատերազմ E զաւրավարն] զաւրաւորն FG. լինել E, է FG

15 ոչ ոք] ոչ ուրեք G. է]+որ փրկէ ի FG. վտանգէս F. հիւանդացեալ F. հասարակաց] առհասարակ F

16 եկեղեցոյ F, եկեղեցւոյ HG տեսանէք]+թէ F մերքն G

16-17 իրս մերքս ADE, իրս մերքսն F, իրքս մեզ G

17 կան] անգան F. է կարողութիւն C. ակարութիւն F
18 քան] F. թշուառութենէս A.
19 եւ] BCDEF թշուառութեանն G
22 պիղծ AH
23 բանիս ADEFI. իբրու H.
24 թշուառութեամբս ACDEG, թշուառութեամբ F զբերան ACDEHI, բերանս FG. անասացութեամբ C.
25 կալեալ] կապեալ ADE, կապեալս F, փակեալս GH. զձայնս C, զձայն F
26 ի] FH. սովորութեան G,+է H. զգայթակղեալն F, զգայթակղեալս G ոգւոյս ADEGHI, սգով F.

էջ 189

1 թշուառութիւն C, թշուառացեալ F, թշուառութեամբ H,+ի F. մառախլով EF. ծածկեալ FH
2 զխաւարինս F, զխաւարին H. ամպ G, զանպտրոպ H. զամպ տրտմութեանն] զամբարշտութիւնս F.
3 դարձեա F աւդով] ոգով F. պայծառացուսցէ... ճառագայթն] խաղաղացուսցէ զճառագայթս F. ճառագայթսն H.
4 ծագեցին FG,+խաղաղական ADE լուսաւորին] լուսաւորիչն F. մերոյ]+աստուծոյ H.
5 մտեցելս A, մտելս C, մտեցելոյ DEH, մտեցելոցս G
6 ով] ո F. լուսաւորին] լուսաւորին F
7 հակառակ] և անառակ F մերձակա ի] մերձակայի G. տեզուջս ADG. եւ] H. առաջիկայ] առաջին ACDEGH.
8 բանք ADEF
9 ողորմելիս F. ախտին F հառաչիմք H.
10 երգ FH յիշեցաք F.
10-11 եւ... զհոգեւոր] C
11 հաստեցաք AC
12 կոյսս GH. բանիցն E. զաւժիտան ADF, օժիտս GH
13 կարողութեան E զուարճացուցանէաք ACDEG. զուարճանայք... եւ] զուարճացուցանեայք զբազումս և մեք F.
14 բերկրէաք F. էաք] F յարմարեցաւ] E. յարմարեալ փոփոխեցաւ H
16 էր] է F. ախտս F փակել AH. զցաւս F.
17 որպէս] H. խանդիւ F. առնիցիմք E. զորդիս EG առագաստի H.

18 պատմուճանն D, զպատմուճանսն F, զզարդս պատմուճանի G արջնազգեստաք B, արջնասբդեստ G
19 բանիւք G. քաջ] H.
20 ոգով] սգով CFG, ոգւով E սևացեալ ADE. եղեաք H. սովորութեանն]+ի միջի որ F. պայծառացուցանէր F. զբանն] F,
21 զբանս H որ] և F. զմեզ]+բանիւ վարդապետութեանն F. սգեստն ABCG, զգեստն F. մախանք ACDE, խրախանքն F.
22 բարեաւք] F, բարիոք G մերկ C. աղքատ C.
23 դառնամբ]+ո F. ուղիղ ACDEFH զլխոց F
25 ճառագայթիցն G. ունեաք G. զայն]+մեծ ACDEGH
26 անեղութ]+եղև F. եւ]+մնաց F. խեցեղէնն G. ամանն] G
27 մեծութենէ F,+զանձին առ F տուողին F,+զանձն F
28 ասասցեն G
29 պահանջէինն F. նաւաբեկութեանն C.
30 յուսոյն] յուսալով F մերոյ] F. նաւաբեկ ADEG, նաւաբեկեալ F. եղեաք H.
31 բեռամբք F. նովին] F լռութեամբ F.
32 մերկ F,+մնացաք մեք F. զմեզ] F. ի] BCDEF. ճոխութենէ F
33 ուր]+է EF
34 զդուշագոյն ACDFGH. մերոյ ADE, մերն C. ոգոց մերոց F, ոգւոց մերոց G ոգւոցս ADE. զեկ G
35 տագնապին E. բարուցն AD, բարեացն F
36 զգուշութեամբ ACDEFGH. վստահացեալք] F, վստահացեալ G.
37 նաւուղղիդն F զվերինսն] զլերինսն F. դիտելով] գիտելով A.

էջ 190

1 զնաւսն F. արդ] արդեք A, արդէք C,+մինէ F. փոքր]+ինչ F փոքր իցէ արդեք G պատահումնս CDEG.
2 եւ] կամ F. տագնապս G. մանաւանդ] H
3 ի կիրսս] իրիս F. բանիւս FH,+իմով նուաստիւ G. տուք[1] ACDGH. տուք[2] FH,+մեզ F
4 ախտակցութիւն զարտօսր H. եւ G
5 զուարճանայիք]+եւ G ընդ] F. ուրախութիւնն B. հաղորդեաք G.
6 մեզ] H. փոխարէնդ ACDEF
7 զայս] զայդ G. արարաք]+և F. լացեալս F
9 ի միասին] FG

10 Յակոբայ H թշուառութիւն D.
11 զՀայրն] F. յԵգիպտոս F,+էջ F որ F. նմանէն D. բերէին] և F. բերին G. ամենայն] ամենեքեան AD
12 բազմութիւնն AFGH,+բերէր F ողբացին AD, յողբային H.
13 զգիշերս ADEH, զգիշերն G զսուգն] F. յերկարէին F, յերկարեցին G, յար սրեցին H
14 նմանեցայք G. եղբարք FH. ազգակիցք CH
15 արտասուքն F եւ²] H. տեսէք BG. զհայրապետսս E
18 մերոյ]F, մերոյն GH. Յակոբայ FGH. էն F ամենիքեան F ոք] F. խորթք CF.
19 բացընկեցիկք F. եւ] H. իսկ արժանաւորս G նմա] F. զաղախնական] զապախտական F.
20 վատթարազգն F. ածել G, բերել F
21 մերն DE,+է F. վասն... Հայր] G. զի]+և H. մերոյ] մերում F. էր] է F. նա AH
22 լուաք G
23 զբան ADF
25 վտանգի]+է ADE. երանելին G. այսուհետև] այնուհետև B. էի ADE. մախանաց C.
26 չարս E. գործեսցէ] կարծեսցէ H
27 յարևելեանսն ADE
28 չար իրաց] չարեաց DFH. զի]+եւ ADE
29 Յոբ] Յակոբ F. վկայութեամբն F, վկայութեամբք G. եւ] F
30 մախանաւք F
31 աշխարհք F, յաշխարհ G.

էջ 191

1 լայն ոտամբ] լայնութեամբ F բարիսն FH. իրան] FH. մեր յեցաւ] մերձեցաւ F
2 հոյլս] հատոս F ոք] ոյք G. արդեւք AC. զհաւատն] զհաւան AH. զհօտն CDE
3 ոք] ոյք G. արդեւք AC. զհաւատն] զհաւան AH. զհօտն CDE
5 ի] FG. ի]² F
6 զհարուածն H. գործեաց]+և H. ոչ] այլ F. մարմնոյն F. զգայութիւնք E, զգայլսն յաւգիս E
7 դառնացոյց] դարձոյց F այլ]+և F. նմին] նոյն F. զլխոցն F. կո-

զոպտեաց] *կողոպուտս կացոյց* F
8 զնացին] *զնացեալ լինին* F. *պատուականագոյնքն* G.
9 սգաւութիւնք AB, *զգայութիւնք* DE, *սգայութիւնք* F, *զգայութիւնքն* G. *նւս*] *և* F. *է*] F
10 ձայնն DG, *ձայնսն* H. *լսեն* BCFH
11 զսուրբն F. *նուէրս*] *սուրբս* F. *ճշմարտութեան նուէրս սուրբս* G. *խաւսի*]+*ընդ մարդկան* G. *էք*] *է* EF. *քաղցր աշացն*] *քաղցրաձայն* G
11-12 քաղցր... ուր] *քաղցրաձայն խոնարհութեանն* F
12 հանդարտութիւն I. *ուր*[1]] *է* H. *ժպտումն*] *ժըմտումն* AD. *ուր*[2]]+*է* EF
13 աչ G. *մարմնոյն* EFG. *աւրհնութեամբ* G. *զմատունս* C
14-15 զիշուառութիւնն AFGH,+*բարբառելով* F
15 է]+*իմ* F. *բանքս* F
16 փոփոխմանդ ADEFH.
17 անզարդեցաւ ACDEF. *գեղեցկութիւնն* H
18 ի] FH. *վայր*] F. *ծաղիկն անկաւ* AF
20 չարութեան GH *հակառակ... երգեաց*] F
21 որս] *որոյ* F. *փոփոխեաց*] *փոխադրեաց* E, *փոխեաց* F, *փոփոխեացն* H
22 աղբեւրն D. *արիւն* H.
23 փոխեցաւ DE *ով*] *որ* CG, *ո* DE. *պատմութեանս* G. *այնորիկ*] *այսորիկ* G.
24 պատմեսցէ H *ով*]+*օք* F. *ասիցէ*] *պատմեսցէ* G,+*եկեղեցւոյն* ADE. *մանկանց* CI+*է* A.
25 որբք] *որք* G. *ո*] *ով* DE *ո պատմեսցէ... մնաց*] H
26 չարեաց DE
28 եղբարք] G. *այրն աստուծոյ* F. *աստուծոյ*]+*եղար* G *տապանակ*]+*էր* F
29 հոգի G.
30 ոսկեղէնն] *սրբոյն* G. *հոգին... մանանայիւն*] *լի մաքուր հոգւովն բաւանդակեալ ունէր* F. *լի*] F. *երկնաւոր*] *երկնային* G.
31 այնուիկ] *այնորիկ* ADE *ի... գրեալ*] *լի* F. *տախտակք* ADEG. *գրեալք* ACDEG.
32 կենդանոյ F. *սեւով*] *սևագիր* F. *ոչ էր*] *և ոչ* F. *ի*] AF. *եւ*] H+*ոչ* G

էջ 192

1. Գաւազանք A.

2 ձեռինն F, ձեռին G, ձեռք H. նորա] F զոր տապանակին] զաշտանակին F.
3 ունելով F. առն ACH բովընդակեալ A
4 ունէր] F. փոխանակ... բանս] F
5 կերպասոյն ADE, կերպասուցն C, կերպասոցն F, կերպասոց G. անկուաք G. անուշ F. իղոցն F, եւղոցն G. առատութիւն A, առատութիւնք FG.
6 ցածումն G կնոջ] առն G. քանզի]+եւ AD. ասացին A. եւ] F
7 լիցի ADE. զոր F.
8 եղոյն A, եւղոյն D քահանայիւն E. եւ] DEFH. այլք FH. որ H.
9 յայսպիսն E, այսպիսի իմն F, այսպիսիսն G պահեցին G,
10 զմահն D
11 մեռելութիւնն D. թշուառութեանցն G
12 Հռոմայ]+լսելի ADG. լիցի ADEF
13 Հռաքեալ B. լայ ADE,+եւ G. եւս] H. զգայրն G. սգայր] F, զոյր ADF, գա B, գայ G
14 մխիթարիչդ DFG. զաւրանայք AFG, զօրանայք DEH
15 ծանասցի H. սգով] ոգւով E. զայրին E. սգասցէ] զգասցէ DE
16 ոչ] F. անհրահանգի AEG, զանհրահանգ F. է] AEG, ի F. յորոշմանն ADE.
17 նահատակութեանն FH սովորեալ CDFGH
18 զիարդ]+ի G
19 բանքն H. զնահատակութիւն GH. առն DEG, առնս H
20 ամենայնիւ] ամենեւին ADE, ամեննևիմ F. երրորդութիւն B
21 երեւաւք փորձութեամբք G
23 զյարմարումն G. աշխատութեանց D. որպիս F
24 որպիսի] F եւ վերջինսն] թէ G, եթէ H.
25 վարկանիս C
26 ոչ]+ևս DE յորժամ] FH. առաջի H.
27 ողջախոհել G. զայրն զայն F զերեսսն F
28 ի] F, ըստ H. կերպարանի] պատկերի G. աստուածոյ] F. պատկերաւ F, կերպարանեալ G. զսէրն] զերեսսն F
29 եռեսս]+զերեսսն F. զշնորհսն F. շրթամքն F, զշրթամբքն E, զշըրթամբն H. զխոնարհութիւնն GH
30 զսահմանն F. որոյ] F, որոց A. եւս] F. առաւելապէս G.
31 ըստ] G զԴաւթա G

32 *Մովսէսի* ADE, *Մուսիսի* B *Սամուէլի*] *Սանուիէլի* F. *զհաւատարմութիւնն*] *հաստատութեանն* F, *զհաւաստութիւնն* G
34 *զնախանձայոյզ հաւատն* F

էջ 193

1 *Յովանու* C, *Յովհաննու* EGH.
2 *զայնքան* F *ի միասին*] G. *զընթացս* ADEG, *ընթացս* F,+*և* F. *մի յոգւոյն* F.
3 *երանելոյն* F. *եւ*] DFG *իւր* B.
4 *նախքան*] *նախ* H *զգանկութիւնն*]+*իւր* G
5 *զփափագումն* CDF *մնայր* AE, *մնա* F. *միայն*] F.
6 *կոչեցեալ* CFG. *եւ*] *որ* F
7 *քրտամբք*] H, *քրտամբ* F. *հարսնն* HI
7-8 *ողջախոհութեամբ* FGHI
9 *սեղեղաբար* ADEI, *սիղեղաբար* BF, *սիղխաբար* G. *յանդգնեալ* F.
10 *յանարատ*] H, *յանապատն* G *հարսնն* FGI
11 *վերատին... դարձեալ*] F *երրորդ*] *երկրորդ* DE.
12 *նոյնպէս*] G,+*և* F. *մինչ* F *մառախուղն*]+*և* G. *տէր* ADEGI, *տեառամբ* F.
13 *ճառագայթս* I. *խաղաղականս* FG, *խաղաղութեան* I
14-15 *բայց... զիրեարս եւ*] F *տեսան* G
17 *զվայելումն* CDFH, *զվայելումնն* G *զվերջին* DF. *այս*] C
18 *սգեցուցանել* C. *մեզ*] CG. *զպատմուճանն* G, *զպատմուճան* H. *փեսային* G,+*մեզ* G. *վրիպեաց* F, *վրիպեցան* G
19 *եղ*] *եւ* F.
20 *պսակ* H *գալիլացոյց* C, *կանայգալիլեացւոց* DE, *կանագալիլեա* F, *կանագալիլեացւոց* G
21-22 *զհրաւեան* E. *սափորս* ADG. *ջրովն* DE, *ջրով* FH. *լցեալ* DE
23 *հաւատոյն փոփոխեալ* CFGH. *փոխեալ* E
24 *թակոյկ* DEG. *զուարթութեամբ* F.
25 *իւրով*] *իւղով* G *զընորհն* F.
26 *անկամ* F. *զբնական*] *բանական* BF *խրախութիւնս* F
27-28 *սպասաւոր* ACDE, *սպասաւորէին* G *լինէին*] G
29 *զփառսն* ACDG.
30 *գեղեցիկ*]+*է* D *երանելի*]+*է* D
31 *եւ*] H.

32 յերեմիաս AB ասէր I. իսկ] G.

էջ 194

1 այտման] պայման F, այրման I (առաջարկում է խալաթյանցը). սրտին] F, սրտի AC. զիջանել] շիջանել F
2 թեթևացուցեալ AD, թեթևացուցեալք E
3 զդառնալոյն բաժանումն անդրէն յոյս G.
4 այժմ] արդ H բաժանեցաւ]+նա G.
5 մէջ] F հաստատեցաւ] հաստեցաւ BI, հոտոտեցաւ D.
6 զոգան ADEI, զոգոն D. Աբրահու I. հանգչէր ADEFG
7 զվտանգեցելոցն CI. զվտանգեցելոցն զովացուցանէ զլեզուն F. զլեզու ADHI. ոչ] F. ոք] ACDEFG. է] F, էր G. կորեաւ] կոր B եւ] ADFGHI.
8 ձայն A. կարկեաց C, կարկեցան I. շրթունք D. շնորքն G պատմութիւնն եղեւ] պարտեցաւ F.
9 եւ] զիսրայէլեան FGH,+զիսրայէլեան CDE
10 յերկրրէ G. առ] ի վեր] յերկինս F. թոուցեալ] ամբարձեալ ADH
11 եղիսէով F. մաշկերովն ADE, մաշկեկաւն BFG.
12 վերս D, վէրս FG զբժշկութիւնն] զբնութիւնս F.
13 եւ] FG. համբարձաւ F ոչ մնաց ի խոնարհ F.
14 լուաք F. ոմանս] իմն F. ի] I
15 որովք ACDEFGHI. յամայանալ] յամաանս B. զարմանալ F. քաղաքին ACEGI. երուսաղէմի FH, երուսաղէմացոց I
16-17 ճանապարհ C. Սիովնի G
17-18 եւ այժմ կատարեցան] G. կատարեցաւ B
18 ախտ G. համբաւոյն ABDEFH, համբաւուն G.
19 ճանապարհ C. սգաւորացն բառից հետս F գրչագիրն ընդհատվում է: ցնդեսցին B.
20 հովեալք G. զննուեսցուցն A
21 եթէ]+առաւել G. վտանգաւոր G
22 զողբան CG. երկեղն B.
23 եւ ոչ մի] և մի յինչ G. մի]+ինչ ADE, +յինչ G. չարեաց]+և D
24 ի] ոչ G. ողբոց G զերեմիայի] զի երեմիայի G, ձայնն AD
25 Իսրաէլի G
27 զբնարիցն G ինձ...զայն] ինձ այժմ զերգն զայն առնլով G

29 տեսանիցեմ G.
30 պետունակութիւնս C Բաբելոնէ AD. Բաբելոն է թառնակութեանն] C. թառնակութիւնն A, թառնակութիւն D. զփորձութիւնսն ADEG. որք] որ CG թառնակութենէ G
31 անցուցանէ ACDEG. այնորիկ] այն GH

էջ 195

2 առակք G է[1]] D
5 անշարժք] անշնորհք G. սիրոյն CG. փայտսն G. կախեաց C
6 ասէ] ABCGH
7 փոփոխել AG. զգրեալսն DEH, բանս G.
8 մեր]G ի] G. մատլեաց] մատեաց B.
9 արտաքս]+եհիւ G. ճանապարհ DE ախեաց] G, եհիւ ADE, եւս] և G.
10 զձայնն D
12 լինել H
13 քահանայն]+է AC. ներքսագոյնսն AD, ներքսագոյն CG, ներքսագոյնն E
17 հայելեաւ ADG, հայեալ B աստուածոյ]+և G. ժողովրդեանն G անդիտութեան GH
19 իսկ ևն] H.
20 որք] որոց CDEG շրջէին DE, շրջեալ G. այնպիսեացն G, կալաւ H.
21 սգեսա C. զոր G մաքրութեան վարուք G իւրով AC. էանգ DE. եւ ընկալաւ] G.
22 պատուական G,+է GH սրբոցն D, սրբոց H.
23 ոչ]+է ACD Սիմոնն G. ազատեաց] արձակեցաւ G. կալանաց] կապանաց ADEGH
25 եկոք C զաղմական] զազգական H
28 իմաստասիրէ ADG. ոգւոցն AD, հոգւոյն E, ոգւոյն G

էջ 196

1 զմխիթարութիւնն H
2 աւրհնութեան ADG, օրհնութեան D.
3 երաշխաւոր G տրամիք G. զայլսն] զայնս H
4 անդ] ընդ C պատմութիւնսն CG, պատմութիւնս H զսքանչելիսն AE. ծովու D.

6 դէմս DE
7 մարմինն] H առ] G.
8 յղարկումն AD, յուղարկումն CG. յալի E. շարժել G
9 բազմամասնաբար] մանրամասնաբար G. եւ] G. յոքնօրինակապէս CDE, յոգնաւրինակաբար G. ի բիւր եւ] իբրև բաժանելով G. բիւրոն E. եւ ի] DEH. զինքն] C
10 բաժանելով] + ի C համալեզուս] համասեռս G
11 գեան G.
12 ջանիւք G. ջրոցն D, ջրոյ G որոշելոյ BG
13 ըմբռնեալ GH
14 յաւժարմտութիւն G. առաքելոցն ADE
15 զխորանակցութիւնն G վարշամակի EG. ի] G. մարմնոցն D, մարմնոյ G
16 հաստատելոց G. հանեալք] հաւաքեալք H.
17 կացցէ AE, կայցէ G. պատմութիւնն BH
18 յաթոռոյն A յուղարկաւորութեամբք A, յուղարկաւորութիւն G.
19 զմիմեանս] զիրարս A, զիրեարս CD
20 բժշկէր DE. տրտմութեան D
22 աստուածային] G այգոյն H.
23 տրամեցեալոցդ ACDEG
24 անապական այգւոյն ADE, անապականագոյն G, անապական H
25 մէնջ] մեզ ACDH, մեզ բանիւք G. դարձեալ] H դառնայ DE. ախտն AD, ախտս GH.
26 եւ... ի²] A. Յիսուս աստուծոյ AD. ի մխիթարութիւն... հանդերձ] CD
26-27 եւ... փառք] G տէր... փառք] փառք յաւիտեանս ամէն AE. փառք] + յաւիտեանս ամէն H

բ) «Ի ՍՈՒՐԲ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԷՈԴՈՐՈՍ» ՆԵՐԲՈՂԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Նյուսացու սույն երկը թե՛ բնագրում և թե՛ հայերեն թարգմանությունում, ասվեց, ներբող է կոչվում։ Նրանում տըվյալ ժանրին հատուկ որոշակի չափ ու ձևի մեջ տեղ են գտել այն բոլոր հիմնական հարցադրում-լուծումները, որոնց շուրջ տարվող քննարկումների ճանապարհով ամբողջանում, ավարտական տեսք է ստանում ներբողյալի կերպարը, համապատասխան եղանակով շեշտվում է նրա՝ ներբողի արժանի լինելու հանգամանքը. «Որքան բարգաւաճեալ եւ մեծագոյն իր է արդարն եւ որչափ արժանանայ փոխարինին ներբողենիցս այժմիկ, ասեմ...»[1]։ Հասկանալի պատճառով մեծ տեղ է հատկացվում ներբողյալի հոգևոր գործունեությամբ պայմանավորված արժանիքների ըստ ամենայնի դրնահատմանը՝ շրջապատող միջավայրը և առհասարակ ամեն ինչ օժտելով համապատասխան տրամադրությամբ և ծառայեցնելով այդ նպատակին (պատերազմական վիճակի ընդմիջում, սպառազին դինվորի ժամանակավոր հանդիստ, նավավարի, երկրագործի և այլոց կարճատև դադար և այլն)։

Դժվար է պատկերացնել միջնադարյան գործչի կերպարի ամբողջականացում, ավարտուն տեսք առանց նրա գործունեության պատշաճ գնահատության, ճշմարիտ հավատի համար մղած տևական պայքարի մանրամասների բացահայտման, «յարիւական ճակատամարտութեանն պարապմամբն վարեալ»[2] լինելու առավելությունն ընդգծելու։ Ուստի և միանդամայն հասկանալի է պատմագրի դավանական վեճերի, մասնավորապես Քրիստոսի բնութագրման խնդրի առնչակցությամբ Թեոդորոսի ճշմարիտ դիրքորոշումը հավաստող օրինակների շարքը։ Ահա դրանցից մեկը.

---

1 Ձեռ. № 6196, էջ 312ա։

2 Նույն տեղում, էջ 313բ։

«Այլ նա հաստատուն դիմաւք եւ անղարհուրելի կամաւք քաջահանդէպ ասացելոցն զպատասխանիան վերադրէր։ Աստուածք ասելով ոչ գիտեմ, քանզի ոչ են ըստ ճշմարտութեանն, այլ զեւք զուք պատրող մոլորութեամբ Աստուծոյ առասացութեամբն պատուէք, այլ իմն Աստուած Քրիստոս է, Աստուծոյ Միածին որդին»[3]։

Անհմաստ է ներբողի էջերում անհատականության-անձնականության ընդգծված արտահայտությունների հեղքեր որոնելը։ Առավել ևս խոսք չի կարող լինել ներբողյալի արտաքին նկարագրի, բարեմասնությունների շուրջ, քանի որ գործ ունենք վազ քրիստոնեության ոլորտում ստեղծագործող հեղինակի և նույն միջավայրի ծնունդ անձի հետ։ Մինչդեռ, ժանրի թելադրանքով ամեն ինչ համաձայնեցվում-ծառայեցվում է նրա վաստակի բացահայտմանը, այն ամենին, ինչը նպաստում է լիարժեք կերպավորման հնարավորությանը։

Առաջարկվող հրատարակության համար օգտագործել ենք հետևյալ ցուցակները։ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 6196—A (ճառընտիր, 1227 թ.), Վենետիկի Մխիթարյան միաբանության հավաքածոյի ձեռ. № 200—B (հին թիվը՝ 17, ճառընտիր Ա, 1224 թ.), նույն հավաքածոյի ձեռ. № 202—C (հին թիվը՝ ճառընտիր, Գ, 1637 թ.)։ Վենետիկի հավաքածոյի ցուցակները հանդամանորեն նկարագրվել են Բարսեղ Սարգիսյանի կողմից[4]։ Այստեղ պիտի ավելացնել հետևյալը. № 200 ձեռագրի մեզ հետաքրքրող նյութի ավարտամասում պահպանվել է հետևյալ հիշատակագրությունը, որը, հավանաբար, բուն նյութին հյուսված լինելու պատճառով չի նկատվել նկարագրողի կողմից։ Ահա այդ հատվածը. «Սրբազանից դասք հարց և եղբարց, որք աւգտիք ի սուրբ բանիցս, թողութիւն մեզազ հայցեցէք ստացողի գրոցս՝ տէր Զաքարիայ... քահանային և ամուսնոյն իւրոյ և զաւակաց և ննջեցեալ ծնողաց իւրոց, և ջնջեսցէ զյանցանս նոցա։ Ամէն»[5]։

---

3 Նույն տեղում, էջ 313։

4 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր երկրորդ, յօրինեց Բարսեղ վ. Սարգիսեան, ի Վենետիկ, 1924, էջ 5—36, 67—114։ Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատան աշխատակիցներին և Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Վարդանյանին, որոնց փոխադարձ համաձայնությամբ ու հոգածությամբ ստացանք Վենետիկի հիշյալ ցուցակների մեզ հետաքրքրող էջերի մանրաժապավենը։

5 Վենետիկի հավաքածոյի № 202 ցուցակը բանաքի բախվածության պատճառով տեղ-տեղ գրեթե անընթեռնելի է։ Ընդօրինակությունն ավարտելուց հետո այն, թերևս, համեմատվել է ուրիշ օրինակի հետ և մասնակի ուղղումներ են կատարվել։

Ճիշտ նույնաբնույթ գրառում կա նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 6196 գրչագրում. «Աղաւթիւք և բարեխաւսութեամբ սրբոյն Թէոդորոսի զաւրավարի և ամենայն սրբոց ողորմեա, Քրիստոս Աստուած, Վարդան վարդապետի՝ ստացողի գրոցս, այլև Գրիգորի կտաւագործի և ծնողաց նորա ողորմեա, Քրիստոս Աստուած: Ամէն»[6]:

«Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» ներբողի հայերեն թարգմանությունը համեմատել ենք վերջերս Քյոլնում լույս տեսած բնագրի քննական հրատարակության[7] հետ և հայերեն տեքստը պարբերությունների բաժանել վերջինիս հետևությամբ:

---

[6] Ձեռ. № 6196, էջ 315ա:

[7] Համմ. Gregorii Nysseni Sermones, pars II, Köln, 1990, էջ 61—71, համմ. PG, t. 46, էջ 736—748:

//ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԻԻՍԱՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԲՈՂԵԱՆ՝ ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԷՈԴՈՐՈՍ

Ով դուք Քրիստոսի նոր ժողովուրդ, սուրբ հաւտ, թագաւորեալ քահանայութիւն, որք յամենայն կողմանց քաղաքացիք իսկ եւ գաւառացիք ի միասին հասեալ լինիք հանդիսիս, ուստի՞ արդ առեալ զնշան ճանապարհիդ առ այսոսիկ հանդիսանայք սրբազան տեղւոյ։ Ո՞վ ձեզ աստանաւր հասանելոյդ փոյթ այդպէս եւ ի ժամու զկարիսդ հասոյց, եւ զայսոսիկ ի ժամանակի ձմերայնոյ, յորում եւ պատերազմ դադարեալ է եւ զինուոր զսպառազինութիւնն ժողովեալ լինի եւ նաւավար գեր ի վերոյ ծխոյն եղեալ զքեղիսն, եւ երկրագործ հանդարտեցուցանէ՞ զարաւրադիր եղինս՝ առ մսուր հնշտացուցանելով։ Այլ նախայայտ իսկ է՝ իբրեւ փողահար ի զինուորական գնդիցն սուրբ վկայս, շարժելով զբազմս ի զանազան հայրենի գաւառաց առ իւր հանգստարանս եւ տունս կոչնաց, ո՞չ ի պատերազմական պատրաստութիւնս զսոսա ստիպելով, այլ առ քաղցրագոյն եւ մանաւանդ քրիստոնէից վայելչագոյն հաւաքելով խաղաղութիւնս, զի սա, որպէս հաւատամք, եւ զանցեալ տարւոյս զբարբարոսական մրրիկն դադարեցոյց ահագին։ Ահագին սոցա արհաւիրս ցուցեալ քաջահեղաբար երեւելով եւ մերձ լինելով նոցունց ոչ սաղաւարտ բազմախորան եւ ոչ սուսեր քաջ սրեալ, եւ առ արեգակամբն փայլատակեալ, այլ զապաքինիչն ախտացելոց եւ զամենազաւր խաչն Քրիստոսի, ի վերայ որոյ եւ նա չարշարեցաւ, զփառաբանութիւնս զայսոսիկ ստացաւ։

Եւ ինձ այսուհետեւ զմիտս պատրաստ ունելով՝ որոնելով լուսրուք այսմիկ մաքուր կրաւնիցդ պաշտաւնեայդդ եւ վկայասէրդդ,
312ա *// որքան բարգաւաճեալ եւ մեծագոյն իր է արդարն եւ որչափ արժանաւնայ փոխարինիցն ներբողենիցս այժմիկ, ասեմ, եւ որ առ մեզս են։ Քանզի երանելեացս ոչ ոք է բաւական խորհել զմեծաւայելչութիւնն եւ ճանաչելով զբարեպաշտութեանն պտուղ՝ նախանձես-*

ցուք ընդ կամն այնպիսի նախապատուելոցն եւ ցանկասջիք ձըրիցն, զոր Քրիստոս ըստ արժանեացն բաշխէ նահատակացն, եւ առժամայս, եթէ թուեսցի, հանդերձել բարութեանն պարապելով, զոր յոյս բարի շահեմարան է արդարոցն, յայնժամ յորում մերոց կենցաղոյս դառաւորն ի վերայ հասանիցէ, զոր հասեալ լինի եւ տեսցուք զերանեալ սրբոցն զդասաւորութիւն կարգաւորութեանցն, թէ որպէս գեղեցիկ եւ պայծառագոյն իսկ լինիցին: Զի անձն յաստեացս աստստին արձակեալ՝ յիւր վիճակն ստեղանայ եւ ընդ անմարմնոցն նմանեացն ճեմեալ լինի, եւ մարմինն՝ պարկեշտ, եւ անարատ՝ նորին գործարան ոչ երբէք իւրաւք ախտիւքն վնասեալ բնակելով ի նմա անապականութիւն՝ հանդերձ բազում պատուով եւ խորշմամբ զսպել պարկեշտարար ի սրբազան տեղւոջ եղեալ լինի՝ իբրեւ զդանձս ինչ պատուականս մինչեւ ի ժամանակս վերստին ծննդեանն պահելով՝ յոյժ անբաղդատելի լինելով առ այլսն մարմինսն: Որք հասարակաց եւ որք հանդէպ մահուամբն եղեւ լուծեալ եւ այսոքիկ ի նմանեալ նիւթէն եւ ի բնութենէն գոլով, վասն զի այլք ի մարմնոյն գարշելի են բազմաց, եւ ոչ ոք հեշտութեամբ մատչի առ շիրիմսն, թէպէտեւ բացեալ հանդիպեսցի հրաշափառ դիտմամբ, այլ ակնարկելով առ անկերպութիւն առաջիկայիցն ամենայն տաղտկութեամբ լցեալ եւ ծանրապէս հեծեծելով ընդդէմ մարդկութեանս անցեալ լինի:

Այլ եկեալ առ վայր ինչ նմանոյս այսմիկ, որ այսաւր եւ մերս է ժողով, որ եւ յիշատակ արդարոյ եւ նշխարք սուրբք, յառաջ հոգւով զուարճացեալ լինի մեծավայելչութեամբն այնոցիկ, որ տեսանի առն՝ հայելով իբրեւ Աստուծոյ տաճար պատրաստ է պայծառութեամբ մեծապէս շինուածոյն եւ գեղեցիկ զարդարմամբ, յորում և հիւսն ի կենդանեաց նմանութիւն զփայտ կերպարանեալ լինի եւ գաղատոս յարծաթոյ ողորկութիւն զսալս քերեալ, եւ երփներփն գունովք գեղով կենդանակերպ ծաղկմանն արուեստիւ պատկերագրեալ լինի զաւրութիւն վկային, զդադարմունսն, զցաւսն, զդազանային գոռոզիցն զկերպարանս, զդաւաճանութիւնս, զբոցասոյցն զայն զհնոցն, զերանագոյն զկատարումն նահատակին, զմարգարիտն Քրիստոսի զմարդկային կերպարանին զձեւ, զամենայն մեզ իբրեւ մատենիւ ոմամբ լեզուազգեաց ի ձեռն երանգաց եւ գեղոց արուեստագործեալ հաւատոյ ճարտարասանեաց զվկայիցն նահատակութիւնսն եւ իբրեւ բուրաստան ինչ ծաղկաւէտ զտա-

ճարս պայծառացոյց: Քանզի գիտէ եւ զկերպագրութիւն լռելով առ
312բ // որմ խաւսել եւ մեծապէս շահեցուցանել, եւ մանրամասն նկարիցն շարագրովն պատմութեան արժանի գործեաց զճեմեալն յառաջս դնեսցուք:

Եւ այն, որ այսպիսի անզգայիւքս արուեստասխրութեամբս սխրացոյց զաշս, ցանկացեալ լինի այսուհետեւ եւ ինքն մերձ լինել դասուն բանին, սրբութեան եւ աւրհնութեամբ զշաւշափումն գոլ հաւատալով: Ապա եթէ ոք փոշի տացէ բերել յայնմանէ, որ վերակացեալ լինի մակերեւութեանն հանգստի, իբրեւ ձիր հողն առեալ լինի եւ իբրեւ զգանձ ինչ փոշին պահեալ: Եթէ ոք երբէք այնպիսի բարի հանդիպմամբ շնորհեսցէ զիշխանութիւնն, որպիսի ինչ բազմափափագ եւ ձիրն ըղձից վերագոյն գոին զայսոսիկ, որ զփորձ են առեալ եւ նովին ցանկութեամբ զծարաւ լցեալ: Քանզի իբրեւ զմարմին կենդանի եւ ծաղկեալ զնա տեսողքն համբուրեալ լինին աչաւք, բերանաւք, լսելեաւք, որ յամենայն զգայութիւնսն հասուցանելով, ապա եւ զկրիցն խորշմամբ արտասր ի բաց հեղելով, իբրեւ ամբողջ երեւելով, վկային զմաղթութեան աղաչանս հասուցանելով, իբրեւ զհետեւող Աստուծոյ աղաչելով, իբրեւ առեալ զձիրն եւ զայնոսիկ շնորհելով:

Այնոցիկ ամենեցուն, բարեպաշտ ժողովուրդք, յուարուք եւ ուսարուք, զի պատուական է առաջի Տեառն մահ սրբոյ իւրոց, քանզի միեւնոյն մարմին է ամենայն մարդկան, ի միոյ զանկուածոյ ունելով զբաղկացութիւնն, այլ մինն պարզաբար մեռանելով ձգեալ լինի, որպէս եւ հանդիպի, եւ միւսն չարշարանաւք վկայութեան շնորհալի եղեալ, այսպէս տրփանաւք լի եւ հեշտագոյն, եւ անչերկուանալի փափագմամբք՝ որպէս եւ յառաջագոյն եցոյց մեզ բան: Վասն այսորիկ հաւատամք երեւելեաւքս աններեւութիցն, ի փորձմանց աշխարհիս հանդիրձելոց խոստմանցն, քանզի բաղումք, որ զորովայն եւ զսնաիւսութիւն, եւ զոր ինչ աստանաւր խայտառակութիւնք են ընդ առաջինան դնեն եւ ոչ մի ինչ վարկանելով զհանդերձեալսն, այլ ընդ վախճանի կենցաղոյս զամենայն ինչ վճարել կարծեն: Այլ որ այդպէս խորհիցիս՝ ի փորրագունիցս զմեծագոյնն ուսիր, ի ստուերիցս զնախատիպն իմասջիր: Ո՞վ ոք ի թագաւորացն այսպիսի պատուով պատուեալ լինի: Ո՞վ ոք յայնցանեաց, որ գերազանցութեան առ մարդկան երեւեալ, այսպիսի յիշատակաւ փառաւորեցաւ: Ո՞վ ոք ի պաւրաւորաց, որ բաղմապարիսպ քաղաքս առեալ են եւ ազգս բիւրաւորս ընդ իշխանական հնազանդութեամբ

արկեալ՝ այսպիսի են երջանիկք, իբրեւ զվինուորս պայս, տնանկ, նորակարգ, զոր Պաւղոս սպառազինեաց, զոր հրեշտակք ի ճգունս նահատակութեան յորդորեցին, որ եւ յաղթող եղեալ Քրիստոս պսակեաց։ Եւ մանաւանդ քանզի հուպ եղէ բանիս յաշխատանս
5 եւ ի մրցանակ յաղթանակի վկային բեր զիրս հասարակաց Թողլով զվերագոյն սրբոյն Ճառեցից, քանզի սիրելի է իւրաքանչիւրն յատուկն։

313ա Գաւառ այսուհետեւ Արիդունին առ ելս արեւու ստորա-// կայեալ գաւառ, քանզի եւ սա քաջատոհմիկ էր ըստ Յոբայն այն-
10 միկ, որ չելից յարեւու, եւ գաւառաւ նմա հաղորդելով ոչ ի բացեա մնայր եւ ի բարուցն նմանութենէ։ Եւ այժմիկ ամենայն տիեղերաց է վկայ, հասարակաց ամենայն արեւելից քաղաքացի, եւ առեալ անդուստ ի սպառազինական ընտրութիւն, այսպէս իւրովն դասու առ մերս անցանէր գաւառ, ձմերային հանգստեամբ զի-
15 նուորացն աստանաւր ի թագաւորացն հրամայելով։ Այլ պատերազմի շարժելով յանկարծակի՝ ոչ ի բարբարոսական արշաւանաց, այլ ի սատանայական ամբարհաւաճութենէ եւ յաստուածամարտ աւանդիցն (քանզի ամենայն քրիստոնէից հալածանս հասուցանէր ամպարիշտն վճռաւ, եւ առ դատաստանս մահու ածելոք լինէին)։
20 Արդ յայնժամ երիցս երանելոյս այս ծանուցեալ բարեպաշտութեամբ եւ հաւատով, որ ի Քրիստոս յամենայնի պարծելով, ոչ միայն ի ճակատի իւրում գրել զխոստովանութիւնն, եւ ոչ տակաւին դեռ ընտիր գոլով արիութեանն, եւ ոչ անհմուտ մարտի եւ պատերազմի, այլ արիագոյն անձամբ զաւրաւոր լինէր առ վիշտսն
25 զդազարմունս, ոչ Թուլակի, ոչ դանդիտելով*։ Քանզի իբրեւ նստաւ չարաբաստն այն ի չար դատարանն՝ դատաւորն եւ դատապետն ի միասին գոլով, որպէս Հերովդէս եւ Պէղատոս, յայնժամ գծառայ խաչելոյն ի դատաստան նմանութեամբ Տեառն կացուցին։ Եւ ասէ, ասա, դու ուստի՞ այնչափ յանդգնութեամբ եւ համարձակութեամբ
30 լի եղեր որպէս դի եւ զինքնակալաց Թագաւորաց զաւրէնսն անարգես, եւ ոչ ստորանկեալ դողութեամբ երկիր պագանել Թագաւորական հրամանին եւ ոչ երկիր պագանել նոցունց քաջ արանց. քանզի յայնժամ Մաքսիմիանոսեանցն Թագաւորութեանն առաջնորդք լինէին։

35 Այլ նա հաստատուն դիմաւք եւ անզարհուրելի կամաւք քաջահանդէպ ասացելոցն զպատասխանիան վերադրէր։ Աստուածք ասելով ոչ գիտեմ, քանզի ոչ են ըստ ճշմարտութեանն, այլ դեւք դուք

ւսաւորող մոլորութեամբ Աստուծոյ առաքելութեամբն պատուէր, այլ իմն Աստուած Քրիստոս է, Աստուծոյ Միածին որդին։ Արդ յաղագս բարեպաշտութեանն եւ խոստովանութեանն, որ ի նա է, որ խոցեն հատցէ, որ տանջեն քանցեսցէ զմարմինս, որ այրեն մատուցէ արդ զհրատ տապոյ բոցոյն եւ որ բանիւքս իմովք այսոքիւք ձանձրասցի՝ ըզեղուս ի բաց հատցէ, քանզի ըստ իւրաքանչիւրումն անդամոց մարմինս իմ արարողին պարտական է համբերութեան։ Պարտեցան գոռոզքն բանիւքս այսոքիւք եւ առաջի արկուածի արիագունին ոչ հանդուրժեցին՝ երիտասարդ տեսանելով առ չարշարանսն բողբոջացեալ։

Իբրեւ նոքա փոքր ինչ հեզգային տարակուսելով եւ խորհելով զինչ պարտ է գործել, մի ոմն յիշխանացն զինուոր բանաբաճոյճ գոլ կարծելով՝ հենգնէր զպատասխանիս վկային, ասէ, ով Թեոդորէ, է՞ որդի Աստուծոյն քո, եւ ծնանի՞ նա իբրեւ մարդ ախ-
15313բատաց/ի/եալ։ Եւ նա ասէ՝ ախտաբար իմն Աստուած ոչ ծնեալ, այլ եւ որդի խոստովանիմ, եւ Աստուած վայելչապէս ասեմ զծնունդն։ Այլ դու, ով տղայատեսակ մտաւոր եւ եղկելի, ոչ շառագունիս եւ ոչ ծածկես զերեսս քո՝ իգական աստուածուհի խոստովանելով, որպէս զի մայր գոլով երկոտասան մանկանց զնոյն երկրպագելով, զբազմածին ոմն դեւ ի նմանութիւն նապաստակաց կամ խոզից դիւրաւ յղացեալ եւ բաց ծնեալ։

Այսպէս սրբոյն անդրէն դարձուցանելով կռապաշտին զծիծաղելին, ձեւ մարդասիրութեան ցուցանելով բռնաւորացն, ասեն՝ սակաւ ինչ ժամանակ տացի մոլորելոյդ այդմիկ առ ի փորձել զանձն իւր, զի այնպէս ըստ պարապուրեան փոփոխեսցէ զկամս ի լաւագոյնն։ Քանզի անզգամքն այնոքիկ մոլորութիւն համարէին զողջախոհութիւնն եւ ապշութիւն եւ անխոհութիւն՝ զհեղութիւնն, որպէս արբեալքն զիւրեանց ախտն զգաստից նախատիցեն։ Այլ բարեպաշտ նահատակն եւ Քրիստոսի զինուրն յարիական ճակատամարտութեանն պարապմամբն վարեալ լինէր։

Եւ թէ ո՞ր իցէ այս՝ ժամ է ձեզ ուրախութեամբ եւ հրճուանաւք զպատմութիւնս ընդունել. առաքելեալ մաւր աստուածոցն տաճար էր առ քաղաքաւն Ամասիացւոց, զոր յայնժամ մոլորեալքն անդ ուրեմն առ ափն գետոյն ունայնութեամբն իւրեանց կազմեալ էին։ Զայն ինչ արիագոյնն ի ժամուն յայնմիկ դիտելով ժամ պատշաճաւոր, զի հողմ ուժգնակի շնչէր, հուր հարեալ վառեաց գործաւք չարաչարհիցն խոհէր ականացն՝ տուեալ զպատասխանին, որոց կային եւ

մնային չետ խոկալոյ նորա։ Եւ յայտնի իրն վաղվաղակի ամենեցուն լինէր (զի ի մէջ քաղաքին յայտնապէս բորբոքէր հուրն), ոչ թաքուցանէր զձեռնարկութիւն իւր եւ ոչ փութացաւ զի զանխլացեալ լիցի, այլ յայտնէր յոյժ պարծելով եւ գերագոյն խնդալովն ընդ խռովութիւն անաստուածիցն, որ խռով լինէին յաղագս տաճարին դրաւչելոյն՝ ի նմա ցաւագնեալք։ Այնուհետեւ ազդ եղեւ իշխանացն ինքնին, եթէ նա էր կիզողն, եւ զարձեալ դատարան լինէր ահեղագոյն քան զառաջինն, արդ իբր պատերազմեալ ընդ այնքան պատահմանց եւ մանաւանդ մերձ գոլով բարկացուցանողին։

Նոքա ի դատաւորականն ելանէին յաթոռ, այլ Թէոդորէ քաջ համարձակութեամբ ի միջի նոցա իշխանական վստահութիւնս ունելով թէպէտեւ ընդ չափս այնմիկ, որ ընդ դատաստանաւ լինի։ Լինէր հարցեալ, եւ փութութեամբ հարցումն զպատասխանիսն հատեալ լինէր, եւ քանզի առանց զարհուրելոյ էր եւ ոչ մի ինչ խըն-
314ա նայէր յաղագս չար սպառնալեացն ի ներհականն փոխաբերեցան յեղանակ եւ մարդասիրաբար տրամաբանելով՝ կակղացուցանելով զարդարն։ Փորձ առնէին եւ ասէին, եթէ ի միտ առեալ իմաստիր, զի եթէ կամիցիս հաւանութեամբ զխորհրդակցութիւն // մեր ընդունել, վաղվաղակի հաստատեմք զքեզ, մինչ դեռ աներեւակդ ես ընդ երեւելիս եւ ի տարափառութենէ յոյժ պատուեալ, եւ քեզ քահանայապետութեանն խոստանամք զարժանաւորութիւն։ Իբրեւ լուաւ զքահանայապետութեանն զարժանաւորութիւնն՝ ընդ երկարագոյն ծիծաղեալ երիցս երանելին ասէ. ես զքահանայս դրաւչելոց կոտցն եղկելիս համարիմ եւ որպէս անոտի գործոց պաշտաւնեայս ողբամ զնոսա, այլ զքահանայապետսդ առաւելապէս ողորմելիս վարկանիմ եւ տաղտկամ՝ իբրեւ ի գարշելեաց, զի որ առ վատթարագոյնն մեծն է եւ առաջին կարգեալ նա եղկելի եւ թշուառական՝ որպէս անիրաւն անիրաւագոյնն եւ առ սպանողսն մանաւանդ կարծրագոյնն։ Եւ վասն զի յառաջին պատճառ է ի ձեռն կորստական խոստմանց ձերոց փութայք զայդպիսի իրս առաջի դնել, քանզի զանխլացեալք էք դուք զքէսաւորն ի չարեացն խոստանալով ինձ, զի զբարեպաշտապէս եւ զուղղապէս կեալս իմ յաւժարելով իմ, զի բարի է ինձ ի տան Աստուծոյ յանկեալ լինել առաւել քան զբնակել ի յարկս մեղաւորաց։ Ես եւ զքագաւորսդ զայդոսիկ, զորոյ դուք զանաւրէն աւրէնս ընթեռնոյք, եղկելիս համարիմ, զի բաւական մարդկային իշխանութիւն զքագաւորութիւնն

ընկալեալ զքահանայապետին զառաքացութիւն անձանց իւրեանց վերագրեցին եւ զթագաւորական զմթացեալ ծիրանիսն անդանաւր դրեցեալք ըստ նմանութեան չարաբաստ քահանայապետիցն իշխանութեամբ պայծառագոյն թշուառական շուրջ ունելով զգեստ: 5 Է իսկ եւ երբէք յորժամ ի պղծեալ բագինն հպեալք, փոխանակ թագաւորաց խոհակերք լինիցին՝ զհատսն զոհելով եւ զվատթարեալն անասնորն զփորոտիսն շաւշափելով եւ շառագունութեամբ արեանն իբրեւ զմարմնավաճառք ի սպանդանոցի նստելով եւ ճարպով զոհիցն զանգանելով:

10 Այլ չետ այսպիսի ձայնի արդարոյս ոչ եւս զատեղծեալ եւ զձեւացեալ մարդասիրութիւնն իշխանքն ցուցեալք լինէին, այլ եւ առ Աստուածան ամպարշտագոյն կոչելով եւ տակաւին թագաւորացն անարգելով եւ հայհոյելով, յառաջագոյն զտանջողական փայտիւ կախելով զնա եւ քերելով զմարմինն: Այլ նա դահճացն ուժգնա- 15 բար ներգործելովն ժուժկալեալ լինէր եւ ոչ թողանայր, եւ տունս ինչ յաստուածապատում սաղմոսերգութենէն երգէր ի տանջարանն: Աւրհնեցիս զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ աւրհնութիւն նորա ի բերան իմ, իսկ նոքա զյղուվս ի մարմնոյ սրբոյն վկայիւնք՝ անցեալ ի բաց բերէին, եւ նա զուարթութեամբ սաղմոսէր 20 որպէս թէ այլոյ ուրուք կրելով զպատուհասն. ընկալեալ լինէր զտանջանսն զայնոսիկ փոխարկութեամբ բանդն եւ դարձեալ անդանաւր սքանչելիք ցուցեալ յաղագս սրբոյն ի գիշերին ձայն բազ-
314բ մութեան երգողաց // լսելի լինէին՝ լապտերաց երեւելով ի բանդին իբրեւ ամենայն գիշեր ջահաւորութիւն արտաքուստ երեւեալ 25 լինելով, որպէս զի եւ բանդապետին ընդ հրաշափառ տեսլեանն եւ լրմանն խռովութիւն լինէր եւ ի ներքս վազելով՝ ոչ զմի ոք գտանելով, բայց ի սրբոյ վկայէն՝ հանդարտելով նորա կալանաւորացն ի քուն կալով:

Արդ, այսպիսեաց բազմաց եղելոց հաստատէր մանաւանդ առ 30 խոստովանութիւնն եւ բարեպաշտութիւնն, եհաս ի վերայ նորա դատապարտող դատակնիք, եւ հրով վախճանել ինքն չոգաւ ի գեղեցիկ եւ յերանելի առ Աստուած ճանապարհն, այլ մեզ զյիշատակ ջանի մրցանացն եթող ի վարդապետութիւն՝ ժողովուրդք հաւաքելով, զեկեղեցիս խրատելով*, զհրեշտակ խաղաղութեան կոչելով, 35 առ մեզ հայցելով յԱստուծոյ զպատշաճն եւ զաւգուտն, բժշկարան հիւանդութեանց զանազան զտեղիս զայսոսիկ բացադործելով,

նաւահանգիստ նաւակոծեալ նեղեալ աղքատաց, փարթամաց շահմարան, ճանապարհորդաց յանձնառական աւթեւան, տեղի տաւնից տաւնողաց անզրաւ եւ անյանգագոյս: Զի թէպէտեւ տարեւորական տաւնիք զաւրս զայս կատարիմք, այլ ոչ երբէք աղաւաղեալք յանգեալ լինի թուով եկելոցն բազմութիւն՝ զմրջեանցն բերելով զնմանութիւն աստանաւր բերող ամբոխաբերին իսկ՝ ոմանց ելանելով եւ ոմանց տեղի տալով եկելոցն:

Այլ մեք այսուհետեւ, ով երանելի, ի կատարումն բոլորեալ շրջագայութեան ամիս հասանելով՝ մարդասիրութեան արարչին հաւաքեցաք քեզ տանս, զսրբազան վկայիդ զգունդս, հասարակաց տանն երկրպագելով եւ զյաղթական լնլով քոյոց մրցանացն յիշատակ: Այլ դու, առ մեզ հասեալ, եկեսջիր ուր եւ իցես՝ տաւնիս վերայտեսուչ լինելով, քանզի կոչելով զքեզ եւ կրկին կոչիցեմք: Եւ եթէ ի բարձրագոյն եթերն իցես կառավարեալ եւ եթէ առ երկնային կամարն ճեմիցիս կամ ընդ հրեշտակացն պարուն դասեալ Տեառն առաջի կալով եւ եթէ ընդ զաւրութեանց եւ իշխանութեանց որպէս ծառայ հաւատարիմ երկրպագես, փոքր ինչ զանգանաւրդ հրաժարելով՝ հասիր առ պատուղս քոյոյս յիշատակի, աներեւելի բարեկամ: Պատմագրեա զկատարեալքս քեզ, զի զառ Աստուած գոհութիւնն կրկնապատիկ արասցես եւ այնու փոխանակ միոյ չարչարանաց եւ բարեպաշտ խոստովանութեան այսչափ քեզ փոխարէնս շնորհեալ եւ ուրախասցիս արեամբդ եւ ցաւքն հրոյն: Զի որպէս յայնժամ ժողովուրդ պատուհասին տեսողս ունէիր, այժմիկ պատուոյս պաշտաւնեա պէտս ունիմք բազում երախտեաց: Մաղթեա վասն հայրենական ժառանգութեան քո առ համայնից հասարակաց թագաւորն, վասն զի հայրենիք է վկայի չարչարանաց գաւառ, եւ քաղաքացիք՝ եղբարք եւ ազգակիցք անփոփոխք
315ա եւ պատուղք, // եւ ունողք ակն ունիմք նեղութեանց, կասկածեմք վշտաց, զի ոչ են հեռի սպանող Սկիւթացի բարբարոսքն ի վերայ մեր զմարտն՝ երկնելով իբրեւ զինուոր Քրիստոսի մարտիր վասն մեր, իբրեւ զվկայ ի կիր արկ զհամարձակութիւն, թէպէտեւ փոխեալ ես ի կենցաղոյս, այլ գիտես զիրս եւ զպէտս մարդկութեանս: Հայցեա խաղաղութիւն, զի տաւնս քո այս մի զկայ առեալ չանգեացին, զի մի շատացեալ լինի առ տաճարս եւ յիշատակեսցի առ սեղանս կատարի եւ անաւրէն բարբարոսքն, զի մի փոխեսցեն զսրբութիւնս քո պիղծքն եւ անաւրէնքն:

Զի մեք եւ վասն որոյ յանշարշարանս մնացաք, քեզ համարիմք ղերախտիսն, այլ հայցեմ եւ վասն հանդերձելոցն զգուշութիւնն, եթէ պէտք լինիցի բազում մաղթանաց, ժողովեալ հաւաքեա զգունդս քո[յ]ոց եղբարց եւ վկայակցաց, եւ հանդերձ ամենեքումբք աղաչեա: Բազում ժողովրդոց եւ հանդիսից կատարելոց մեղաւք, որ ըղձիւք արդարոց ապրեալ եղեր: Ծանո մեծին Պետրոսի եւ պլխաւորի մեծի առաքելոցն, եւ վիմին հաւատոյ, հարո զանաւրն ընտրութեան զՊաւղոս, նոյնպէս եւ զՅովհաննէս զաստուածաբանողն եւ զսիրելի աշակերտն, զի վասն եկեղեցեացս, որ հաստատեցին, մի՛ անփոյթ արասցեն յաղագս որոյ զերկաթեղէն զկապարանն բնկալան, յաղագս որոյ զվիշտս եւ զմահս կրեցին, զի մի՛ կռապաշտութիւն զգլուխ ամբարձցէ ի վերայ մեր, եւ մի՛ փուշք հերձուածոցս յայգւոջս բուսեալ լիցի, եւ մի՛ որոմն գտեալ ապականեսցէ զցորեանն, մի՛ վէմ ապառաժացեալ գտցի առ մեզ պակասեալ ի ցաւղոյն ճշմարտութեան եւ անարմատ ցուցանիցէ զբռնապաշտութիւն բանին զաւրութիւն: Այլ զաւրութեամբդ քո[յ]ոց մաղթանաց եւ որոց ընդ քեզ են՝ սքանչելիքդ եւ զերափայլեալդ, ի վկայսդ արաւարդեալ լիցի հաւատացելոց ի Քրիստոս քաղաքավարութիւն կալով եւ մնալով ի պարարտադոյն եւ ի քաջապատուղ ի Քրիստոս հաւատացելոցս հովտի միշտ պտղաբերելով զկեանս յաւիտենականս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Ընդ որում՝ Հաւր միանգամայն եւ հոգւոյն սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

«Ի ՍՈՒՐԲ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԷՈԴՈՐՈՍ» ՃԱՌԻ ՏԱՐԲՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ

էջ 210

1-2 Առաջին շաբաթի աւր աղուհացիցն ի յիշատակի սրբոյն Թէոդորոսի երանելոյն սրբոյն Գրիգորի Նիւսացոյ եպիսկոպոսի Ներբողեան ասացեալ A,+որոյ յիշատակն կատարի որ ի սուրբ քառասնորդացն յառաջին շաբաթն աւրն B,+ի սուրբ ծնունդը Թէոդորոսի C, հմմտ. Ներբողեան ասացեալ ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս, որոյ յիշատակն կատարի որ ի սուրբ քառասնորդացն յառաջին շաբաթ աւրն (Գ. Զարբհ., էջ 372):

3 ժողովուրդք AC

4 որ AC
5 հասեալ] հոսեալ B. արդ] արդեաւք B
6 հանդիսացայք B. տեղին C.
7 գաստանաւր B. հասանելոյս B
8 ժամանակի] ժամու B,+ի AB և[1]] AC
9 և] AC
11 հանդարտեցուցանէ] հանդարտ B
12 իսկ] AC. իբրու AC. փողհար B
13 զբաղումս] զբաղմութիւնս AC.
14 իւր B
15 պատրաստութիւն B
16 առ քաղցրագոյն] AC. քրիստոնէից և մանաւանդ A. քրիստովնեից C
18 զբարբարոսական] B. մրրիկ B. ահագինս B. սոցա] այս B
19 քաջահեղաբեր C. երեւելով]+նոցա AC. նոցունց] AC
21 առ] AC զապաքինիչն] զապականիչն C
22 չարշարեալ B.
23 ստացաւ] ընկալաւ B
24 զմիտագ B
27 փոխարինից B ներբողից B
29 զբարեպաշտութեան B պատուղն B.

էջ 211

1 կամս B. ցանկասցուք B, ցանգասջիք C
2 արժանեացն] արժանաւորութեան B. բախշէ A
3 թուիցի B,+վայելման B. հանդերձեալ BC
5 զոր] և B. լինի] իցի B.
6 տեսցուք]+զերիցս BC. երանեալ B. սրբոցն] նահատակացն B, սըրբոյն C
7 որպիսի B
8 աստստին արձակեալ] անդստին AC
9 նմանեաց BC,+իւրոց B. ճեմեալ] ճանաչեալ B. մարմին C
10 գործարանն B,+եւ A. իւրովք B. բնակելոյնB
11 յանապականութեան B.
12 զսպեալ B տեղոջ C.
13 զգանձ B. ինչ] BC. պատուական B ի ժամանակս] ցժամանակ B. վերստինն C.
14 անբաղդատ C մարմինք B. որք] որ B.

15 որք[2]] որպէս B. հանդէպն մահուամբ B
16 նմանեալ]+ի B. վասն զի] քանզի B այլքն B. մարմնոց B
18 շիրիմս B,+և B. հանդիպեսցի] լինի B
20 եւ] B
24 մեծ վայելչութեամբ AC. որ] B
25 պատրաստեալ B.
26 պայծառապէս մեծութեամբ շինուածոց B զեղեցկութեամբք B.
27 զփայտն B
28 զարծաթ ողորկութեան AC. քերել A
29 գունովք զեղովք կենդանակերպ ծաղկմանն արուեստիւ] զեղաւքն AC
30 ըզզարութիւնս B
31 զդաւաճանութիւնսն B.
32 այն B. զհնոցն]+զմարդկային կերպարանին զձեւն AC
33 զմարդկային կերպարանին զձեւն] AC
34 մեզ] AC. իբրու AC երանգոցն B.
35 զեղոցն B. զվկային B
36 նահատակութիւնքն B. եւ] A. զտաճարս]+զայս B

էջ 212

1 քանզի] զի B. կերպագրութիւն B.
2 որմս B
3 շարագրովն] շարադրողն B
4 գետնոյս B
5 անզգայիւքս] AC. արուեստասխրութեամբս] արեստասիրութեամբ B
6 ցանգացեալ AC.
7 դասուն] AC. բանի B աւրհնութեամբք C
8 այնմանէ B.
9 հանգստի] հանդիսի B
10 գանձ B
11 հանդիպմամբք B ինչ]+և B. բազմափափագ ABC.
12 յզձիցն B. վերագոյն]+և B
13 նովին] այնպիսի B. ցանգութեամբ A, ցանգութեամբք C. իբրու AC.
14 մարմին B զնա և ծաղկեալ B.
15 բերանով B որ] B.
16 եւ] B
17 իբրեւ ամբողջ երեւելով] AC աղաչանսն B
18 հասուցանելով] մատուցանեն B. իբրու AC

19 զայնոսիկ] զայսոսիկB
20 բարեպաշտ B
22 ի մոյ] իմոյ AC. զանգուածոյ AC.
23 այլ] իսկ AC պարզաբար] AC. եւ¹] B
24 շնորհալի եղեալ] AC.
25 արփանաւք լի] արփալի B
26 փափաքմամբք C բանս B
28 հանդերձելոց խոստմանցն] խոստացելոց բարեացն AC
29 են] B
30 դնեն] ասեն B. ոչ և մի ինչ B
31 վճարիլ AC. կարծեն] ասեն AC
32 այդպէսդ B փոքրագունիցն զմեծամեծսն AC
33 թագաւորաց B.
34 յայնցանէ AC որ] զոր ըստ B.
35 մարգիկ B. երեւեալ]+լինին B. փառաւորեցաւ] փառաւորեալ լինի AC

էջ 213

1 այսպէս B. երջանիկ B տնանդ B
2 հրշտակք AC
4 բանիս]+ ի AC
5 յաղթանակի մրցանակի AC. վկայիս AC. զհասարակաց B
6 իւրաքանչիւր B
8 ստորակացեալ B
9 քաջատողմիկ B
11 նմանութենէ] հաղորդութենէ B
13 անտուստ C. ի] AC. ընտրութիւնն C
14 հանդստեան AC. զինուորացն] AC
15 պատերազմ B
17 ամբարհաւաճութենէ] դաւաճանութենէն AC
18 աւանդից B. քանզի]+ընդհանուր B. քրիստոնէից] տիեզերաց AC հասանէր BC.
19 ամպարիշտ B. դատաստանս] վախճան B. ածեալ B
20 երանեալ B. ծանուցեալ բարեպաշտութեամբ]բարեպաշտ գոլով B
21 պարծելով]+և B
22 եւ] B.
23 արութեանն B
25 թուլակի]+և B

26 եւ] երբեմն և B.
27 յայնժամ] B
28 ասեն AC.
29 դու] մեզ AC
30 աւրէնս անարգել B.
31-32 ստորանգիլ B թագաւորական հրամանին և ոչ երկիր պագանել] AC
33 առաջնորդեալ B
35 այլ] և B
36 զպատասխանին ասացելոցն AC. վերադրէր] վերագրէր AC.
37 քանզի]+և B

էջ 214

1 պատրողք մոլորելով B
3 բարեպաշտութեան B է] B.
4 հատցէ] հարց է AC
4-5 որ այրեն մատուցէ արդ զհրատ տապոյ բոցոյն] AC խմովք] AC
6 ըստ] AC.
7 անդամոյ B իմ] B. պարտական] պարտապան B.
8 գոռոզքն]+և զառն գործավարքն B այսոքիւք] B
10 չարշարանս B. բողբոջացեալ]+և B
11 իբրու AC,+համեղագոյն ինչ քաղցր ըմպելի զվախճանն յինքն
13 գոլով B հեգնելով B,+միանգամայն B
14 քո]+ում B.
15 ասէ]+ցնա B ծնաւ B
17 ով] B. տղայատեսկդ մտաւք B
18 քո] B. աստուածուի AC
19 գոլ B. մանկան C
20 նպաստակաց A
21 ծնեալս B,+և B
22 անդրէն] կրկին B
24 առ ի փորձել զանձն իւր] AC
25 փոփոխեսցէ զկամս] փորձեսցէ զանձն իւր B
26 համարէին] կոչէին B.
27 ափշութիւն AC. անխոհեմութիւն B
28 որպէս]+և B. ախտ B

30 ճակատամարտութիւն B,+տուեալ նմա B
32 ընդունել զպատմութիւնս B մաւրն B.
33 քաղաքին B
33-34 անդ ուրեմն] AC ունայնութեամբ B.
35 ժամու B,+տուեալ նմա ներողութեանն B,+ի ժամուն յայնմիկ] B. ժամ]+ ինչ B
36 հարեալ] արկեալ B. գործովք B.
37 խոհերականաց B յորոց B. իրն]+այն BC,+և B

էջ 215

3 զձեռնարկութիւնն B
4 պարծելով]+ուղղութեամբն B. խնդալով B.
5 խոովեալ B տաճարին]+և B
7 դատարան]+եդեալ B.
8 իբր B. պատերազմեալ] պարտ էր B
9 պատահմանց] պատաղմանց B
11 համարձակութեամբ]+էր B
12 ընդ] ի B
13 պատասխանին զհարցումն B.
14 եւ] այլ B եւ]+առ B.
15-16 յաղագս] վասն B փոխաբերեցան յեղանակ] փոխաբերից անյեղանակ AC
16 տրամաբանելով]+խոստմամբք B
18 կամեսցիս B
21 խոստանամ AC. զարժանաւորութիւն]+եւ B երկրագոյնս B
23 ասէ] B. ես]+ասէ B. դրոշելոց C
25-26 առաւել B. վարկանիմ] համարիմ B
27 վատթարագոյնսն B,+որ B. նա]+է B. եղկելի] ողորմելի B
28 անիրաւսն] առ իրաւսն ABC
29 զի] այնորիկ B.
30 խոստմանցդ B զայսպիսիդ B. իրս] B.
31 էք]+ով B չարեաց B.
32 զի] B. եւ զուղղապէս] AC իմ] BC
33 յանկեալ] անգեալ B
34 առաւել քան] մանաւանդ քան թէ B
35 զորոց B. զանաւրէն աւրէնս] զաւրէնսդ AC. եղկելիս] ողորմելիս B
36 զի] քանզի B.

1 ընկալեալ] ունելով B
2 ծիրանիս B.
3 քահանայիցն AC
4 ունելով B
5 իսկ եւ] երբէք AC. բագինսն B
6-7 լինին B. զվատթարագոյն անասնոց B
8 մարմնավաճառք B նստելով]+զհանդերձսն շաղախելով AC.
9 զանգելով AC
10 արդարոյն B
11 ցուցեալ B
12 տակաւ B.
13 անարգող և հայհոյիչ B
14-15 ուժգնաբար] AC. եւ ոչ թողանայր] AC
18 իմ] իմում C մարմնոց B. սրբոյ C.
19 անցելով B. բերէին] քերէին B նա]+դարձեալ B
20 այլոց AC
22 անդանաւր] անդ B. աքանչելիս B,+կատարեալ լինէին B. ցուցեալ] B սրբոյն]+և B
23 երգողաց բազմութեան B. ի բանդին B
24 իբրու AC. ամենայն գիշեր] ամենագիշեր B. ջահաւորութիւն արտաքուստ երեւեալ լինելով] սաղմոսերգութեամբ AC
25 որպէս զի եւ բանդապետին ընդ հրաշափառ տեսլեանն եւ լրմանն] որպէս զի ընդ հրաշալի տեսլեանն և լրմանն բանդապետին AC
26 վազելով]+ի բանդն B. ոչ]+և B
27 կալանաւորացն] կալանաւոր կապանաւորացն AC
29 արդ] այլ քանզի B. առ] AB
30 հհաս]+ապա B. նորա դատապարտող] B. դատակնիքն B
31 վախճանիլ B,+հրամայիւր B. ինքն]+իսկ B
32 զյիշատակ]+նահատակութեան B
33 ժողովուրդս B.
34 զեկեղեցի B. զհրշտակ A
35 առ] B. մեղ] B. յաստուծոյ]+վասն մեր B
36 հիւանդութեանց] հիւանդաց AC. բացագործել AC

3 տաւնողաց] տաւնելոց B. անյագապէս ABC տարեւորական] տարեւոր B.
4 զայս] զայսոսիկ B
5 յանկեալ B. զմրջեանց B
6 ոմանց ելանելով] ոմն անցանելով B
7 եկելոցն] AC
8 այլ] արդ B. այսուհետեւ] AC. ի] AC
9 մարդասիրութեամբ B.
10 զտաւնս B վկայասիրացս զգունդ B
11 զյաղթական] զյաղթանակն B. քոոցն AC
12 իցես]+արդեք B տաւնի B
13 վերատեսուչ B
15-16 ճեմեսցիս AC. կամ ընդ հրեշտակացն պարուն դասեալ տեառն առաջի կալով] AC եւ եթէ] կամ B. զզաւրութեանցն B. եւ] AC.
17 իշխանութեանցն B
18 զանդանաւրդ] զանգանաւգդ AC պատողքս A, պատուաւղքս C. քոոյ յիշատակիս AC,
19 զկատարեալքս+ի B
21 եւ] AC. խոստովանութեան այսչափ] նահատակութեան որ այդպիսի AC
22 ուրախասցիս] ուրախ լիցի B.
23 զի որպէս] քանզի որչափ B ժողովուրդ] AC. պատուհասիցն B. տեսաւղս C. ունէիր]+այնչափ B
24 պաշտաւնեայք B
25 մաղթեա] հայցեա խաղաղութիւն B. ժառանգութեանս B
26 թագաւոր B. վասն զի] քանզի B. վկայիցն B
27 չարշարանացն B. քաղաքացիք] քաղաքակիցք C,+և B
28 պատուողք] պատուղք B
30 իբրու B. իբրեւ²] որպէս B.
31 վկայ B,+վասն ծառայակցացս B
31-32 թէպէտեւ փոխեալ ես ի կենցաղոյս] ի վերայ փոփոխեալ ես ի կենցաղոյս B զիրս] զկիրս B

էջ 218

1 զի] քանզի B. եւ] AC. յանչարշարս B. համարիմ C
2 հայցեմք B

3 եթէ պետք] թէպէտք B բազում] յոլովագոյն B. հաւաքեա զգունդս] գումարեա զպարն B
4 ամենեքումք C.
5 հանդիսից եւ ժողովրդոց B
6 զձիւք B. ծանոյ AB
7 գլխաւրին B. մեծի] գնդի B. հարո] յարո B
10 յաղգս] վասն B. զերկաթեղէնն B,+զգեցեալ եղեն B.
11 ընկալան] B. յաղագս] վասն B կրեցին] կրեալ համբերեցին B.
12 զգլուխն B
13 հերձուածոց B. յայգուջս] յագուջս AC. եւ] B ապականեսցէ] հեղձուսցէ B.
14 գտցի առ մեզ] AC
15 ճշմարտութեան] պարարտութենէ AC. զբարեպաշտ B
17 են] B սքանչելիդ B.
18 վկայս B հաւատացելոցս] B.
20 հովտի] հաւտ AC. զկեանսն B
21 հաւր] հաւտ AC
22 յիշխանութիւն B
23 եւ պատիւ... Ամէն]B

գ) ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑՈՒ «Ի ԳՐԻԳՈՐԻՈՍ...» ՃԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Նազիանզացու հրապարակվող ճառը, պահպանված ձեռագրական նյութերից դատելով, «Որք եգիպտոսէն են» գրքի չորրորդ բնագիրն է, ասվել է իր իսկ Սասիմայի եպիսկոպոս ընտրվելու առիթով։ Ճառիս ստեղծագործական պատմության առումով ուշագրավ է հետևյալ միջնադարյան գրառումը, որը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ԺԲ դարի մի ձրչագիր ժողովածուում.

«Նորին առ Գրիգոր Նիւսացի, մեռն կացելոյ Բասղի և ի վկայսն։

Յորժամ բռնադատեցին զԳրիգոր Աստուածաբան հայրն և մայրն իւր, և ժառանգաւորք իւրեանցն եկեղեցւոյ, և ժողովուրդն Նազիանզու քաղաքին՝ առնուլ զպաշտաւն և զպաշտիճան եպիսկոպոսութեան, և ոչ կարէին հաւանեցուցանել զնա, յայնժամ հայրն նորա կոչեաց զԲարսեղ Կեսարու և զնորին եղբայրն զԳրիգոր Նիւսացի, և զայլ մերձակայսն, զի թերևս նոքաւք ածգին զնա ի հաւանութիւն։ Եւ եկն, նախ քան զայլսն, Բարսեղիոս և էած ի հաւանութիւն զԳրիգոր Աստուածաբան առնուլ զեպիսկոպոսութիւնն։ Իսկ ի յամելն Գրիգորի՝ եղբարն Բարսղի և այլոցն, ձեռնադրեն զԳրիգոր Աստուածաբան յեպիսկոպոսութիւն սուրբն Բարսեղ և հայրն Գրիգորի Աստուածաբանի։ Իսկ իբրեւ եկն յետոյ Գրիգոր Նիւսացի՝ ասաց զճառս զայս Գրիգոր Աստուածաբան և ամբաստանէ զԳրիգորէ Նիւսացւոյ առաջի եղբարն իւրում՝ սրբոյն Բարսղի, վասն ոչ յաւժար և փոյթ գալոյն ի ձեռնադրութիւն նորա, և վասն ոչ յիշելոյ առ նմա ի մանկութենէ զսէրն։ Այլ նա ընդունէր զասացեալսն յոյժ քաղցրութեամբ և առաւել սիրով, զի գիտէր ոչ յանդիմանութիւն ինչ լինել զասացեալն, այլ իբրեւ զաղերսաբանութեան[1]։

[1] Գրչագրում՝ զաղերսապարանութեան։

Բայց էր աւրն այն տաւն վկայից՝ յորժամ ասաց զայս ճառս, և թուի, թէ շաբաթ էր աւրն, քանզի այնպէս էր յառաջ կարգեալ ի Նիկիայ, զի ի շաբաթ աւր ի բոլոր տարին զատկի տէրունական տաւնիցն զայլն հասարակ մարտիւրոսաց տաւնէին, վասն այնր ի կատարած ճառիս յիշէ զմարտիւրոսսն, որք վասն Քրիստոսի վկայեցին: Բայց յայլոց ասացաւ, թէ Նիւսացի եկն յառաջ և հաւանեցոյց զԱստուածաբան, և ձեռնադրեաց զնա նախ քան զգայն Բարսղի, զի վասն աւագութեան և ծեր գոլոյն պատիւ արարեալ Նիւսաց [ւ]ոյ ի նմանէ, ասեն, առնուլ զձեռնադրութիւնն, և զյանդիմանութիւն առ Բարսեղ ասացեալ ասեն: Այլ կարի յոյժ ստեն, զի վերնագիր ճառիս առ Գրիգորոր յայտ առնէ զասացեալն վասն անագան գալոյն մեղայդրեալ»[2]:

Սուրբ հաղորդմանը ծանոթանալուց հետո պարզ է դառնում, որ կա մեկ այլ տարբերակ, որի համաձայն Գրիգոր Նազիանզացու ձեռնադրության անմիջական մասնակիցը ոչ թե Բարսեղ Կեսարացին է, այլ Գրիգոր Նյուսացին. «և եկն վաղ, քան զայլսն, Գրիգոր Նիւսացի և էած ի հաւանութիւն զԳրիգոր Աստուածաբան առնուլ զեպիսկոպոսութիւն»[3]: *Ուղղակի պիտի ասել, որ Նազիանզացու ձեռնադրությանը Նյուսացուն ի սկզբանն մասնակից դարձնելու սուրբ Գրիգորը պայմանավորված է տեղական հետաքրքրությամբ և իրական չէ: Իրադարձությունների նման ընթացքի դեպքում բնավ անհրաժեշտություն չէր լինի գրելու Գրիգոր Նազիանզացու հրապարակվող սուրբ ճառը: Ավելին, պահպանվել է Նազիանզացու հարակից բացատրությունը իր իսկ ձեռնադրության բնույթի ու մասնակիցների առիթով, որը հնարավորություն է տալիս հստակ պատկերացնելու իրողությունը. «բռնադատիմք, ով բարեկամք եւ եղբարք..., ի ծերունս հասրէս եւ ի սիրելոյ...»*[4]: *Դժվար չէ կռահել, որ այստեղ խոսքը իր հոր և Բար-*

---

[2] *Ձեռ. № 1897, էջ 95բ—96 բ: Այլուր ևս այն միտքն է հայտնվում, որ ձեռնադրության մասնակից անձը Բարսեղ Կեսարացին է. «բազում թախանձանաւք Բարսղի և հարւն Գրիգորի Նիւսացոյ հնազանդեցաւ և ընդալաւ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան» (ձեռ. № 5596, էջ 37բ):*

[3] *Ձեռ. № 4150, էջ 9բ, համմ. ձեռ. № 1879, էջ 172ա:*

[4] *Ձեռ. № 1500, էջ 773բ:*

սեղ կեսարացու մասին է (Գրիգոր Նյուսացին ձեռնադրության արարողությանը մասնակից է դարձել ուշացումով)։

Գրիգոր Նազիանզացին Սասիմայի եպիսկոպոս է ձեռնադրվել 372 թ., դա նշանակում է, որ նույն թվականին էլ գրվել է հրապարակվող «Ի Գրիգորիոս եպիսկոպոս...» ճառը, ուր կա և՛ բարեկամական նուրբ հանդիմանություն, և՛ վաստակի գնահատություն, և՛ անկեղծ ու մտերմիկ փոխհարաբերության գնահատություն։

Նազիանզացու «Ի Գրիգորիոս եպիսկոպոս...» ճառի հայերեն թարգմանությունը հրատարակության պատրաստելիս ձեռքի տակ ունեցել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ գրչագրերը. № 823-A (Գր. Նազիանզացի՝ Առ նաւարկութիւնն, 1266 թ.), № 1500-B (Ճառընտիր, 1283 թ.), № 4234-C (Ժողովածու, 1307 թ.), № 6988-D (Ժողովածու, 1763-1764 թթ.), № 2615-E (Առ նաւարկութիւնն, 1850 թ.)[5]։ Բնագրի համեմատության համար հիմք ենք ընդունել Migne-ի հրատարակությունը[6]։

---

[5] Արտասահմանյան ընդօրինակություններից տե՛ս Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217, էջ 162ա—164բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 429, էջ 108—109, ձեռ. № 877, էջ 361—365, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 393, էջ 84ա—86բ, Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1414, էջ 189—203, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 304, էջ 110բ—112ա։

[6] Տե՛ս PG, t. 35, էջ 832—841։

27ա //ՆՈՐԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԲԱՐՍՂԻ ՄԵՐՁ ԿԱՅԵԼՈՅ, ՅԵՏ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆՆ ԵՒ Ի ՎԿԱՅՍՆ*

27բ *Ա // Սիրելւոյ հաւատարմի ոչ ինչ է փոխանակ յէից եւ ոչ ինչ, եւ ոչ կշիռք ինչ գեղեցկութեանն նորա**: Բարեկամ հաւատարիմ ծածկոյթ, զաւրաւոր եւ ամրացեալ թագաւորութիւն: Բարեկամ հաւատարիմ՝ դանձ կենդանի: Բարեկամ հաւատարիմ առաւել քան զոսկի եւ զքար պատուական բաղում***: Բարեկամ հաւատարիմ պարտեզ փակեալ, աղբիւր կնքեալ՝ ըստ ժամանակի բացեալ եւ ճաշակեալ: Բարեկամ հաւատարիմ՝ նաւահանգիստ հանգստեան, միանգամայն եւ իմաստութեամբ զանազանեալ: Որպիսի ոք եթէ խրատ ծայրագոյն եւ ուսումն ամենայն, զմերն ասեմ, եւ որ երբեմն մեր է, որքա՞ն պայծառագոյն: Եւ եթէ որդի լուսոյ**** կամ «այր Աստուծոյ»*****, կամ մերձաւոր Աստուծոյ, կամ այր ցանկութեանց լաւագունից, եւ կամ այլ ինչ յայնպիսեացն անուանիլ արժանաւոր, եւ որովք Գիրք պատուին զաստուածազգեստսն, եւ զբարձրագոյնսն, եւ զվերի մասինն: Այս ահա պարգեւ Աստուծոյ եւ երեւելապէս առաւել քան զարժանաւորութիւնն մեր: Եւ եթէ բա-
28ա րեկամ է առ մեզ եկեալ, եւ նո//ին առաքինութեամբ համապատիւ, եւ բարեկամութեամբ մերով, եւ սա առաւել վայելչագոյն, եւ շնորհալից, եւ քան զեզ անոյշ, որ զարդարէ զմուրուսս քահանային եւ զաւձիս զգեստուն անուշահոտագոյն******:

---

* Հունարէն խորագիրը մի փոքր այլ է. Τοῦ αὐτοῦ εἰς Γρηγόριον Νύσσης, τὸν τοῦ μεγάλου Βασιλείου ἀδελφὸν, ἐπιστάντα μετὰ τὴν χειροτονίαν» (PG. t. 35, էջ 832—841):

** Համմ. Սիրաք, Զ, 14, 15:

*** Համմ. Սաղմ., ԺԲ, 11:

**** Համմ. Յովհ., ԺԲ, 36:

***** Դ Թագաւ., Ա, 9:

****** Համմ. Սաղմ., ՃԼԲ, 2:

Բ Իսկ արդ՝ բաւակա՞նք արդեաւք այսոքիւք ձեզ զայրդ գրեաց: Եթէ պարտ իցէ՝ աւրինակ իմն իրրեւ զխնամողք կենդանագրացն, բազում անգամ ի վերայ արկանեն զդոյնսն, զի կատարելապէ՞ս ձեզ զբանիս կերպարան առաջի կացուցանիցեմք: Եւ գրիցեմք ձեզ մաքրագոյն եւ յայտնագոյն: Ո՞ աւրինադրացն երեւելագոյն՝ Մովսէս: Ո՞քահանայիցն սրբագոյն՝ Ահարոն: Ոչ ինչ նուազ եղբարք առաքինութեամբն, քան թէ մարմնովքն, մանաւանդ մին Աստուած Փարաւոնի* եւ Իսրայէլի վերակացու, եւ աւրինադիր, եւ յամպն ի ներքս մտեալ, եւ աստուածայնոց խորհրդոցն տեսող, եւ խորհրդածու, եւ խորանին ճշմարտութեան, զոր հաստատեցար Տէր, եւ ոչ մարդ**, սակայն քահանայք երկոքեան: Քանզի Մովսէս ասէ, եւ Ահարոն ի քահանայն նորա***, զի մին իշխան իշխանաց, եւ քահանայ քահանայից՝ վարեցեալ աստուածային լեզուաւ
28բ Ահարոնիւ՝ // ինքն առ Աստուած նմա լինելով****, իսկ միւսն
15 զկնի նորա վազվազակի, եւ յոյժ առաւելեալ քան զայլսն արժանաւորութեամբ, եւ առ Աստուած մերձաւորութեամբ: Երկոքեան տանջեցին զնգիպտոս, զծովն բաժանելով՝ զիսրայէլ անցուցին, զբշնամիսն ընկղմեցին, հաց ի վերուստ ձգեցին, ջուր անհաւատարիմ յանապատի զոմն տային եւ զոմն քաղցրացուցանէին: Երկոքեան
20 պատերազմեալք յաղթեցին Ամաղեկայ տարածմամբ սուրբ ձեռաց եւ աւրինակաւ խորհրդոյ մեծագունի, երկոքեան չերկիր աւետեաց եւ առաջնորդեալք, եւ փութացեալք: Իսկ արդ ո՞չ արդեաւք ծանաւթագոյն ձեզ կերպարանն: Ոչ յայտնապէս ձեզ զանուանակիցն իմ եւ զհամաշունչն կենդանագիր բանս տպաւորեաց:
25 Գ Յայսցանէ ոմն էաւ զմեզ եւ գաղտնեաւն ի մէջ էած. ոչ դիտեմ եթէ ինչ ախտացեալ, կամ զիարդ շարժեցեալ անարժանապէս իւրոյ հոգւոյ, քանզի թէպէտեւ խոշորագոյն է բանս, սակայն ասասցի՝ զամենայն բերէ բարեկամութիւն՝ չարշարելով եւ բժշկելով: Եւ որ մխիթարեալս՝ եկն եւ խելամուտ առնել, եւ հան//կարծեցուցանել Հոգւովն: Մեծ է եւ այժմ, ինձ (քանզի որպէ՞ս արդեաւք ոչ մեծ, որ ամենայն ձերոց կենաց առաջի հաստատեցայ*****),
29ա
30

---

* Համմ. ելք, է, 1:
** Համմ. երր., Ը, 2:
*** Համմ. Սաղմ., ՂԲ, 6:
**** Համմ. ելք, Դ, 16:
***** Սույն և հետագա փակագծային առանձնացումները բնագրային են:

սակայն, մեղադրեմ, զի քան զպէտսն յետոյ։ Որպէ՞ս զկնի յաղթութեանն ի վերայ ընթացից մարտակցութիւնդ, ո՛վ սիրելեաց առաքինիդ եւ մարտակցաց, յետ ալէկոծութեանց նաւուղիդդ, եւ զկնի սպոյն դեղս։ Իսկ արդ իբրեւ զեղբայրասէր արդեաւք ամաչեցէ՞ր ի բռնութենէն։ Թէ եւ դու իբրեւ զբռնաւոր դժուարացա՞ր ընդ անհաւանութիւնն։ Զո՞ ի եղբարց բամբասես եւ զո՞ արդեաւք թողուս ի բամբասանաց։ Բարբառ իմ առ քեզ ինչ ի բանիցն Յովբայ՝ էի ես վշտացեալ եւ առ բարեկամդ, թէպէտեւ ոչ նոյնպիսի, եւ ոչ նման ախտիւք։ Առ ո՞ արդեաւք մերձենայցես։ Կամ՝ ուր՞մ կամիցիս աւգնել*։ Իսկ արդ՝ ո՞ւր արդեաւք որոյ բազում է զաւրութիւնն**։ Ո՞ւր որոյ յոլով է իմաստութիւնն*** եւ հանճար։ Քանզի զայս տեսանեմ ի յոլովս այժմ լաւագունիցն կրեալս, որք դիւրաւ արդեաւք բարձրագունիցն զմեծամեծսն ներեն, քան եթէ
29բ նուաստիցն զիրօքունս։ Զայս արդեաւք դու գիտիցես, զ//ի ոչ ինչ ինձ
պատշաճէ յաղագս քո ոչ բարեացն երեւեցուցանել, որ զքեզ ամենայն բարւոյ սահման եւ աւրինակ դնեմ, եւ միանգամայն ոչ արագագոյն լեալս ի դատաստանս****, ի Գրոց խրատեալս։ Բայց ես զբանն խոստանալ պատրաստ եմ եւ քեզ, եւ ամենայն կամողի յաղագս սիրելութեանն իմոյ, եթէ անհաւանութեանն, որպէս ոմանք անուանեցին, եւ եթէ նախախնամութեանն, որպէս զիս ինքն հաւանեցուցանեմ, եւ զգուշութեան, որպէս զի գիտիցես ոչ յամենայն ժամ վայրապար բարեկամաւ վարեցեալ եւ անուամբ։ Այլ է ինչ զորս եւ տեսանել կարող, քան զյոլովս լաւագոյն, եւ վստահ եղելով, զորս վստահանալ է արժանաւոր եւ երկուցելով, որ ինչ է երկիւղն, եւ յորոց ոչ երկնչելն, որք միտս ունին յահաւորագունէն։

Դ ես արդ՝ զի՞նչ թուի եւ կամ զի՞նչ լաւագոյն է։ Այժմ խոստանամ զհամարս ձեզ, զա՞յս հրամայէք եւ ո՞ւր պախարակէք զժամանակս (որ տաւն է, այլ ոչ է տեսան)։ Եթէ զայս՝ յա՞յլ ժամանակս եւ ի ժողովս յապաղեսցուք։ Զի եւ է իսկ երկայնագոյն,
30աքան զ//մերձակայ ժամանակս բանս։ Իսկ մեք բարբառեսցուք
ի՞նչ առ ձեզ զտաւնիս արժանաւոր, զի մի անտուաղս զձեզ արձակիցեմք մեք, որք եւ այսոցիկ եմք խորհակատուք։ Սրբեսցուք

---

* Համմտ. Յովբ, ԻԶ, 3։
** Համմտ. Յովբ, ԻԶ, 2։
*** Համմտ. Յովբ, ԻԶ, 3։
**** Համմտ. Մատթ., է, 1, համմտ. Ա. Կորնթ., Դ, 5։

զմեզ ինքեանս, եղբա՛րք, վկայիւքս մանաւանդ եւ որովք սոքաւ արեամբ եւ ճշմարտութեամբ սրբեցան։ Ազատեսցուք յամենայն պղծութենէ մարմնոյն եւ հոգւոյ*, լուսացու՛ք, մաքուրք լերուք, մերձ կացուսցուք եւ մեք զմարմինս մեր եւ զհոգիս**, պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զբանական մեր զաղաւթն***։ Քանզի ոչ ինչ այնպէս մաքրագունին է պատուական, իբրեւ զմաքրութիւնն։ Նահատակեսցուք յաղագս նահատակացս, յաղթեսցուք վասն յաղթողացս, վկայեսցուք ճշմարտութեանն վասն վկայիցս։ Զայս նահատակութեանցս սոցա շնորհեսցուք եւ զմեզ պսակաւորս լինել եւ նոցին փառաց ժառանգաւորս, որոց առ մեզ ինքեանս գտանին եւ որոց յերկինսն ամբարեալքն են, որոց յիշատակք եւ նկարագիրք ոմանք երեւեալքս են։ Ընդ իշխանութիւնս եւ ընդ պատուիւնս մարտիցուք, ընդ աներեւոյթ հալա//ծիչն եւ բռնաւորն, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս երկնաւոր եւ որք ընդ երկնաւ եւ չարութիւնքն****, ընդ որս ի ներքս ի մեզ եւ ընդ ախտս է պատերազմ, ընդ որս հանապազաւր արտաքուստ ի ներքս խռովութիւնք անկանին։

Ե Համբերեսցուք սրմտութեանն իբրեւ գաղանի եւ լեզուոյ իբրեւ երկսայրի սրոյ, եւ զհեշտութիւնսն իբրեւ զհուր շիջուսցուք։ Դիցուք լսելեացս դրունս՝ դեղեցկապէս բացեալս, եւ զակն ողջախոհացուսցուք. դաստիարակեսցուք զշաւշափումն զկատաղեալն, եւ զճաշակելիս զաւշոտողն, զի մի մահ ելցէ ընդ պատուհանսն մեր, վասն զի այսպէս թուի ինձ կոչել զգայարանս, եւ զծաղուն զանչափութիւն ծաղր արասցուք։ Մի՛ կրկնեսցուք ծունր Բահաղու***** յաղագս պիտոյիցն եւ մի՛ վասն երկիւղի ոսկեղէն պատկերին երկիր պագցուք******։ Ի միոջէն եւ եթէ երկիցուք՝ երկնչել ինչ յԱստուծոյ առաւել, եւ թշնամանել զպատկերն չարութեամբ։ Եւ յամենայնի զվահանն հաւատոյն առցուք, զի յամենայն նետից չարին 31ա զերծանիցիմք*******։ Եւ այն է զինդակ պատերազմն, // այս է մարտ մեծ, եւ այս յաղթութիւն մեծագոյն********։ Եթէ այսպէս ժողովիցիմք

---

* Համմտ. Ա Կորնթ., է, 1։
** Համմտ. Եսայի, Ա, 16։
*** Համմտ. Հռոմ., ԺԲ, 1։
**** Համմտ. Եփես., Զ, 12։
***** Համմտ. Գ Թագաւ., ԺԸ, 18։
***** Համմտ. Գ Թագաւ., ԺԲ, 18։
****** Համմտ. Եփես., Զ, 16։
******* Բնագրում ունենք՝ μάχα τρόπαιον (էջ 837)։

եւ ընթանայցեմք՝ ճշմարտապէս ըստ Աստուծոյ* է մեր տունս, ստուգապէս զվկայն պատուեմք, եւ կամ պատուեսցուք, ճշմարտապէս պարեմք զյաղթանակն։ Ապա եթէ որավայնի հեշտութիւնս շնորհիցեմք եւ փափկութեանն լիցիմք ժամանակեայք, եւ ի ներքս ամբարիցեմք զթափեալն, եւ զարբեցութեանն տեղի այնորիկ, որք ողջախոհութիւնն կարծեն, զիրացն ժամանակս եւ զգործոցն, այլ ոչ զի ի վեր ելանելոյն եւ աստուածանալ, եւ զտեսութիւնն այսպէս ասել համարձակեցայց, որում վկայքն միջնորդք լինին, նախ եւ առաջին եւ ոչ զժամանակն ճանաչեմք։ Վասն զի՝ զի՞նչ չարդ առ ցորեան։ Եւ զի՞նչ փափկութիւն մարմնոյ առ վրկայիցն մարտս։ Այնորիկ՝ տեսարանացն, եւ սոքա՝ խմոց ժողովոցս. նոքա՝ անժուժկալիից, եւ այսորիկ՝ ողջախոհաց, այնորիկ՝ մարմնասիրացն, եւ սոքա՝ արձակեցելոցն ի մարմնոց։ Եւ զկնի այսորիկ ախորժեմ իմն ասել համարձակագոյն, բայց խնայեմ ի 1 5[31բ]հայհոյութենէն՝ պ//ատկառելով ի ձէնջ։ Սակայն ոչ զայս պահանջեն ի ձէնջ վկայքս, զի այսպէս ասել չափաւոր է։

Զ Արդ՝ մի անսրբապէս կատարեսցուք, եղբա՛րք, զսրբութիւնսն, եւ մի՛ զբարձրագոյնսն նուաստարար, մի՛ անարգապէս զպատուականսն, եւ մի՛, համառաւտագոյնս ասել, հողեղենաբար զհոգեւորսն։ Տանէ եւ հրեայն, այլ ըստ Գրոյն, տանէ եւ հեթանոսն, այլ որպէս հաճոյ է դիւացն։ Բայց մեզ, իբրեւ ամենայն հոգեւորք, գործ, շարժումն, խորհուրդ, բան, մինչեւ ի գնացս եւ ի ըզգեստս, մինչեւ ի հայեցուածս՝ ամենայն բանին ժամանեալ, չարիւնեսցէ ըստ Աստուծոյ զմարդն. այնպէս տանելն եւ զուարթանալն։ Ոչ արգելում եւ զհանդիստն, այլ տանջիմ զանչափութիւնն։ Եթէ այսպէս հաւաքիցիմք եւ այսպէս տանիցեմք, մեծ է ասելս, թէ եւ մեր հանդիպիցիմք նոցունց նահատակութեանցն, եւ զնոյն փառս ժառանգիցեմք, զի «զոր ակն ոչ եահս, եւ ունկն ոչ լուաւ»**, եւ ոչ մարդկային երբէք միտք տպաւորեցին՝ ըստ իշխանութեան ստեղծանելով զերանութիւնն, զայն զմտաւ ածեմք առաջի կալ մաքրեցելոցն, 32ա // եւ Քրիստոսի պատարագին նմանեցելոց։ Այլ եւ զպայծառութիւնն սրբոց վկայիցն տեսանիցեմք, զի ոչ այն միօրր, որպէս եւ իմ է բանս, եւ ի յուրախութիւնն Տեառն մտանիցեմք, եւ լուսով

---

* Ըստ Աստուծոյ կապակցության դիմաց բնագրում կարդում ենք՝ κατὰ γρ. στο՝ (էջ 837)։

** Ա Կորնթ., Բ, 9, համմտ. Եսայի, ԿԴ, 4։

երանելւոյ, եւ սկզբնականի Երրորդութեանն, քաջ գիտեմ, պայծառանայցեմք հաստատագոյն, եւ մաքրագոյն, յոր հաւատացաքն, եւ զոր խոստովանեցաքն առաջի Աստուծոյ եւ մարդկան, ոչ ինչ երկնչելով եւ ոչ ամաչելով, ոչ յարտաքին թշնամեաց, եւ ոչ որոյ
5 ի մեզ ինքեանս ի սուտ քրիստոսացն, եւ ի պատերազմողաց Հոգւոյն: Եւ խոստովանեսցուք մինչեւ ի վերջին շունչն բազում համարձակութեամբ զբազում աւանդութիւնսն սրբոց Հարցն, մերձաւորաց Քրիստոսի, եւ առաջին հաւատոյն, զննդակիցն մեր ի մանկութենէ խոստովանութիւն, զոր առաջին բարբառեցաք, եւ ընդ որում
10 ի վախճանին երթիցուք գոնեայ, զայն, եթէ ոչ այլ ինչ, աստի տանիցիմք, զրարեպաշտութիւնն:

Է Եւ Աստուած խաղաղութեան, որ հաշտեցոյց զմեզ ինքեան ընդ խաչին*, ընդ իւր զմեղաւք պատ-Ռազմեալս, եւ «աւետա-
32բ րանեաց զխ//աղաղութիւն հեռաւորեաց եւ մերձաւորաց»**, որոյ
15 ընդ աւրինաւքն եւ որոյ արտաքոյ աւրինացն, սիրոյն հայր՝ սէրն, վասն զի այսոքիւք նախքան այլովքն զուարճանայ կոչեցեալ, զի աւրէնագրեսցէ եւ անուամբք զեղբայրասիրութիւնն, որ զնոր պատուիրանն եւս այնքան սիրել զմիմեանս, որքան եւ սիրեցեալք եղաք***, որ եւս եւ հզաւրանալ գեղեցկապէս, եւ ընդ զաւրութեամբ լինել յաղագս երկիւղի, եւ խուսափել հանդերձ բանիւ, եւ
20 համարձակել դարձեալ յաղագս բանին, որ եւ զմեծամեծ հաւատն հաստատէ, եւ զփոքունս մեծացուցանէ ի ձեռն շնորհին, նա, ըստ բազում քաղցրութեանն իւրոյ, զմեզ մխիթարեսցէ յաճախագոյն մխիթարութեամբն, եւ յառաջ ածցէ հանդերձ հովուաւք ի միասին,
25 ամբողջ ապրեցուցանէ զհաւտս, եւ զձեզ հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ հոգեւորապէս տանել ընդ վկայիցս հաւանեցուսցէ, եւ որ անդ են փափկութիւնքն արժանաւորեցուսցէ, ուր ամենայն զուարճացելոցն է բնակութիւն, եւ երեւեալս արդարութեամբ
33ա իւրոյ փառացն յագեսցուք****, երեւեցելովքս ի Քրիստոս // Յիսուս՝ ի Տէր մեր, որում փառք եւ պատիւ, եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

---

* Համմտ. Բ Կորնթ., ե, 18:
** Եփես., Բ, 17:
*** Համմտ. Յովհ., ԺԳ, 34:
**** Համմտ. Սաղմ., ԺԶ, 15:

«Ի ԳՐԻԳՈՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ...»-Ի ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ

էջ 230

1 նորին] D. *յեպիսկոպոս* A *կացելո* B.
2 վկայս C
3 սիրելոյ AC, սիրելո B
4 կշեռք ADE. գեղեցկութեան CDE
8 փակեալ]+և E. *ժամանակաւ* E
10 զանազանեալ] զննեալ CE. *ոք*]+և BC. *եթէ*] է թէ C
14 այլ] ABDE անուանել B, անուանել C
15 որով B. *զաստուածասգեստսն* BC
17 եթէ]+էի C.
18 եկեալ առ մեզ B
19 եւ սա[ևս BD. սա] C վայելչագոյն C.
20 զիւղ BCE. անուշ B զմուրուս B, զմօրուս C, զմօրուսս E.
21 սգեստուն AB

էջ 231

1 բառականք A, բօականք B. արդօք B, արդեւք C. այսոքիկ C
2 զխնամօղք DE
4 առաջ ADE կացուցանեմք BC.
5 ո] ով B, որ C
6 Մուսէս B, Մօսէս C. ո] ով B նւագ B.
7 մարմնով B
8 յամբն AB
9 խորհրդոյն C. տեսաւղ A, տեսօղ CDE
10 հաստատեաց B
11-12 Մովսէս... նորա] Մովսէս և Ահարոն ասէ ի քահանայս նորա C
13 լեզուով C

14 Ահարոնիւ]+և B. նմա լինելով] նմանելով B
15 առաւել C+էր C
16 երկուքեան AD
17 զԻսրայիլ B. զքշնամիսն ընկզմեցին] BC
19 երկուքեան AD
20 ձեռացն B
21 խորհրդո B, խորհրդոյ C. մեծագունիւ E. երկուքեան AD
23 ծանոթագոյնս B. կերպարանն]+է BC. ոչ]+ի B
24 զհամաշունչ C
25 գաղտնեն B, գաղտնեաւ C.
26 գիտեմ]+ես B կամ] և C.
27 հոգոյն C
28 բարեկամութիւնն B
30 հոգովն BC
31 արդիւք C. հաստատեցի C

էջ 232

1 մեղադրիմ E
2 մարտակցութիւննդ A. մարտակցաց]+ի ABDE
3 նաւուղիւդ ABC.
4 դեղդ B արդիւք] C. ամաչեցեր AC.
5 թէեւ] և եթէ C դժւարեցար B
6 յեղբարց ADE, յեղբարցն BC
7 բանբասանաց C. քեզ] ձեզ ACDE. Յոբ C.
8 էի] և BC եւ] C. բարեկամքդ C
9 արդօք որոց B.
10 զօրութիւն C
12 ի] B. աժմ B. կրեալ B
13 արդիւք C
14 նւաստից B զփոքունսն BC. զի]+և BC
15 բարեցն C.
16 բարոյ AC, բարո B
17 խրատել B, խրատեալ C.
18 եմ]+աստուստ C կամաւդի B.
19 անհօանութեան B, անհաւանութեան C
20 անւանիցեն B, անուանիցեն C
22 յամենայնի B. ժամ] B

23 կարողաւ ABDE
25 երկեղն B. երկնչել B
27 ձեզ] ձեր B.
28 է] B է] BC. ժամանակ ABDE
29 ժամանակ B
31 ինչ] ACDE. արժանաւոր]+ինչ ACDE
32 խորտկատուքն D

էջ 233

1 վկաօքս B. որով C. սոքա BCE
3 հոգո B, հոգոյ C լերուք] լիցուք BC
4 պատարագս E.
5 սուրբ] B, ի C
6 ոչ ինչ] զինչ ADE
7 յաղագս] վասն B. նահատակացն B.
8 յաղթողացն B ճշմարտութեամբ C վասն] A.
9 նահատակութեանց B
10 նոցին] նորին BC ինքեանս B.
11 յերկինս B. յիշատակ BC, յիշատակս E
13 հալածիչս C
15 երկնաւորս B, երկնաւորս C. եւ] B չարութիւնք B.
16 է] B, ի C
18 ստմտութեանն B. իբրեւ] որպէս B. լեզուոյ E
19 իբրեւ] որպէս B
20 լսելեաց BC
22 զճաշակելիսն B. զաւշաւտաւղան A, զօշոտօղս B, զօշօտօղսն D պատուհանս BC. մեր] BC
23 զսգաարանաս B, սգայարանս C
25 երկեղի BC
26 եթէ երկիցուք] եթէր կիցուք C. եթէ] եթ E
28 զվահան BC
29 պատերազմ BC
30 մեծ] մեզ B. այսմ C

էջ 234

1 բստ] ընդ E
3 զյաղթականան B

4 հեշտութիւն B. շնորհիցիմք E լինիցիմք C. ժամանակայք B.
5 ամբարիցիմք E
7 եւ աստուածանալ] BC. զտեսութեանն C
8 միջնորդ C
9 ճանաչեմ B, ճանաչեն C
11 մարտան C իմոց] միոյ C. ժողովոյս C.
12 անժուժկալիցն BC ողջախոհացն C
13 մարմնոցն C
15 հաճոութենէդ B, հայհոյութեանն E ձէնջ] մէնջ C. պահանջեն վկայքս ի ձէնջ E
17 արդ] այլ B. մի անսրբապէս] միայն սրբապէս B.
18 եւ մի] եւս ADE
19 հողեղինաբար E.
20 հոգևորն BC
23 սգեստս AB. հայեցածս AB. յամենայն BC
24 մարդն D. զայնպէս DE
26-27 եւ այսպէս... հանդիպիցիմք] C. տօնիցիմք E նահատակութենանց C. փառսն C.
28 զորս C
29 մարդկայինք B. երբէք] C ըստ] ընդ E. իշխանութեանն B.
30 զայն] զայսոսիկ B, զայնոսիկ C. ածելով C
31-32 պայծառութիւնս B, զպայծառութիւն C. սրբոյ E. զի]+և BC
33 եւ] B. յուրախութիւն D. լուսո AC

էջ 235

1 երանելոյ AC սկսբնական BC. պայծառանայցեմք]+և լուսաւորիցիմք BC
3 խոստովանեցաք B
4 արտաքին E յորոց B
5 հոգոյն C
7 օանդութիւնս B
8 զանդենն B, սնընդակիցն C. մանդութենէ A
10 վաղջանին B
10-11 տանիցեմք C
13 ընդ] ADE ընդ իւր] B պատերազմեալքս C
14 մերձաւորաց և հեռաւորաց BC

16 այսոքիկ E. այլաւքն A, այլովքս B
17 աւրէնադրեսցէ] օրէնս դրեսցէ BDE. անուամբ BD. զեղբայրսիրութիւն D
20 լինիլ E. երկեղի BC
21 համարձակեալ CE. դարձեալ] C
23 քաղցրութեան C
24 եւ] + ի B
25 ապրեցուսցէ B, պահեսցէ C
27 եւ որ անդ... արժանաւորեցուսցէ] BC արժանաւորեցուսցէ] E.
28 ամենեցուն B. է] ADE
29 յագեցուսցէ երեսեցելովքս B, յագեցուսցէ երեսլովքն C
30-31 եւ պատիւ... Ամէն] C յաւիտեանս... Ամէն] B

Օգտագործված ձեռագրերի ժամանակագրական ցուցակ*

Ձեռագրի համարը	Ժամանակը	Վայրը	Գրիչը	Անվանումը	Օգտագործված էջերը
1	2	3	4	5	6
2684	973	Տարաւն	Պետրոս	Գր. Նիւսացի, Մեկնութիւն երգոց երգոյն	240ա-բ, 241ա
6362	1181	—	Յովաննէս վարդապետ	Ժողովածու	85բ
948	1196	—	Յովհաննէս (որդի Սարգիս բժշկի)	Ժողովածու	156ա, 231բ-250բ
1897	ԺԲ	—	Հայրապետ վարդապետ	Ժողովածու	89բ-92բ 95բ-96բ, 109բ-112բ
468	ԺԲ-ԺԳ	—	Գրիգոր (փակագիր)	Ժողովածու	96ա-բ, 115բ
1013	1227	Սպիննձահան վանք	Սիմէոն կրօնաւոր	Ժողովածու	41ա-120ա 201ա-241բ
6196	1227	Խլաթ, Խարձի անապատ (Ա), Վերին դետ գիւղ (Բ)	Ներսէս (Ա), Սարգիս (Բ)	Ճառընտիր	311բ-315ա
469	1260	Մեծքար անապատ	Ստեփաննոս քահանայ	Ժողովածու	117ա, 186ա, 260բ

* Հասկանալի պատճառով ցանկում չենք արտացոլել երկրորդ գլխի «Պահպանված հայերեն ձեռագրական հուշարձանների մատենագիտություն» բաժնի ձեռագրերը։

1	2	3	4	5	6
823	1266	Երզնկայ	Յովաննէս սարկաւագ	Առ նաւարկութիւնն հառաջ	9բ-18ա, 27ա-33ա
5518	1271	Վանկումք վանք	Յովաննէս սարկաւագ, Կոստանդին դպիր	Ժողովածու	404
5254	1280	Դնդնուտի վանք (Մահկանաբերդ)	Աւետիս, Գէորգ քահանայ	Ժողովածու	75ա, 102բ-107բ
1324	1281	Հաղբատ	Յոհան, Բարսեղ, Աբրահամ	Ժողովածու	314բ—323բ
4207	1284	Աւտանայ	Կոստանդին Քուսալ	Ժողովածու	119բ-127բ
822	1285	—	Եզեկիէլ սարկաւագ (Գ մաս)	Բարսեղ Կնեսբացի, Պահոց գիրք	218ա-222ա
4834	1289, 1296	Ս. Թէոդորոս վանք (ձմեռն գիւղաքաղաք, Ա) Երզնկա (Բ)	Առաքել (Ա) Յակոբ (Բ)	Ժողովածու	332
500	1293-1305 միջև, 1665	—	Վարդան (Ա) Եղիար (Բ) Սիմեօն (Բ)	Ժողովածու	307ա-327բ
1879	ԺԳ	—	Մովսէս	Գրիգոր որդի Աբասայ, Գիրք պատճառաց	94ա-95ա, 172ա, 199ա-202ա, 230բ-232ա, 239ա

1	2	3	4	5	6
3710	ԺԳ	—	Յովհաննէս Աբրայ-ղրայր, Թորոս, Սաւիփանոս Վահ-կացի	Ժողովածու	364ա
4150	ԺԳ	—	Ղազար	Ժողովածու	8բ-9բ, 20բ-22բ, 44ա-45ա, 61ա-բ
5596	ԺԳ	—	Աստուածատուր	Ժողովածու	27բ
5618	ԺԳ	—	—	Ժողովածու	1ա-195ա
2603	ԺԳ (1265-ից հետո)	—	Զաքէոս	Ժողովածու	295ա, 341բ
5452	ԺԳ (1266-ից հետո)	Վանական վար-դապետի վանք	Սարգիս, Յովանէս կրօնաւոր	Ժողովածու	1ա-65բ
1500	ԺԳ (1283 թ.)	Գևդարդայ վանք	Մխիթար Այրիվա-նեցի	Ճառընտիր	576բ-723բ, 724-1011ա
59	ԺԳ-ԺԴ	—	Յովաննէս Երզն-կացի, Սաւիփանո՞ս	Ժողովածու լուծմանց	145բ-153ա
6848	ԺԳ, ԺԶ	—	Յովհաննէս (Ա)	Ժողովածու	150ա
2607	1300	—	Թորոս թահանայ	Ժողովածու	357ա-391ա
4234	1307	—	Խաչիկ սարկաւագ	Ժողովածու	107ա-114ա, 121ա-125բ
2174	1309	—	Տէր Աւագ	Ժողովածու	185ա-196ա
1460	1311	—	Կիւրիոն (նաև՝ Կիւրիոն)	Ժողովածու	244ա, 297ա

1	2	3	4	5	6
627	1314	Ճանճի խուղ	Խաչիկ, Երբիանոս	Գիրք լուծմանց	116բ
3651	1315, 1615	Ս. Կարապետի վանք (Տարոն, Ա)	Առաբել արհղայ (Ա), Աբրահամ (Ա), Մկրտիչ քահանայ (Բ)	ժողովածու	270ա-284բ
7443	1352-1353, 1375	Քիմճակ (Ղրիմ)	Անտոն քահանայ, Մելքիսէդ (Ա), Յովհաննէս (Բ)	Ճառընտիր	286բ
1152	1367	Խիզան	Գրիգոր քահանայ և որդին՝ Ստեփանոս	ժողովածու	136ա
3937	1370	—	Ստեփանոս	ժողովածու	59բ-69բ
1555	1397	Երուսաղէմ	—	ժողովածու	210բ-285ա, 292բ-307ա
437	ԺԴ	Գլաձո՞ր	Եսայի Նչեցի, Սարգիս, Միմէոն	ժողովածու	107ա-109բ, 116ա-բ
866	ԺԴ	Փոսոյ վանք	Ստեփանոս	Ճառընտիր	182ա
1121	ԺԴ	—	Երեմիա՞յ	ժողովածու	198ա,285բ
1981	ԺԴ	—	Կիւրակո՞ս, Յովանէս, Մուխթիկ	ժողովածու	99ա-133բ, 181բ, 183բ
2173	ԺԴ	—	—	Յովհ. Երզնկացի, Մատենադրութիւնք	101ա-131բ
5259	ԺԴ	—	—	ժողովածու	6ա-80ա
3787	ԺԴ	—	Գրիգոր քահանայ, Սոսթենէս, Աւագ	Ճառընտիր	196ա-198բ

1	2	3	4	5	6
3213	ԺԴ (1381-ից առաջ	—	Դաւիթ վարդապետ, Բարսեղ աշակերտ	Ժողովածու	6ա, 62բ
623	ԺԴ (1391-ից հետո), ԺԵ, ԺԶ (1589-ից առաջ)	—	Բարսեղ (Բ)	Ժողովածու	65ա
3463	ԺԴ, ԺԷ	—	Կիւրիան (Ա), Մխիթար քահանայ (Ա)	Ժողովածու	129բ-130ա
1524	1401	Վարագ	Աւետիս սարկաւագ,	Ճառընտիր Յովանէս քահանայ, Յովանէս կրօնաւոր	329ա-338բ
4670	1401	Ոստան	Մերուն	Ճառընտիր	304ա-312ա
996	1442	Մերկեփիլ Գիւղ	Ոհաննէս մխայնակեաց	Ճառընտիր	298ա-304բ
993	1456	Վերին Նորավանք	Մատթէոս	Ճառընտիր	258բ
55	1489	Երզնկայ	Գրիգոր Տաթեւացի	Ժողովածու	162ա, 304ա-բ
620	1494	Երզնկայ	Մատաթիա Բարերդացի	Ժողովածու	150ա-բ
3275	1494	Կապոսի վանք (Երզնկա)	Մատաթիա Բարերդացի	Ժողովածու Ժողովածու	152ա 341ա
1267	ԺԵ	—	Գէորգ Կրէց, Պետրոս		

1	2	3	4	5	6
4132	ԺԸ	—	Մարգարէ վարդապետ	ժողովածու	353ա
6481	ԺԸ	—	—	ժողովածու	84ա-բ
1712	ԺԸ	—	Սահակ կրօնաւոր	ժողովածու	204ա-205բ, 210ա
582	ԺԸ (1443-ից առաջ և հետո)	—	Դաւիթ (1443-ից առաջ), Կիրակոս բանասէր (1443-ից հետո)	ժողովածու	39ա, 40ա
3791	ԺԸ (1453-ից առաջ)	—	Կարապետ, Տէր Պօղոս, Արդուլմանէ	Ճառընտիր	36բ, 252ա-261ա
1919	ԺԸ, 1683	—	Պետրոս, Ղուկաս (Ա), Վարդան Յոհաննեան (Բ)	ժողովածու	128ա-145բ, 146ա-155բ
620	ԺԸ-ԺՉ	—	Գրիգոր	Քարոզգիրք	150ա
1268	1603	Խուփ գիւղ	Միքայէլ քահանայ	ժողովածու	240բ-273ա
84	1614	—	Զաքարիայ երէնկացի	ժողովածու	261բ
1480	1617	Բաղէշ	Վարդան Հիզանցի	Գիրք պատճառաց և լուծմանց	217բ-222ա, 304ա 380ա-384բ
6617	1618	Շօշ	Աւետիս	ժողովածու	247բ-251ա
502	1619	Լով	Յոհաննէս կրօնաւոր	ժողովածու	92ա-101բ

1	2	3	4	5	7
466	1628	Ալվ	Պօղոսանի խաչբո, Սուսրոյի Միսքո, Մերիկի Հանդոյ (Ա մաս), Պետրոս Բերիացի (ծածկադիր), Բ մաս	ժողովածու	115ա, 181բ, 182ա
2642	1663	Նոր Ջուղայ	Մարկոս Արէց	ժողովածու	583ա, 603ա
737	1680 1711 1717 1719	Բաղէշ (Ա), Կաֆայ, Հրնձուց վանք (Բ), Գլակայ վանք (Գ)	Տէր Աբրահամ (Գ) Սարգիս եպիսկոպոս, Գրիգոր Բաղիշեցի (Բ)	ժողովածու	81բ
8194	1638	Սպահան	Աւետ	ժողովածու	143ա, 147ա, 148ա
4765	1695	Կ. Պոլիս	Կարապետ Արէց	ժողովածու	56բ-58ա, 69բ-70ա
2909	1696	—	Սրապիոն վարդապետ	ժողովածու	105բ-108ա
621	ժէ	—	—	Գիրք պատճառաց և լուծմանց	21ա-27բ, 238բ-240ա, 320բ-328բ
1828	ժէ	—	Մարգար Արէց	ժողովածու	292ա-բ
2509	ժէ	—	—	ժողովածու	198բ-199ա
5193	ժէ	—	—	ժողովածու	40ա-69բ
6622	ժէ	—	Պօղոս Գաւրոցի-Սանեցի	ժողովածու	168ա

1	2	3	4	5	6
463	ԺԷ (1628-ից առաջ)	—	Բասիլ	ժողովածու	80ա 88ա-112բ
10168	ԺԷ (1632-ից առաջ)	—	—	ժողովածու	
8509	ԺԷ (1636-ից առաջ) 1636, 1688	—	Սիմէոն (Ա), Դաւիթ (Գ)	ժողովածու	79ա-բ
2041	ԺԷ (1676-ից առաջ)	—	Կարապետ երէց	ժողովածու	350ա-բ
571	ԺԷ (1683-ից առաջ)	—	—	ժողովածու	65բ, 84ա-109ա
464	ԺԷ, 1734	էջմիածին (Բ)	Սուրբաս Ջուղայեցի (Ա), Յակոբ վարդապետ (Բ)	ժողովածու	95ա
47	1733, 1734	էջմիածին, Երուսաղէմ	—	ժողովածու	285բ
8215	1734, ԺԸ (1734-ից հետո)	Կ. Պոլիս (Ա)	Կարապետ երէց	ժողովածու	1ա

1	2	3	4	5	6
1466	1750	Կաբին	Մեսրոպ Գանձակեցի	Մեկնություն առ որս...	1ա
6988	1763-1764	Թէոդոպօլիս	Մելբոն Կարնեցի	ժողովածու	10ա-17ա, 25ա-29ա
2851	1782	Կ. Պօլիս	Բրաբիոն	ժողովածու	83բ-84ա
2708	1785	Կ. Պօլիս	—	ժողովածու	225բ
421	ԺԸ	—	—	ժողովածու	85ա
600	ԺԸ	—	—	ժողովածու	146բ, 150ա, 156ա
841	ԺԸ	—	—	ժողովածու	12ա-37բ
1960	ԺԸ	—	—	ժողովածու վկայութեանց	17ա-45ա
2046	ԺԸ	—	Յօհան, Դրիզոր	ժողովածու	56բ
3295	ԺԸ	—	Եզեկիէլ Երէց	ժողովածու	338ա, 340ա-378բ, 383բ
1156	ԺԸ (1751-ից առաջ)	—	—	ժողովածու	143ա-բ, 234ա
418	1818	Կ. Պօլիս	Դրիգոր Ճօճայ	ժողովածու	74բ
2908	1831	Կ. Պօլիս	Ճանճիկ սերպաց	Քարոզգիրք	11ա-բ

1	2	3	4	5	6
2615	1850	Տփխիս	Ստեփաննոս Դեմիրճօղլենց	Գրիգոր Աստուածատրան, Աւ նաւարկութիւն	7բ-12ա (10-19) 17ա-20ա 29-35)
5246	ԺԲ	—	—	Ժողովածու	43ա
Վենետիկի Հավաքածոյի ձեռ. №200 (Հին թիւ 17)	1224	Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանք կամ անապատ	Բագէոս կրօնաւոր	Ճառընտիր Ա	260բ-263բ
Վենետիկի Հավաքածոյի ձեռ. №202 (Հին թիւ 512)	1637	Երուսաղէմ (Ս. Յակոբ)	Մկրտիչ Ղազարեանց	Ճառընտիր Գ	601ա-604ա

ГРИГОРИЙ НИССКИЙ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

РЕЗЮМЕ

Представленная работа является первым в армянистике монографическим исследованием переведенных на армянский язык сочинений Григория Нисского (335—394). Появлению статей и исследований препятствовало, прежде всего, почти полное отсутствие соответствующих изданий (были напечатаны одна гомилия, два панегирика и несколько не больших фрагментов отдельных гомилий автора (о них см. «Душеполезные сочинения и речи», Константинополь, с. 204—227; Четьи-Минеи, Константинополь, 1834, с. 241—243; приложение, с. 1—3, «Печать веры», Эчмиадзин, 1914, с. 24—25, 267—276, 289—293, 348). Издание же текстов затруднено разбросанностью произведений по сотням рукописей в том числе и неописанных.

Слов нет, как автор Григорий Нисский уступает наделенному ораторским даром и бурным общественным темпераментом Василию Кесарийскому, также как и красноречивому и поэтически одаренному Григорию Назианзину. Григорий Нисский по складу и сути философ. Тем не менее, сохранившееся в армянских переводах литературное его наследие (панегирики, гомилии, послания, толкования и т. д.) по праву оценено и изучается в армянистике наравне с сочинениями Григория Назианзина и Василия Кесарийского. Имеющиеся попытки обратиться к творениям Григория Нисского как в начальный период, так и в дальнейшем чаще всего сводились к исследованию трудов «трех великих каппадокийцев», сочинения которых были сопоставимы с национальными святынями и оценивались по тем же критериям. Вопросы, поднятые в монографии «Григорий Нисский в армянской литературе», позволяют сделать некоторые обобщения.

Следует сказать, что известные события из жизни и деятельности Григория Нисского (долгое время он был предстоятелем духовных центров Нисы и Севастии, городов, находившихся в Малой Армении), его произведения «чистого учения» и особенно «угодного для вкуса плетения» всегда были в поле зрения нашей средневековой литературы. В сохранившихся стихотворных и прозаических колофонах и записях не раз подчеркивается их злободневность и труднодоступность. Естественно, Григория Нис-

ского знают и упоминают Мовсес Хоренаци, Лазар Парпеци, Себеос, Анания Ширакаци, Степанос Сюнеци, Григор Магистрос, Анания Санахнеци, Григор Тха, Погос Таронаци, Вардапет Вачакан, Киракос Гандзакеци и многие другие известные авторы.

Армянские книжники не просто переводили, переписывали и распространяли сочинения Григория Нисского, но и деятельность их развивалась в рамках определенной программы. Вокруг этих переводов была создана богатая толковательная литература. Произведения данного жанра были в первую очередь призваны сделать доступными достижения византийской книжности, способствовали их распространению. Эти сочинения и сегодня вызывают интерес как краткие литературно-филологические заметки, сделанные на переводном материале. Интерпретаторами, толкователями, разъясняющими смысл текстов Григория Нисского, выступают автор-составитель уникального армянского средневекового литературного памятника «Книга причин» Григор Абасян, работавший над тем же сборником Давид Кобайреци, книжник-переводчик Симеон Пыгындзаханеци, Ваграм Рабуни, Есаи Нчеци, Григор Бджнеци, Вардан Киликеци, Акоп Тагораци, Киракос Ерзынкаци и другие.

Известно, что единственный принятый в средние века способ размножения и распространения текстов и был невольной причиной путаницы, подмены авторства, особенно при близости имен пишущих и общности затрагиваемых проблем и тем. Именно этим и объяснимы ошибки, возникавшие при осуществлении и распространении армянских переводов произведений «трех великих каппадокийцев». Так, например, Григорию Назианзину атрибуировались гомилий «Епископу Мелитию», «Тем, кто утверждает, будто...», автором которых на самом деле является Григорий Нисский. Эта же речь («Тем, кто утверждает, будто...») Григория Нисского в наши дни была издана под именем Давида Анахта. Есть и обратные примеры: средневековая традиция, дошедшая доныне, приписывала сочинение «О природе человека» Григорию Нисскому, тогда как его подлинным автором является книжник IV в. Немесий Эмесский.

Сохранившийся в рукописи №469 (и в других) Ереванского Матенадарана колофон («Переведены сии писания св. Григория епископа Нисского») в равной мере относится к армянским переводам произведений «О природе человека» (Немесия Эмесского) и «О строении человека» (Григория Нисского), выполненных примерно в 716—717 гг. В данном случае сомнения по поводу переводческой деятельности Степаноса Сюнеци вполне обоснованы. Непосредственные рукописные свидетельства (Степаноса Орбеляна, Мхитара Айриванеци) подтверждают, что при осуществлении

упомянутых переводов в соавторстве со Степаносом Сюнеци выступали Давид ипат и книжник Григор, что и позволило Симеону Пыгындзаханеци записать: «Завершилось сочинение Григория Нисского... написанное переводчиками». А замечание, вошедшее в колофон, приложенное к переводу Степаноса Сюнеци—есть следствие позднейшего искажения, оно не является авторским и для датировки текста не годится.

Сличение полного перевода произведения «О строении человека» и соответствующих фрагментов, вошедших в составленный в VII в. сборник «Печать веры», доказывает существование лишь одного перевода произведения «О строении человека», выполненного в VIII в., следовательно, фрагменты этого сочинения не могли входить в архетип сборника «Печать веры», а были внесены впоследствии.

В V в. труд «О строении человека» еще не был переведен на армянский язык, в противном случае Егише не обращался бы к греческому тексту, эта часть его «Истории» единственный известный нам фрагмент, сохраняющий следы оригинала византийского автора.

Общие пассажи армянского перевода эпитафии «Епископу Мелитию» и «Плача» Мовсеса Хоренаци сами по себе указывают на время перевода данного сочинения (вторая половина V в., 80-ые гг.). Эпитафию отличают интересные синтаксические, лексические и стилистические особенности, а кроме того необычайно важны следы влияния оставленного ею на оригинальные произведения. В армянском переводе этого памятника сохранился ряд словосочетаний, своеобразных оборотов, отмеченных лишь в данном тексте, ряд слов, созданных по канонам словообразовательной системы грекофильской школы, незафиксированных составителями Нового толкового словаря армянского языка.

Хоренаци, использовавший армянский перевод «Эпитафии» Григория Нисского, отвергает принцип дословного заимствования. Даже в сходных пассажах изложение Мовсеса Хоренаци отличается от текста византийского автора не только по материалу, но и по манере изложения, и по отбору смысловых оттенков слов, что обусловлено своеобразием стилия Отца историографии. Мовсес Хоренаци, чаще всего ссылающийся на использованные источники, в данном случае опускает имя автора, так как текст Нисского является сочинением агиографического жанра, а не документальной фиксацией историко-политических событий.

Жанрово-композиционные черты произведения «Святому мученику Христа Феодору» соответствуют типу панегириков, которые принято называть эпитафиями. Язык этого произведения грекофильский армянский. Ряд зафиксированных в данном со-

чинении слов, словосочетаний и выражений неизвестен армянской лексикографии, что проявился со всей очевидностью при сопоставлении оригинального и переводного текстов.

Дословное совпадение греческого оригинала и армянского перевода позволяет увидеть черты определенной общности между этим последним и переводами, именуемым материальными (отнюдь не сгладились, а перенесены в армянский текст даже отдельные разностильные фрагменты оригинала и пассажи, характеризуемые качествами стихотворных).

Не отрицая значения официального литературного заказа (сочинение было написано по просьбе Григора Арцруни, 977 г.) можно предположить, что причиной, побудившей Григора Нарекаци взяться за работу над «Толкованием Песни песней» на традиционный ветхозаветный сюжет, явился возросший в X в. интерес к светской беседе на тему жениха и невесты, что и заставило Нарекаци «выявить глубокие тайны, [заключенные] там, что сладки для слуха». Григор Нарекаци прибегает к буквальным заимствованиям из армянского перевода сочинения Григория Нисского. Более того, выясняется, что в рамках аналогичных библейских толкований источником для Григора Нарекаци остается армянский перевод произведения Григория Нисского, а не св. Писание.

Ряд армянских книжников X—XIII вв. часто обращается к гомилиям и посланиям нашего автора, как к «доказательному и готовому оружию» при ведении догматических споров. Следы послания Григория Нисского, озаглавленного «Патриарху Теофилу Александрийскому», сохранившегося в сборнике «Печать веры», свидетельствуют не только о существовании армянского перевода этого памятника, ныне утраченного, но об оставленном им влиянии.

Особенности догматического произведения «Вопрошения и ответы», проявляющиеся в средневековых текстах V—XII вв., кроме культурного, источниковедческого и текстологического значения весьма важны для систематизации сохранившихся армянских редакций, выявления собственно архепита перевода, а также для востановления утреченного текста.

Вардан Аревелци, обращаясь к армянскому переводу сочинения «О Песни песней» пересказывает, сокращает, распространяет, а в отдельных случаях повторяет текст буквально. Общие фрагменты в сочинениях Григория Нисского и Вардана Аревелци позволяют осуществить взаимное редактирование. Это тем более важно, что оба литературных памятника не изданы и подвергались при переписке искажениям.

В приложении публикуются критические тексты трех сочинений исследуемого автора.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խնդիրների կողմից 5
Ներածություն 9

ԳԼՈՒԽ Ա

Գրիգոր Նյուսացին հայ մատենագիրների վկայություններում 33

ԳԼՈՒԽ Բ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ա) Հեղինակային պատկանելության հարցեր 50
բ) Ճառերի Թարգմանիչները ու Թարգմանության ժամանակ պարունակող հիշատակություններ 59
գ) Պահպանված հայերեն Թարգմանությունների մատենագիտություն . . . 74

ԳԼՈՒԽ Գ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ (V դ.)

ա) Նյուսացի-Եղիշե առնչակցության մի գրվագ 98
բ) «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի հայերեն Թարգմանության բնույթն ու ժամանակը, «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառը խորենացու աղբյուր . . 102
գ) «Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» նիւրդոյի հայերեն Թարգմանության բնույթը 124

ԳԼՈՒԽ Դ

ՆՅՈՒՍԱՑՈՒ ՃԱՌԵՐԻՑ ՈՒ ԹՂԹԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԳԱ ՔԱՂՈՒՄՆԵՐԸ (X-XIII դդ.)

ա) «Յաղագս երգոյ երգոցի» Թարգմանությունը նարեկացու աղբյուր . . . 136
բ) Հետագա առնչակցությունների ընդհանուր դնահատություն (Անանիա Սանահնեցի, Ներսես Շնորհալի, Վարդան Այգեկցի) 146

ԳԼՈՒԽ Ե

«Յաղագս երգոյ երգոցի» մեկնությունը և Վարդան Արևելցին 157

Եզրակացություններ 177

ՀԱՎԵԼՎԱԾ

ա) «Ի Մելիտոս եպիսկոպոս...» ճառի հայերեն Թարգմանությունը (բնագիր) . 185
բ) «Ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս» նիւրդոյի հայերեն Թարգմանությունը (բնագիր) 207
գ) Գրիգոր Նազիանզացու «Ի Գրիգորիոս եպիսկոպոս...» ճառի հայերեն Թարգմանությունը (բնագիր) 240
դ) Օգտագործված ձեռագրերի ժամանակագրական տախտակ 241

Ամփոփում (ռուսերեն) 251

ԿԻՄ ՄԱՄԲՐԵԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

КИМ МАМБРЕЕВИЧ МУРАДЯН

ГРИГОРИЙ НИССКИЙ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Հրատ. խմբագիր Ա. Լ. ՍաՒակյան
Տեխ. խմբագիր Ա. Պ. Շահինյան
Նկարիչ Հ. Ն. Գոռծակալյան
Սրբագրիչ Գ. Է. Պետրոսյան

Հանձնված է շարվածքի 1.10.92թ.։ Ստորագրված է տպագրության 28.09.1993թ.։ Չափը 60×84¹/₁₆։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Տպագր. 16,0 մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 14,0 մամուլ։ Տպաքանակ 500։ Պատվեր № 27։ Գինը՝ պայմանագրային։

ՀՀ ԳԱԱ հրատարակչության, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство НАН Арм., 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՀ ԳԱԱ հրատարակչության տպարան, 378410, ք. Աշտարակ, 2։
Типография Издательства НАН Арм. 378410, г. Аштарак. 2.

A II
83456